

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Լ.Է. ՏԱՐԻ ԹԻՒ 3 ԱՄԱՌ 1998 ՊԷՅՐՈՒԹ

ԳԵՌ ԼՐԻՒ ԶՊԵՂՈՒԱԾ ՄԵԾԸ...

Իր գոյութեան երեսունհինգ տարիներուն ընթացքին, «Բագին» բազմաթիւ էջեր տրամադրած է Յակոբ Օշականին, մէկ կողմէ իր մասին եղած ուսումնասիրութեանց եւ, միւս կողմէ՝ իր ստորագրած գրութիւններուն: Նաեւ բացառիկ համարներ, վերջինը՝ 1984ին, ծննդեան 100ամեակին առիթով:

Կը կարծէինք, որ այս մէկը, 100ամեակի բացառիկը, մեր կողմէ վերջին տուրքն է, որ կը մատուցուի իրեն եւ այսուհետեւ, սովորական թէ կլոր թուականներու, ուրիշ սերունդներու ուսերուն կը ծանրանայ մեծաբանքի ամեն պարտք:

Հիննական այդ մտքով՝ մահուան Տժամեակի նախօրէին նախապատրաստական որեւէ աշխատանք չկատարուեցաւ «Բագին»-ի յարկին տակ, բայց ստեղծուած նոր առիթով բանի մը էջ բանալու պարտականութիւնը դարձեալ մեզի կը վիճակուի ահաւասիկ, ու ասիկա՝ հպարտութեան պզտիկ աղբիւր մը չէ դարձեալ, տրտած լլալով, որ կը գտնուինք մահէն կէս դար ետք անգամ անտիպներու անակնկալներով մեր ժողովուրդը բախաատրած յայտնութեան մը դէմ-յանդիման:

Մահուան թուականին (1948) 14 հատոր լոյս ընծայուած էր Յակոբ Օշականէն:

Անցնող կէս դարուն մէկուկէս անգամ անկի գիրքեր հրատարակուեցան իրմէ:

Եւ աստէ անկի ուրիշներ դեռ կը սպասեն լոյս աշխարհ գալու: Երեսույթ մը, որ իր երկրորդը չունի քերես թովանդակ հայ գրականութեան մէջ եւ ուղիղ գիծով կը յիշեցնէ մեծ ազգերու մեծատաղանդները, որոնք մէկ դար առաջ հող դառնալէ ետք անգամ նոր գործերու յայտնութիւններով անակնկալի կը բերեն ընթերցող զանգուածները:

Ծննդեան 100ամեակին՝ գրասէր խումբերու եւ առանձին անհատներու մասնակցութեամբ մասնակցող մէջ ցրուած գրութիւններն հրատարակուեցան 7 անուն զիրք, իսկ մահուան 50ամեակին, այս անգամ ուրիշ անձներու մասնակցութեամբ, ի սօտոյ հրատարակ կ'ելլին «Մերմնացան», «Աստուած կ'իջնէ»-«Երբ մենիլ գիտենք» եւ «Մոռցուած բաներ» անուն արձակ ու քատերական երկերը: Պիտի գտնուին անշուշտ նոյնպէս ազնուարիւն որիչներ, որոնք պիտի մտածեն միւս տասի հատորային քախտին մասին եւ առաջին հերթին յոյս աշխարհի համեն «Անգղիոյ կտուցին տակ», «Արեւելահայ դէմքեր» եւ «Չուզակչիւ Արեւմտահայ եւ Արեւելահայ գրականութեանց» խորագրուած մեծարժէք գործերը:

Մահուան յիսնամեակ...
Դժգոհ իր ընթերցողներուն քանակէն եւ բարձրորակ գրականութիւն ընկալելու ջանջախիչ տոկոսին մակարդակէն՝ Օշական իր կենդանութեան յաջորդած յիսնամեակի վախճանին կապած էր ուրիշ յիսուն մը եւ, թէ՛ յիսուն տարի ետք անկի մեծ թիւով ընթերցողներ պիտի կարդան իր գործերը, պիտի աւուրին իր խորացումներու այբերուն, պիտի սաւառնին իր նուաճած բարձունքներուն, պիտի փնտռեն զինք, սիրեն ըստ արժանւոյն:

Բազմիցս կրկնած է այս համոզումը, բերանացի թէ գրաւոր, այլ յիսուն տարուան աւարտին հարց կը ծագի, թէ ճշմարտութեան տարր կը բովանդակէ՞ր իր ենթադրութիւնը, ճիշդ դուրս եկա՞ր անիկա, եւ ի՞նչ համեմատութեամբ:

Խնդիրը դիտելով մեր ծանօթութեան սահմաններուն մէջ, կրնանք համարձակօրէն ըսել, որ մեծ գրագէտը հոս գոհն էր ստոյգ պատրանքի մը: Իր ողջուցը թիչ թիւով հրատարակ հանուած զիրք ունէր, բայց շատ անկի էին ընթերցողները, քան հիմա, որ ըսինք արդէն, կրկնապատիկ անկի է իր զիրքերուն թիւը: Ատոր պատճառը ճիշդ չէ կապել իր անհասկնալիութեան վարկածին, բարդութեան, մթոթեան: Այս առասպելին մէջ եթէ պարզունակութեան ճաշակ ունեցողներուն կարծիքը դեր ունեցաւ, թիչ չեղաւ նաեւ նոյն առասպելին մէջ իր «ճերդրումը», երբ հազիւ թէ անհասկնալի հատուածներ կը գտնուին իր զանգուածեղ գրականութեան մէջ, մեծ մասամբ հետեւանք իր գիրերուն սխալ ընթերցումներուն:

Ուրիշ հարց տակալին ողբերգականօրէն անհերքելի այն իրողութիւնը, որ բոլորովին ու բոլորին մատչելի հեղինակները կարողացուելու առումով անկի բախտատու չեն այսօր, քան այսպէս կոչուած բարդերը: Խնդիրը, ուրեմն, մատչելիութեան կամ բարդութեան չի վերաբերիր, կը վերաբերի ընթերցողներու թիւին աստիճանական նուազումին, մտաւորական հետաքրքրութիւններու պակասին, գրական հետաքրքրութիւններ ստեղծելու ունակ գործօններու ահարկու սակաւութեան:


Այս կապակցութեամբ մեծ յոյսեր կապուած էին Հայաստանին, բայց երբ նեղմտութեան կարմիր ամպերը չքացան ու բացուեցան «դռներն յուտոյ», մեր չար բախտն ուրիշ դժբախտութիւն մը զարկաւ մեզ, վրայ իսաւր ընթերցասիրութեան սահմակեցուցիչ անկումը:

Մեծ թիւով ընթերցողներու պակասը՝ պակաս է անշուշտ, բայց դարձանելի:

Անդարձանելի պիտի ըլլար միւսը՝ մեծ գրագէտներու պակասը: Օշական այդ պակասը չզգացնող զգաթներէն է: Դեռ չսպառած, դեռ լրիւ չպեղուած մեծը...

Ստորագրում
Օշական
1954

6. ՕՇԱԿԱՆ



ԱՆՁԻՆՔ

ԱՐԾՐՈՒՆԻ (Ուխտարար)
ԽՈՐԽՈՐՈՒՆԻ (Ուխտարար)
Ա. Ե. Բ. լրարներ
ՔՐՄԱՊԵՏ
ԲԺՇԿԱՊԵՏ
ԱՄԱՏՈՒՆԻ (Ուխտարարը քաղաւորին մօտիկ)
ՄԱՏՐԱՊԵՏ
ԻՇԽԱՆՈՒՂԻՆ
ՍՈՒՐԲԸ
ԹԱԳԱՒՈՐԸ

Պարողներ: Երգիչներ: Տաղահարներ:
Երկու ջահակիրներ: Առյսեր: (Պատգամաւորներն
ալ): Խենթ Ուխտարարներ:

ԴԱՀԼԻՃ: ԳԱՀ:
(Բեմիմ ետեւօք բարձրադիր մաս մը: Վարա-
գոյրի բացումիմ՝ Ոսխարարները խօսելու վրայ):
ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ՈՒ ԱԻԵՏԱԲԵՐ

ԱՐԾՐՈՒՆԻ (Ա. Լրաբերիմ՝ որ մերս կը մտնէ շուարում եւ տազմապոս).—Ուշացան շատ, կը մթնէ արդէն, կու գա՞ն:

Ա. ԼՐԱԲԵՐ.—Հեռու են տակաւին:
ԱՐԾՐՈՒՆԻ.—Սպաննեց գաճաճը:
ԽՈՐԽՈՐՈՒՆԻ.—Ե՛րբ: Քիչ առաջ ասկէ անցնիլը տեսայ:
Ա. ԼՐԱԲԵՐ.—Մեռնիլը ժամանակի չի կապուիլը հիմա: Թուրի մէկ հարուածով երկուքի ճեղքեց գանկը:
ԽՈՐԽՈՐՈՒՆԻ.—Այս երրորդն է գոհ, պալատին մէջ, կայսրէն վերջ:
Ա. ԼՐԱԲԵՐ.—Մարմինը նետեց հնձանին մէջ: Բոլորին ալ կեանքը վտանգի մէջ է այլեւս, մանաւանդ անոնց, որոնք գրահ չունին:

(Կը մտնէ Բ. Լրաբերը):

Բ. ԼՐԱԲԵՐ.—Նախարար Ամատունի կը հրահանգէ, որ պալատին բոլոր սպասաւորները գրահ հագնին իրենց զգեստներուն տակէն:

Ա. ԼՐԱԲԵՐ.—Սաղաւա՛րտ:
Բ. ԼՐԱԲԵՐ.—Հարկաւ:
ԱՐԾՐՈՒՆԻ.—Խելացի ու արդար հրահանգ: Բայց ո՞ւր կ'երթայ վերջը այս փորձանքին: Ինքը, Ամատունին պիտի չգա՞յ:

Բ. ԼՐԱԲԵՐ.—Եթէ կարենայ: Թագաւորը միայն անկէ կ'ակնածի:
ԽՈՐԽՈՐՈՒՆԻ.—Ո՛ւր է հիմա թագաւորը:

Բ. ԼՐԱԲԵՐ.—Ճահճին մէջը: Վալրի խոզերուն ետեւէն: Խոզերու կը պոռար: Բայց անկէ առաջ Ամատունին կը հրահանգէ, որ սրահը զարդարուի:

ԽՈՐԽՈՐՈՒՆԻ.—Ի՞նչ կայ որ:
Բ. ԼՐԱԲԵՐ.—Երաժիշտներու հանդէս պիտի կատարուի դարձեալ: Հնդկաստանէն մեծ բժիշկ մը այսպէս է թելադրեր, դարձեալ պիտի փորձեն:

ԱՐԾՐՈՒՆԻ.—Ի՞նչ պիտի փորձեն:
Բ. ԼՐԱԲԵՐ.—Թագաւորը զուարճացնել երգով, նուագով, պարով, որպէսզի մոռնայ:

ԽՈՐԽՈՐՈՒՆԻ.—Աստուածները զայրացած են: Իմ գիտցածս պատուհաս է ասիկա: Այս շարթու քիթը

այնչափ երկարած է, որ ճիշդ վարագի քիթ է դարձեր:

Ա. ԼՐԱԲԵՐ.—Հապա մազե՞րը, երեսին վրայ ճերմակ տեղ չէ մնացած:

Ա. ԼՐԱԲԵՐ.—Մինակ երեսի՞ն: Ոտքերը, ձեռքերը, սրունքները, իրանը, բոլոր մարմինը սեփ-սեւ մազ է բռնե՞ր՝ խողի մազին պէս ծիր ու հաստ:

Բ. ԼՐԱԲԵՐ.—Ձա՞յնը՝ երբեմն շունի, երբեմն գայլի: Աւելի շատ՝ խողի:

Ա. ԼՐԱԲԵՐ.—Երբեմն երկու ոտքերու վրայ չի կրնար կանգնել: Կը քայլէ չորս թաթերով, կա՛մ կը նստի, կա՛մ կը պառկի:

ԱՐԾՐՈՒՆԻ.—Ձինակիցնե՞րը: Կապարճակի՞րը: Հանդերձապե՞տը: Որսապե՞տը: Ռշտունեաց եւ Սիւնեաց նախարարնե՞րը:

Բ. ԼՐԱԲԵՐ.—Անոնք ալ կը հագուին թագաւորին պէս ու կը գործեն անոր հետ: Բոլորին քիթը կը մեծնայ օրէ օր:

ԽՈՐԽՈՐՈՒՆԻ.—Դարձա՞նք:

Բ. ԼՐԱԲԵՐ.—Փորձուեցան բոլոր դեղերը: Այսօր նորէն նուագահանդէսը պիտի ընեն: Քրմապետը կը սպասուի իշխանուհիին կողմէ: Ինչպէս նաեւ բժշկապետը: Կարծեմ թէ կու գան արդէն:

(Կը մտնեն քրմապետը եւ բժշկապետը):

- ՔՐՄԱՊԵՏԸ.**—Բարի օր ու արեւ ձեր բոլորին:
- ՆԱԽԱՐԱՐՆԵՐ** (խոնարհելով).—Վրան քու մեծ անձին:
- ՔՐՄԱՊԵՏ.**—Օրհնուի կամքը աստուածներուն:
- ԽՈՐԽՈՐՈՒՆԻ.**—Ի՞նչ է կամքը աստուածներուն:
- ՔՐՄԱՊԵՏ.**—Դառն է կամքը աստուածներուն:
- ԱՐԾՐՈՒՆԻ.**—Պատուհաս է ասիկա, ընկերներ:
- ՔՐՄԱՊԵՏ.**—Ձոհի հաւերուն լեղին պակաս է բոլորին ալ:
- ԱՐԾՐՈՒՆԻ.**—Ի՞նչ կ'ըսես, մեծ քրմապետ:
- ՔՐՄԱՊԵՏ.**—Առանց լեղիի են բոլոր հաւերը: Ո՛չ միայն այդ: Բոլորին ալ լեարդին կէսը կրծուած: (Ձեռքերով երեսը կը գոցէ):
- ԱՐԾՐՈՒՆԻ.**—Պատուհաս, պատուհաս, պատուհաս:
- ՔՐՄԱՊԵՏ.**—Արչակունիներուն տունը ասկէ մեծ փորձանք չէ դիմաւորած, ինչպէս իր վերջին տարեգրութեանց տախտակները կը գրեն: Ամբողջ աշխարհ ժը կը կործանի: Մորթեցին ամէնէն գեղեցիկ ցուլը: Այրեցին ամբողջ կնդրուկին տակաւոր: Տաճարին տակ պաշտամունքը կը շարունակուի:

Հիմա թող օրհնուին աստուածները: Իրենց կամքն է միշտ յաղթական: Մենք անոնց ձեռքի փորիչ խաղալիքներ ենք: Ի՞նչ է ձեր կարծիքը, բժշկապետ:

ԲԺՇԿԱՊԵՏ.—Նորէն պիտի փորձենք նուագահանդէսը, ահա նախ ծրարը ու բաժակը, պարսից արքունիքէն ղրկուած դեղեր են ասոնք:

ԱՐՄՐՈՒՆԻ.—Ձե՞ն հասած հարաւի եւ արեւմուտքի արքունիքներէն ղրկուած պատգամաւորները:

ԲԺՇԿԱՊԵՏ.—Մեծագոյնէն յետոյ, կարիք չկայ փոքրերուն: Այս ծրարը պիտի այրուի գլխուն վրայ: Ու այս ջուրն ալ պիտի խմէ անպատճառ:

ՄԱՏՐԱՊԵՏ.—Անկարելի բաներ կ'ըսես, բժշկապետ: Մեր մէջն ո՞վ է, որ պիտի համարձակէր ընել այս բոլոր բաները թագաւորին վրայ: Գիտես, որ թաթի մէկ հարուածով սափորի փորին պէս փոսացուց Մատրուկին դէմքը: Մահը վայրկեանական եղաւ խեղճ երիտասարդին: Իմ հաշուոյս, ես իմ հոգիս գետինը չեմ գտած, որպէսզի նման յիմարութիւն մը ներեմ ինծի: պարտքը քուկդ է, բժշկապետ:

ԲԺՇԿԱՊԵՏ.—Ամէնքդ ալ գիտէք, որ իմ ներկայութիւնը կը կատղեցնէ զինքը:

ԱՐՄՐՈՒՆԻ.—Բայց չէ՞ որ նուագահանդէս կայ նախ:

ՔՐՄԱՊԵՏ.—Այո՛: Աստուածներուն ալ թելադրութիւնն է ատիկա: Պատահած են մեծ հրաշքներ: Թող ներուի մեզ յուսալալ կարգի միջամտութիւն: Սղա՞ծ են անհրաժեշտ կարգադրութիւնները նուագահանդէսին համար:

Բ. ԼՐԱԲԵՐ.—Նախագահ Ամատունին հրահանգած է բոլոր անհրաժեշտ բաները:

ՔՐՄԱՊԵՏ.—Իշխանուհին տեղեա՞կ է այս ամէնուն:

Բ. ԼՐԱԲԵՐ.—Իշխանուհին անտեղեակ չէ: Բայց խանդավառ ալ չ'երեւիր արդիւնքով:

ՔՐՄԱՊԵՏ.—Այս պալատին սեւ ոգին է արդէն անիկա: Իր Աստուծով զայրացուցած է հայրենի անմահ աստուածները: Նախարարներ, վտանգի տակ է Հայոց 'արքունիքը: Վտանգի տակ է նախարարներուն անձը: Վտանգի տակ են մեր երկիրը եւ իր բնակիչները: Հրեաներուն քարոզութենէն ասդին ամէն ինչ չըջուած է: Սեւ ջուրով աղբիւրներ կը պոռթկան Հայոց լեռներուն ոտքերէն: Սեւ ամպերով մարախներ ոչնչացուցած են Արաքսի մշտագարուն հովիտին հունձքերը: Այս ամէնը ապացոյցներ են աստուածներուն ցասումին:

ԽՈՐՀՈՐՈՒՆԻ.—Ճշմարիտ են խօսքերդ, մեծ քրմապետ:
ՔՐՄԱՊԵՏ.—Այս ամէնը անոր համար, որովհետեւ Հայոց
 արքունիքի մէջ կիներ կ'իշխեն: Ատենն է, որ
 հասկնան ասիկա բոլոր հայրենասէրները: Ու
 բոլորուն հայրենի աստուածներու պաշտա-
 մունքին շուրջ: Ատենն է, որ մեր երկիրը անջատ-
 էի հոռոմներու եւ հրեաներու սադրանքներէն:

(Սերսէն ժխոր, կեմդանի ձայներ, փողեր, նուագ):

Բ. ԼՐԱԲԵՐ.—Ահա թագաւորը:

(Կը մտնէ՝ հետեւում մախարարներն):

ԹԱԳԱՒՈՐ.—Փրցուցէք սա շղթան իմ քիթէն (Ձեռքով կ'ընկ
 մէկդի սաղաւարտն երկարած թել մը). Օ, Հ՛օ:
ԲԳԻԿ-ԲԳԻԿ կ'ընեն, կը սպաննեն բոլորդ, գիտ-
 ցած ըլլաք:

ԱՄԱՏՈՒՆԻ (թագաւորին շատ մօտիկ, անոր կողքին հիւսուե-
 լու աստիճան).—Տէր արքայ, սաղաւարտին կապն
 է անիկա: (Կը դնէ կապը սաղաւարտին կատարին:
 Թագաւորը կը մտի գառուն վրայ, իյնալով յամ-
 կարծ մոայլ անշարժութեամ մէջ, կարծես շտեմէր
 եղածները): **Նուագողներ, պարողներ, առաջ:**
 (Երգողներ կը շարունակ: Երիտասարդ արմաշար
 մը կը վարէ երգերը): **Ե՛րգ:**
 (Պարողներ կը բոլորուն երգողներու աղեղով:
 Պար, երաժշտութիւն, նուագ ու ընդիտտ գիշեր:
 Այս ամէնուն ընթացքին թագաւորը կը մնայ լուռ,
 մոայլ, իրեն հետ մաւր յիմարացած մախարարներ
 եւ հետնորդներ):

Բ. ԼՐԱԲԵՐ.—Իշխանուհին:

ԱՄԱՏՈՒՆԻ.—Իշխանուհին:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.—Ի՞նչ է այս ամէնը նորէն: Ա՛լ հերիք է: Կը
 բաւէ՛ սա ի գործ դրուած խեղկատակութիւննե-
 րը: Ի՞նչ կը սպասէք այս բոլորէն, հիմա գիտեմ
 վստահ. ան միայն պիտի կրնայ բուժել զինք. այս
 երրորդ անգամն է, որ կ'երեւի ինձ:

ԱՄԱՏՈՒՆԻ (զայրացած).—Որո՞ւ մասին կը խօսիք, իշխանուհի:
ԻՇԽԱՆՈՒՀԻ.—Անոր, Սուրբին: Անոր՝ որ վիրապը ձգեցիք:
 Այս գիշեր, հիմա նորէն երեւցաւ ինձի, աչքերս
 հազիւ գոցած էի եղբօրս մտածումով, հազիւ
 քուն մտած, տեսայ զինք լուսաւորուած կերպա-

բանքով, ինք չէր խօսեր, բայց հրեշտակը խօսեցաւ:

ՆԱԽԱՐԱՐ.—Ի՞նչ կ'ըսէ...

ԻՇԽԱՆՈՒՀԻ.—Կ'ըսէ, որ եթէ չապաշխարհէ թագաւորը, մինչեւ որ արքունիքը չհաւատայ Աստուծոյ ու անոր Միածին Որդւոյն, փրկութիւն չկայ այս երկրին համար: Այս երբորդ անգամն է կը կրկնէ բառ առ բառ միեւնոյն խօսքերը:

ՔՐՄԱՊԵՏ.—Կը զառանցես, իշխանուհի՛, եւ կ'անարգես աստուածները: Անոնք ցասում ունին Հայոց արքունիքին վրայ, այն օրէն ի վեր, երբ արհամարհուեցաւ Հայրենի աւանդութիւնը: Ա՛յ կը բաւէ երազներէդ խօսիս մեզի, եւ զրգուես աստուածներուն զայրոյթը:

ԻՇԽԱՆՈՒՀԻ.—Դո՛ւն կը զառանցես, քրմապետ, եւ կը խօսիս աստուածներու մասին, որոնք ոչինչ ըրին: Ես չեմ անարգեր աստուածները, այլ կը խօսիմ անոր մասին, որ կ'երդնուն իր եւ բոլոր աստուածներուն անունով, թէ պիտի կրնայ փրկել թագաւորը:

ՔՐՄԱՊԵՏ.—Ամբարիշտ են այդ խօսքերը, իշխանուհի՛. եւ անարգանք՝ աստուածներուն. ան՝ որուն անունով կը խօսիս, վաղուց մեռած է արդէն, քու կանացի երեւակայութեանդ մէջ միայն կենդանի է ան, ատոր համար միշտ երազներէդ կը խօսիս:

ԻՇԽԱՆՈՒՀԻ (հեզմեղով).—Մեռածներուն մասին միայն դուն կը խօսիս: Պիտի տեսնես, տեսնել չգիտցող այդ աչքերովդ, թէ ինչպէս ան պիտի գայ եւ պիտի բուժէ թագաւորը: Իմ հաւատքս զիս չէ խարած երբեք:

ՔՐՄԱՊԵՏ (զայրացած).—Շարունակեցէ՛ք, երգիչներ, նախարարներ, կիներու տիրապետութեան ներքեւ պիտի կործանի այս գահը:

ԻՇԽԱՆՈՒՀԻ (ցաւով կը Ոայի եղածիմ).—Կիները չեն սխալիր, երբ իրենց սրտէն կը խօսին: Կ'ըսեմ ձեզի, պիտի գայ ան: (Կը մեկնի):

ՔՐՄԱՊԵՏ (Ջղայնացած).—Շարունակեցէ՛ք կ'ըսեմ, երգիչներ: (Կը վերսկսի պարը, քայց թագաւորը ատենէ մը ի վեր գրգռման Ոչամներ ցոյց կու տայ. մէկէմ կ'ելլէ եւ յիմարացած Ոսխարարներու հետ պար վարագնորու. ընդհանուր շփոթութիւն մը. յանկարծ գերագոռութեամ Ոռպայի մը մէջ, կը փախցնէ ամենքը, քահները կը մարիմ, կը մթննայ սրահը):
(Թագաւորը միմակ մնացած՝ կը հանդարտի.)

հետզհետե կը կծկուի, կը պլորուի սրահիմ վարի անկիւնը... Մէկէն կ'երեւի իրեմ, լոյսերու տեսիլքը, հեռաւոր երաժշտութեամբ անոնք կ'անցնին քափօրով):

ԹԱԳԱՒՈՐԸ.—Ա՛հ, ա՛հ, ա՛ն է նորէն, անոնք են, բայց չմեռցուցի՞ր ես անոնք ամէնքը. ո՞վ դրաւ իրենց ուսերուն նորէն գլուխներ: Ո՞վ փաթթեց գիրենք այսպէս լոյսերու մէջ: Ա՛յ, յիմար եմ ես. տեսիլք է այս, գիտ տանջելու տեսիլք: Կորէ՛ք, ես սուրովս վար կ'առնեմ հիմա նորէն ձեր գլուխները... (Կը քաշէ սուրը. կ'ուզէ յարձակիլ, կը կենայ յանկարծ: Ետ կ'երթայ սարսափահար, կը կենայ...): **Բայց ի՛նչ գեղեցիկ են, ի՛նչ խաղաղ կ'երթան, չէ, կեցէ՛ք, կեցէ՛ք, մի՛ երթաք, տեսէ՛ք, կը նետեմ սուրս.** (Կը նետէ սուրը, որ կտոր-կտոր կ'ըլլայ): **Մի երթաք: Դեռ կը վախնա՞ք: Պիտի նետեմ սաղաւարտս ալ:** (Կը նետէ սաղաւարտը): **Ամէ՛ն բան: Ո՞վ տուաւ ձեզի այդ քաղցրութիւնը, քաջ, ճերմակ հոգիդ Հոփփսիմէ: Ո՞վ հիւսեց ձեր անցքը այսպէս լոյսերով, շուշաններով: Օ՛հ, չէ՛, հերի՛ք է, տեսիլք է այս, գիտ տանջելու տեսիլք: Չեմ ուզեր նայիլ, կորէ՛ք, կորէ՛ք, կը սպաննեմ ես:** (Կը ծածկէ գլուխը քեւերուն մէջ, կը կծկուի, կը պլորուի իմքն իր վրայ, տեսիլքը կ'անցնելու քանցանայ: Կը մթննայ քմբ բոլորովիմ, կը լսուի լացի ձայնը քազաւորիմ: —Լոյսի մը մէջէն կը լսուի գանհիմ մօտ սուրբը, քազաւորը կը բարձրանայ անդորր, կ'աղօթէ մեղմ երաժշտութեան մը մէջ:— Յետոյ կ'իջեցնէ քեւերը հետզհետե ու կը տարածէ դէպի քազաւորը: —Ու կարծես մագնիսէ քաշուած, դիւքուած, կը մօտենայ ու կը ծնրադրէ սուրբիմ առջեւ: Կը սկսի հետզհետե բարձրանալ ոտքի, դէմքը կը մարդկայնանայ):

ԹԱԳԱՒՈՐԸ.—Դո՞ւն... բայց մեռած չէի՞ր դուն. ո՞վ պահեց քեզ, ո՞վ բերաւ քեզ հոս:

ՍՈՒՐԲԸ.—Աստուած:

ԹԱԳԱՒՈՐԸ.—Ո՞վ է այդ Աստուածը:

ՍՈՒՐԲԸ.—Ճշմարիտը: (Թագաւորը կը հեծկտայ՝ կրկին իջնելով ծունկի: Հանգարտէ, ոտքի ելիր: Ձեռքը կը դնէ ուսերուն) **ու փրկուած ես, ու փրկուած քեզ հետ Հայաստան աշխարհը:**

ԹԱԳԱՒՈՐԸ.—Հիմա կը բացուին մտքիս, սրտիս աչքերը, հիմա կը տեսնեմ ա՛յլ ճշմարտութիւնը. Աստուած իմ, ո՞վ իմ եղբայրս... (Կը կենայ սուրբիմ քով):

ՍՈՒՐԲԸ.—Ելիր, Տրդատ, գահդ, Քրիստոսի շնորհով, Թագաւոր Հայոց աշխարհի: (Այն ատեն երկու կողմերէն մայմ դիւթուած քայլերով կը մտնեն միւս մախարարները. առնմբ ալ ոտքի կ'ելլեն սուրբիմ տարածուած քեւերում հետ...): Փրկուած էք...: (Կը մտնէ իշխանուհիմ):

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.—Ըսէ մեզի ճշմարտութիւնը: (Սուրբիմ):

ՔԱԳԱՒՈՐԸ.—Տուր մեզի լոյսը:

ԱՄԷՆՔԸ.—Լո՛յսդ, լո՛յսդ...

ՍՈՒՐԲԸ.—Ան միայն կայ, ով մարդ եղբայրներ, որ է Հայր՝ ստեղծողը, ու իր ճշմարտութիւնը մեզի՝ Որդին. ու իր շունչը՝ սէրը մեզի, Հոգին: —Որդին եկաւ մեզ մեր ճանապարհը ըլլալու դէպի կեանքը, ճշմարիտ կեանքը մահէն ալ վեր, մահէն ալ անդին: Եղբայրներ, կ'օրհնեմ ձեզ՝ Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ...

ՔԱԳԱՒՈՐԸ.—Առաջ, պատգամաւորներ, հնչեցուցէ՛ք փոռերը, յայտարարեցէ՛ք չորս ծագերուն Հայաստան աշխարհի, Տրդատ Թագաւոր Հայոց աշխարհին. ծառայ Թագաւորին Տիեզերքի, ծառայ Քրիստոսի...

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ (կը յառաջանան, չորս ծագերու կը դառնան):—Տրդատ Թագաւոր Հայոց աշխարհին՝ ծառայ Թագաւորին Տիեզերքի, ծառայ Քրիստոսի:

ԱՇԽԷՆԸ.—Ալէլուիա...

(Կը պայթի երգը):

«Էջ միածին ի Հօրէ
Եւ յոյս փառաց
Ընդ նրմա
Չայնքինչեցին
Սանդարամետք
Անդրնդոց...»:

ԴՈՒՐՍԷՆ.—ՏՐԴԱՏ ՔԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ,
ԾԱՌԱՅ ՔԱԳԱՒՈՐԻՆ ՏԻԵԶԵՐՔԻ,
ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ,
ՅԱՍՄՅԵՏԷ ՄԻՆՁ ՅԱՒԻՏԵԱՆ...

ՎԵՐՁ

Վ. ՕՇԱԿԱՆ

ՅԱԿՈՒԹՇԱԿԱՆ
ՔՍԱՆ ՏԱՐԵԿԱՆԻՆ

Յակոբ Օշականի արձակին դրոշմը այնքան գորաւոր ու տիրական է մեր մտքին վրայ, այնքան ինքնատիպ եւ ածուր նկարագիր ունի, որ կը դժուարանանք անոր անձին մէջ գրական ուրիշ բնոյթ տեսնելու, օրինակ՝ բանաստեղծ մը Սակայն եթէ մօտէն քննենք, թէ՛ իր գրականութեան նիւթեղէնը եւ թէ՛ ալ իրականութեան հետ իր գրական խառնուածքին առնչութիւնը, յստակ կ'ըլլայ ինչու պատմուածք, հեքիաթ, վէպ, թատրոն, տպաւորապաշտ ու քննադատական գրութիւններ, նոյնիսկ գրականութեան պատմութիւն՝ կրկնապատկերներու նման մէկ ու միակ, մայր իրականութեան մը արտացոլումն են։ Որպէս թէ՛ մոզական պրիսմակ մը կայ, որ կը դառնայ իր առանցքին շուրջ ու գրական սեռ կը ցոլայ։ Օշականի համար այդ պրիսմակը իր կիրքն է, կամքի ու տաղանդի բացարձակ կեդրոնացումը ստեղծագործական արարքին մէջ, որ կը ջանայ կեանք կոչուած խորհրդաւոր էութիւնը ու բխումը գիրի, բառի վերածել առանց որեւէ բան փոխելու կամ կորսնցնելու։ Այսպէս է, որ իրեն համար ոճ, լեզու, գրական սեռ ու տեսութիւն՝ թէ՛ անհրաժեշտ միջոցներ են եւ թէ՛ ալ, նոյն ատեն արգելքներ, խոչընդոտներ են՝ իրեն ու կեանքի ապրումին անսահման իսկութեան միջեւ։ Արուեստը կեանքին հարազատ վերանուածումը կ'ուզէ ըլլալ, երկուորեակը գրեթէ, այսօրուայ լեզուով՝ cloneը, մինչ կեանքը ամբողջապէս ինքզինքը կ'ըլլայ միայն արուեստի կաղապարին մէջ, իր պարագային՝ ան կ'ապրուի իրրեւ վէպի հերոս։ Մէկու մը համար, որ ապրելու համը մահուան քաղցր-թունոտ յաճախանքին մէջ շնչած է (աւելի ետքը պիտի անդրադառնամ մահուան հարցին) երկվայրկեաններու անհամբեր, յաճախ խուճապի մօտեցող հրմշտուքը մնայուն եւ անձկալի ապրումի կրնայ վերածուիլ։ Իրեն նման մէկու մը համար, ժամանակը կը դառնայ իսկա-

կան տաղնապ, կեանքի մը ապրիլը՝ ամէն վայրկեանի մարտահրաւէր, գրեթէ հալածանք ու կռիւ: Այսպէս, «միթը», ժառանգականութիւնը, սեռային բնազդը, որ տենդ եւ արագութիւն կու տայ ժամանակի սովորական, կանոնաւոր գնացքին, բայց «բարբը» մանաւանդ՝ իրողութիւններ են, որոնց խորը կը խտանայ մարդկայինին էութիւնը, փորձառութիւնն ու իմաստութիւնը: Եւ աս է կամարներու սարքուածքը, որու վրայ կառուցուած է Օչականի գրականութիւնն ու կեանքը: Իրականութեան ու ճշմարտութեան հազուադէպ զուգադիպում մը, նոյնացում մը: Այս համադրումին մէջ թուրքը եւ թրքութիւնը, ճակատագրի ձեռքին նման, անհրաժեշտ, ընդունուած ներկայութիւն մըն են հայուն կեանքին մէջ եւ զորս անտեսելը, ատելը, դատելն ու դատապարտելը անկարելի կը դարձնէ գրական արարքը: Հայութիւնն ու հայն իսկ, որոնց համար իր կատաղի սէրը կը զսպանակէ իր ամբողջ կեանքն ու արտագրութիւնը, կը նմանին պարզ դերակատարներու անանձնական եւ անթափանցելի նախախնամութեան մը ձեռքը, որ մարդկային ոգրերգութեան բուն ու դաժան բեմադրիչն է:

Այսպէս է, որ Օչական իր ճամբով կը հասնի իրապաշտութեան բոլորովին մէկ տարբեր սահմանումի մը: Այս է պատճառը, որ իր լեզուն ճմռթկուած ու խորտուրորտ կը թուի հայուն կեանքին նման, իր գիրերուն մարմիններն իսկ նուազագոյնի իջած են ու իր գրելակերպը մնայուն ճիգ մըն է ոչ թէ նկարագրելու, այլ իրականութիւնն իսկ ըլլալու: Գրականութիւնը տեսակ մը սղագրութիւնն է կեանքին — այս յատկանիշը Նիկողոս Սարաֆեանին քով ալ կը գտնենք: Սակայն ինչ որ փարիզահայ բանաստեղծին քով նուազ շեշտուած է՝ ատիկա ալ Օչականին ակնարկն է իրականութեան ծածկուած, խորհրդաւոր ու ծայր աստիճան բարդ՝ միւս երեսին վրայ: Ատիկա, լուսնին անտեսանելի կողմին նման՝ մարդկային բնազդներու, ժառանգական եւ առհասարակ մղումներու, ցեղային ու համամարդկային «միթ»երու, արեան ծէսերու թաքուն ցանցն է, որ կը ղեկավարէ մեր կեանքերը: Այդ իսկ է մարդուն կեանքին իրականութիւնը, եւ որ Օչականի գործին գաղափարական կմախքը, ներքին կառուցը կը կազմէ: Եւ հասնելու համար մարդկային այս խորութեան՝ դարաւոր բարքն ու կեանքի կիրքը շատ աւելի կարեւոր են, քան բանականութիւնը, ընթացիկ հոգեբանութիւնը կամ երեւակայութիւնը, ու նոյն իսկ տաղանդը:

Օչականի արձակը իր վերջնական ու հաւանաբար յաջողագոյն կերպարանքին կը հասնի իր վէպով, որուն առաջին փորձը կը հանդիսանայ «Մահպագ»ը, հրատարակուած 1824ին, «Հայրենիք» ամսագրին մէջ: Ատկէ առաջ իր արձակը, սկսեալ 1802ին «Առաջիմ արցունք»էն, բանաստեղծութեան եւ հեքիաթին հմայքին քաշողութեան մէջ մնացած է, տալով իրեն տեսակ մը ազատագրում իրականութեան բռնութենէն, ապրելով հանդերձ նոյն ատեն ոչ այնքան թուրքին, որքան թրքութեան սարսափն ու 1815ի աղէտին ամբողջաւատանջ փորձառութիւնը: Իրականութեան մէջ, ան երբեք զօհրապեան իրապաշտութեան չէ հակած, այլ մնացած է, իր կարճ պատմութենքու պարագային, տպաւորապաշտ, բայց առոյգ ոճի մը հնազանդ, ոճ մը՝ որ կը թաքնուի իր նիւթին մէջ ու կը նոյնանայ անոր հետ, գրեթէ անտեսանելի դառնալով: Դժուար չէ հասկնալ ինչու մտածումի եւ կեանքի բնական ընթացքին զսպումը, ինչպէս էր թրքահայերու պարագային՝ կրնայ այլակերպել լեզու մը՝ անոր մէջ մշակելով իմաստը ծածկելու, չափազանցելու, խտանալու եւ կարծրանալու ձգտումը: Եւ կամ՝ ճիշդ հակառակը՝ աւելի վերացականութեան, զգացականութեան ու նոյնիսկ Հռետորութեան դիմելու, իրբեւ փախուստի միջոց: Ահա այս տեսակ շրջանի մըն էր, որ կազմուեցաւ վիպասանին զգայարանական ու փորձառական ենթաշխարհը, ուր իր գիւղի տիպարներուն, կեանքին ու ոգիին խորունկ ըմբռնումը ու սէրը, եւ քաղաքին հանդէպ (այս պարագային՝ Պրուսան եւ Պոլիսը) իր նուազ դրական զգացումը կը միանան: Նոյն ատեն կը զարգանար մտաւորական հմտութիւնը՝ եւրոպական գրականութեան հսկաներուն ընթերցումով, որ աւելի ուշ պիտի ամբողջանար Պոլսոյ իր բարեկամներու գիրքերու, յատկապէս Արտաշէս Յարութիւնեանի ճոխ մատենադարանին միջոցաւ:

Բայց արդէն 1800էն 1805ի շրջանին, ան կը սկսի բանաստեղծութիւն գրելու: Օրուան գրական ճաշակը խառնուրդ մըն է լրագրային, գրականին եւ թարգմանականին, այս վերջինին պարագային՝ Ֆրանսականին: Դարասկիզբին թրքահայ յոյ գրական հրապարակութեան ամառի երեւոյթ մը ունէր, 95ի կոտորածները սրուած են կարեւոր մտաւորականները Եւրոպական ոտաններուն մէջ: Զօհրապ, 1893է մինչեւ 1900՝ երեք նորավէպ գրած էր միայն, ու գիրքերու հրատարակութիւնը շատ նուազած էր: 1894էն մինչեւ 1900 հինգ հատոր

գրական երկ միայն լոյս տեսած էր Պոլիտ Զոս գրական մտաւորականութեան երկու խաւ կար, մէկը՝ լրագրային խաւն էր, որ ամբողջին գոհացում կու տար, եւ որուն մաս կը կազմէին Եւտերպէ, Վերգինէ Գալճեան, Ստեփան Զամբարձումեան, Բարունակ Բարսեղեան, Յակոբ Եագոյեան, Բարսեղ Խաչէչէրեան, Մարի Պէյլէրեան, Պօղոս Եուսուֆեան, Էմմանուէլ Եսայեան, Գարրիէլ Ներշապուհ, Ե. Տ. Եղիազարեան, արկածախնդրական վէպերու հեղինակները, եւ շատ մը ուրիշներ: Եւ յետոյ կար որակաւորներու խումբ մը, որուն պիտի անդրադառնամ աւելի ուշ: Եւ անշուշտ, մամուլն էր գրական կեանքի շարժիչ ուժը եւ Օշական (այդ թուականներուն տակաւին Յովհաննէսեան էր անունը) թերթերէն էր, որ պիտի ստանար այդ գրական մտքի զգայնութիւնը եւ խափը, որ պիտի մղէր իր փառասիրութիւնը՝ տեղ մը գրաւելու ընկերութեան մէջ:

1903ին ան քսան տարեկան է: Յարդ աւարտած է Պրուսայի ազգային վարժարանի Ե. եւ Ջ. դասարանները, տարի մը Արմաշ դրկուած է ազգին կրթութեան զարգացման փախած է՝ չկարենալով վանքի կարգապահութիւնը հանդուրժել: Ու հարիւրաւոր քիլոմետրներ ճամբայ կտրած է, լեռներուն, ճահճներուն ու դաշտերուն մէջէն, հիւանդ եւ անօթի, ու շունչը առած է, մոռալ գիշեր մը, Մարմարճը, Չաքրեան աղային տունը, դուռը բացած ու փլած շեմին, առողջութիւնը քայքայած եւ առասպելային յիշողութիւնը ցնցուած: 1900ն ու յաջորդ տարին կրկին Սէօլէօզ կ'անցնէ, ուսուցչական պաշտօնով: 1902ին սակայն դպրոցին հոգաբարձուները գինքը կ'արձակեն գործէն՝ գայթակղած իր «Առաջիմ արքայազն» պատմուածքէն, որ իր աշակերտները, իրմէ գաղտնի, Պոլսոյ «Արեւիկ» թերթին մէջ հրատարակել տուած էին:

Ու կ'անցնի մերձակայ հայ գիւղ մը, Մարմարճը, կրկին ուսուցիչ: Ըմբոստ, հպարտ, ինքնավստահ, յանձնապաստան, փայլուն իմացականութեամբ, եւ գրականութիւնը լափելու ահաւոր ախորժակով օժտուած երիտասարդը փաստօրէն չի սեղմիր ազգային կառոյցներու եւ ընթացիկ մշակոյթին մէջ: Լուսանցքային է ու պիտի մնայ՝ ամբողջ կեանքին: Այս դժուարութիւնները աւելի կը սրեն սիրելու, ստեղծելու, ապրելու հրայրքը: Գիւղացիի բնաւորութիւնը եւ տնտեսական գրկանքը դեր մը կը խաղան, քնարական աշխարհն ու հեքիաթը, որ կը փորձէ այդ օրերուն, փախուստի լուծումներ են՝ հաւանաբար՝ Նոյն ատեն, Յակոբ կը մտնէ գունագեղ, անհաւասարակչիւ եւ իրեն համար առինքնող տիեզերքին մէջ զոքուրներ:

րուն, ընկերութեան մէջ անգետեղելի մարդոց, որոնց արդէն խառնուածքով մօտ կը զգար: Ուրիշ բաղադրիչը կացութեան՝ կիրքի հասնող իր անվերապահ համոզումը իր բացառիկ ճակատագրին, թէ՛ ի վերուստ նախասահմանուած էր «մենծ մարդ» ըլլալու: Իրեն համար, մեծութեան չափանիշը չէր կոչուեր եկեղեցիին Աստուածը (որուն համար շատ ալ համբերութիւն չունէր, ինչպէս յայտնի եղաւ Արմաշի մէջ, երբ իր դասարանը ստիպեց, դանակի սպառնալիքին տակ, Մեծ Պահճի ծոմը աւրել...), այլ կը կոչուէր Պալգաք ու Տոսթոեւսկի: Եւ վերջին տագնապը իր աշխարհին՝ թուրքը:

Ճանչցած էր թուրքը շատ կանուխէն, ու ո՛չ ատելութիւն, ոչ ալ վախ կը զգայ անոր հանդէպ: Պատանութեան, մատ մը տղայ՝ ան ամէն օր Պրուսայի թրքական թաղին սեռամոլ բազմութիւնը կը կտրէր, դաշոյն մը ձեռքը, ընկերանալու, որպէս թիկնապահ այդ նոյն Չաքրեան աղայի «փառլախ» մանչուն՝ Գէորգին, մինչեւ դպրոց, ու ետ: Թուրքը արգելք մը, պատուար մըն էր «հայ չոզիին» համար, որ կ'ուզէր մարդկայինի ապրումին է՛ն հեռաւոր հորիզոնները հասնիլ: Թուրքը իբրեւ հայուն խաչը, մարտահրաւէրը, իբրեւ Նախահնամութեան գործիքը, հայելի մը հայուն ինքնաճանաչումին — աւելի ուշ էր, որ ան պիտի դառնար նաեւ իր ու իր ժողովուրդին տառապանքին ու նուաստացումին մայր պատճառը: «Մնացորդաց»ով թրքուհին տիպարն ալ պիտի գար բեմ, իբրեւ հայելի մը հայկական սեռականութեան:

Անյագ ընթերցող՝ Յակոբին լաւ ծանօթ ըլլալու էր նաեւ մեր պարբերական մամուլին մէջ երեւցող բանաստեղծներու գործերուն որակը: Մեծ մասով քաղքենի, հանգչած քնարերգուներ են ու կը կոչուին վահան Մայիզեան, Աղեքսանդր Փանոսեան, Մկրտիչ Աճեմեան, Սիպիլ, Գարբիէլ Խանճեան, վահան Թէքէեան, Մերուժան Պարսամեան, Միհրան Ուղուրլեան: Միայն Արտաշէս Յարութիւնեանը եւ Ռուբէն Որբերեանն են, որ գաւառը կը կրեն իրենց արեան մէջ, բայց իրենց անսեռ ու բառային քնարերգութիւնը չորցած ծաղիկի տպաւորութիւն կը թողու իր վրայ: Բանաստեղծը, որ կրնայ ազդած ըլլալ Յակոբին վրայ, առաջին հերթին, Միսաք Մեծարենցն է:

Մեծարենցի առաջին քերթուածները լոյս կը տեսնեն 1903ին Պոլսոյ «Արեւիկէ»ին մէջ (Սիրոյ ուղիւ) եւ «Համրագիտակ»ին մէջ (Փառքերը, Յիշատակ, Արեւագալ, Աչքերդ) եւ Տղու մը մահը՝ արձակ: Այս քերթուածներուն ետին պահուած տղան

Յակոբէն երեք տարի պզտիկ է ու բոլորովին զուրկ՝ կեանքի փորձառութենէն: Ոչ դաժան գրկանքը, ոչ կեանքի պայքարը, ոչ մարդկային բնոյթը եւ ոչ ալ թրջութիւնը մօտէն ճանչցած է, ու հաւանաբար ոչ ալ սիրոյ կամ սեռի կրակը: Բոցավառ երեւակայութիւնը, զգայարանքներու գերզգայուն վիճակը, առանձնութեան մէջ իր անձին, բնութեան ու լեզուին միջեւ ստեղծուած Հեղձուկ, գաղտնի մտերմութիւնը կը լեցնեն իր կեանքին խորշերն ու կարօտի տարածութիւնները: Իր ժամանակի ու միջավայրի ընձեռած կարելիութիւնները իրենց կատարելութեան հասցուցած բացառիկ բանաստեղծն է:

Յակոբը բոլորովին տարբեր մէկն է: Անձը, որ նստած գրած է այն Օրագիրը ու մանաւանդ քերթուածները, որոնք Գէորգ Չապրեան լոյս ընծայեց «Հայրենիք» ամսագրի մէջ (1960, ԻԸ տարի, թիւ 12), հաւանաբար տակաւին չէր գիտեր, թէ բանաստեղծ է, թէ արձակագիր: Օրագիրը անշուշտ բանային է բանաստեղծութեան եւ անձին: Առաջին հաստատումը այն է, թէ յստակ ու սուր միտքը հոգեբանական անողոք վերլուծումի կ'ենթարկէ իր ներքին անձը, եւ թէ «տարօրինակին մարմաջն ու անձանոթին հմայքը» կը վարեն զգացական կեանքը: Եւ թէ՛ միշտ չնչին հաշիւներ են, որ դէպի սէր կ'առաջնորդեն գինքը: Այսինքն՝ պզտիկ սուտերու խաղալիքն է, զոհն է ու սիրահարը: Մական անկեղծ ըլլալ եւ ընդունիլ այս դառն իրողութիւնը՝ եւ տակաւին սիրել՝ —ահա՛ տաղնապար Յակոբին: Բանականութեան ու զգացումներուն յաւիտենական պայքարն է այս: Երկրորդ հաստատումը այն է, թէ այս ներքին հակասութիւնը մահացու է, սակայն պէտք չէ, որ սիրահարը ազդուի ասկէ: Ուրիշ խօսքով՝ անխուսափելիօրէն, կեղծիքի տարր մը կը մտնէ սիրոյ մէջ, փախուստ մը կայճմարտութենէն: Ու միտքը պարտուած ու խիղճը անձնասպան՝ ան կը դառնայ զգայնութիւններու վայելումին, այսինքն՝ հեշտանքին ու տարփանքին, որ «մահուան տրտմութիւններու» մէջ թաթխուած է:

Սեռի եւ սիրոյ այս ներհակ, անհաշտ հակադրութիւնը՝ Յակոբին առանցքային տրամներէն մին է, ու երեւան կու գայ, թէ քերթուածներուն եւ մանաւանդ Օրագրին մէջ: Հակադրութիւն, որ մահուամբ միայն կը լուծուի: Մահուան զգացում մը երբեք հեռու չէ եղած իրմէ, ինչպէս թրջահայ գրեթէ բոլոր մտաւորականներէն եւ արուեստագէտներէն: Իր պարագային՝ սկսելով քսան տարեկանի իր այս ներքին բզկտումներէն, յետոյ պատերազմի ժամանակ, Պոլսոյ մէջ, երբ ոստիկանութիւնը պատկերը ձեռքը տարիներով գինքը կը փնտռէր: Ու ասկէ ետքն ալ՝ հալածական նոյն թշնամիէն (երբ ստիպուեցաւ

Քիւֆէճեան անունը փոխել Օշականի) կամ իր գիշերային մղձաւանջներու ատեն, երբ ընդոստ կ'արթննար քունէն «Եկան... եկան...» աղաղակելով: Իր սրտի հիւանդութիւնը ու մահուան սպառնալիքը, որ ընկերացաւ իրեն մինչեւ գերեզման՝ նոյն մահն էր տարբեր կերպարանք առած: «Մահուան հետ հաշտուած մարդ եմ, ու կեանքին հետ ալ հաշիւս մաքրած եմ» կ'ըսէր, առանց ճակատագրապաշտ ըլլալու, այլ բացարձակ ազտութեան մը գգացումը ապրողի անվախ, խրոխտ եւ յարձակունակ համակերպումով: «Ամէն օր կը զգայի քեզի, առանց վախի ու առանց խանդի: Մօ՞տ, հեռո՞ւ: Ինծի կու գար, թէ երկուքն էիր» այսպէս պիտի գրէր ան Մահուան, 35 տարի ետքը «Սկար» գրութեան մէջ («Զուարթնոց» Ա. տարի, թիւ 1, 1937) սրտի կաթուածէ մը ետք: Յակոբ ամբողջ կեանքը մահուան ներկայութեան գգացումին մէջ ապրած էր, մահուան մէջ փնտռելով կեանքի իմաստը, միշտ ուզելով անոր հետ խօսիլ՝ այդ թաքուն իմաստը հասկնալու համար: Սակայն մահը, վիպական հերոսի մը նման, կ'ամ կը խաղար հետը կամ ալ կը կռուէր, առանց իր այդ գաղտնիքը տալու: Բոլոր հայ գրագէտներէն, որոնք մահուան փորձառութիւնը ապրեցան իրենց մարմնին եւ հոգիին խորը, Օշականին մտերմութիւնը անոր հետ հաւանաբար ամէնէն երկարատեւ ու մանաւանդ ամէնէն մօտ, անմիջական, անձածկոյթ եւ անողորմը եղած է: Ու թափանցած իր գրականութեան մէջ, եղած կեանքի գեղեցկութեան եւ եղբրականութեան անբաժան մասը: Բայց մանաւանդ՝ իր վէպին մէջ, տալով իր հերոսներու մահուան վայրկեաններուն այն տրամաթիքական ներզօր ուժգնութիւնը, որ անմոռանալի կը դարձնէ այդ պահերը: Մարդ կը մտածէ «Ծակ-Պտուկը»ի Հաճի Ստեփանին կամ «Մնացորդաց»ի Մաթիկ Մելիքեանեանցի մահուան տեսարաններուն, որոնց «իրաւութեան» կտուր Օշական անկասկած իր մանկութենէն ի վեր կրած է իր մէջ...

140-2001

Մահուան մտերմութիւնը կեանքը աւելի կը քաղցրացնէ նաեւ: Ու ասիկա կը զգանք Մեծարեանցի ամէն մէկ տողին մէջ ալ, առանց սակայն այն ուժին, որով գրագէտը պիտի արտայայտէր իր ապագայ վէպերուն մէջ: Բայց բանաստեղծութեան մէջ իսկ Օշականի գրչին տակ մահը անողորմ նկարագիր մը ունի: Երբ Յակոբ կը գրէ «Բաժնուումը» հնչեակին մէջ-

Ձի սիրեցիմք աղուր գողով կրակով
 Ծատ աւելի մեր միսերուն սահմանէն,

digitised by A.R.A.R.®

Գրչին մէջ...
 Մտնում էր...
 Եւ արեւը...

Մերձեցումը մեզ որբացուց, իրար քով
Բաժանումը պիտի բերէ մեզ Ոտրէմ:

ուրիշ բան չ'ընենք եթէ ոչ հուշակել սեռին յաղթանակը՝ մերձեցումի պարագային, եւ սիրոյ յաղթանակը բաժանումի պարագային, սակայն մահուան համը բերնին, ինչ որ ալ ըլլար լուծումը, որովհետեւ մէկուն յաղթանակը միւսին անխուսափելի մահով պայմանաւոր է: Այսինքն՝ զգալ ամբողջական, կատարեալ, մարդ էակը լիացնող, միացնող այդ իտէալ սիրոյ անկարելիութիւնը: Այս՝ պարտութիւն է Յակոբին համար, սակայն ասիկա ընդունելու, դիմագրաւելու համար, թէ՛ լուսամտութիւն եւ թէ՛ ալ քաջութիւն պէտք էր, բաներ՝ որոնք չպակսեցան իրեն: Ու հաւանաբար մարդկային կամքէն անկախ այդ ձախողանքն էր գլխաւոր պատճառը, թէ ինչու տակաւ ան հեռացաւ բանաստեղծութենէն, որ ամէն բանէ աւելի սիրոյ լաւագոյն եւ կատարելագոյն արտայայտութեան կալուածն էր: Ու մտաւ արձակ բանաստեղծութիւն կոչուած որձեւէզ սեռին ծաղկանոցը ու մտաւ նաեւ հեքիաթին ու խորհուրդին մոզական տաճարէն ներս, նոյն ժամանակ փորձելով պատմութեան սեռն այդ իրականութեան մէջ, ասիկա մարզանքի եւ աշկերտութեան շրջանն է իրեն համար: «Տասը տարի չորստութիւն պիտի ընես՝ մինչեւ որ զիտնաս, թէ գրչին ո՞ր ծայրով կը գրեն», բաժ է ան: Ատկէ ետքն էր, որ ան պիտի համարձակէր ոտք կոխել իր վերջնական ու միակ վաւերական տիեզերքին մէջ, որ վէպն էր:

Սեռի ու սիրոյ կռիւին անհաւասար նկարագրին ու ճակատագրական վախճանին հակազդելու համար էր, որ ան բանաստեղծութիւն գրեց այդ մասին: Յայտնի չէ: Ամէն պարագայի, «Հիմ վարդեր» գգայուն ու խոհուն քերթուածը ատոր վկայութիւնն է, որ կու տայ ամէն տողի: Ահա վերջին երկու տուները.

Ու ես կ'երթամ՝ ինչպէս կ'երթամ իրերմ հիմցած
Կէս մը տարտամ յիշատակիդ սաքսուռներով:
Միւսէդ ետքը իմչո՞ւ արդեօք բամ մ'հոգիւդ՝

Զոր վարդերում ծղօտիմ պէս լերկ ու անպէտ
Կը դիտէ լուռ մահն անցեալիմ մեր անխռով:
Հողակայտիմ վրայ հակած խաչիմ պէս ցած:

Անշահեկան պիտի չըլլար հոս տալ սիրոյ նոյն թեմային շուրջ
տասնեօթը տարեկան Մեծարեցի քերթուածը՝ լոյս տեսած

նոյն տարին, 1903ին, Պոլսոյ «Մասիս» շաբաթաթերթին մէջ:
Քերթուածը կը կոչուի «Սիրոյ ուղիւ»:

Ուզի մ'ումիմ ես Որբանոյշ,
—սիրոյ ուղիւ մետաքսաւտ—
որում հըմայքն երջակայոյշ
կ'ոգեարէ զիս առյաւետ:

Գըմբոյշ հիւքեր կը փըթթիմ հոմ,
ու հարսնուկներ հըրահոսամ.
հոմ կը հիւսեմ երգ ու գեղօմ,
ես սիրավառ, խանդո՛տ գուսամ:

Իսկ երբ օր մը խեմ աչքէս
իմ պաշտելի ուղիս՝ անհետ,
մութ գիշերներմ ու ոսկեգէս
չցոյլայ այ արեւմ յաւետ,

Ոտբէմ գըտնեմ պիտի ես յար
սիրոյս մամբան, մի՛շտ անմոլոր-
բաւ է անոր ես անդադար
հըրայրքն ումիմ, պաշտո՛ւմ բոլոր:

*Եթէ այսքան երկար մէջերում ըրինք այդ տարիներուն
ամէնէն վաւերական բանաստեղծէն, Մեծարենցէն, նպատա-
կը երկու բանաստեղծութիւնները իրարու հետ բաղդատել չէր,
հակառակ որ նման աշխատանք մը անմիջապէս երեւան կը
հանէր, գոնէ այս տողերը գրողին համար, սէօլէօզցի երիտա-
սարդին յստակ առաւելութիւնները -զգայարանային նրբու-
թիւնը, լեզուական հակակշիռը: Այլ հաստատել, թէ Յակոբ
Յովհաննէսեան բոլորովին ինքնատիպ ու նոր տաղանդ մըն
էր մեր գրականութեան մէջ, որ չէր կրնար ազդուած ըլլալ
ոեւէ մէկէն: Առանց ստորագնահատելու Մեծարենցի հրաշալի
քնարերգական զգացականութիւնն ու զգայարաններու աշ-
խարհին ճոխութիւնը, պէտք է հաստատենք անոր երանաւէտ
անգիտութիւնը սիրոյ մասին, ու պարզունակ հասկացողու-
թիւնը մարդկային խառնուածքին: Մեղադրանք չկայ այս հաս-
տատումի հտին: Բոլոր ուսմանիք բանաստեղծները այդպէս
եղած են, վար ի վերոյ —սիրատենչ, տեսլահար, ինքնակեդրոն,
երեւակայութեան եւ անմիջական, հզօր զգացումներու անձ-
նատուր: Ասոր դիմաց՝ մարդ միայն անբառ ու անխառն
զարմանք կրնայ զգալ ի տես սա գիւղացի երիտասարդին, որ*

յաջողած է գեղջկական սեղմ, գոց ու սահմանափակ մշակոյթին արտօնած սիրոյ խարուսիկ վայրկեաններու ապրումներէն այնքան փորձառութիւն եւ իմաստութիւն բիւրեղացնել իր արուեստին մէջ, այնքան մօտենալ մարդկային ճշմարտութեան:

Իրականութեան մէջ, Յակոբ կէս դարու գրական աւանդութեան մը դէմ է, որ գրիչ կը շարժէր: Մեծարեցէն զատ միայն Վահան Թէքէեանի բանաստեղծութենէն կրնար ազդուել: Իրմէ միայն Հինգ տարի մեծ էր Վահան Թէքէեան, որուն «Մաքուր սիրոյ ձայնը» քերթուածը Միքայէլ Շամտանճեանի «Ծաղիկ»ին մէջ (1903, թիւ 22, էջ 261), շատ տարբեր չէ Մեծարեցիչին: Ահա այդ քերթուածը.

Խորշէ մը դեռ, ան վախճալով, չըլտուելում
Համոզումով ու եղանակ մը կոտորտած
Ծրգիմ մէջ խառն՝ գետնամած ու քազմատարած
Դըմրեթիմ տակ կը մըմնջէր իր ալեում:

Դըմրեթիմ տակ ուր դեւերու ուրուակազմեր
Խորանմ ի վեր ու երկամբէն որմերում սուրբ
Կը մագլցիմ, կը վագվրտեմ՝ քրքիջ մը նուրբ
Ծաւալելով ու իշխելով հմա իբրեւ տեր:

Միմջ խորանիմ ետեւ ծուկկի եկած ահա
Հաւատարիմ դըպիր մանուկ մ'արդեօք մախկիմ
Ամեղնագամդ նոր տերերում սաստող կամ հիմ
Շարակամի կտոր մը հիմ կը հեկեկայ:

Կը պատահի նոյն իսկ որ երբ լուսամուտէմ
Արեւի թել մը մութ տեղում մէջ երկարի՝
Ձայնիմ շեշտերմ՝ քիչ մ'աւելի յանկարծ առի՝
Ժըխորիմ մէջ լոյսի շիթեր վեր կը նետեմ:

Թէքէեան 18 տարեկանին արդէն Եւրոպա է — Լոնտոն, Մարսէյ, Հոլանտա, — ու վերջապէս՝ Օզիպտոս, ուրկէ ետ Պոլիս պիտի դառնայ միայն Սահմանադրութեան տարին, 30 տարեկանին: Վերելի բանաստեղծութիւնը երեւակայութեան, յիշողութեան, տարտամ տպաւորութեան, բանաստեղծական սուր զգայնութեան կնիքին տակն է, ու կը փորձէ իտէալ սիրոյ ու կրօնական զգացումին համադրումը ընել: Սիրոյ ձայնը մեզի կու գայ խունկի, աղօթքի, ուրուականներու, միամիտ,

տղայական անմեղությունն ու յոյսի շիթերու մէջէն, այսինքն՝ միայն Վահանն է, որ կը տեսնուի հոն, իր բառերուն ու խակութեան մէջ կորսուած, բայց՝ ոչ մէկ վաւերական ապրում, զգացում կամ դատողութիւն, ոչ ալ իրականութիւն կը բերուին մեր ուշադրութեան: Օրուան ընթացիկ ոճն ու խորքն է, ոչ շատ տարբեր այն նորերէն, որոնց մասին 1901ին Յովհաննէս Գազանճեան կը գանգատէր նոյն «Մաղիկ»ին էջերէն՝ «նորերը Դուրեան կը կապկեն... մեռելահոտ բաներ կը գրեն, վարդ ու սոխակ կը կրկնեն»: 1903ին Արտաշէս Յարութիւնեանը Ձմիւռնիոյ «Արեւելեան մամուլ»ին մէջ ազատու գրականութիւն մը ունինք բոլորովին խոպան» կը գրէր թերթի խմբագիրները Տիգրան Արփիարեան, Աղեքսանդր Փանոսեան, Յովհաննէս Ալյան մտքի ողորմելի աղքատութիւններ են...»: Դուրեանէն ետք, Մ. Աճեմեան (ծնած 1838) ու Յ. Մէլեան (ծնած 1853) գրքունակ վիպապաշտութիւն մըն էր, որ կը փորձէին ապրեցնել: Դուրեանի մահէն երեսուն տարի անց՝ տակաւին ոչ մէկ բանաստեղծ կրցեր էր պոլսահայ գրականութիւնը նորոգել, տեղոյն ու սպառած քնարերգութիւնը վերականգնանային: Այսպէս էր, որ միայն սէօլէօզցի վարժապետին քերթողութիւնն է, որ այդ ներքին պրկուածքն ու արուեստի Հասկացողութիւնը կը թուի ունեցած ըլլալ, այն անհրաժեշտ ինքնատպալութիւնը ու տաղանդը՝ նորութիւն մը բերելու համար մեր բանաստեղծութեան մէջ: Սակայն դէպքերը տարբեր ճամբով ընթացան:

Ճիշդ այդ ճակատագրական 1902ին էր, որ Յակոբի առաջին պատմուածքը յոյս կը տեսնէր «Արեւելք»ի մէջ: «Առաջիմ արցունքը» շատ յատկանշական գրութիւն մըն է, որ իր հին էջերուն մէջ արդէն կը խտացնէ ապագայ վիպասանին թեքնիքին, կեանքին ըմբռնումին եւ արուեստին հիմնական թեմաներուն մէկ կարեւոր մասը: Մայրը, սէրը, սեռային մղումը, գիւղը, երգը, մահուան շուքը, տոհմային բնազդը՝ կմախքը կը կազմեն պատմուածքին: Մայր ու տղու այս տրամին մէջ արդէն ողբերգութիւնը մարդոց կամքէն ու նոյնիսկ գիտակցութենէն դուրս գոյութիւն ունի, կը ծփայ իրենց վրայ ճակատագրականութեան մը նման, իրենք իրենց կամքէն անկախ դարաւոր օրէնքներու եւ հրահանգներու կը հնազանդին կատարեալ անգիտակցութեամբ: Ոճն ու թեքնիքն ալ ապագայ Օշականը կը մատնեն — առոյգ ու զուսպ լեզուն, իրականութեան նկարագրութիւնը՝ պարզ ու խիտ, ոչ մէկ ճիգ յուզելու ընթերցողը, բացարձակ պակաս փաթեթիքի (այեւհեր Արթիւնիկին արցունքը Հայրական բնազդին ցաւէն կու գայ, հեղինա-

կին անձին բացակայութիւնը իր գրութենէն, արագ ընթացքը եղելութեանց, որոնք իրենցմէ ու տրամաթիքական բնութեով աւելի կը սրեն կեանքին եղերականութիւնը: Բայց մանաւանդ ոճի եւ խորքի միաձուլումը, եւ բարձր սեւեռելու, եւ անոնց ընդմէջէն՝ կեանքի ճշմարտութեան ձգտելու կարողութիւնը:

Պատմուածքի մը ամէնէն յատկանշական ու «աշխատ-ւած» մասերը սկիզբն ու վերջն են:

Կու տամ «Առաջիմ արցումներ»ին առաջին քանի մը տողե-րը:

«Դեղը մեծցեր էր: Մօրը մէկիկն ըլլալուն՝ իր տղայութիւնը չէր յանձնարար արեւի տակ սպառած օրեր կամ ամիսներ, ծովը չէր պագած անոր երեսը եւ հողիմ հետ չէին հաշտուած անոր ռոտները: Կովիկ, ամուշ, աղուոր ձագի մը պէս մօրը շուքիմ, մօրը հոգիիմ մէջ, մօրը փէշիմ շուքը մէկ հատիկի մը խելօժութեամբ մեծցեր էր ամ: Թեւ ատեմ-ատեմ ուզած էր փողոց իջնել, փորձուած էր կօշիկները մետել ռոտէմ, բայց մօրը համբարէմ վախցեր էր միշտ: Ու միշտ իր բոլոր հանոյքներուն, իր տղու գրօսամբերու ետեւէմ Ուայած ատեմ, այդ մօրը համբարը ցցուեր էր աչքիմ դէմ:

Ու տղան չէր կարգուեր, այդ համբարին ու մօրը արգել-քին հետեւանքով:

«Ի՞նչ պատմառու սակայն տղան անպսակ կը թողու անոր այս տարիքիմ մէջ, ատիկա ստոյգ չէր գիտեր» կ'ըսէ Օշական, ու կը բերէ Վարվառ հանրմին խօսքը:

«Տղաս, ես քեզի Պրուսայէմ աղջիկ կ'առնեմ, հոգդ մի՛ ըմբ, ուզածդ աղջիկ թող ըլլայ:Օրիմ մէկը սակայն, հակառակ մօրը զգուշութեամ աւ հակառակ իր ջանքերուն, սիրած էր ամ: Ու ի՞նչ սիրով.....»:

Օշական Արթինիկին եւ Վարդանոյշին սիրային, Ֆիզի-քական կապերուն մասին ոչինչ կ'ըսէ, չեխովեան մշուշի մը մէջ պարուրելով կեանքին գաղտնիքը:

Մերութեան դուռներուն հասած է Արթինիկը: Եւ Օշա-կան այսպէս կ'աւարտէ պատմուածքը:

«Ասոր վերջը չկայ: Սանկ տղեկ մը առնէիմք քովերմիս մէ, գէ՞շ կ'ըլլայ:

— Ես այ ստի պիտի ըսէի, գաւակս, «ամա» կը վախճամ: Աս գեղի շունները «թերպիւսիս» են, «քիս» են, «մետէս» Պրուսայէմ բերել տուր կ'ըսէ: Ասանկ չ'ըլլար: «Հէմ գեղիմ մէջ շատ են ատանկ գաւակ չունեցող «տէ» օտար տղայ առնողները:

— Ես մէկը «միմասիս» կը տեսնամ: «Հէմ» խոշոր է, «եւմ» գիտնական, «եւմ» աղուոր տղայ է: Սա Գրիգորիկը, կը ճանչ-

Ոստ, անանկ չէ՞:

—Ո՞ր Գրիգորիկը:

—Մեր տունը եկող Գրիգորիկը, Վարդանյշիմ տղամ:

—Է, չէ՛, չէ՛, առջիդ մեռնիմ, գաւակս, գեղ մը մարդը վայդ, եղուկդ կու տայ, գացիր, գացիր տէ աս պապ չումնցող «փի՞նը» ուսկից գտար: Պրուսայէն բերել կու տամ: Թող կ'եմայ եիմա:

Պատուելիմ մօրը քովէն դուրս կ'ելլէ խորապէս յուզուած: Իր ծնրումի սիրտը սաստկապէս ազդուած է այդ անգիտակից ամարգամքէն ու առաջիմ անգամ ըլլալով, իր արցումքը, իր առջիմնկ արցումքը կը թափէ Գրիգորիկի մուէր բերած մարմաններէն մէկուն մէջ:

Պէտք կա՞յ շեշտելու այս պատմուածքի ոճին թարմութիւնը, Հոգեկան ենթաշխարհին ու կեանքի հասունութեան նորութիւնը, չըսելու համար ինքնատուութիւնը՝ երբ բաղդատենք օրուայ Պոլսահայ ընթացիկ գրականութեան հետ եւ այդ թուականի գրական ճաշակին ու հրապարակը լեցնող գրիչներուն ընդհանուր նկարագրին հետ: Պատմուածք կ'իշխէ ու այդ տարիներուն, 1897էն 1902՝ հարիւրէ աւելի է թիւը օրաթերթերուն մէջ վիպակ ու պատմուածք ստորագրողներուն: Տիրող անունը անշուշտ Զօհրապն է, որուն արուեստը բացառիկ է, բայց ան արդէն 1893էն ի վեր տարին հազիւ մէկ կամ երկու նորավէպ կը գրէր, ու հրապարակը կը գրաւէին Լ. Շաթրեան, Վահրամ Սվաճեան, Արամ Անտոնեան, Վահան Մալեգեան, Վահան Թէքէեան, Ռուբէն Զարդարեան, Օննիկ Չիֆթէ-Սարաֆ, Գեղամ Տէր Կարապետեան, եւ այլք: 1902ին օրուան մարդն էր Վահան Յարութիւնեանը, Արտաշէս Յարութիւնեանի եղբայրը, որ նոյն տարին «Մասիս» շաբաթաթերթի սարքած նորավէպի մրցումին առաջին մրցանակը կը շահէր «Ծնրուկիմ խղճահարութիւնը» անուն գրութեամբ մը, որուն անունէն դիւրաւ կրնանք երեւակայել յուզումնահեղձ նիւթն ու ոճը (չատ հաւանաբար խմբագիրը Տիգրան Արփիարեանի ֆարիգի "Journal" թերթէն կ'առնէր գաղափարը եւ որուն պարգեւատրուած նորավէպը կը թարգմանէր ու կը տպէր «Մասիս»ի մէջ, հարց տալով, թէ «Հինգ հազար մասնակցողներու մէջէն ընտրուած նորավէպին բաղդատմամբ հայերէնը այդքան ոչնչութիւն մըն է ֆրանսերէնին քով»: Ու կը պատասխանէր՝ «Ոչ»): Նոյն տարին, 1902ին, Միքայէլ Շամտանճեան իր «Ծաղիկ» օրաթերթին մէջ «Օրումս տիրող դեմքերը» յօդուածի մը մէջ կու տայ Պոլսոյ ամէնէն յարգուած գրողներուն ցանկը Ահաւասիկ: —Սիպիլ, Զօհրապ, Հր. Ասատուր, Եղիա Տէմիրճիպաշեան, Յարութիւն Մրմրեան, Ռեթէոս Պէրպէրեան, Բիւզանդ Քէչեան, Տիգրան Արփիարեան, Օննիկ

Ջիֆթէ-Սարաֆ, Աղեքսանդր Փանոսեան, Գրիգոր Մալխաս, Թէոդիկ, Միսաք Քոչունեան, Միքայէլ Շամտանճեան, Արամ Անտոնեան, Ենովք Արմէն եւ Գ. Չարուհի Հասարակաց յայտարարը — աւանդական զգոյշ իրապաշտութիւնը, բարոյախօսական, զգացականութիւնը, ոգեպաշտ Հայկականութիւն մը, յուզական, օրինապահ ոճ մը, զուսպ Հայկականութիւնը: Զօհրապէն դուրս, Հաւատք ու յարգանք՝ տիրող ճաշակին, «Ինդիլը չհանող» գրականութիւն մը, որ զուրկ չէր սակայն ներքին սուր կռիւներէ, յատկապէս լեզուական հարցերու շուրջ:

Այսօրուայ ակնոցով, միակ գրագէտը, որմէ Օշականի արձակը կրնար որեւէ ազդեցութիւն կրել 1900ի շուրջ՝ Զօհրապէն էր: Միւս բոլոր անուններէն միայն Զօհրապէն, Վահան Թէքէեանին, Հրանդ Ասատուրին, Եղիա Տէմիրճիպաշեանին, Յարութիւն Մըմբանին եւ Ռեթէոս Պէրպէրեանին է, որ տեղ կու տայ Մինաս Թէօյեօյեան իր «Դար մը գրականութիւն» հատորին մէջ: 1900էն ետք Զօհրապ կը հրատարակէր միայն քաղցրի տրամներու, սիրային արկածախնդրութիւններու շուրջ նորավէպեր, որոնք սեռին բերումով ցնցիչ ու հոգեբանօրէն ճշգրիտ ըլլալով հանդերձ՝ արագ, իրապաշտ, բայց առհաւական տազնապներէ հեռու կը մնան («Երջամիկ մահը», «Մարապետը», «Փոքորլըն», «Փոստալ», «Անդրշիրիմեան սէր», «Լուսաեզգիմ», «Վերադարձը», «Մագքաղիմէ», «Յակոբիկ», «Ժամիմ րակը» եւ «Անհաւատարիմ») մինչ, աւելի ուշ, Օշականի գիւղական կեանքէ տրամները, ու մանաւանդ «Խնձարեմբը» մարդկային շատ աւելի խորունկ եւ իրական ողբերգութիւնը պիտի պեղէին: Զօհրապի քերթուածներն ալ պիտի տառապին անոր իրապաշտական խառնուածքէն ու պիտի չյուզեն մեզ: Իր եւ Օշականի գրական խառնուածքներուն Հակոտեանայ բնոյթը բացայայտ է՝ թէ՛ անոնց բանաստեղծութեան մէջ (Զօհրապ 18 հատ գրած է 1883էն մինչեւ 1908) թէ՛ ալ արձակին մէջ: 1887ի «Արեւիչ»ի մէջ հրատարակուած իր առաջին նորավէպէն («Վարդապետիմ մականունը») եւ իր «Անհետացած սերունդ մը» վէպէն, որ լոյս կը տեսնէ 1891ին, մինչեւ իր վերջին նորավէպը՝ 1912ի «Անհաւատարիմ»ը, Զօհրապին գրականութեան նկարագիրը, իր թափանցումի խորութիւնը, ընդգրկած կեանքին տարածքը, տիպարներուն բարդութիւնը չէ փոխուած, բան մը, որ գրականութեան տիւրքաւորութեամբ յատկանիչն է: Ինչ որ փոխուած է իր առաջնահերթութիւններու եւ յանձնառութիւններու կարգն է կեանքի իր այլազան իրադրութումներուն մէջ: Ասիկա անխառն չարիք մը չէ՝ անշուշտ, սակայն կը մատնէ Զօհրապի մօտ, հակառակ իր

ստորագրողներն՝ գրագետի յանձնառութեան կիսատ ու երկրորդական բնույթը, ի տարբերութիւն Օշականի կեցուածքին: Արդարեւ, Օշական, ճիշդ այդ 20 տարիքին, արդէն որոշած է իր ամբողջ կեանքին ուղին եւ նպատակը, եւ որմէ չչեղեցաւ նոյնիսկ Յղեունի աննախատեսելի, վիթխարի ընդմիջումով: Չափելու համար Օշականի անձին ներքին որակը, անոր դաժան կամքին եւ կամաւոր տեսիլիւնին ահարկու ուժը, եւ իր կեանքի անդրդուելի ծրագրին ահարկու օրէնքը՝ կ'արժէ կարդալ իր «Համապատկեր»ի 10րդ հատորին 646 էջերը, գրուած հինգ ամիսէն, ուր ան կը վերլուծէ իր անձն ու գործը: Ու՛ սա տողերը — «Յ. Օշական ոչ ոք է ոչ իմ չէ ընդունած իր միտքը ազատագրող: Յատա՞կ: Կ'ենթադրեմ: Ու կ'ուզե՞ք անելիմ: Ամէն ինչ կը դաւեր անոր այդ ազատագրումը արգիլելու: Եւ սակայն քան չմտած, առանց կանոնաւոր կրթութիւն մը տեսնելու, անիկա իր մտքին մէջ ունէր, «ուրուագիծ» իր գործին աշխարհը: Ասիկա, «Անբուէն» մեթոտիմ տարօրինակութիւնն է անշուշտ, բայց որ իրաւ է դարձեալ գործին, ինչպէս գործաւորին հաշտույնով: Այսպէս է որ օտար, հզօր ազդեցութիւնները — նախ Միստալ, Տոսթոեւսկի եւ Պալգաք — անելի ու՛շ փրուստ եւ ճոյս, եւ Պոլիս էր, որ պիտի ներգործէին իր վրայ, իրեն ծառայելով իրրեւ չափանիշ ու հորիզոն, բայց ոչ իրրեւ դպրոց: Մորվելիք չունէր անոնցմէ ու կը բաւէր, որ տարածէր, խորացնէր կեանքի ու մարդոց իր փորձառութիւնը, բայց մանաւանդ զարգացնէր, յղկէր, կատարելագործէր քսան տարեկանին արդէն գոյ իր բնատուր կարողութիւնը թափանցումի, վերլուծումի եւ կառուցումի՝ որպէսզի աշխարհի է՛ն մեծ գրագետներուն հետ չափուելու յաւակնութիւնը, հպարտութիւնը անուցանէր իր մէջ: Ահա նորէն իր բառերը:

«Վերլուծումի համար իր տարփամբ անիկա անշուշտ պարտական չէ աւ ու ան վարպետին, բայց իր տառապանքն է օտար ճարտարապետութեանց բոլոր յանգեցումներէն իր արգիլուած մնալը: Իր ժողովուրդին գրական ընկալութիւնն է հեղինակը այս տագնապին»:

Այս հինգ տողերուն կարեւոր բառը «յանդգնութիւն»ն է՝ թէ՛ նկարագրի եւ թէ՛ մտքի տեսակէտէն: Մէօլէօզցի Յակոբին չպակասեցան ատոնք, դեռ պատանի տարիներէն, նոյնիսկ իր 60 տարիքին, երբ կը խօսի այդ մասին, անկասկած ակնարկելով «Մնացորդաց»ի չորրորդ՝ «Իծախը» հատորին, ուր Յղեունը պիտի նուաճուէր հակառակ հազար դժուարութեանց: Գերագոյն յանդգնութիւնը պիտի ըլլար ատիկա, այդ աննախընթաց եւ անկրկնելի երկը, մեծագոյն մարտահրաւէրը նետուած իրեն, եւ որ սահմանուած էր, իր մտքին մէջ, ամբողջացնելու եւ

պսակելու իր կեանքին ճարտարապետութիւնը, միեւնոյն ատեն
Հակադարձելով թուրքին ոճրային արարքին: Եւ այն խիզախ,
Հպարտ արհամարհանքը, որով քսան տարեկան Յակոբը նա-
յեր էր մահուան վրայ՝ կրկին դուրսը պիտի ցցէր ու խօսէր
մահուան հետ: Ահա այն բառերը, որոնցմով ան կը դիմակալէր
Հոգէառը, իր «Սկար» գրութեան մէջ, իր մահէն քանի մը տարի
առաջ:

«Տակմուվրայ ըրիր ամէն բան:

Կնքեցիր շրթներս, յիմար ու անիրաւ:Զարկիր ուղե-
դիս, բայց չկրցար կոտորել: Ու գայրացած, մատդ երկարեցիր
դէպի սիրտս: Նայեցայ քեզի, շեշտ, հպարտ, քեզի չափ կտրուկ»:

.....Զէր անաւոր սակայն, ինչպէս էր պատկերդ, մեր գեղի
Ժամուռն Ակարին վրայ, սուրովդ դպելով մահամերձին ու սուռկի
պէս տարտղնելով մարդոց փառքն ու դժբախտութիւնները»:

.....

Հիմա՛յ:

Կը ճանչնամք գիրար:

Ոչ՛ այն շուքին պէս, որ սեւ շղարշ էր եղած յիսունէ աւելի
տարիներուս վրայ:

Ոչ՛ արեւին պէս, գոր ցանկացայ մուսնել, բայց թեւերս
միայն հալեցուցի, ինչպէս կը պատկերէ հեքիաթը երազին ար-
գամաւորդներուն:

Հիմա՛յ:

Միշտ բովիկս ես:

Թառած՝ գրչիս ծայրը: Տեղաւորուած՝ տողերուն վրայ, երբ
պահ մը աչքերս կը յամառին քեզմէ խուսափիլ, բայց չեն կրնար....
.....:

Հիմայ, ընկերներ եմք:

Նաւակդ չէ իսկ իջեցուցած առագաստները: Ես ալ չեմ
բակած ծրարս:

Դուն՝ թեթեւ հով, ազուտ:

Ես ծանր, կապկպուած, կտորտուած: Ու քաշուած դէպի ես
այնքան սրտառուչ կապերէ:

Հիմայ, անբաժան երեսներ եմք իրարու դարձուած, դէմ
դէմի՛ մառակիդ մէջ, սպասելով մեծ հովին:

*
* *

Ե՞րբ»:

Քսան տարեկան Յակոբը ամբողջութեամբ ներկայ է այս
տրամաթիւքական կացութեան մէջ, իր ոճով, իր պատկերնե-

րով, իր բարոյական կեցուածքով, քառասուն հատոր հտը: Նոյն ինքնավստահութեամբ եւ մտքի անկախութեամբ, բայց մանաւանդ ինքնատպութեամբ՝ որով կը գրէր իր առաջին քերթուածներէն մին, 18 տարեկանի իր փոթորկոտ, ինքնասույգ, բայց իր ժամանակին համար նոր զգայնութեամբ:

ՀՈՂՄԱՂԱՑԸ

Թեւերը կախ, դէմ հովերում,
Լանջքն ալ տուած անոնց քախման,
Կը պտուտի սիրտս մման
Հողմադացի մը սարսուռն:

Երկայն հովեր, հովեր փափուֆ՝
Նայուածքներէ մեկնած աղուոր,
Կը լեցնեն գրկերն անոր
Դողով մ'անուշ ու խուսափուկ:

Ու կը դառնայ յամբ ու ծփուն՝
Փայփայանքէն անոնց գիւնով-
Օրօրելով գանձնք մեղմով
Շղարշիմ մէջ իր թեւերուն:

Լուսնակն անուշ, երբեմն արեւ,
Յանախ արցունքն ալ ամպերուն,
Զիւներն չիմջ, փուքն ազագուն
Շուք մ'իրենցմէ թողած են հոն:

Ան կը դառնայ կամաց կամաց
Խորասուզուած մէջն իր անուրջին,
Անհոգ թէ օր մ'հով չնշին
Պիտի փետտէ թեւերն իր կախ:

2 Մայիս 1988
Քիլարա

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Քաղին

Ողբացեալ Մ. Իշխան, մահէն ոչ շատ առաջ, Կիպրոսի Մելգոնեան հաստատութեան կնիքը կրող եւ 1 Փետրուար 1939 թուակիր շարադրութեան տետրակ մը դրա խմբագրութեանս սեղանին: Տետրակը օգտագործուած էր երկու կողմէն, ձախէն աջ, եւ աջէն ձախ:

Ձախէն աջը կ'երկարէր մինչեւ 47րդ էջը, ուր ուրագծուած էին արեւելահայ 13 դէմքեր, Աբովեանէն մինչեւ Դերենիկ Դեմիրճեան, աջէն ձախը՝ մինչեւ 58: Այս բաժինին 35 էջերը կը գրաւէր Նարեկացիին նուիրուած ուսումնասիրութիւնը, իսկ մնացեալ 23 էջերուն վրայ ուրուագծուած էին Տիրան Չրաքեան, Լեւոն Բաշալեան, Սուրէն Պարթեւեան, Երուանդ Օտեան, Ռ. Չարդարեան, Մ. Մամուրեան, Խրիմեան Հայրիկ, Թլկատինցի եւ Լեւոն Շահոյ:

Օջականի մահուան 50ամեակին առիթով կապմըւած սոյն էջերուն համար մենք յիշեալ տետրակէն անշատած էինք Նարեկացիին նուիրուած բաժինը եւ գրութիւնը համակարգիչէն անցած ու էջադրուած էր արդէն, երբ տեղափոխութեան պատրաստուող գրասէր պարոն մը, Յուլիս 20ին՝ մեր տրամադրութեան տակ դրաւ շարք մը հին թերթեր, ի շարս որոնց նաեւ Երուսաղէմի վանքին պաշտօնաթերթ «Միոն»էն համար մը, 1964 Մարտ թուակիր, ուր տրուած էր հոս արտագրուած «Նարեկ»ին վերջին մասը, էջ 65-67:

Հետաքրքրուեցանք ու ստուգեցինք, որ նախորդ բաժինները տրուած են նոյն «Միոն»ի նախընթաց չորս թիւերուն մէջ, առաջինը՝ Օգոստոս 1963ի էջերուն, ուր վուր փնտոնեցինք խմբագրական նոթ մը, գրութեան աղբիւրը մատնող որեւէ նշան:

Անպայման Մելգոնեան վարժարանի մէջ Մ. Իշխանի դասընկերներէն մէկը տրամադրած է գրութիւնը «Միոն»ին: Ո՞վ, սակայն: Դժբախտաբար մեր գիրքերուն եւ առանձին արժէք ունեցող թուղթերուն մեծ մասը պատմութիւն չունին, փոյթ չենք ըրած ունենալու, ասիտ'ս:

Յ. Օջականի ուժեղ վերլուծումներէն մէկն է «Նարեկ»ը, որ վատահաբար մեծ բաւարարութիւն պիտի տայ յատկապէս անսովորին ճաշակը ունեցողներուն...

Յ. ՕՇԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ

ԳԻՐԲԸ—

Նարեկացիին գործերում մեջ ամենն մշանաւորը աղօթամատեան մըն է, ժողովրդական բառով՝ *Նարեկը*: Ամիկա կը բաղկանայ 95 գլուխներէ: Գրքին սկիզբը կայ *դրութիւնք* ըստած Յակատ մը, որ իբր թէ գործին ընդհանուր հանգամանքը կը թշդէ: Մութ ու մարեկեան ոնով խմբագրուած այս մախանուտը կասկածելի կը թուի ու քանսւելները կը մերժեն գայն *Նարեկին* մաս ընդունիլ: Գործին քուն մարմինը կազմող իննսուհինգ գլուխներէն երկուքը (Բան ԴԲ. եւ ԴԳ.) մեկնողական էջեր են, առաջինը *կոչնակին*, երկրորդը *միւռոնին* մուիրուած: Ասոնց *թարգմանօրէնքը* պէտք է քացատրողական հասկնայ: Գրքին վերջը կայ առանձին յիշատակարան՝ *Յիշատակարան մատենի դրութեան* վերմագրուած, ուր ժամանակը կը գրուի, արեւիկն ուղղուած մեծադրոյ քացագանչութեամբ մը: Դիտելի է, որ երբ ազգային թագաւորներ գոյութիւն ունին, Նարեկացի չի յիշեր ամոնց ամունը ու պատիւով կ'արձանագրէ վասիլ մեծայաղթ կայսեր արշաւանքները: (Այս պարագան անոր համար՝ վասնզի Նարեկացի Ամճուացեաց թագաւորին ինդրամբովը գրի առած էր ուրիշ մերթողական աշխատութիւն մը):

ՆԻԻԹԸ—

Հետաքրքրական է ցանկը, որ պատրաստուած է գիրքը գործածողներուն կողմէն: Ահա անոր մէկ էանի շրջանակները.

- Աղօթք առաւօտու՝ *Բան 27. 2. եւ 2Բ.*
- Աղօթք գիշերոյ՝ *Բան ԺԲ. ԽԱ. 2Ա. 2Գ.*
- Աղօթք զրջմամ՝ *Բան Է. Ը. ԻԲ. ԻԶ. ԻԷ. 2Ա.*
- Աղօթք խնդրելոյ զշնորհս եւ զքողութիւն մեղաց՝ *Բան Թ. ԺԵ. Ի. ԻԴ. Լ. ԼԲ. Խ. ԽԷ. ԽԹ. Մ. ՄԷ.*

- Մաղթամբ հաւատոյ՝ *Բան Ժ. ԺԱ. ԺԳ. ԼԴ. ԽԴ. ԶԵ.*
- Մաղթամբ յուսոյ եւ սիրոյ՝ *Բան Բ. ԺԲ. ԼԴ. ԼԷ. ԽԲ. ԽԲ. ԿԵ. ԶԸ.*
- Աղօթք յառաջ ընդ զպատարագն կամ հաղորդելմ՝ *Բան Դ. Ե. ԻԴ. ԼԳ. ԽԷ. ԾԲ. ԾԴ.*
- Աղօթք զկնի պատարագին կամ հաղորդելոյն՝ *Բան Ա. Ե. ԻԴ. ԿԷ. ԶԵ.*
- Աղօթք ի սուրբ չարչարանս Քրիստոսի՝ *Բան ԻԷ. ԻԸ. ԼԶ. ԼԷ. ԽԴ. ԾԲ. ԾԸ. ԿԶ. ԿԷ. ԶԶ. ԶԸ. ԶԹ.*
- Աղօթք առ Ս. Աստուածամայրն՝ *Բան Ի. Զ.*
- Աղօթք բարեխօսութեամբ սրբոյն՝ *Բան ԼԱ. Զ. ԶԱ. ԶԲ. ԶԳ. ԶԴ. ԶԵ.*
- Աղօթք առ հրեշտակս(ն)՝ *Բան ԶԱ.*
- Աղօթք վասն բարի մտեումն՝ *Բան Բ. ԿԶ. ԶԳ. Զ. ԶԵ.*
- Աղօթք վասն բժշկութեանն՝ *Բան Գ. ԺԴ. ԺԷ. ԺԸ. ԻԵ. ԼԵ. ԽԲ. ԽԴ. ԽԸ. ԿԳ.*
- Աղօթք վասն հոգեվարաց, յիշատակաւ մահու գերեզմանի, յարու-
թեան եւ դատաստանի՝ *Բան Ա. Բ. Ի. ԻԳ. ԼԲ. ԼԷ. ԼԹ. Խ. ԿԵ. ԿԶ. ԿԷ. ԶԳ. ԶԴ. ԶԵ. ԶԸ. ԶԹ. ԶԱ. ԶԵ.*
- Աղօթք վասն մնջեցելոց՝ *Բան ԶԶ.*
- Աղօթք վասն հարուածոյ արտօրեից՝ *Բան Գ. ԿԳ. ԶԸ. ԶԹ. ԶԲ.*

Անշուշտ այս ճշմարտոր ցանկը բաւական է լուսարանելու համար եթէ ոչ հեղինակին մտայնութիւնը, գէթ ընթերցողներուն փնտռածն ու գտածը *Աղօթամատենան* մէջ:

— Կեանքի կարկառուն պահերէն, Միջին դարու մեծ մտահոգութիւններէն, քրիստոնէական կեանքի ամենէն խորունկ ապրումներէն տարրեր եկած են ինչպէ՛ս Բագին, կազմելու համար այդ աղօթքները: Եթէ անոնք այսօր մաս չեն կազմեր մեր պաշտամունքի ժողովրդական երեսին (եկեղեցական արարողութիւններու պահուն երգուած ու կարդացուած տարրեր) անբողոքեամբ, կամ սակայն՝ հսկումի, խաղաղականի ու բացառիկ ժամերգութեանց մուտքուած պաշտօններուն մէջ: Պէտք է զգամ աւելցնելու, որ անոնք մաս կը կազմեն մանր գաղտնի գիտութեանց (sciences occultes): Անձամբ տեսած եմ կախարդութեան ու գուշակութեան համար յարդարուած *Նարեկ*ներ: (Այս պարագան կայ մանր *Սաղմոս*ին, *Հաւատով խոստովանիմ*ին, *Դանիէլ*ին գրքերուն համար ալ):

Գիրքը լաւ Յանձնարու համար հարկ է արագ սկսելով մը աչքէ անցընել գայմ լեցնող անձերը ու աշխարհները:

ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Ամէնէն հոյակապ ու ամէնէն յանախուս անունը Ազօքմամստեանն է: Բարձր՝ Նարեկացիին համար՝ քիչ անգամ իմացական յղացք մը, մտածուած ու բնագանցական վերացում մըն է: Անդհակառակն, գրեթէ միշտ միութեան, արտաքին, աշխարհային ըստելու աստիճան գրեթէ շօշափելի, տեսանելի գգայութեան մը արտայայտութիւնն է ան: Վերադիրներու անհուն տարափ մը, պատկերներու անապառ տորմիտը բաւական չեն եղած այդ հսկայ գգացումը տարագի տակ ձգելու: Անիկա ամէն գլուխի մէջն է, ամէն մէկ տողի ու նոյնիսկ բառի մէջ:

Այսքան համապարփակ այդ պատկերը գիրքին ամէն մէկ կէտին երեսուն կու գայ անկարելի ըստելու աստիճան գանգաճութեամբ մը: Ս. Գիրքին բոլոր դրուագները անոր փառքին համար տողի մը, աւելի յանախ պարզ ածականի մը կը վերածուին: Երկինքին ու երկրին բոլոր գորութիւնները շարժումի կը հանուին Անոր ուժը պատգամելու: Ու մարդոց հոգիին բոլոր ալքերը կ'արօթադրուին՝ անոր սրբագան սարսուռը հիւրընկալելու համար:

Բանաստեղծը գիտէ, թէ ինչ անասելի քարճորութեան մը հետ մակատի հանած է մարդկային թգուկ, սիրտ ու փոշի տարրը: Գիտէ, թէ տարօրինակ այս բանապայտարիմ մէջ ով է իր ընդդիմախօսը եւ թէ որքան հիմնաւոր՝ իր համարձակութիւնը այդ մակատումին համար: Վասնզի միւս կողմէն մեղք ծաղկող այդ փոշին, որ մարդկային մարմին կը կոչուի, մեծ է մա՛մաւանդ իր գարշանքովը: Ու երկու իրերամարտ գորութիւններու այս անօրինակ դէմընդդիմումը գրքին կու տայ անկարելի եղերականութիւն մը, որ գերագանցապէս մարդկային եւ յուզիչ կ'ընծայէ իր Աստուածին ի խորոց սրտի ըսուած այս խօսակցութիւնը:

Դասական աստուածաբանութեան բոլոր տուեալներով հագցուած, Արեւելի մակատագրապաշտութեամբը գորացած, հրէական գորութեամբ մը խօսուած այդ աստուածութիւնը մարդկային ու քրիստոնէական հով մը կ'առնէ իր երկրորդ դէմքին վրայ մանաւանդ:

Նարեկացիին Յիսուսը պատեհութիւն մըն է քրիստոնէութեան մեծ խորհուրդը (mystère) մարդկօրէն գգալի ընելու: Այսինքն՝ Աստուածութեան վրայով՝ տալու մարդկային գերագոյն յուզումները, ապրելու, բոլոր եղերականութիւնը, չարչարանքին մեծ հանգոյցովը եւ խաչին ահաւոր չաշտարակումովը: Աւելի՛ն. մարդուն անարգ կաւին մէջ եմքադրել, դնել կարեմալ ինչ որ երեսակայութիւնը կը յղանայ ամէնէն նուրբ ու ամապային՝ իբր գեղեցկութիւն հոգիի, երագի, բարութեան: Ահա այս մեծ եւ երկնաւոր պատկերացումը, որ շօշափելի իրականու-

թիւն է Նարեկացիին համար, երբ խօսքը կը դարձնէ Քրիստոսի: Ես պիտի չխօսիմ նկարագրիմ վրայ այս մտապատկերին: Հարկ պիտի ըլլար գիրքին կէտը արտագրել:

Նոյն քաղցրութիւնը, իմացականացած մոյմ գգայնութիւնը գրեթէ երեսն կու գայ, երբ Աստուածութեան երրորդ անձն է, որ կ'ոգնկոչուի: Անշուշտ «Հոգւոյն Սրբոյ» ըմբռնումը այնքան իմքնատիպ չէ Նարեկիին մէջ ու ատիկա յայտնի պատճառներով: Վտանգաւոր լար մըն է ատիկա, կ'ենթադրեմ, ընդհանուր աստուածաբանութեան համար ու աղբիւր գերումներու: Բայց եկեղեցիին ճեւղակեղ պատկերը երբեմն բուն կը տարուի արտակարգ խորութիւններու, ուր դժուար է հետեւիլ քանաստեղծին:

Երեքն ալ կը մերկայանան իրենց ստորոգելիներուն տեսակետէն մինչեւ իր ատենը չնկիւքացած ճշդութեամբ մը: Ու Նարեկացիին Աստուածը եթէ հայ չէ, գոնէ քիւ գանդական, *տիայէքիտիէն*, ու շատ քարակէն մանող փիլիսոփոս ըմբռնումն ալ չէ, որուն թելերը մինչեւ մատակարար Քրիստոնեայ դպրոցները (իմաստասիրական) կ'երկնան:

Յետոյ, աւելի անդին պիտի տեսնուին Երրորդութեան դերն ու դիմագծութիւնը աւելի մանրամասնութեամբ, քանի որ չկայ վիճակ մը, ուր անկէ մասնիկ մը, ճառագայթ մը ինկած չըլլայ:

ԱՍՏՈՒԱՄԱՄԱՅՐ

Գրուի մը ամբողջութեամբ մուրրուած է Տիրամայրին: Գիրքին մէջ ուրիշ տեղեր անոր միջամտութիւնը եւ բարեխօսութիւնը կը հայցուի: Ուրեքները (2) մաղթանքը անոր փառաբանութիւնն է:

Հաս Նարեկացի մեր սրբազան մատենագրութեան մէջ ընդունուած եղանակ մըն է, որ կը գործածէ: Երանականներու մէջ *Մեծացուսցէ* ներք Ս. Կոյսին տարփողը կ'ընեն ամենաբարձր թոյլով: Յղացում, քացատրութիւն ու խորունկ յուզում ունին անոնք գրեթէ բոլորն ալ: Անոնց մէջ տկարը շատ ցանցառ է, հակառակ կազացումներուն ու թերութեանց, որոնք սովորական են միւս շարականներուն (*Հարց, ողորմեա, Տէր յերկնից*, եւ այլն): Ու Նարեկացիին կը մօտենայ Անոր, պատկերներուն մոյմ լիզուով: Ահա քանի մը հատ ամոնցմէ.

Անխառն իրրեւ զօղ, անչազախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, եղեմ շնչական, ծառ կենաց անմահից բոցեղէն սրովն պարունակեալ, եւ այլն:

Այս մտանութիւնները անշուշտ իմացական ծագում ունին: Բայց Նարեկացիին մօտ իմացականութիւնը դժուար է գտնել գգայնութեանէն: Ինչ որ կրօնը սորվեցուցած է իրեն քննազանցական էակներու շուրջը, անիկա վերածած է գրեթէ միւթական գգայնութեան մը: Տեսէք, թէ ինչպէս աստուածաբանական ծանօթութիւն մը կը վերածուի սա թանձ-

րացեալ պատկերին. «*Ի Բարձրեայն Հօրէ գորացեալ եւ Հովանացեալ, Հանգստութեամբ Հոգւոյն Հանդերձեալ եւ մաքրագործեալ, բնականութեամբ Որդւոյն յարդարեալ եւ տաղաւարեալ*»։ Կը պաղատի անոր, որպէսզի «*իր հեծեծանքը Հիւսուի անոր խնկաւորեալ Հայցը ւածնեբունք*» հետ։ Ու ահա անոր գերագոյն քնիւը. «*Կաթիլ մի կաթիլն քու մէջ կուտութեան յանձն իմ անձրեւեալ կենաց ինձ գօրէ...*»։

Մէջքերումն անոր կարելի չէ մկարագիրը տալ այս ներքողակամին։ Նարեկացի ուրիշ ընդարձակ գլուխներու մէջ (որոնք Աղօթամատեանէն դուրս կը մնան) երգած է Սրբուհին, ինչպէս մանուկներու գրած է անոր ի պատիւ։ Այդ ամենէն կարելի է համել գերագանց կնոջ եթերային մկարը։ Ամիկա շատ աւելի կերպընկալ է իր բռնութիւն տարր, ինչ որ աստուածութիւնը, ուր բանաստեղծը գգուշաւոր ստիպուած է մնալու, ինչ որ եկեղեցիին կը հսկէ։ Բայց Տիրամայրին հետ այդ տեսակ ձեւակերպութիւններ աւելորդ են։ Ու անոր դիմումներում մէջ բանաստեղծը կը գտնէ մարդկային զգացումներու ամենէն փաթեթիկը լարերը։ Ամիկա մայր է վերջապէս ու Աստուծոյ մայր։

ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐԲԵՐ.—

Արեւմտեան ազգերու գրականութեանց մէջ ասոնք կարելորդ դեռ ու ծաւալ ունին։ Տանթէ, Բասսօ, Միլտոն, միսթիմերը մոյմքան ու շարքութեամբ կը վերաբերուին անոնց, որքան «ստորանկեայ» ներում։ Ասկէ գաւ պահապան երեշտակի հեքիաթը աղօթքներու թելադիր եղած է։ Նարեկացիին աղթատ է այս գետնին վրայ։ Գիրքէն գլուխ մը միայն բացառաբար մուրաւան է անոնց։ Ու հատուկուոր յիշատակութիւնները, ինչպէս այդ էջը չեն բաւեր մեզի ցոյց տալու համար անոնց մտապատկերը։ Մնաց որ, ինչ որ տուած է ընթացիկ գաղափարէն դուրս գոյն կամ գիծ ալ չէ նարած։ Մեզի ծանօթ ըլլալով իր երեւակայութեան ահագնութիւնը, մնան միւսի մը առջեւ իր ժու ժկալութիւնը անմեկնելի կը մնայ։

ՍԱՏԱՆԱՆ ԵՒ ԻՐ ԲԱՆԱԿՆԵՐԸ.—

Նրկմայիմներում հետ այս բան կարմառօտ յարաբերութեան մը ետքը, մարդ կը զարմանայ Չարին ու անոր ուժերում մուրաւան ընդարձակ կարեւորութեան։ Ամիկա կը մտնէ գրեթէ ամեն գլուխի մէջ, բայց տարօրինակ դիմագծութեամբ։ Անշուշտ, Տանթէի գծած դժբախտ գեղեցկութեամբ մը մշտնադատ սիպարը չէ Սատանան։ Նարեկացի չէ կը ցած իմքնատիպ յղացումէ մը անցընել այդ պատկերը ու անոր հագուեցնել անհատական յորիմուածութիւն մը։ Ամիկա, Սատանան, վերացեալ ըմ-

ըրևում էր մեծ անոր, գոր Կտակարանները կ'աւանդեն անոր մասին: Անոր յիշատակութիւնը գրեթէ միշտ աստուածաշնչական կամ մեկնողաբանական է: Այս տարտամութեան փոխարէն զարմանալի մասնատրութիւն, միս կը ստանան անոր բանականները, վանականի, աւելի ճիշդը՝ անապատականի մտայնութիւն մը հոս կը բազմապատկէ աւանդութեան ուսումները, նզնաւորներու առաջօք տեսիլները, փորձութիւնները, զգայախարութիւնները կը վիստամ գիրքին մէջ, ստեղծելով ճնշում մը, որ չի համարտիր հակառակ լոյսին հալածող ազդեցութեանը: Ուղղակի եղանակէն զատ փոխաբերութիւն, ակնարկութիւն, գիւտու պատկեր ալ կը գործածէ Նարեկացի այս դասակարգին հետ:

Անոնց եւ իր յարաբերութիւնը գիրքին ամէնէն մտայն, ամէնէն գեղեցիկ, ամէնէն փաթեթիք էջերը գրելու պատճառ կը դառնայ: Վասնզի *Աղօթամատենան* ամէնէն թանձրացեալ, շօշափելի առաջինութիւններէն մէկն ալ Մեղքին abstractionն է: Ու Նարեկացի մեղքին ետեւը, հետը, մէջը միշտ կը տեսնէ գործադրիչը, մարդկութեան հոյակապ այդ հակառակորդը: Ու բանաստեղծը հիւանդոտ հանդէր ունի այդ պայթաբը փնտռելու, պատմելու, երեսակայելու՝ մոյմիսկ սոսկական պատահարներու ընթացքին: Անիկա երկրորդ երեսն է *Մեղքին*, որ մեր սիրտներում առաջին տարփառութիւն ու գահերէցը կը սիրէ ըլլալ:

Միջնադարեան դժնդակ ու դժբախտ հերոսը՝ սաղայելը անարկու գծագրութիւն կը ստանայ կարգ մը տեսիլներու մէջ: Անոր «ժպիտն ու խնծալը», անոր լայն երախներում սօսափը ու անոր թեւերում զարկը տրուած են հզօր իրականութեամբ մը: *Macabre* երեսակայութեան այս առաւելութիւնը Նարեկացիին մէջ դիտուելիք մասնայատկութիւն մըն է: Անոր գոյութիւնը կը բացատրէ դրական ու պայծառ սուգումներում պակասը: Միջին դարու ամէնէն ընթացիկ յղացումը բեւեռուած է այդ էջերում մէջ վայել կարկառով ու գոյնով:

ՄԱՐԴԸ

Նարեկացիին համար մարդը ըմբռնում մըն է, որում տարրերը Միջին դարը, եկեղեցիին մեկնիչները տուած են: Անոր հիմնական գիծը գտած կ'ըլլամք, երբ ըսենք թէ *Մարդկութիւնը* գերագոյն տիտղոս մըն է, որ խնայուեցաւ մոյմիսկ երկնայիններում: Որում յօժարեցաւ հարդորդուիլ Աստուածութիւնը, իր երկրորդ դէմքով: Միջնադարեան այս մտապատկերը Նարեկացիին համար փառքի մեծագոյն կոտւան մըն է: Իր բոլոր մեղքերով, իր բոլոր անկատարութիւններով ու թերեւս անոնց համար իսկ, *Մարդ* կոչումը մախրմտրելի է երեշտակներէն, որոնք իրր յօրինում ալ վար կը մնան, չանի որ անոնցմէ առնուած է *libre arbitre*ի կարողութիւնը: Արտառու չէ անշուշտ այս միամտութիւնը, գուցէ հնդկական հետաւոր անդրադարձէ մը եկած, մնացած եկեղեցիին վարդապետ-

տուրքանը մէջ: Յոյն ու Լատին մշակոյթի abstractionներէն մասեր սպրդած են անշուշտ ու կազմած քրիստոնեայ այս ըմբռնումը: Ճակատագրապաշտ ոչինչ կայ անոր կազմութեան մէջ: Անձնիշխան, ինքնիշխան քացատրութիւնները յամախաղէպ են քրիստոնեայ մատենագրութեան մէջ: Նարեկացիին իր կողմէն մոր գիծ չէ անկցուցած այդ ըմբռնումին վրայ:

ՄԵՂԱԿՈՐԸ—

Բայց խորապէս վնասկան կնիքով մը տպաւորած է մեղաւորին ըմբռնումը. գիրքը անոր վրայ կը կոթմի: Արդէն վերնագիրն է «Ողբ ապաշխարողի» քարացուցական քացատրութիւնը:

Նարեկացիին իր տաղանդին այլանդակ մեծութիւնը փորձած ու փորձած է այս մտապատկերը անլի հզօր, անլի թեւադրող, անլի կատարեալ ընկելու համար: Անիկա օգտագործած է եկեղեցական մատենագրութեան բոլոր ասութիւնները, որոնք մեղքը կը տարագեն: Ու ատոնց վրայ անկցուցած նորեր, որոնք իրենց յանդգնութեանը մէջ, գարշամբի մոր ստեղծեր կը ստեղծեն:

Մեղաւորը ամէնէն ընդհանուր տիպարն է գիրքին: Չկայ գուլիս մը, ուր անիկա մուտ գտած չըլլայ: Ու դարձեալ չկայ գուլիս մը, ուր անիկա տիրապետող տարրը, դէմքը չդառնայ: Անկէ կը մեկնի գրեթէ միշտ, իր լացն ու կոծը, նենցներու մը տրամադրելու համար աստուածային մաքրութեան: Ու կիրքերու անհուն սանդուխ մըն է, որ գիւմքը կ'առաջնորդէ դէպի տեսիլքին հզօր երապոյրը: Նոյնիսկ երբ երկինքը կ'երեսակայէ, տարօրինակ է, որ մեղքերը սեւ ծամրոցներու մտան կայսիւն իր մտքին թեւերէն:

Անիկա, մեղքը, անհուն մթնոլորտ մըն է, միշտ սրբազան մատենագրութեան այնքան ախորժած ծովը (այս քացատրութիւնը անցած է մոյնիսկ խօսուած լեզուին). ու մեղաւորը, անոր բնակիչը՝ փոխն ի փոխ ցուցադրելով գիւմքը շինող աղտերու բոլոր աստիճանները: Ոչ մէկ վիճակ կը հաւասարի մեղաւորին ներկայացուցած վիճակներուն: Խօսելու ձեւը, չափազանցութեան ընձեռած անպատժութիւնը, իրական սարսափամբին դերը, Միջին դարուն ամբողջ կազմածը իրարու կու գան այդ տարօրինակ տիպարը գծելու համար:

Մտէս չ'անցնիր գայն քաղաքտեյ, օրինակի համար, Տանթի կարաւանին հետ: Հոս քանաստեղծը նպատակ ունի դասակարգումներ ընել. մեղքն ու գործադրողը գետեղել որոշ բաժիններու մէջ, լեցնելու համար իր դժոխքին բոլոր յարկերը, պարունակները, խորշերն ու փոսերը: Միւնչդեռ Նարեկացիին մէկ անձի վրայ կը դիտէ ինչ որ միւսը խնամքով տարտղմած է:

Աչքի առջեւ քերէք այդ տիտանը, որուն ամէն մէկ մագերէն մէկ-մէկ մեղքեր սաւառնէին կարմրած օձերու մտան: Որուն մարմնին ամէն մէկ

ծակեն թարախի ուղիս մը կաթեր, թանձրացած գարշամբերու հեղեղ մը կազմելու համար ոտներուն տակ: Որոնց տեղին հոտածութեանը մէջ մատեր մոր օրերու Յոր Երանելին: Բայց որուն հոգին մնար անարատ, ամբողջովին կապոյտ, սպասելով, որ չճամալ որդերուն ամպերը ու քացուին իր առջեւ մեծ սահմանները «ամնաւերանութիւններուն»: Այս մտապատկերներուն հետ է, որ երբեմն կը տեսնենք մահ:

ԱՄԴԱՐԸ, որ տօգոյն է, երբ քաղաքները միւս երեսին (revus): Այս տարտամութիւնը, բառերու խմամբով ու զուգորդութեամբ ոտի ելլող այս պատկերը փրկուած մեղաւորին՝ տպաւորիչ է աւելի իր մեղքերուն սրբագրութեան լինելութեամբը, ինչ որ ըստիմեքան անկախ վիճակ մը, ազատագրուած ու պաղպաղում, որ ոչ մէկ գիծով յիշեցնէր մախկին գեղումը: Յետոյ, մեղքին հոծ իրապաշտութեամբը զօրացած մեղաւորին տիպարը՝ «հիմնական լայն մոթիքը Նարեկացիին ողբին» հասկընալի է, որ հաւասար ու ժգնութեամբ չվերածուի միայն երեսակայօրէն տեսնուած վիճակի մը կասկածելի իրապաշտութեամբ: Մեղքն ու երկինքը, մեղաւորն ու արդարը հոնտորակաւ ընդլայնումներու, հակադրութիւններու զօրաւոր միւս կը դառնան: Ու Նարեկացիին չէ, որ պիտի խուսափէր պատեհութեանէ: Յիշեցէք, որ ուրիշ գրականութեանց մէջ դրական է մեղաւորին տիպարը, որպէսզի անոր շարունակութիւնը, սրբագրուելու մերկայացնող տիպարը, արդարը՝ մոյմեքան դրական կարեւոր մնայ: Միւս չորս Նարեկացիին մեղաւորը խորհրդանշանն է, ու անոր լուսապակը՝ արդարը՝ իմեքան տարտամութիւն մը: Ուրիշներ այս տեսակ կառուցումներ կ'ընեն, բարբերու տալէներ կազմելու մտահոգութեամբ, Նմանութիւն Յիսուսին այդ է առաւելապէս: Տանթէի արքայութիւնը մամնապէս: Միսթիքներու ընդմշտաբար երանաւտ տիպարը վեր է մարդկային միջինէն: Ամիկա ռոդոլուած է երազին մտազայթումովը:

ՅՈՅՈՒՐ—

Գիրքին մէջ զօրաւոր մարմին կը ներկայացնէ ան: Մեղքին անհուն բուռնը, բոլոր տաղտապանքը երբ կը թռիմ մեր առջեւէն, կը գգանք, թէ ատոնք իրենց վախճանին կը դիմեն բնական բոլոր երեսայններուն մամն, թէ՛ ատոնցմէ վերջ պիտի գայ միւս վիճակը: Ասիկա այնքան զգալի է, որ վայրկեան մը կը կասկածիմք մոյմիսկ մեղքին, խոստովանամքն անկեղծութեանը վրայ: Ու կը հարցնենք մենք մեզի — հոնտորութիւն արդեօք: Բայց հոնտորութիւնը երկրորդական վիճակներու համար՝ անբաւական պիտի գար: Վասնզի, առանց յոյսի՝ մեղաւորը անընդունելի կը մնայ: Ուրեմն պէտք է մեծցնել վիճակը, որպէսզի կարենայ ընդգրկել մեղքին ահաւոր հիտրամ, աւելնալ անկէ ու մամբայ պատրաստել զէպի փրկութիւն:

Ու գիրքին էջերէն կ'անցնի անոր մամբան, տեղ-տեղ լայն, պոդո-

տայի պէս յարդարում: Տեղ-տեղ քարակ, կլլուած՝ ամբարշտութեանց կռիակներէն: Ու անիկա կ'անցնի նորէն անդունդներէն, որոնք մեղքերուն վէրքերը կը փորեն մեր հոգիէն ներս: Անիկա անմիւթ շաղախի մը պէս կը կտայ գիրքին մեծ ցրուածութիւնը, անոր տալով նարմատուն՝ բայց կանգուն, կիսակործան՝ բայց ոտքի պատկերի մը կսկծալի գեղեցկութիւնը, մարդկայնութիւնը:

Անիկա շատ ձեւեր ունի միութեամբ: Անիկա մա՛նամա՛նդ իր բխում-մը կ'առնէ Աստուածութեան մեծ բարութենէն:

ԱՊՍՏՈՒՄԱՐՄԻՔ

Յոյսի մեծագոյն ընկերը, գայն կարելի ընող գազանակը, գայն մարդկային, բարախում, շօշափելի իրականութեան վերածող միջոցը *ապաշխարանքը* եղած է բոլոր կրօններու մէջ: Ես չեմ ծանրանար արանդութիւններու սնուսիքին, հաշուրած ծիսակատարութեանց սարածիւն վրայ, որով էլ ամեն կրօնքին պաշտօնեաները: Նարեկացի վեր է այդ ձեւ ապաշտ եղանակէն:

Անոր համար ապաշխարանքը տեսակ մը անհուն *ոգր* է, որ միշտ նոյն գիծին վրայ կու տայ շատ մը բաներ, մեղքը, յոյսը, երկիմէքը, մարդն ու Աստուածը: Ամէն վայրկեան ներկայ է անոր մտքին մէջ սա հիմնական գաղափարը, թէ որքան ալ մեծ ըլլայ մեր մեղքերուն ալիքը, միշտ տակի մեծ է Աստուծոյ սիրոյն ալիքը: Հետեւեալքար իմ քննազնութիւնը, տեսական անդրադարձը իր անձի կոյանոցին վրայ, գոջումի մշտական նեմներանքը, ողջակիզուող հոգիին բոլոր գալարումները, մարդկորէն կարելի աշխատանքներ են: Ասոնց վրայէն դէպի բարոյական սրբացում մը պատեհութիւններ կան:

Նարեկացի գիտէ, թէ *անկեալ էակը* մաս կը կոզմէ գերագանց շունչին: Թէ՛ անոր գերագոյն պարտէք պիտի ըլլայ աղտոտած, մեղքով սեւցած այդ աստուածային գիծը վերածել իր նախկին մաքրութեան, որպէսզի անիկա խառնուի մաքրութեան անհուն ծովին մէջ, որ Աստուծոյ շունչն է: Ու գիտուած այս գիտակցութեամբ, անիկա անդադար կը կոծէ իր անձը, իր հոգիին մերկութեանը վրայ գարնելով ու գարնելով գոջումին կրակէ մտրակները: Միմչեւ որ հալի աղտը, գտուի շունչին բուրումը ու արժանի ըլլայ վերադառնալու իր արքիւրին:

Գիրքին մէջ այս տրամադրութիւնը թատերական շահեկանութիւն մը կը մտցնէ: Սոսկումով կը հետեւինք անոր ցուցադրումին, ու հետաշունչ կը թալանէ այդ մուսլի տրամիւն բոլոր իրադարձութեանցը հետ: Ամէն աղօթք գրեթէ կը կրկնէ այս պայքարը եթէ ոչ ամբողջութեամբ, գոնէ՛ մասնիկով:

Բայց այս պատրաստութիւնը կը տարբերի գուտ ճգնողական չափագանցումներէ: Վանական հոգեբանութիւնը չի մտնիր այս յարդար-

ըումին մէջ: Միւս կողմէ՝ գործնական բարոյախօսութեան սկզբում ընկերը եւ ծէսերը չեն համուիր իր էջերէն: Բայց հասարակը իր ամբողջութեանը մէջ այնքան զօրաւոր կոտուած մը կը պատկերէ այդ վիճակին, որ ապագան չէ վարանած անկէ զտելու այդ գիծով գործածութիւն: Այդ աղօթքներէն շատեր դասակարգուած են ու մտած գրչորակալ գրականութեան ռառսելներու մէջ⁽⁷⁾:

ԱՐԳԱՅՈՒԹԻՒՆԸ —

Աստուածային մտապատկերացումը, որ միաբիւլ վիճակի գերագանց ստորագիւղէն է, Նարեկացիին մէջ, տեղ-տեղ, կը վերածուի անոր արքայութեանը տեսիլքին:

Այդ պատկերը դարձեալ զօրաւոր չէ, որքան մեղքի մեծ հեղեղանքը: Ուղղակի դժոխքի մկարագիր մը անանց տալու, Նարեկացիին յաջողած է անոր մտապատկերները զօրաւոր գիծերով առարկայացնել: Այդ մոյմ յաջողութիւնը հաւատարիմ չէ անոր, երբ ուզէ մեզի թելադրել գերեքանիկ տեսարանը:

Մտապատկերին ու անոր ամբողջական արտայայտութեան մէջ տեղը կան թարմատար մասեր, Սուրբ Գիրքէն յիշողութեանց, ժողովրդական երեսակայութեան տուեալներու: Յետոյ, թերեւս գրողին խառնըւածքը միջամտէ տեսանել չկրնալու համար այն անսահման պայծառութիւնները, որ Աստուծոյ արքայութիւնը կը կոչուի: Դիտելի է, որ Նարեկացիին յաջողութիւնը ամբողջական է անկի ժխտական տեսիլներու առջեւ: Ամիկա արագ է եւ անբաւարար երկնայիններուն հետ եղած միջոցին: Իր Աստուծան հօր է ու գեղեցիկ, ինչ իր հրեշտակը: Ու իր դժոխքը մորէն անկի ուժով է գծագրուած, ինչ իր արքայութիւնը:

Մի սպասէ՛ անկէ գերագոյն այդ գեղեցկութեան մէջ հալուելու զգայութիւններ, որոնք միաբիւլ երեսակայութեանց մէջ այնքան համբերատար մարգամբներով, կրկնութիւններով երազը միւրի կը վերածեն: Որոնք միշտ մարմինին հողին մէջ աստուածային կրակէ անհուն քիւրեղացումները կը ցրցենն ու գայն կ'ընեն բունկած ջահեր, որոնք թելադրանքին Անոր գահոյքին շուրջը վառելու ու չհատնելու անմառ ճակատագրով: Դարձեալ հանգիստի մեծ վիճակներ մի սպասէ՛ անկէ: Վասընզի գիրքը ասոր համար գրուած չէ կարծես: Գրողը հալածական է ու բիշ մտապատկերներէ:

Այս տկարութիւնը խոշոր պակաս մըն է Նարեկացիին համար: Դեռ եւ չեմ մօտենար բարեպաշտական տեսակետէն, որ մասնաւորաբար շահեկան է մտան գիրքի մը համար: Ամիկա մեղքերու դէմ հմայակ մըն

⁽⁷⁾ (Ձգչու մէջ էջերուն մէջ իրենց սաստկութեամբ ու շագրաւ են մտնաւանդ սատանայական ստղանքներու գտնաբերումները Աւիկա միջնադարեան Համկուտայ տեսարանին):

է, անշուշտ, բայց ասիկա բացասական երեսով չ'իրագործուիր: Ու պիտի ուզէինք մենք շլամալ մ'անուանդ դրական տարրէն:

ԵԿԵՂԵՑԻՆ.—

Երկինքի արժայութեան մանրամկարը, երկրաւոր աթոռը շատ ասելի յատակ է, ինչ որ իսկ երկնայինը: Ու ասիկա հասկնալի է:

Նարեկին մէջ եկեղեցին գրահուած է բոլոր մեկնութիւններով, որոնք բանական պատկանելի գրականութիւն մը դիզած են ի պաշտպանութիւն: Աւելի'ն . ինչ որ եկեղեցի գիտէ Կոտակարաններէն ու այլաբանական էջերէն, աստուածաբանութենէն, ճեղքական կազմակերպութիւններէն եւ ուրիշ զանազան աղբիւրներէ: Ասոնք դասակարգային, քննարկական, ընկերարանական երեսոյթի մը խնորհուրդն էր: Եւ ինչ որ, երկինքի շուրջ գիրքի տարածութիւնը կը փոխարինուի յորդ իրականութեամբ մը, որ եկեղեցիինն է (ամոր մուրհուած առանձին տող մըն ալ ունի): Ընկերական կազմակերպութիւն մըն է անիկա, բայց լայն տարրերով, բայց բացառիկ խտութեամբ: Ու ասիկա յանախ կը զգեստաւորուի խորհրդանշական վերացումներով:

Անոր համար կ'աղօթէ, ինչպէս պիտի աղօթէր ապրող, մարդկային փորձութեանց եկեղեցի մէջ ձգուած մարդու մը համար: Ինչպէս պիտի աղօթէր իր փոփոխարախտ ժողովուրդի թագաւորներուն համար: Ու իբր վերացում երկինքի հետ հաւասար կեցող, իբր խորհուրդ մը կոտորակուած ու կործանած ազգայնութիւնը արձանացնող այդ ըմբռնումը ամենէն յուսադրիչ, սրտատուչ, դժբախտութեամբ գեղեցիկ վիճակներէն մէկն է գիրքին:

ՍՈՒՐԻԵՐԸ.—

Կան, ինչպէս բոլոր այդ շրջանի գրականութեանց մէջ: Բայց մինչ կարգ մը գիրքերու համար անոնք առանկազանց իրականութիւն մը ունին, Նարեկին մէջ պահուած են չափաւոր պատուարի մը վրայ:

Նախ՝ անոնք առանձին անձնաւորութիւններ չեն: Անոնք եկեղեցիի թափառումներուն, թռիչքներուն ասեմ կէտեր են, ձգուած ամայութեան թափանցներուն: Անոնց է, որ կը կառչի պահ մը, յոգնութիւնը աննկու համար: Օղապար արարածներ, մարգարէներ, առաքելներ, հայրապետներ բոլորն ալ, որոնց իւրաքանչիւրին հետ ունի իր պատիկ բառը: Ու ամենէն գերազանցը՝ Աստուածամայրը:

Անոնք բռնաւոր ու պահանջկոտ չեն, ինչպէս սովոր է տեսնել ժողովրդական երեսակայութիւնը: Մարդկային տարրէն պարպուած, բայց մարդկային դիմագծութեան կապուած վերացումներ են, առաքի-

նութեան փոխուած բխումներ՝ մեղքերու հովիտէն: Ու անտարբեր է անոնց համդէպ մեր ու հետեւաբար գիրքին տրամադրութիւնը: Միայն Աստուածամօր միջամտութիւնն է, որ քանձր, միութեամբ մկարագրով կը զգեստաւորուի: Մնացեալները աստուածաբանական յուշակներ են իր ընթերցումներէն ինկած իր ուղեղին խորը:

Ու չենք աղօթքն անոնց: Պարագայ՝ որ սպասելի էր մեզի պէս մտայնութեամբ ժողովուրդէ մը: Նարեկացիին հսկայ երեսակայութիւնը կանգ առնել չի սիրեր այդ սրտառու շեշտներուն քանաստեղծութեանը վրայ: Թերեւս, իր տեսական վազէն դէպի անոնց տէրը, դէպի գերագոյն սրբութիւնը պատմառ ըլլայ, որպէսզի անտեսուիմ ամո՞նք իր անպարանձէն:

ՈՒԿԻՇ ԱՆՁՆԱԿՈՐՈՒՄՆԵՐ

Տակաւին գիրքին մէջ կան կարեւոր անձնաւորումներ: Վերի յատկանշական բնութիւններն ենք, տակաւին կ'երեւին այլաբանօրէն հանդերձեալ էութիւններ: Ատոնց մէջ ուշագրաւ են զանազան մեղքերու անձնականացումը (personification), առաջինութեանց միութեանացումը: Ու կայ տակաւին ընթերցողը, իրմով աղօթողը, որ շատ ձեռքով կը մերկայանայ զանազան գլուխներու մէջ: Տեղ մը ամբողջ մարդկութիւնը, տարիքով ու սեռով, ընկերական պայմաններու ամբողջ զանազանութեամբը երեսն կու գայ: Բայց այս ամէնէն տիրապետողն է քանաստեղծին անձը:

ՆԱՐԵԿԱՑԻՆ

Տարօրինակ անձնաւորութիւն մըն է Նարեկին հեղինակը, կարելի չէ անոր մօտեմալ սովորական ու մեկուսացուցիչ չափերով: Իր մեղքերուն առջեւ, որոնց ցուցադրումը տրտում հանոյ՞ մըն է գուցէ ամէն քնարերգակի համար, մեմք կը տարուիմք իր մէջ ընդունելու իսկապէս կիրքերու փոթորիկէն ծածուած դասական տիպարը ապրողին: Բայց իրականութիւնը տարբեր թելադրամք ունի: Մեղքին ընդհանրական ընդթրք, ապաշխարութեան խորութիւնն ու անկեղծութիւնը, երազամէքին ընդարձակ տարողութիւնը կը վտանգեն անոր քարոյսական անձնաւորութեան իրական հանգամանքն ու գայն կը վերածեն գրական խառնըւածքի մը: Ըսել չեմ ուզեր, թէ մեղքը երգողները ամենեւեմ կ'ըլլան առհասարակ: Բայց կարելի չէ հանդիպիլ կեանքին ճամբաներէն անոր հոգիին այլապէս դատն ու ահաւոր կակիծմանուն, որոնք քառերէն աւելի կարօտ են իսկապէս երկնատուր սպեղանիներու: Ոչ մէկ վիճակ կը քաւէ՝ սեւեռելու համար այս աղօթքին ընդհանուր դիմագծութիւնը: Բանաստեղծը ամբողջովին յուճուած է մեղաւորի դիմակին տակ: Ու դիւրին է

այդ թափանցիկ բողբոջ տակէն հետեւիլ մտաւոր յուզումներու, սարսուռներու, բայց դժուար է անոնց տակ շօշափել անմիջական, անփոխարինելի իրականութիւնը, որ մեղքին՝ ինչպէս համեոյժին վրայ կ'իյնայ ու գանձնէ կը բուռնէ (fixer):

Կեդրոնական տիպարին այս տարտամութիւնը գիրքին համար թերեւս ունեցած է իր կարգ մը օգուտները: Ամբողջ մարդկութիւնը փոխարինելու այս յատկանութիւնը մեծցուցած է իր ողբին տարողութիւնը: Իր մտքամբնէն գորութիւնը չափազանցելով *մարթանքը* խորհուրդի տանելու իր փորձը տպաւորած է թերեւս ուրիշներու միջոցով թեթեւալ սիրողները: Բայց միւս կողմէ՝ վնասած է անոր մարդկային, հոգեբանական խորութեան եւ ճշդութեան տեսակէտէ: Անոր այդ լաց ու կոծիւն տակ մեմֆ չեմֆ կրնար *surprendre* ընկ ահոր մերթիւն դիմագծութիւնը: Չունի դրուագ մը, ուր գինքը մերկ տեսնէինք ու գուշակէինք իր շինուածքին երակները:

Մի մտումա՛ք, որ գիրքը գրուած է վանկաններու խնդրանքով: Ու անիկա շերտնանդ մտադրութիւններու գրգիռի մը ծառայելու դերը կու տայ իրեն: Բայց ասոր համար անհրաժեշտ ամճականութիւնը, հեղինակութիւնը, մարդկօրէն կարեւոր խօսելու շնորհները չունի անիկա:

Կարելի է գիրքին մէջ ցրուած գիծերը բով ինչի սերնի, բայց ասոնք պիտի չտան ինչ որ կը սպասենք իրենցմէ:

- Բ -

ԽՈՐՔԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Այդ ամճերը ու աշխարհները տեսնուած ու տրուած են տեսակէտներէ, որոնք պէտք է ձգուին բնութեան մերթիւն:

Ահա գլխաւոր կէտերը այս կարգի փորձի մը.

1. Միսքի՛ք վիճակի մը պայմանները,
2. Աստուածաբանական *échafaudage*,
3. Ս. Գիրքին ճնշումը,
4. Գրիստոնեայ ընդգանցութեան մը կարելիութիւնը,
5. Ինաստասիրական ոգիին պակասը,

- 6. Խորհի անհնարին միօրինակութիւնը,
- 7. Այբատութիւնը,
- 8. Հարստութեան տեսակն ու երակը:

1.—Այս ցուցմունքներէն ամէնէն կարեւորը առաջինն է: Նարեկացին իսկակա՞ն *միսթիք* մըն է թէ ոչ:

Հարցին պատասխանը տալ կարծած է մեր մտաբանը Բնագրատութիւնը, Նարեկացին ընդունելով իրր մեր ամէնէն կարկառուն միսթիքներէն մէկը: Բայց ինձի կու գայ, թէ պէտք է զգուշանոր քալել: Հոս տեղը չէ երկար վերլուծումով ու յիշատակութիւններով քացատրել տարբերութիւնը, որ կը գատէ քերմեռանգները, հաւատացեալները եւ միսթիքները իրարմէ:

Այս վերջինները առանձին դասակարգ կը կազմեն: Անոնք գերադրութիւն կը մերկայացնեն հաւատքի վիճակներուն: Իրենց զգայնութեամբը, աւելի միշտ՝ զգայարաններով է, որ կը հաւատան: Անոնց յատկանշական գիծը տեսակ մը սարսուականութիւն է, աստուածեան հեղանիութիւն համդեպ տեսակ մը ընկալութիւն, որ կը յայտնուի արտաբնական, գրեթէ միսթիքան հետքերով: Զգայախարութիւնը (hallucination) յաճախ կը մերկայանայ այս զգայնութիւններուն ու կը լուսաւորէ գաւնոնք: Պշտցումը, հանդարտ հայեցողութիւնը (contemplation) այս վիճակին ամէնէն պարզ ձեւերն են: Առէք (extase) ամոր պսակումը կարելի է ընդունիլ:

Զգացական տարբերու այս գերիշխանութիւնը՝ տրամաբանող, վարդապետական դասումներուն վրայ միսթիք վիճակներու ամէնէն թիփիփ յատկանշանքէն մէկն է: Երբեմն դէպի շնորհը իրենց արշաւին մէջ անոնց ըրած հոգեկան մոր գիտերը՝ իրենց գրականութեան ամէնէն յանկուցիչ խոսովներէն մէկը:

Նարեկացին կարելի՞ է գետեղել այս դասակարգին մէջ: — Դժուար է պատասխանը:

Աւանդութիւնը կը խօսի ի մպաստ Նարեկացիին: *Առաւելի* տեսիլքը կ'ուզեն իրր այդ շահագործել: Բայց մեր գրականութեան մէջ ո՞ր սուրբին խնայուած է նման քայտ մը: Գիրքին մերթիմ փաստերէն քանի մը հատ, որոնք աստուածային տեսիլքի մը ակնարկութիւնները կը պարունակեն, կը տկարանան սա հիմնական առարկութեան առջեւ: Անոնք միշտ աստուածաշնչական տեսիլներու վերջիշումներ են կամ թէ անոնցմէ գուգորդուած: Մնաց որ, այդ գերերանութեան (beatitude) առաջնորդող վիճակները պատրաստուած չեն երբեք: Նարեկացին իրաւ է, թէ իր միտքը միշտ առաջին գիծին չի բերեր, բայց իր զգայնութիւնն ալ անկարող է դիմացնելու: Անիկա տպաւորապաշտ բանաստեղծ մըն է, որ արագ-արագ լար ու ստեղ կը փոխէ, մոյմ երգը գարնելու քիչ մը տխուր եակատագրով: Իր զգայնութեան ուսումնասիրութեանը մէջ պիտի տեսնենք տարբեր, որոնք իր արուեստը կարելի կ'ընեն: Բայց ոչ միսթիք արուեստ մը:

Ինձի կու գայ, թէ պէտք է մոր ձեւ մը գտնել՝ տարածելու համար

մին, տեսիլքին ու հաւատամքներէ թելադրուած մտապատկերներում, ուրուացող անդունդներում ու Ա. Գիրքի լատերովը պարածածկուած կամուրջներում մէջտեղը ծածանող իր մկարագիրովը:

2. ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Եթէ Միջին դարու ընդհանուր ուղղութիւններէն մէկն այսմէն ինչ Ա. Գիրքին վերածելու մարտադրութիւնն է, հետաքրքրական չէ, որ Նարեկացի Ա. Գիրքին դիմէ ամէն պատեհութեամբ: Բայց հետաքրքրական է, որ իր դիմումները ըլլան մտածման պէտէն աւելի պատկերացման մպատկերով:

Ամիկա գիտէ ընթացիկ վարդապետութիւնը: Ու այդքան: Այն խոշոր գլուխին մէջ, որ մուսուրուած է Եկեղեցւոյ դաւանաբանութիւնը իւրացնելու, հետեւակ շարադրութիւն մը կայ միայն, որուն մէջ իմաստի կապուելու հարկը խորապէս կը ննդէ ատանկ մարգամբի մը անընդունակ իրուողը: Խուսափելու համար՝ կ'ապաստանի ոմին եւ հոնտորութեամբ, տեսակ մը ուռուցիկ ու աւելորդ մեծութեամբ մէջ թաթխելով արեւմտա-դրեան դարոցի մը մէկին սկզբումները: Մի սպասէ՛ք իրմէն՝ սեպիական յարդարում մը այդ տուեալներում, մոյնիսկ անուագն անձնական դրութեամբ մը կնիքը, որուն այնքան գեղեցիկ փորձերը եղան իրմէ անաջ ու իրմէ վերջ:

Կարելի է ամոր մեկնողական տարանդ մը շնորհել, որ աշակերտական տարողութիւն մը միայն ունի հոս:

3. Ա. ԳԻՐԿԸ

Մտածման այս հետեւակութիւնը վերագրելի է գուցէ Ա. Գիրքին խորունկ Յնշումին: Մի մոռնա՛ք, որ Միջին դարում ամէնէն խիստ շրջանին կը գուգադիպի գիրքը: Ու անձնական մտածումէն վաճուելու կը մղեն Նարեկացի թէ՛ իր խառնածէն, թէ՛ շրջապատի պայմանները: Բանաստեղծները պատկեր կը հետապնդեն: Եկեղեցիին կը մտածէ շարիշներում, մեր հաշուոյն: Ուրեմն գրողը պէտք ունի իր ըսածները երկրորդ ու աւելի վեր հեղինակութեամբ մը պատկանելի ընելու: Ասկէ է թերեւս իր այնքան յօժարամիտ վստահութիւնը Ա. Գիրքին:

Ամիկա, Ա. Գիրքը, բարոյախօսութիւն մըն է ի գործողութիւն (en action): Ժողովուրդի մը պատմութիւնը հոն կը վերածուի բարոյախօսութեամբ հարցարանի մը: Դէպքերն ու անունները՝ պատրուակներ են միշտ մեկնուելիք տարրերով յղի: Նարեկացիին այդ մտահոգութիւնը կը բաժնէ ընդհանուր քրիստոնեայ մատենագիրներուն: Մարդ կը գարմանայ միամտութեամբ չափին, որով գօտեորուած այդ գրողները կը կարծեն աշխարհն ու հոգին քացատրել: Իբր մտածում այս շահաստանը պիտի գործածուի ման իբր գրական ընդլայնումներու գետին:

4. ԿԱՐՆԼԻՈՒԹԻՒՆՆԵՐ...

Բայց լատին ու յոյն հայրապետները մոյմ այդ գիրքէն մեկնած են՝ հասնելու համար կառուցումներու, որոնք իմաստասիրութիւն մը, բնագանգական ամբողջութիւն մը կը համադրեն: Այս աշխատանքը կը սկսի եկեղեցիին առաջին դարերէն ու դեռ դադարած չէ: Իմ ձեռնհասութենէս վերէն դաւանաբանական համադրութիւններու, յօրհմումներու յեղաշրջումը ուսումնասիրելի հոս: Բայց կ'ուզեմ դիտել տալ, որ Նարեկէն չի բխիր ոչ մէկ մոր ըմբռնում: Աղօթքները եթէ գրութեանց մեան ընդունակ չեն կառուցումներ դառնալու, բայց իրենց հաստատական մասերով ալ ընդհանուր յղացման մը կարելիութիւնը կը խոստանան:

Ինչ որ անդուստիւնը, ցեղային մկարագիւրը, անձնական փորձառութիւնը կը դիտեն քացառիկ իմացականութեանց մէջ, ինչ որ պատմութիւնն ու շրջապատը կ'աւելցնեն մտածման մեթոտային վրայ, ինչ որ վերջապէս իմաստասիրութիւնը կը ստեղծէ, բոլորովին կը պահսին Աղօթագիրքին: Ու Նարեկացիին ամբողջ գործը չունի մեան կառուցման անփոխարինելի շնորհը: Ու խորհիլ, թէ անիկա Քրիստոնեայ բնագանգութեան ամէնէն հրաքաւալ ու կենդանի խնդիրներուն տաղեր ու գանձեր նուիրած ալ է:

5. ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ...

Իմաստասիրական ոգիի այս պակասը ընդհանուր է հայ միտքին պատմութեան մէջ: Քաղաքական մակատագիրը գուցէ դժբախտ պատմաններէն մէկն է, որոնց ազդեցութեան տակ մեմք գգուշաւորու հետըզհետէ կարծրօրէն անհաղորդ մնանք որոնումներու, մոր փորձերու: Աղանդաւորները մատով կը համրուին մեր եկեղեցիին մէջ: Ու Արիստոտելի դժբախտ ու խուժ քարգամութիւնն ալ դեր կը մնայ ունենալ այս ամբողջութեան մէջ: Տակաւին կայ ցեղին իմացական յօրհմութեան փունջը, որ երկու հագարամեակի վրայ ոչ մէկ մտածման միզ ըրած է միմչեւ այսօր:

Նարեկացիին իբր մտածող անշուշտ աւելի տարրական կը մերկայանայ մեզի, թան թանի մը կաթողիկոսները, Շնորհալիին ու Լամբրոմացիին, Մագիստրոսը, որոնք տուած են լուրջ կառուցուած կտորներ, իրաւ է թէ հաստատական, բայց որոնց մէջ մտածումը ինքզինքը կ'ազատարէ մարեկեան կայիմաթիւն:

6. ԽՈՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ...

Խորքի հարցերէն ամէնէն կարեւորը մտածման ընդհանուր մոյ-

ուր աչքէ անցան գիրքին մեծ երեսները: Դժուար է մտածման միջոցները գործածել անդադար, մոյնը մնացող եղանակով մը ու չքախիլ կրկնութեամբ: Մնաց որ, հեղինակը գործնական մպատակներ ալ չէ հետապնդած՝ որոշ վարդապետութիւն մը, քարոյական որոշ հայեցողութիւն մը այդպէս պարտադրելու: Գրական եղանակը միայն կու գայ փոխարինելու խորքի այս սժգնութիւնը: Ու մտածումը այսպէս իբր *նորոգում* պատկեր կը հասնի մեզի:

7.—Ասկէ՛ *աղջատութիւնը*, որ ամէնէն տկար, վիրաւոր կողմերէն մէկը կը ներկայանայ *Աղօթման տեսիլ*ին: Ասկէ՛ մտածողական լրջութեան մը պակասը, որ տարտղմուած այդ կտորները չի յաջողիր պարտկել ու գիրքին տալ ամբողջութիւն մը, ընդհանուր գործի մը պատկանումը: Հաւաքումներ, հատուածներ կը համուի մնշուշտ անկէ կարելի գեղեցկութեան մը հրապոյրներովը: Բայց ամբողջ գիրքը վիրաւոր է *կեանքէն*, իրականութեան հետոյ յղացուած ու գործադրուած մկարագիրով մը: Ի՛նչպէքը ու օրումն պէտքերը ծնունդ չեն տուած անոր գանազան մասերում: Երբ ինքն իր մէջ աւելցող, ինքն իր մէջ խորացող ջանք մը վիճակներ միւս եղած են քանաստեղծիմ:

8.—Ու թերեւս միշտ ատոր համար է, որ այդ ջանք մը վիճակները երբեմն կը տարուի մեծ, պատկանելի ու ժգնութեամբ գործադրութեամբ (execution): Ասկէ անհասարելի *Հարստութիւնը* մանրամասնութեանց (ո՛չ խորքի, այլ՝ երանգի եւ աստիճանի), որոնք վիճակներում շուրջը կը համախմբուին: Ատոր համար է, որ էջեր էջերու կը հակադրուին: Պատմութիւններ տողերու կը վերածուին ու տողեր համակերպում ալիքներու պատահածիմ մասն կը լայնման ու կը լայնման: Բայց այլեւս հոս դուրս ենք մեզ խորքի սահմաններէն ու գործ ունիմ գրագետիմ թեքմիքին հետ:

-Գ-

ՁԵՒԸ

Նարեկացիին գիրքը կը դիմանայ իր *ձեռքն* յատկութիւններովը^(*)։ Այս աշխատանքը պէտք չէ կատարել ակադեմական տուեալներով։ Արագ քուտմը *երեւոյթներու*, որոնք իրենց յամախումովը ոմ մը կը ստեղծէին։

1. ՄԻՈՒԹԻՒՆ —

Նարեկացիին չի մտաեղբու իր մտածումին մնչումէն։ Ըսել կ'ուզեմ՝ մտքին մերկայացող ամէն թելադրանք ամիկա բառերում կը վստահի ամեաւասարելի միամտութեամբ մը։ Երբեմն բառերում ճայնական բնաւորութիւններն ալ կու գան աւելնալու մախադասութեան մարմինին։ Պատկերն ու բառը, որոնք գուգորդութիւններով գիրար կ'առաջացնեն, կը դիգուին մախադասութեան միեար գիծին վրայ ու բանաստեղծը չ'անդրադառնալ այս ամէնուն ու կ'ընդունի եկածը։ Այս անտարբերութիւնը, աւելի միշդը՝ մերողամտութիւնը՝ պատմառ է, որ իր *Փրագը* ըլլայ ծանրաբեռնուած սպառազէն (hérisse), ինչպէս անթափանցելի մամբայ մը։ Այս բնական իրողութիւնը իր արտայայտուելու ձեւին՝ կը վտանգուի մորէն ուրիշ կարգի մտադրութիւններով։ Ակնարկութիւններ, ընթերցումներու կշռոյթը, Քամի մը բան մէկ անգամ տալու իր մախասիրութիւնը, լեզուն անարգելու աստիճան խոշտամբումը իրարու կը միանան ու կը ստեղծեն Նարեկեան մեծութիւնը^(**)։

2. ԿՈՒՏԱԿՈՒՄ —

Մեր դասական գրականութեան այս աղետը իր ամենամեծ չափին կը հասնի *Նարեկ* ին մէջ։ Ասիկա անշուշտ կերպով մը արդիւնք է *գգայնութեան*, որ մշտապէս գրգռուած, մշտապէս arrogant ձեւով մը երեւան կու գայ ամէն էջի մէջ։ Բայց ածականներու, հումանիշներու, հակամիշներու, պատկերներու այս թաւալը չի մըն ալ *ուզուած*, բոնագրօսիկ

^(*) Հետաքրքրական է, որ դասական հայերէնին տրամադծօրէն բաժնուած, մութ ու անհասկնալի բազմաթիւ կողմերովը, լեզուի ու արտայայտութեան բոլոր ալանդակութեամբը նոյնականաբղ հատորը յաջողած է պահել մեր ժողովուրդի բոլոր խաւերուն վրայ յանվիճելի հմայք մը։ Գիրքը այս յաջողութիւնը կը պարտի իր ձեռին։ Ուրեմն պէտք ուսումնասիրել անոր ոճը։

^(**) 1. Այս է պատճառը, որ անիկա տեղի տուած է մեկնողական քանի մը աշխատանքներու։ (Նայեան, Աւետիմեան)։

րու, պատկերներու այս քառալը քիչ մըն ալ *ուղտուած*, բոնագրօսիկ գրական կը թուի ինծի: Ու գիրքին մէջ կուտակուին միմակ լեզուական չէ: Ամիկա մոյնքան յաճախադէպ է՝ սովորական վիճակներու շահագործման մէջ ալ⁽⁷⁾:

3. ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ...—

Անտարքեր է ամոր հանդէպ՝ մեղադր ըստելու չափ գարտուղի իր լեզուովը: Ամիկա չի յարգեր մոյնիսկ համաձայնական տարբայան օրէնքները: *Միտալը*, բերականօրէն, գոյութիւն չունի իրեն համար: Անշուշտ իր հասկցած ձեւովը արտայայտուելու յանդգնութիւն մը կը մերուի ամէն մեծ գրագէտի: Անշուշտ օրէնքներու կապուիլ մը, իր գգացումն ու մտածումը քառերու շղթային յամձնելու հարկին հնագանդութիւն մը արեւմտարիւնի առաջինութիւններ չեն եղած գիրքերու աշխարհին մէջ: Բայց Նարեկացիին անտեղի կերպով դիմած է այդ ընդվզումին: Իր լուսագոյն էջերը դարձեալ կը մնան միւսները, այսինքն՝ ամոմք, շուր գրագէտին թելադրութիւնները մեզի կը հաղորդուին առանց մեր կողմէն մեծ տագնապամբի⁽⁸⁾:

2. Պէտքէ շփոթել այս մեկնու թիւերը յունարան գրողներու մեկնութեան հետ, որ առաւելապէս իմացական նկարագրի ունին:
3. Ոչ ալ Մագիստրոսի խորթնութիւններուն հետ, որոնք բառապաշարական են:

⁽⁷⁾ Ա. Հրեշտորական հանդարտ առատութիւնը չի բաւեր՝ քաջատրեւելու երես թիւը:
2. Բանաստեղծական շեղումը նոյն ճան անբաւարար է հոս:

⁽⁸⁾ 1. Նարեկացիին շեղումները ոչ մէկ պէտքէ (արտաքին) կը հպարտակին:
2. Իր քերականութիւնը իր նախընթացը չունի մեր լեզուին մէջ: Լեզուին աղճատումը (գրաբար անկեղծ շրջան մը կը ըլլայ որչ ասաներորդ ու իններորդ դարերուն), ճաշակին անկումը, գրականութեան ազատումը ստորին շրջաններէն յիշեր են: Դասականներու մեծ վայելուչ պարզութիւնը՝ անկումի հեղինակներուն մօտ անտարբերութիւններու կը վերածուի: Բայց հոս խորքէ հարց կը ծագի: Մինչդեռ նման պարագայ մը չի ներկայանար մեզի:
3. Օտարը, լեզուական համաձայնութեանց ճնշումն ալ մեր մտքն չ'անցնիր: (Արաքական աղղեցութիւն մը ալ ունի վրայ յար ընդունելի չէ):
4. Իր ոտանաւորներուն մէջ այդ լեզուն ունի ձայնական համաձայնութեան նկարագրի մը:
5. Ամբողջ գործին մէջ միայն Մեկնութիւն Երդ Յրդոցինն է, որ սանելի համաձայնութիւն մը երեւան կը բերէ:
Այս հինգ դիտողութիւնները լեզուական տարազութիւն մը միայն ունին: Պէտք է քննել ալ ոճը գարձեալ լեզուէն դուրս, ուրիշ, այս անգամ ներքին աղղեցութիւններու ճնշումին տակ:

1. Փոխաբերութիւն

Նարեկացիին բանաստեղծ է ամէն բանէ առաջ: Ու այս հաստատումը կը բաւէ՝ բացատրելու համար անսպառ առատութիւնը իր փոխաբերութիւններուն:

Ու գրական այս ճեղք անոր արտայայտութեան ամէնէն բնական, ամէնէն յանախաղէպեւ հրապուրիչ առաջինութիւնն է: Փայլակով տեսնողները, հեղեղով զգացողները, անընդհատ եփ եկող միտքերը միայն կը յաջողին այս աստիճանով գտնել այդ հագուադէպ գոհարներէն: Այս կարողութիւնը՝ Նարեկացիին բոլոր գործերուն մէջ: Բայց մանաւանդ տաղաչափուած հատուածներուն մէջ: Երբեմն բառ մըն է ան, երբեմն մտախաղասութիւն մը, երբեմն ամբողջ գլուխ մը: Իրականութիւնը շրջուած մերկայացնելու այս ճշմարտութիւնը կը վերածուի ընդհանուր եղանակի: Նոյն պէտքիմ համար է, որ, օրինակի համար, պարզ պատկերացումը կը վերածէ այլաբանութեան, որ իր կարգին երկարած գուռած փոխաբերութիւն մըն է:

2. Անոր անլի համդարտ, ամփոփ ձեւն է *պատկերը*, որ դարձեալ գոյութիւն ունի Նարեկացիին բոլոր գործերուն մէջ: Անոնք ընդհանրապէս աստուածաշնչական ծագում ունին: Բայց տարօրինակը այն է, որ էջերու գլուխներ կը համառոտուին, պարզ այդ պատկերը գործածելի ընելու համար՝ բառի մը վրայ:

3. *Ուժգնութիւնը*— Ինչ որ կը գատէ Նարեկիին աղօթքները մեր արբազան մատենագրութեան մեծաշունչ կտորներէն, ու ինչ որ Նարեկիին անբաժան առաջինութիւնը կը կազմէ, ուժգնութիւնն է ատիկա:

1. *Պատկերներու*, որոնք արագ-արագ իրարու ետեւէ կը մտնուին, տեսակ մը տարբերակի, երաբխական բան մը տարով, տարածելով իրենց գնացքին վրայ: Անոնք այնքան իրար կը երեմ, որ երբեմն կտոր-կտոր խորտակուած դուրս կու գան գրողին ուղեղէն: Բառական կամ վիճակի այդ պատկերները իրենց բոլոր կրկնութիւններովը, երկարած գումարովը, տանելի կը մնան պարզ այն շունչիմ համար, որ վատնուած էր իրենց շարժումին:

2. *Բացասութեան*— Նարեկացի չ'ընկերկիր ոչ մէկ մկատումի առջեւ: Անիկա իր զգայնութիւնը կամ մտածումը ձեւի տակ բերող ամէն բան կը եւրընկալէ մեծ համդարտութեան մէջ: Սրբագան մատենագրութեան մէջ, *պարսաւ* ին մերուած խստութիւններ, ետեւ ու վայրագ անւանումներ: Հիմերուն մտախաղած իրապաշտիկ աստիճանները սովորական են իր գրչիմ տակ: Միւս կողմէ՝ անիկա չի վախնար բառերը իւր շնչու, չարչարելու, անոնցմէ ստամայու համար իրենց ամբողջական տուրքը (redemption): Ուրիշ տեղեր մտախաղասութիւն ու բառ, երբ իրենց ուժը կ'առնեն տրուած վիճակէն, Նարեկացիին կը պրկէ, կը խոշտանգէ գանոնք՝ հասնելու համար ճշմարիտ զգայնութեան, որուն պատկերը ըլլալ կը յանկնիմ մեր բառերը:

3. *Շունչի*— Հետաքրքրական է, որ գիրքին գլուխները հակառակ

իրենց մոյմութեամ, տեսակ մը լիութիւն ունենալ իրենք իրենց մէջ: Ամէն աղօթք կը մեկնի երազէ մը, մեղքէ մը, արցունքէ մը կամ յոյսէ մը: Բայց ամոր գաւազամ մասերը իրարու կը շողկապուին իրենք իրենց բնական անգործութեամբ մը (inertie), ըսելս կու գայ: Այդ գգայմութիւնը առաջ կու գայ թերեւս այն շունչէն, որ բոլոր այդ էջերը, յետոյ գլուխները, յետոյ ամբողջ գիրքերը կը լիացնէ ու չի կոտորեր: Բն մտածման տեսակէտէն ցրուած այս գիրքը, հոս այդ մշտնջիւն մէջէն դիտուած տարօրինակ ու պոտոր դիմագծութեամբ ամբողջութիւն մը կը դառնայ:

4. *Ջգացական վիճակներ* — Բրոնցմէ ալման տուած է հեղինակը, բայց սահմանափակ իրենց խորքին գաւազամութեամբ: Յոյսի, յուսահատութեան, գարշամբի ու երանութեան, պշուցումի ու սողոսկում գլխահարութեան տեսիլներ ու պատկերներ տրուած են արագ, բարձրէն ձեւագրած գծագրութեամբ մը: Բոլոր այս պատկերներէ մեզ չեն լիացնիր իրենց մարդկայնութեամբը — ըսել կ'ուզեմ՝ մարդկօրէն միջակ կարելիութեամբը — միւս կողմէ՝ մեզ կը տպաւորեն իրենց սաստկութեամբը, DOUSSE, դէպի չափագանցութիւն հակած երեսներովը:

Ուժգնութիւնը դրական յատկութիւն մը ըլլալէ դադարած է Նարեկացիին մէջ, դառնալով ամոր արուեստին ընդհանուր, անայլայլ, անխուսափելի քարեխառնութիւնը: Ամիկա մթնոլորտ մըն է, որ ամէն կողմէ կը պարուրէ գրագէտին ամբողջական կազմը: Անով կը ներկայանան մեզի, իրապէս ուժգին վիճակներու շուրջ, մասն մեղմ ու համդարտ պահեր, բայց դարձեալ՝ վերցուած, դարձեալ կարմրած:

4. ՇԱՀԵԿԱՆՈՒԹԻՎՆ.—

Նարեկացիին ձեւը բիչ անգամ կը դադրի շահեկան մնալէ: Եթէ մտածումներու միօրինակութիւնը, մոյմ գգացումներու մոյմակերպ կրկնութիւնը շատ բան կը խորտակեն գիրքին արժէքէն, բայց չեն կրնար մեզ անտարբեր ձգել: Վասնզի այս ամէնը — այսինքն՝ մտածումու գգայմութեան սարուած — կը պաշտպանուին մէկէ աւելի առաջինութիւններով: Երբեմն մարդ կը տարուի, միակ վիճակ մը տեսանելի ընելու համար կանչուած պատկերներուն, բացատրութիւններուն անսպասելիութիւնովը: Երբեմն հոմանիշներուն անհուն ու ընկնող տեղատարափը կ'երկնայ ու կ'երկնայ, առանց որ ձանձորոյթը կամ տափակութիւնը հետեւի այս չափագանցութեան, վասնզի իրաւանչիւր օղակ կամ կաթիլ իմքին մէջ արժէք մըն է եւ կամ յաւելում մը նրբերանգի: Յետոյ՝ անհատականութեան շատ գորտուր շեշտ մը բոլոր այս գիծերը կը դողացնէ, բոլոր այս շեշտերը, մակատները կը թափանցէ ու ամէնէն ամնշան անկիւններուն իսկ կը հաղորդէ բարախում ու արիւնոտ բան մը, գործը ընելով խոտվիչ, յուզիչ ու շահեկան:

Եթէ պէտք ըլլայ միշտ տարագներ փնտելի, որոնք այս աղօթքներուն այսպէս ցոյց տրուած շահեկանութիւնը բացատրել ջանային, դժուար

րութիւնը պիտի ունենայինք ընտրութեան: Վասնզի հակառակ իր շատ
 զօրաւոր անհատական շնչտին, անոր աղօթքները որոշ մարդու, այս
 սինչ ժողովուրդին, այսինչ շրջանին արտայայտութիւնը չեն մերկայա-
 նար անմիջական ձեւով մը: Անոնք դուրս են ժամանակէն, որ անպաստ
 պիտի ըլլար ու գիրքը պիտի գետնդէր շատ պզտիկ սահմանի մը մէջ:
 Անոնք դուրս են դարձնալ միջոցէն, թանի որ իր ազգիւն ընդգայնու-
 րութիւններէն, զգայութիւններէն, մտայնութեանէն շատ քիչ քան կը խտաց-
 նան: Ուրկէ՞, ուրեմն, այդ շահեկանութիւնը:

— Ինձի կու գայ, թէ պէտք է այս պարագան վերագրել գրագետի իր
 տուրքերուն: Իր ընտրած միւսքը, ինքնին խորապէս լայն՝ ունի բոլոր
 աստիճանները տեսական շահագրգռութեան մը: Ի՞նչ է իր գիրքը, եթէ ոչ
 մամբայ մը դէպի մեծ երանութիւն մը, մամբայ, որ կ'անցնի խորխո-
 րատներէն ու երեսկայելի բոլոր տառապանքներէն՝ հասնելու համար
 լոյսի մեծ աւազանին: Ո՞վ է մարդը, որ չտազմապեցաւ այս մամբողջու-
 րեանը: Ու մ'աւանդող մի մոռնա՞ք Միջին դարը եւ 1000ական թուական-
 ներուն մասնակի շահեկանութիւնը:

Փոխադրեցէ՛ք խորքի այս շահեկանութիւնը իր ոնին մէջ ու քաւա-
 կան քան քացատրած կ'ըլլա՛ք:

Ծ. ՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒՓԻՆՆԷ՛՛՛՛՛՛՛

Հակառակ բոլոր դժուարութիւններուն, հեղինակին կողմէ այն-
 ժամ մեղանչումներուն, Նարեկացիին ոճը ունի հաղորդականութիւն:
 Իմաստի հասկացողութեան անկախարար, մեր ժողովուրդը կը համակ-
 րի այդ գիրքին: Ես պզտիկ եղած օրերուս գլուխներ կը յիշեմ կարդացած
 ըլլալ տարաբախտ հիւզակներու խորը, երբ խտրելի վրայ հիւանդ մը
 երկարած է՝ աչքերը քաց կամ գոց: Ու հիմա կը վերաշինեմ վիճակը, որ
 ընթերցումը կը ստեղծէր այն ատեն: Ու քառերը, որոնք կ'ելլէին իմ
 բերանէն, մարմինի կը մտնէին: Ու անոնք մոյմպէս կը տպաւորէին
 հիւանդը շրջապատողները: Ու յոգնութիւն ու սարսուռ կը բռնէր իմ
 բոլոր մարմինը: Այս ամէնը գիրքին խորհուրդին հետ մեր ժողովուր-
 դին դարեւոր ընտանութեամբը կը կապուին:

Հիմա ընթերցումը կը համակէ գիս ուրիշ պատմառոններով: Ու ինձի
 հետ բոլոր կարդացողները, որոնք խորհուրդէն պարպելով համդերձ
 այդ տողերը, տակաւին կը գտնեն անոր մէջ մորութիւն:

Նորութիւն.— Եկեղեցական մտեմնագրութեան մէջ ամենակա-
 նը, ընդունուածը, խնթը հասարակաց առաքինութիւններն են: Գրա-
 գէտը ամէն քանէ առաջ պաշտօն ունի ոչ թէ գարմացմելու, այլ համոզե-
 լու: Ու այս գլխաւոր ճգտումն է, որ եկեղեցական հայրերուն այնքան
 միջակ ու անմեղ գրականութիւնը կը շինէ: Նարեկացիին խնդրուած է
 անշուշտ այս տափակութեան ալիքովը: Բայց անիկա յաճախ գիտէ շար-
 ժու մը, որ ինքզինքը կ'ազատագրէ: Ու անոր իրրեւ հետեւանք ոճին մէջ

ծոււրը, որ ինքզինքը կ'ազատագրէ: Ու ամոր իբրեւ հետեւումք ոմին մէջ
երեսն կու գան այդ փայլակները, տրտակարգ յանդգնութիւնները,
բոլորովին անտիպ բառերն ու ասութիւնները, պատկերներն ու փոփո-
խութիւնները, որոնք կը տպաւորեն մ'ա՛նաւանդ արուեստագէտ խառնը-
ւածքները:

Յանդգնութեան այս աստիճանը ոչ մէկը փորձած է իրմէ առաջ: Ու
իրմէ վերջը միևնչեւ մորերը պէտք է հասնիլ, հանդիպելու համար բառե-
րու ներքին արժէքներէն այնքան բան հասկցող դէմքի մը:

6. ԿՇՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—

Շատ ինչ բան կը գատէ Նարեկի ոմը չափուած բարբառէն: Արդէն
շատ մը տեղեր ինքն իրեն ոմը կը վերածուի տաղաչափութեան: Գիտա-
կի՞ց, թէ քննադդական: Երկու պարագան ալ կրնամք ընդունիլ, բայց
բացատրած չենք ըլլար այդ տարօրինակ կշռականութիւնը, որ իր մտա-
նը չուցի մեր գրականութեան մէջ:

Ամոր տողերը, ամենում գանգամութեամբ, կ'երկնան, թաւալում
ու անող յառաջատուութեամբ մը, որպէսզի տարագեն մտածումը կամ
պատկերը, երբ անոնք իրենք իրենց համար ունին խնդ ու իրարանցիկ
նկարագիր: Ամոր տողերը կտոր-կտոր կը դրուին, երբ միակ պատկեր
մը կամ մտածում մը կը զգեստեն գրողը եւ կ'ողորմ գայն իրենց
կայծակներուն անսպաս աղբերացումովը: Բանաստեղծը կը գարնէ ու կը
գարնէ իր ռակի մուրճը ու աղամանդ կոյտը զգացումիմ՝ հրաշքով
կարծես կ'աճի: Այս ձեւ յօրինումներուն առջեւ նարեկացիին ոմը աշ-
խատանքիմ, միութեան եիգիմ հեւքը ունի ու այդ հեւքը կ'ըլլայ շատ
յատկանշական կշռութիւն մը (ուրիշներ ուզած են մարմնական նօնում-
ներու անդրադարձ մը ընդունիլ այդ չափը բացատրելու համար):

Յետոյ՝ պէտք է խորհիլ երբայական մատենագրութեան մէջ շատ
յարգի գրական ուրիշ ուղղութեան մը (parallélisme) զուգակըշ-
ուականութիւն ըստած ձեւիմ^(*):

7. ԶԱՅՆԱԿԱՆ ՄՏԱՀՈՒԹԻՒՆՆԵՐ.—

Սրածշտական շեշտ հասկացողութիւն մը, աւելի միշտ՝ ճաշակ մը,

^(*) Իր տաղաչափի հայ գերբնուածներուն մէջ կայ մասնաւոր եղանակ մը, որուն կը
հանդիպինք աշուղներու, մասնաւորաբար Քուչակին մէջ: Կրկնել վերջացող տուներ
մը վերջին տողը՝ ակտող տունի մը վրայ: Ասիկա շարժումը փոխադրելու ճարտար ձեւ
մըն է, որմէ մասնական զեղեցիկ արդիւնքներ կարելի է ստանալ Նարեկուն մէջ Մլրաբ
Մեծարենց փորձած է եւ բախողած:

Նարեկացիին կ'առաջնորդէ իր ֆրագին բոլոր ծակուծուկերէն: Ինչ որ ալ ընէ, անիկա չի կրնար ազատիլ ձայներու թելադրած համաձայնութենէն: Նոյն այդ պէտքի մ ծնունդ են բոլոր իր ածանցումները, բարդութիւնները, որոնց յանդգնութիւնը վար չի մնար յրացումներու, փոխաբերութիւններու համար գործածուածէն:

Քերթուածներուն մէջ քառեր, այսինքն՝ ձայներ կը մտնեն, որոնք իմաստին հետ չունեցած աղերսով մը մշակուող են: Ժողովրդական յօրինումի այս եղանակները անոր տողներուն մէջ յանկարծ կը ցցուին ու մեր աշուղներուն երգերը եւ գանձերը կը նետեն Քամի մը դար աւելի հտ:

Զեւի այս ամփոփ վերլուծումը Նարեկացիին գործը կը դնէ նոր, անկապտելի փառքի մը լուսապսակի մ տակ:

1. Անիկա ձեւէ է շատ մեծ գրագէտի մը, որ զօրաւոր գգայութիւններ ունեցաւ, քայց որուն մտածող մեքենան անկարող եղաւ այդ գգայնութիւնները իմացական ինքնատիպ դրութեամ մը տանելու:

2. Անիկա ձեւէ է շատ զօրաւոր արուեստագէտի մը, որ ակամջի քացառիկ գգայութիւններ ունեցաւ եւ ատոնց արտայայտութեամբ համար չվարանցաւ նետուի յանդգնութիւններու, բռնագրօսիկ կերպերու թանձրացնող սխալներու մէջ:

3. Անիկա ձեւէ է վերջապէս բանաստեղծի մը, որ գգայնութեամ եւ երեւակայութեամ զօրաւոր մնշումի մ տակ շինեց իր ֆրագը պակասաւոր, խենթ, քայց յորդ, քայց գիւտով ու կայծակով թրթռուն:

-2-

ՉԳԱՅՆՈՒԹԻՒՆ

Տարեր.—

1. Երեւակայութիւն,
2. Միսթիքականութիւն,
3. Իրապաշտութիւն,
4. Ճեղային գիծեր,
5. Միջին դար եւ ընդհանրականութիւն:

1. ՆՐՄԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ —

Բացարձակ (մամբոյատ) է ամոր առաջին վերնադիրը, որ հասարակաց է բոլոր տեսանողներուն: Ամիկա իրերը չի կրնար ընդունիլ իրմէ մերս, առանց ամոնց յօրինուածութիւնը եղծելու: Իր ժամաչումը կը փոխ ամոնց վրայ: Յետոյ՝ գոնացում չունի: Իրերուն տուածը կը գարգացնէ, կը ստուարացնէ, տանելով զանոնք իրենց անդրագոյն կարելիութեանց: Այս յատկութիւնը ամոնց շինել կու տայ դժուարներ կամ արժանութիւններ: Նոյն ուժն է, որ բարոյական ըմբռնումները միութեան զգայութիւններու կը վերածէ ու միտն ու մեղքերը տեսանելի առարկաներու եւ էականերու ձեւով կը տեսնէ:

Նարեկացիին երեւակայութիւնը յոգմիլ չի գիտեր, ընդհակառակն, շատ կ'ախորժի դիմանալէ, պայմանով որ ամբողջական պարագրկում չունենայ կատարելիք: Նման պարագաներուն համար կը տկարանայ անիկա: Բայց մասեր, հատուածներ, երանգներ գտնելու եւ դիզելու աշխատանքին համար անիկա սպառում չունի:

Նարեկին մէջ վիճակներու, պարունակներու, գուշակութիւններու էջեր կան, որոնք կը տպաւորեն իրենց այդ պատիկ գիծերով կազմուած կցկտուր, բայց պնդում կողմերով: Յետոյ՝ այդ երեւակայութիւնը օգտակար եղած է մա՛նուանդ ձեւի ստեղծումներուն: Անկէ կը մեկնին Նարեկացիին բացատրական բոլոր գիտերը, պատկերները, փոխարեւորութիւնները, ակնարկութիւնները եւ մանուքիւնները:

2. ՄԻՍԹԻԲԱԿԱՆՈՒԹԻՒՆ —

Խորքի ուսումնասիրութեան մէջ խօսուած է արդէն այս մասին: Հոս հարցը կը ներկայանայ իրեն խառնուածքի մաս ու այդ յոյսով մեմք կը տեսնենք անիկ գործօն, գործնական մկարագիր մը, քան հանդարտ երկնահայեցողութեան մէջ պշուցեալ մարդու մը պատկերը:

Նարեկացի մշտաբորբոք ջիւղեր եւ գերագրգռուած երեւակայութիւն մը ունի: Իր գործին մէջ չենք հանդիպիր հոգեբանական դրուագի մը, որ հետեւանք ըլլար միաբիւք ընկրմունքին:

3. ԻՐԱԳԱՇՏՈՒԹԻՒՆ —

Հակառակսարսափի զգայութեանց առատութեան, սասանաներու խուժումին, գիրքը կարուած չէ իրականութենէն: Այնքան միշդ է, որ առարկայէն անլի ձեւն է, որ կը մշդէ գիրքերուն մակատագիրը: Տանքէի բոլոր յղացումները կը կապուին իրականութեան:

Նարեկացի անապատական խմորէն գուրկ գրագէտ մըն է: Անիկա չէ կլուած երկինքին անդռեանէն: Ինչպէս չէ խորտակուած մեղքին լեռնացոյ ճնշումէն:

Միս կողմէ՝ գործնական քարոյախօսութեան քիչ մը մեղակցումը մեր չեն խաբարեր իր մերքին մտահոգութիւնները:

Ու կ'ունենանք գիրքը, ուր խորքի այս հէմքերուն վրայ, ձեռն թելերը կը մետուին ու կը ստեղծուի ոմը որ, հակառակ իր բոլոր թռիչներուն՝ կը մնայ իրական^(*):

4.ՅԵ՛ՆԱՅԻՆ ԳԻՄԸ.—

Այս իրապաշտութիւնը գիտակցուած, գրագէտի դաւանարանութեամբ արմատաւոր երեւոյթ մը չէ Նարեկացիի գործին մէջ: Դուք քիչ տարրեր պիտի գտնէք այդ հարիւրի մօտ աղօթքներուն մէջ, որոնք ցեղ մը, անոր մէկ պահը, անոր զգայնութեան ճանի մը մեծ գիծերը սեւեռած ըլլալին:

Նարեկը իբր յղացում քիչ քան ունի հայկական: Ու սսիկա մեղադրում մըն է Նարեկացիին պէս գրագէտի մը դէմ, երբ անդին գիտնմէ, թէ մոյմ այդ զգացումը, այսինքն՝ կրօնական զգացումը մեր մէջ երեւան կը բերէ գոնէ արտայայտութեան մոր երեսներ: (Մարականները եւ ճանի մը աղօթքներ օտար չեն ազգային գոյնին):

Ձկայ անոր գիրքին մէջ մեր ժողովուրդը, եթէ ոչ ուղղակի, գոնէ կողմակի իրականութեամբ մը: Աղօթքի այդ ընդհանրականութիւնը չէ պատճառը այս սօցումութեան: Հոռովեական քարոյախօսներու գրիչին տակ թափանցողները երեւան կրնան համել տպելու ու զգայու եղանակը: Յունական աստուածաբանութիւնը թելեր ունի, որոնք միմչեւ փիլիսոփաները կ'իջնեն:

Բացի քուռն, արագ գրգռումէն, որ մեր ցեղին կարեւոր գիծերէն մէկն է, եւ որ այդ աղօթքներուն մէջ ամենէն աւելի յամախուսած պարպումի ձեւ մըն է, դժուար է հանդիպիլ ուրիշ տարրերու, մեր մկարագիւրը յատկանշող երկպառակութեան, անիշխանականութեան, ստորնութեան, արեւմտաբոստ ըմբոսութեան, իրարատեցութեան ու դասական մեղքերուն, որոնք ճաւուրութեան հասարակականներ քաւ չեղան^(**):

^(*)Արուեստի տեսութեամբ մըն է, որ գործածուած է հոս ըստ արուեստի միւնը: Նիւթ, շրջան, պայմաններ, գրողին անձը, բոլոր ընկերակցանան, որպէս զի գրողը կ'արտօնէ իրականութենէն ու երազի էջ մը դառնայ, ըստ յամէնն այլ յաղթունին գրագէտին թեքիքէն, արուեստի ըմբոսումէն, թերեւս երեսակայութեան ձեւէն:

^(**)Մեր գրականութիւնը ընդհանրապէս աղքատ է այս կարգի տեսանկյունով, ըստ պատմիչներուն գործէն, ի հենուկս իրենց, կրնանք բարձրանալ քանի մը եղբայրականութիւններու:

5. ՄԻՋԻՆ ԴԱՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

Մեր միջնադարը, իբր քարոյական բարեխառնութիւն, իբր մնշում (pression), դարձեալ ենթակայ չէ եղած լուրջ, վնասական սեւեռումներու: Դուք պարագայ տեսի աշխատիք միւր կապիւլայդ ծփում գզացումները, որոնք աւելի շատ գիրքերէն կը փախչին, իսկ թէ մարդերէն կը ցրուին՝ գալ, բաժնիւ համար առածը անհամեմատ խոշորցնող հայելիի մը ծոցը:

Դասական գրագէտները ճիշդ է, որ չեն ախորժիք մասնաւորումներէ, չիչ մը շատ մասնող ցուցումներէ, քայց ատոր փոխարէն, ընդհակառակն, լարերու վրայ իրենց հարուածները վնասական գործադրութիւններ կ'ընեն: Այնպէս որ, Նարեկացիի գիտակցութեանն դեպի ընդհանուր մարդկութիւն մտազայթում մը դարձեալ անբաւական է գործի մէջ: Մնաց որ, իր անձին գերադրումը, գայն քանի՜-քանի՜ անգամ յանձնարարելը, գայն մեղքերու ազնուութիւն տակ ծակծկելէ ետքը, Աստուծոյ լուսալու արքշառնէն ետքը, մարդերու միջինին իբր միջնորդ ընծայելու իր միամտութիւնը հակառակէն փաստ կը բերեն:

-Ե-

ՆԱՐԵԿԱՅԻՒ ՄԻՒՍ ԳՈՐԾԵՐԸ

1. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ԱՈՂՈՄՈՒՆԻ

Նարեկացիի անդրանիկ աշխատութիւնը: Շանկան են մատարանն ու վերջարանը՝ իրենց յիշատակութիւններով: Գործը իբր թափանցում միջակ է: Իբր ցուցադրում (exposé)՝ մազադ: Հետաքրքրական է լեզուն, որ պարզ է անհամեմատ, իսկ Նարեկացիի միւս գործերուն լեզուն:

2. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽԱՉԻՆ ԱՊԱՐԱՆԻՑ

Ասիկա կատարեալ դիւցազներգութիւն մըն է: Նարեկացի մեզի կը փորձէ մերկայացնել մարդը (որոնք կայսեր են), եպիսկոպոսներ (որոնք սուրբեր են), դէպքեր, որոնք իրականութեան հակակշռէն կ'ազատին ու կը մխուրդ երաշխիւն մէջ: Պատմութիւնը կարելի է ամփոփել: 983ին խաչ մը կը գետնորդի

Ապարանցի ուխտի Ա. Աստուածածին եկեղեցիին մէջ: Ահա հիմնական
 միւր: 3-4 էջ կը մուրիւր նարեկացի եղբուքիւնը կանխող ժամանակին,
 Վապի ու Կոստանդին կայսրերուն: Նոյնքան մըն ալ՝ Մոկաց աշխարհէն
 Պոլիս գաղթող ազնուականին: Քանի մը հաստուած կը բացատրեն հրաշ-
 անքը, որոնք կը գործուին այս գաղթականին երկրէն քերած հողովը:
 Հետաքրքրութիւնը իմքնակալներուն: Կը վարձատրեն գաղթականը՝ անոր
 մուրիւրով խաչափայտէն կտոր մը, որ կը «հաստատուի» ձեռակերտ
 խաչի մը մէջ: Յետոյ՝ շինութիւնը այն խաչին: Վերադարձը Մոկաց
 գաւառը: Ծիմութիւն դամբարանի: Խաչին գետեղումը, մախ՝ Ա. Կարա-
 պետի, յետոյ՝ Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ:

Ահա այս մախանիւթովն է, որ նարեկացի կը գրէ պատկանելի
 գրքոյն մը, ուր բացատրութիւնները կը հաւասարին Աղօթմանստե-
 նին ամենէն շքեղներուն: Ուր եկեղեցական նարտարապետութիւնը ոմնի,
 բառի կը վերածուի: Ուր մա՛նաւանդ ոսկիի, արծաթի, բեհեզի եւ մե-
 տաքի գարմանալի հարստութիւն մը շլացնող է ու խորապէս տպաւո-
 ըրիչ: Հին դիւցազնաբանաց մօտ փորձուած այս առատութիւնը,
 հպարտութիւնը անհամեմատ վեր է Խորենացիին հանդարտ եւ պատմա-
 կան մնալ ու գող եղանակէն:

Արտաքին տարրերու այս manimentը արտակարգ արուեստի մը
 ուժովը կը դադրի ծիծաղելի, այլամղակ ըլլալէ, քանի որ հեղինակը
 մտորիմակ համադրութիւններով, բարդութիւններով, խտութիւննե-
 րով կը քալէ:

Իր emphasisը բառերէ աւելի տեսողութեամբ, մերքին թրթուրմի
 չափազանցութիւն մըն է: Վիճակները գերադրելու այս տրամադրու-
 թիւնը զանոնք գարդարուն, շողարձակ ընծայելու այս նարտարանքը
 իւրայատուկ հոստորութիւն մըն է, որուն կը սպասաւորեն խորատես
 արուեստագէտի ընկալը, ոմնի հզօր զգայարանք մը, բառերը իրրեւ ուժ
 գործածելու կարողութիւններ:

Դէպք, իրականութիւն, դիտողութիւն՝ բոլորն ալ կը կորսուին
 բառերու այս լայն հեղեղին մէջ: Բայց թափանցիկ հեղուկի մը մէջ
 ընկղմող իրերուն ձեւափոխութիւնները կը յամառին անոնց ետեւէն:
 Քանի մը տողով նարեկացի տուած է Պոլիս մը, որ Խորենացիին
 Երուանդակերտէն գերազանց է: Պատահական ֆրագներ իրեն համար
 միջոցներ են, որպէսզի անիկա մկարագրէ պարտէզներու ծառեր, որոնց
 գեղեցկութիւնը կ'անցնի փարպեցիին մշամաւոր մկարագրութիւննե-
 րէն:

Ու մարդերը մորէն, որ կը տարուին դիւցազնական զգեստաւորու-
 մէն, որոնք կը մեծցուին, բայց չեն դադրիր մարդ ըլլալէ:

Ոչ մէկ քարզամանութիւն կը յաջողի այս ոմնի գորութիւնը փոխադ-
 րել:

Պատմութեամ կցուած է մերթող մը, որ դժբախտաբար գուրկ է մեծ
 գեղեցկութիւններէ: Խաչի վրայ մերթողական մը, աստուածաբանական
 ու մեղիներով մշտապէս կատապարուած, կը յամգի ի վերջոյ մարգամքի
 մը, յախուռն, ուռուցիկ ու անտանելի:

3. ՆԵՐԳՈՂ ՍՐԳՈՅ ԱՍՏՈՒԱԾԱՆԵՆԻՆ՝

Ազգօրհամատեսանիմ շնչուովը գրուած գովաբանական օրհնաբանութիւն մըն է, ուղղուած՝ Ս. Աստուածամօր: Նոյն կշռաւոր արձակը, բայց Քիչ տեղի մէջ գրագէտը հասած է իրական ստեղծումին, եռն՝ ուր կը կենայ մեկնելէ մարդեղութեան խորհուրդը եւ ուղղակի դիմանումութեամբ կը խօսի, եռն փոխաբերութիւնն ու պատկերը անմիջապէս կը պատասխանեն: Ու այդ էջերը կենն աւելին կը գրան մերթողին: Յայտնի է, թէ այս բխումը չէր կրնար հարագատ մնալ իր ամբողջ մասերում մէջ: Բայց բաւական բան կարելի է գատել, որ ինքնատիպ է ու անհասարկի գեղեցկութեամբ: Աստուածածնին հանդէպ վանականի գերագրուած գգայութիւն մը կը պակսի ասոնց: Իր միանրէն աւելի իմացականութիւնն է, որ երեւան կը համէ Աստուծոյ մօրը բոլոր գանակները:

Ու երկինքն ու երկիրը, դաշտերն ու լեռները, աստղերն ու ծաղիկները իրարու կը խառնուին, կը հալածուին, որպէսզի իրենց պատկերներէն փշուրներ տան բանաստեղծին: Ներքողը ունի եադորդականութիւն եւ գգածուած շնչու: Նարեկացիին յաջող գործերէն է: Նշանաւոր է մանւ իր յիշատակագիրը:

4. ՆԵՐԳՈՂ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՒ ՅԱԿՈՒՅ ՄԵՐՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝

Այս երկու նառերն ալ մոյն երակէն ելած են, որոնց մասին ըսինք: Բայց այլեւս եղանակն է, որ կը տիրէ:

Գրագէտը ըսելու իր ճեւը անպատիժ կերպով կը գործածէ ու կ'ընէ գեղուն մախաղասութիւններ, որոնք աստուածաբանութեամբ, մեկնողաբանութեամբ, երբեմն ալ ստեղծումով տոգորուած են:

Ասոնք ոչինչ կ'աւելցնեն Նարեկացիի արժանիքներուն:

5. ԳԱՆՁ

Երեք են թիւով. 1. ի գալուստ Հոգւոյն Սրբոյ. 2. ի Ս. եկեղեցի. 3. ի սուրբ խաչն Աստուածընկայ:

Ասոնք արձակ էրթուածներ են, ու իբր այդ՝ Նարեկացիի ամէնէն յաջող արտադրութիւններէն:

Բանաստեղծը հոս հագուադէպ քախտը ունի նիւթի վրայ կեդրոնանայու: Ու այդ միւրը վերջապէս Ազգօրհամատեսանը գրաւող մեղքերուն թումը չէ: Երեւակայութիւնը ազատ ասպարէզ ունի միջոցներէն վազելու: Պատմութիւն, մարդեր, աստուածութիւն անոր կու տան թելադրանք, մորանոր որակումներ, խտացումներ, շոգափայլումներ արձակելու: Ամէնէն Քիչ պեղուած տեղն է այս գետինը, ուր թափ կու տայ գարմանաերաշ իր պատկերներու հեծելագործին:

Այսպիսով կը հաւասարի միւրիւն: Աւելի պարզ, ինչպէս *Աղօթամատ-
հանք* մը, աւելի կայծկլտում, ինչպէս *Պարտիզան* մը, մա՛նաւանդ խտացած
միւրիւն շուրջը մնալ կրնալու արտադրութեամբ մը: *Պարտիզան* մէջ
Նարեկացիին ոնը կը հասնի իր գեղազոյն շքեղութեան:
Հարկ չկայ ինչպիսիւն անոնց խորքը:

6. ՏԱՂԵՐ.—

Բայց Նարեկացի մը պէտք է տեսնել մա՛նաւանդ իր տաղերուն մէջ:

1. Ծննդեան,
2. Յայտնութեան,
3. Քառասնիցն,
4. Ի Յարութիւն Ղազարու,
5. Յարութեան,
6. Համբարձման,
7. Գալստեան հոգւոյն,
8. Եկեղեցւոյ,
9. Վարդավառի:

Այս վերնագիրները տաղաւարներու անուններ են մոյն ատեն: Ու
յայտնի է, թէ անոնք եկեղեցական երգեցողութեան մաս կազմած են
ատենին: Չեմ գիտեր հիմա կ'երգուի՞ն, թէ ոչ:

Յատկանիշներ.—

1. *Բանաստեղծութիւն*.— Կրօնական մկարագիւրով այս բերքուած-
մերուն խորը գոյութիւն ունի յաւիտեանական *քնարերգութիւն* մը, որ
տեղ-տեղ գիտուն, տեղ-տեղ ժողովրդական թռչլ գնացող մը կը լեցնէ
բոլոր տողերը: Քիչ են տարրեր, որոնք դաւանական կամ բարեպաշտա-
կան յաւակնութիւններ կը մատնեն: Բանաստեղծը ապահովաբար ոչինչ
կ'ուզէ սորվեցնել ասունցմով, միւս կողմէ՛ ասունք ազատ են մարտար ու
խղճամիտ մաշակի մը յարթահարող կմիւն:

2. *Պարզապաշտութիւն*.— Տաղերը գրուած են միշտ օրում
խորհուրդին ի սպաս: Անոնք բացատրող շքլլայումն են, թեյադրող են
ու մութ: Տողը կու գայ, կ'աւելնայ տողին երբեմն իբր հակադրութիւն,
երբեմն իբր լրացուցիչ: Բայց երկու վիճակներուն միջեւ լուսաւորող,
կարգաւորող տարրերը ջնջուած են: Ցատկող եղանակը, որ մոյնն է
ժամանակակից խորհրդապաշտութեան ալ մէջը:

3. *Ճրագչտութիւն*.— Յայտնի է, թէ անոնք երգուելու համար
գրուած են: Այս է պատճառը, որ բառական այնքան միջոցները կը
շահագործուին ոտանաւորը երգող ընելու համար: Այս մտահոգու-

թիւնը մեծաքանակութեամբ կը արձակէն: Բայց ամբողջ ծայրայեղութիւնն է, որ կը հաստատենք ուսանաւորին մէջ:

4. Այլարանութիւն.— Խորհուրդին համար ամբողջ կառուցում մը ու յետոյ անոր լուծումը: Բայց երբեք արձակումակ: Վկայ՝ սայլիկին պարագան:

5. Պատկերներ.— Ամէն կալուածէ: Բայց մասնաւորաբար ժողովրդական կալուածէն, ծաղիկներ ու հովեր, ծովեր ու երկինքներ: Կարաւաններ ու արեւներ: Երբեմն քառախաղ: Երբեմն գիւտ:

6. Տաղաչափութիւն.— Ամէն չափով: Բայց մշտնապահից է սա չափը.

*Ես ձայն գառիւծուն ասեմ՝
Որ գոչէր ի քառաթեւին,
Ի քառաթեւին գոչէր,
Ձայն առնէր ի սանդարամետեան...*


Ասիկա Քուչակի չափն է գրեթէ:

7. Լեզու.— Նարեկացիին հոս ունի երգեր, ուր ժողովրդական տարրեր կը դիտուին: (Այս է պատճառը, որ ամիկա կը կոչուի շատերէ իբր անդրամիկը մեր աշուղներուն): Միւս կողմէ՝ տողերու վրայ աշխատանքի պարտաւորութիւն մը գինէն բոլորովին անտարբեր կ'ընէ բերականութեան: Բայց բառերու ձայնական առընթերադրութիւն մը կը մարէ այդ լեզուին համար շողոր մուգայնութիւն: Բայց փոխաբերութեանց անդիմադրելի բխում մը ծաղիկներով կը քամի այդ տողերը: Բայց ընդհանուր քանաստեղծութեան մը անասելի երապոյրը կը ծորէ անոր բոլոր ծերպերէն ու խարիսխներէն:


*
* *

Նարեկացիին կը վերագրուին մասնաւորաբար անվանելի գործեր:

ՅԱԿՈՒՑ ԾՇԱԿԱՆ



ՕԱՀԱՆՎՈՒՄՏ



ԹՈՒՐՔԸ ԼԱՒ ՃԱՆՉՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
— ԶԱՆԻ՞ ԸՆԹԵՐՅՈՂ ԿԱՐԴԱՅԱԾ Է —
— ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ «ՄԱՅՈՑԳԱՅ»Ը,
— ԹՈՂ ՄԱՏ ԲԱՐՉՐԱՏՆԵՆ

— Այս ալ հարցա՞ւմ է, պիտի ըսեն յո՞ւմնք: Մեր կարգին պիտի պատասխանենք. «Անշո՛ւշտ, որովհետեւ ամէն ընթերցող համբերութիւն չունի կարդալու եռահատոր երկը, իւրաքանչիւր հատոր 500-600 էջ, մեծադիր, մօտաւորապէս 1600 էջ:

Հաւանաբար, 30-40 տարի առաջ եղած են ընթերցասէրներ, որոնք մօտեցած են այս հսկայական, կոթողական գործին ու համբերատարութեամբ ընթերցած են երեք հատորներն ալ: Եղած են ուրիշներ, որոնք կարդացած են հազիւ հատորին կէտը, լաւագոյն պարագային միայն մէկ հատորը, ու մէկ կողմ ձգած են մնացեալը, իւրովի մտմտալով. «Շատ երկար է, ինչո՞ւ այսքան երկարած է Յակոբ Օշական, չէ՞ր կրնար քիչ մը կարճի կտայել»:

Այս մտմտութիւնը իրաւացի ըլլալ կը թուի, բայց եթէ եեղիմակը ողջ ըլլար ու անոր հարցուէր, թէ ինչո՞ւ այսքան մանրամասնած է, կրկնութիւններ եւ կատարած է, ով գիտէ արդարացման, համոզիչ ի՞նչ պատասխան պիտի տար:

«Մնացորդաց»ը երեք հատորի մէջ ամփոփուած է: Առաջին հատորը վերնագրուած է «Արդանդի ճամբով». հոս կը ներկայացուի մօտ հարիւր տարի առաջ ապրուած կեանքն ու կենցաղային, բարոյական ըմբռնումներու վիճակը: Այս առաջին հատորը կարելի է քաժմնել երկու մասի եւ ունենալ երկու հատոր:

Երկրորդ հատորը վերնագրուած է «Արիւնի ճամբով», ուր թուրք ժողովուրդին, մոնկոլ կամ քաթար ծագում ունեցող ցեղին բնորոշ գիծերը ներկայացուած են: Թրքագէտ է Յ. Օշական. այնքան լաւ սերտած է այս ցեղին «յատկութիւնները», այնքան խոր կերպով ներկայացուցած է արիւն ծծող այս ժողովուրդին բնագոյային, հոգեբանական, ներաշխարհային վիճակները, որոնց ընթերցումով կը շշմիս, կը զարմանաս, որովհետեւ Յ. Օշական մտած է անոնց «մտքին մէջ», ամէնօրեայ շփումի ու դրացնութեան մամրով, միեւնոյն «աւանդու-

թիւնները՝ քանջած ըլլալով: Թրճուհին գաղտնիք չունի՝ մեր-
քին կամ արտաքին գաղտնիք, այս հեղինակին համար:

Երկրորդ հատորը «Արիւնի ճամբով» /գարձեալ/ վեր-
նագրուած է: Այս հատորն ալ կարելի է դիրքութեամբ վերածել
երկու-երեք վէպի կամ հատորի: Հայ եւ թուրք կապը մերկայաց-
ած է հոս. հայը՝ ազգաւեր, հայրենամուէր փետային է, անձնու-
րաց եւ ըստանիկ մկարագրի տէր հայորդի, իսկ թուրքը մի՛շտ
թուրք, արիւնախում, արիւնաքաթաւ, իր կրօնական հաւատա-
լիքներով, շուայտ շէյխ-մուլաներով:

Թուրք ցեղը քանջնալու համար հարկ է կարդալ «Մա-
ցորդաց» ի երրորդ հատորը, էջ 300էն սկսեալ, մօտ 150 էջերու
ընդամանակով: Դուք կ'ունենաք պժգամք, սարսափ ու միայն
թուք ու մուր հանդէպ այն թուրք տիպարներուն, որոնք գլխա-
ւորած են հայկական ջարդերը, տասնիմեքորդ դարու վերջե-
րուն եւ քսաներորդ դարու սկիզբներէն /ու մինչեւ այսօր/, իբրեւ
հաղաքական դէմք, իբրեւ փաշաներ, պէյեր եւ զինուորական
անխիղճ, զգուշի ու մարդակեր արարածներ:

*
* *

Այս թուրքիկ ծանօթութեան հոգ ըսեմք, որ «Մացոր-
դաց» ին երեք հատորները առաջին անգամ տպուած են «Յուսա-
բեր» օրաթերթին /Գահիրէ/ մէջ, 1930-1934 թուականներուն:
Հեղինակը այս երկը գրած է յիշեալ թուականներուն, Կիպրոս,
ուրիշ պրակ-պրակ զրկած է Գահիրէ՝ «Յուսաբեր» ին:

Երկրորդ տպագրութիւնը «Մացորդաց» ին յոյս տեսած
է 1988ին, Ամբիլիասի մայրավանքի տպարանին մէջ, նախածնու-
նութեամբ Կիրիկիոյ Աթոռին գահակալ Գարեգին Բ. Կաթողիկո-
սին /այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս/: Երեք հատորներուն
յառաջարկները գրած ու ըստարանը պատրաստ է Պօղոս
Սնապեան, որ աշակերտած է Յ. Օշականին:

Յիշեցնեմք, մատնանշեցիմք կոթողական այս վէպին ծա-
ւալը, որ ինքնին կրնար վերածուիլ 4-5 վէպի՝ դիրքութեամբ:
Այնքան միտք ու պաշար կը յորդին հոն, այնքան իւրայատուկ
դարձուաբեր, լեզուամտածողութեան երաշալի պատկերներ,
գրական գիտեր, քառակերտում: Հոս անցողակի մշեմք, որ
Օշական ըլլալով գրաբարագէտ, ծանօթ է մոյն ատեն գաւառա-
բարբառներու, որոնցմով համեմատ է իր այս գործը՝ մասնաւո-
րաբար: Ընթերցողը պիտի եխանայ մոյն ատեն Յ. Օշականի
ընդհանուր զարգացումին, միջազգային պատմութեան ծանօ-
թութեան, Աստուածաշունչին հետ իր մօտիկ ու սերտ կապին,
գիտութեան: Ընթերցողը յանախ կը հանդիպի աստուածաշնչա-
կան մէջբերումներու, Հին ու Նոր Ուխտի Կտակարաններէն: Մէկ
խօսքով՝ համայնագիտարան մը կարելի է մկատել այս վէպը,

որում վախով մտնեցած եմ ո՛չ միայն ընթերցասերները, այլև՝ գրողները:

Երբ կ'ըսեմք, մկատի ունիմք հեղինակին հետաքրքրութիւններում տարածքը, որ ընդարձակ ըլլալով համոզեւոր է մտնուծողուն: Օշական չի դեգերիւր անապատային անջրդի հողերու վրայ, ոչ ալ կը սաւառնի լուսնային անուրջները հետագոտելու աներեւոյթին թռիչքով. հաստատում է Յ. Օշականի կոխած հողը: Լայրծում, փրփուրային երեւոյթներ չկան: Կը սուզի մարդուն եւ մարդկայինին խորհուրդներում խորերը, կը վերծանէ հոգին, կը գննէ մարմին կոչուած հողեղէն կառոյցը, ու ընթերցողին կը ներկայացնէ մարդ արարածը իր միւս ու ոսկորով ոչ միայն այդքան, այլև իր շունչ ու հոգիով, շնչառական երանգներով, զգացողական սեւեռումներով:

Հեղինակին խորաթափանց մայուածքը մանրագնիմ մասերու կը բաժնէ իր հերոսներում ներաշխարհը, ուր կը փնտռէ թու կը գտնէ թրթռում կամ համր լարեր, մեղմ ու թաւ հնչիւններով հոսում: Ան գորտուր կրկնեցներու ներաշաշնակութիւնը դրոշմած է առաջին լարին վրայ, որ Սննի կը հուագէ: Օշական մարդուն մէջ հաստատած է Սեռ լարին ուժեղ թրթռացումը, ուր իր երգը կը տարածէ սեռային ախորժակներու չափանիշներում վրայ: Ապրած ըլլալով թուրք ժողովուրդի դրացնութեան, ճանչցած է այս ցեղին քուր ցաշակները, մտային թէ զգացական կարողականութիւնները: Յ. Օշական եկած է այն եզրակացութեան, թէ թուրքը, այդ ըլլայ թէ կին, պաշտած է մարմինը ոչ մարդկային մաքուր ու աստուածային բնութեան շնորհներով, այլ՝ անասնական բնագոյով: Հոգեկան-զգացական ներգործութիւնները մպատակին հասնող գործոններ չեն: Թուրք այրը իր դիմաց ելած կնոջ մէջ կը տեսնէ մախ մերկացած Սւան: Նթէ մայրիակ միւս, ոտքին ծայրը ծածկուած ըլլայ կինը, թուրքը գայն կը դիտէ մերկացնելու վաւառ ու լորձաշարքն տրամադրութեամբ, միւս, որ բզկտուած բանի մը վերածէ գայն:

Թուրք կինը ստրուկ մըն է, հարմ մը՝ պալատներու ներքինիներու մայուածներում ներքեւ: Գեղեցիկ է ան, ունի կաթնային մաշկ ու մարմին, ծածկուած է քողերու եւ շղարշներու փափկութեամբ, բայց ճանչցած ըլլալով մանուկ տարիքէն սեռային յարաբերութեան համար ստեղծուած ու նակատագրուած ըլլալը, հիւս հանգամայն կ'նմբարկուի շուայտ, մայրիակ ծերացած արուներու քմայքին: Թուրք կինը կամակատար մըն է պարզապէս, որում «արգանդին ճամբաներէն» կ'անցնիմ զգուշի, անասնի թումաւոր մաղձ ու կիրքեր, վերածուելու համար պահածոյ միսի, որմէ նեխամբ ու գարշահոտ կը ծարի յաճախ...

Միսի ու արիւնի հոտառութիւն ունի թուրք տիպարը, ու ասիկա գաւառէն, խուլ շէնքէն միւս, պալատին, ապարանքային մթնոլորտին մէջ յղիացած իշխանաւորին, սուրբամիմ, շէշիմ կամ անոնց ստորադասներում համար:

Յակար Օշական «Արգանդի ճամբով» հետագոտած է

Պոլսոյ, Պրուսայի եւ շրջակայքի գանազան խաւերու եւ դասակարգերու կեանքը, ուր կը բնութագրուին մամնապէս հայկական այնպիսի տրամադրութիւններ, որոնք ընդօրինակուած են ինքնէլային մթնոլորտներու մէջ: Հայ ու թուրք միախառնուած կեանքին կ'ակնարկենք: Եթէ մատնութեան, դաւադրութեան, դաւաճանութեան, օրինագանցութեան վիճակ մը ստեղծուած է հայ ընտանիքի մը կամ անոր շրջապատին մէջ, պէտք է հասկնալ, թէ թուրքը իր անմիջական ազդեցութիւնը գործած է հոն: Այս տիպարին ցայտուն մէկ նմոյշն է Նալպանտեան ընտանիքը. հարուստ, տիրական, կալուածատէր, յարգուած: Արտաքին յարգանք պարտադրող, ներքինապէս փնացած, անբարոյութեան ախտով վարակուած: Այս ընտանիքին մէջ կայ Հանի Աննա կինը, անոր միակ գաւակը՝ Սերոբը, որ անկարող այր մըն է, եւ իր այդ վիճակը զինք կ'առաջնորդէ թրջութեան բոլոր մանրամասնութիւններով զարգանալու ախորժակին:

«Արգանդի ճամբաներուն» տիրամալու տեմդը հոս կը գործէ իր աւերը:

Յ. Օշական այնքան խորացած է այս հայ ընտանիքին կեանքին ծախքերուն մէջ, որ շերտ առ շերտ լոյսին կը բերէ գայն, պարզեցնելով դժմեքը անկարող Սերոբին, անոր հարսին՝ Քարմատի Ազուտրին հոգեկան մորմոքները, բացասական եւ դրական, համակրելի եւ հակակրելի վիճակներով: Ազուտրին ինքն կայ 19ամեայ Սողոմեանց Սողոմը, Նալպանտեանց մեծատան ծառայողան, որուն պարտադրուած, հրամցուած սիրային եւ սեռային հրաւերները բոլորովին նոր աշխարհ մը կը բանան սրտին մէջ: Հանի Աննա մըն է դերակատարը Սողոմը սեռային ու սիրային դրախտ հրաւիրող: Յետոյ, նոյն այդ պառաւիճ հրահանգով կը քանդուի թագաւորութիւնը Նալպանտեանց տան:

Կարգալ այս ամէնուն մասին Յ. Օշականի վէպին մէջ, չի մշակակեր իմանալ հեփիաթ մը կեանքի էջերէն: Ընթերցողը ներս կը մտնէ այնպիսի աշխարհէ մը, գոր չեն կրնար ցոյց տալ մեզի նորագոյն գիւտերը պատկերասփիւռներու: Գիտութեան ընձեռած պատկերները աչքերը կը շոյեն միայն, կամ՝ գրեթէ: Գրականութեամբ փոխանցուած հոգեմտաւոր պեղումներուն հայթայթած պատկերները տարրեր գեղեցկութիւն եւ բնականութիւն ունին, արեւով շաղուած, շուրջով գովացած, ջերմութեան ու գովութեան ալիքներուն վրայ տարուբեր այնկոծումներով:

*
* *

Մեր հարցադրումը կրկնենք դարձեալ.

—Գանի՞ հոգի կարգացած է Օշականի «Մնացորդաց»ը, լաւ ճանչնալու համար թուրքին միտքն ու հոգին:

Իսկ ինչ կը վերաբերի վէպը ըմբռնած ընթերցողին, ան պիտի մտածէ ու ըսէ.

—Այս գրողը չէ՛ քնացած, այլ միայն գրած է: Իր ըմպելիմ
 եղած է մեկունը, իր մախախրած մաշը՝ գրելու արարքը:

Բայց, եթե ընթերցողը տեղ-տեղ դէմքը թթուեցնէ, ճանճ-
 րոյթ գգայ, իրաւացի է: Ան կրնայ նոյնիսկ այսպիսի մտածում
 մը ունենալ. «Սեֆանչիլի է, հանճարեղ գրող է Յակօր Օշական, կը
 զարմացնէ իր աշխատասիրութեամբ եւ համբերութեամբ, բայց
 երկարած է, մանրամասնութիւններու մէջ խրած»:

Ընթերցողը ուրիշ մտածում մը պիտի արտայայտէ իւրո-
 վի. «Նրամի՛ թէ մէկը, արուեստագէտ մը մախածունքը այս
 գործը վերածելու թատրոնի, կամ՝ շարժանկարի, համբերու-
 թեամբ մէկ կողմ դնելով կրկնուած միտքերն ու տեսարանները,
 երկարապատումները /որոնք անկասկած գրական գորութիւն
 ունին/, եւ միայն պահելով պատմութեան, դէպքերուն միջուկը,
 հիմնական տիպարներուն գործունէութիւնը, հոգեվիճակները:
 Հոն տեսնէինք պատաւած Հանի Ամնան, Նալպանտեմց անկարող
 լարդին՝ Սերօրը, Սողոմեմց Սողոմը, Թամնայ գիւղացի, առոյգ
 երիտասարդը, Թամնայ հարսնացած Աղուտը, փաշաներու
 Արքիմիաները, հայածնունդ Նդմիկները, անմամ ֆետայի Մա-
 թիկ Մեղիֆեանեանցը, եւ միւս մանրանկարները, տեղական
 գոյնի երգիծանկարային կերպարները:

Բայց ո՞ր մէկ ընթերցողը քաջութիւնը պիտի ունենայ
 մօտենալու այս անպարփակ գիրքերուն, երբ պատկերասփիւռը,
 ՎԻՏՃԵՆ, ՏԻՇԵՐը, իրենց յանախ անօգուտ երապոյրներով գե-
 րած են սիրտերը մեծին ու փոքրին, կնոջ ու այրին, երիտասար-
 դին ու պարմանին:

*
 * *

Ափսոս՛ա մեր յառաջադէմ տգիտութեան, եւ հազար պա-
 տիւ տնդիդ, լոյսիդ, հաւատիդ, անկրկնելի վարպետ:

Ապրիլ, 1998

ՇԱՀԱՆԴՈՒՆՏ

Յ. ՕՇԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԵՐԿԻՐ:
ԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆ



Այն սխրալի, անբացատրելի, օտարներում համար դժուար ըմբռնելի, բայց մեզի համար այնքան քնազդական հրապոյրը, mythեր, դիւթերը համապատկերին, որ մեր երկիրն էր դարուց ի դարս, մեզ հարուածող աղէտներուն հակառակ, թերեւս անոնց գնովը հաւատարիմ մեզի: Նոյնիսկ իր կործանումէն վերջն ալ, իր անբրակներում այլապէս գրաւիչ, ուժեղ տեքորին մէջ *համարելով*, ինքզինքը ըլլալով, պահպանելով: Մեր երկիրը, այնպէս հարսնացած քիւր-քիւր ծաղիկներու պատմութեամբ: Գարգամակում բազմաեզար գարեթներովը իր ժամերուն: Այնպէս ոսկեդրուագ, ու մաշխում, ու մայրացած կամանչ ու դեղին ծածկոյթներովը ցամքին: Գարնան դուռներուն ու ամրան արեւին, բլուրն ի վեր ու դաշտն ի վար: Ու սուտակազարդ ողկոյզներովը մեր այգիներուն, որոնք կողէ կող հողը կը հանգրիմեն, կը պաստառեն մեր անտառներուն: Մեր երկիրը, իր ջուրերուն անմահական ապրշումովը ու լիներուն ազամանդ աշուրներովը: Այսպէս կը տեսնենք քեզ հիմա ինչ որդիներդ, որոնք ցրուած Սփիւռքին տրտում գերակայաններուն մէջ, օտարին հողը կը չափեն իրենց արիւնտ մատներովը կամ օտարին աւաչներով իրենց ժամերը կը սպաննեն, օր մը առաջ լեցնելու փայթով գրուանը իրենց բշուռո, անկանգնելի կեանքներուն:

* * *

ՀԱՅՈՑ ԵՐԿԻՐ:ԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆ

Որ,

—Փոքր, բայց տարօրէն արտայայտիչ երկինք է դարձեալ, մեր ձեռագիրներու լուսանցքներուն բանտուած, հսկայ «մեղաւորներու տանթեական տեսլաւորութեամբը, ձեռքովը մար-

դոց, որ իրենց բառերով «լցեալ մեղօք», «զանցաւորիմ հատեալ գշափ», «յամանցն ի գամն յեռեայ գալճումս», կերպը գտան մագաղաթի մատնոց մը յատակին, իրենց եւ իրենցմով՝ մեր ժողովուրդին հայեցողական դրութիւնները սեւեռելու երկու աշխարհներում ալ պարունակներէն երկինքին կապոյտին մէջ փոխադրելով վիզը ծուռ մեր տկար մարմնեղութիւնը, ու երկնայինէն անհուն սլացք մը կապելով, զամեղով մեր բազուկներում տարածումին կամ մայուածքին հեւքին, շունչին հոգեւորումին: Կապոյտի, սկիւրի, արիւնի փոփոխակ, բայց մայր երանգներով, որոնք այդ մանրակար երկինքները, մտորքները, գողգոթաները, յարդարանքները, լեռներն ու աստնոց ճովն ի վեր մարդերն ու սուրբերը, Հայրն ու Որդին, Աղաւթինն ու հրեղէնները կը զգեստաւորեն շատ արժանաւոր (digne), ժուժկալ, բայց տարօրէն իմաստուն գծագրումի մը ընդմէջէն, եւ որոնք մեր կրօնքին զգացական մեծ համգոյցները կը ջանան կերպադրել, ապահովարար մեծ բան մը կը պարտին մեր ճրճումինն ու որդանին: Բայց միւթէն անդին: Վասնզի չի բաւեր մերկը: Ո՞վ կրնայ ճիշդ ու արդար ստուգութեամբ մտապատկերել իր հոգեկան տագնապին մէջ այդ խնկամարմին վանականը, որ «պեռօք եւ ճգնութեամբ» մեղրամում դարձած իր մատնեղ սարսուռի կը հանէր աւետարանի մը լուսանցքին ու դանակ կը զնէր գագաններու ձեռքը ամեղին, «Մարգարէիմ» վիզին յոնարհող, ու գիտէ, թէ գուցէ մէկ, տասը, հարիւր օր վերջը իր սեւեռած այդ երազը պիտի վնարէ սեփական վիզովը, այլապէս իր մկարածիմ մման երկարած դէպի սուրը անօրէնին: Իր գոյներում յուռութիւնն ու իր գիծերում շուկանին մէջ իմք-գինքը մտոցող այդ վանականը ու անոր կերպադրած աշխարհը (վերինն ու ստորինը հաւասարապէս) մերն էր սակայն: Գիտնալ, թէ գագանը, թշնամին գուցէ կը մորթէ բլուրի ոտինն ու պիտի մորթէ բլուրի գագաթինն ու պիտի գտնէ իր ճգնարանը, բայց չկտրելի եղէզը ու շարունակելի երազը: Ասիկա է համեստ մեր հերոսութիւնը: Այսպէս է կազմուել մեր պատմութիւնը: Այսպէս են շինուել մեր ֆառակները, ու բարձրացել անոնց պարիսպները, մէկ ձեռքով սուր, միւսով՝ փայ գործածելով: ...Ու այսպէս են գրուել մեր գիրքերը: Մեր մշակույթը մրրկի, արիւնի անեղ-մարին անգթութեանց ու աննուան երազի, հոգեւոյզ սլացքի իրերայաջորդ ալիքներ, մակընթացութիւն եւ տեղատուութիւններ է ունեցել իրր պայման, պաշտպան ու ազդակ: ...Ջարհուրանքը կը սուրար հաստ, ծանր, տարերային դժբախտ այդ երկրին ամէն ծագերէն: Ու անոր թեւերը չէին չորմար իրենց մասպաղիքէն մէկ սերունդէն մինչեւ միւսին ճյուղումը: Տղան կը ծնէր արիւնի մէջ, կը մեծնար անոր հեղեղներու — գրականութիւն չէ բաւը հոս — ափին, մտնելու համար ուրիշ յորէքի մը մէջ, գլխուն վերեւ միշտ ունենալով կապարէ շուքը մայր գարեւորանքին: Կը մեռնէր: Մարդիկ կը մեռնին, երբ կեանքը ուրիշ բան

չէր արդէն: Ու կ'ըլլար այդ տղեկը մարդ հասուն, միշտ իր սակորններուն քաւիղէն թրթռալով անլսելի քզիւնովը աղէտին, ինչպէս կը տրուի երբեմն զգալով ռվկիանեան անդոնը հագար-դարեան ամպրոպներուն ձայնը արհեստ խեցիի մը բեկորէն, երբ գայն տամիմք մեր ակամջին: Ու հողք կ'իջնէր, գուցէ հոն ալ շարունակելով տառապանքը վիշապին մոնչիւնէն: Ու երկու օտարներուն — մեր ժողովուրդին համար գերեզմանը ճշմարիտ օրան մըն է — մէջտեղ, այնքան դժպիտի այդ պայմաններուն ներքեւ այդ տղան, երիտասարդը, «այր չափու հասնալ»ը միջոցը կը գտնէր նուազեղի Քիչ մը բան տեւողութեանէն, այդ Քիչը ձգելով հրաշքի խմոր մը կրակ իրմէն սերած ուրիշ տղու, երիտասարդի ու չափահասի: Նիւթին վրայ մեր գրչագիրներուն սա յաղթանակը — իմեմատիւ ու ոչ նուազ պատուարեր արուեստ մը գայն կը նկատեն այսօր շատեր — արդիւնքը չէ միայն թերեւս գոյներու եւ գիծերու տրամաբանութեան մը, ուսումի մը, այլ շնորհք ուժին, որ այդ գործերուն հալումը, հարումը (բառը գործածելով ժողովրդական իմաստով) այդ գիծերուն ճարտարապետութիւնը կը թելադրէր անոնց, իրենցմէ միայն գաղտնախորհուրդ կշռոյթով մը ստրկուած օրէնքներու: Ազատ է՛ անոնց ոնին մէջ փնտռել, գտնել փոխ-ազդեցութիւններ: Բայց ազատ չէ՛ ռզիները բանտել այդ ազդեցութեանց կաղապարներուն խորը: Ամէն արուեստի գործ փաստ մըն է նախ իմքը իրեն համար: Ու արուեստի գործը միջոց միայն չէ: Ու ինչպէս Աստուծոյ ընդարձակ պարտեզներուն մէջ վարդերը իրարու կը մտնին մէկ-երկու մայր գիծերով, բայց կ'արժեն իրենց իրարմէ տարբերութեամբը, արուեստի գործերն ալ ամէնէն աւելի այդ տարբերութիւնները կը կերպադրեն մարդոց մեծ մտանութիւններէն քաղուած: Ու ամէն արուեստի աշխատանք անգիտակից մղում մըն է, իրագործում մը, համադրութիւն մը, որով ոնի, թռիչքի, ոգիի կը բարձրանան (կը վերածուին) հողին ամէնէն խուսափուկ ծփամբները, գիծերու խաչածեւումները, գոյներու սնդուսը: Կտաւի մը, թուղթի մը վրայ մի տեսնէ՛ք միւր միայն: Ամէն ներկ, հողին պատեանէն արուեստագէտի մատովը արձակուելու ատեն, անոր արիւնէն քաղուած մաս մը բան է կարծես, մարդերուն խոզովակովը անոր հոգիէն թորուած, ու լաւ կ'ընէ՛ շնորհաբար հողերուն հոգին:

*
* *

Հայոց հայրենիք:
Որ
Իր գաւկըներուն բագուկներէն խոյս տալէ կամ իր ստուերը գիրքներուն, տաղերուն պատանքին լիելէ ու հոգեվարքի մամուռ իր պատգամները թշուառ իր պանդուխտներուն ճամբայ հանե-

լէն վերջն ալ իրականութիւն էր, մինչև մօտ շրջան, մեր ստեղծում տակ:

Ամբողջութիւն՝ «գերիշխող», թելադրելով ասանց դասը հաստատում, որում արմատները կը պահէր սֆազում՝ իր ընդերքներում:

Յամառութիւն՝ երբ քաղաքներում պարիսպները փշուրփշուր աղալէ վերջը կը դիզէր ամբարտակները իր լեռներում, բարձրակեանակ ու ամասան, մշտագուարն ու կաման, անոնց խորհուրդին վարչամակը ուրուագրելով, անդրանկարելով խորը մեր հոգիներում իրր ուրիշ, աննահանջ յատակ, մեզի տրվեցնելով անոնց ոմը, ըլլալու, տեւելու բարբարոս կամբը: Գանի՛ անգամ, սպասապուս կոտորածին դէմ այդ լեռները իրեն ծոցը բացիմ մեր պարտութիւններում կշիռը շրջելով մեզի ի նպաստ:

Ու փափկութիւն, ընտանութիւն, քաղցրութիւն՝ երբ իր հովիտներում պատսպարեալ, գեղակտուր խորշերը ու դաշտներում խաղաղ, լայն, ընկալուչ մայրութիւնը կը փոէր իր գաւակներում շախշախուած բազուկներում առջև, անոնց ներշնչելով իր խոր պատգամները, խաղաղ, լայն գեղակերտող աշխատանքին, նոյնիսկ անդունդի շուրթին. ու կը ճարէր, դարերու խաւարումին տակ ինքնակորոյս անոնց հոգիին ժուժկալ ազդմունքներու դրութիւն մը, մեղմելով՝ մեր ժանիքներու արիւնով միայն փոխադրուած կրակը զգաստ, շրջախայեաց, վարսող ուրիշ բնագոյներու, գորս արծեգրկել, անարգական վերադիրներով, հերոսութիւն է այսօր:

Ժողովուրդի մը պարտքը իր հողին, որ ծնունդ է տուած գրական ու իմաստասիրական խստադատ դրութեանց, ճուանելի չէր գրական տարազներով: Հինգհարիւր տարի է մեր հողերը շահագործուեցան բարբարոսներու մարակին ու խթանին տակ, որպէսզի յագուրդ տան տափաստանեան այտրժակներու: Երեւաշխարհամասերու կողպուտովն իսկ չկշտացող այդ ժողովուրդը բամ մը հասկցա՞ծ է ամայացուցած իր երկրին պատգամներէն: Կը հարցնենք ու կը լռենք:

*
* *

Բայց լերկացած այդ աշխարհը գարմանագեղ տնկարանն էր հանդիսացեր մեր ուղեղին: Ան ստեղծեց քանի մը անմոռանալի դաշնակութիւններ՝ քարի, վանկի, ձայնի ու գոյնի համբերէն: Այս տողերը հաս աժանցած ու ճիղճ փարասիրութիւնը չեն պատմեր մեզ կամիտող սերունդին: Ու փորձ չեն կազմեր ուրացումի մեր իսկ տեսարանները «եզծելու», բառը գործածելով եզնիկեան առումով: Անոնք տեսակ մը պատասխան են այն աժան

ու ճիշդ մեծամտութեամբ, որ մեր պարտութեամբ վրայ ղնարեք-գական թեմաներ կը թարե, աշխարհի մեծագոյն մշակոյթը տուած ըլլալու, առանց անդրադառնալու, թէ արիւնէն, ամէնէն զարեւրեղի մախնիրէն, կրակէն դուրս գրեթէ ոչինչ կապուած պիտի մնայ իրենց անունին: Մենք գոնէ անբրակներ ձգեցինք: Յետոյ .

Այդ երկիրը մեզի սորվեցուց կրկնապատկել մեր կեանքը, մեռելներուն նպաստովը:

Մեր հոգիներուն համար մուտքի դուռ կազմեց դէպի անվախճան կենդանութիւնը, որ ուղղափառ բառ մը չէ դարձնել սատորներուն վրայ, քանի որ կը մայի շատ անլի անդին, քան ինչ որ սովորութիւն է չափել տարագին կարկիւնովը: Միւս կողմէն՝ Երկնի Արքայութիւնը մեր մամբուր բերնին անուշիկ այգիի մը, պարտէզի մը համը ունէր, տարօրէն զօրաւոր իրականութեամբ մը, պակասոր՝ տղոց ու թոռներուն ռդկայաններովը: Եւ որ գլխաւորն է՝ առանց թշնամիի ահին: Այս հոգեբանութիւնը ամէնէն արտառուչ վեհութեամբ մը գիրի է ընկած մեր գրագետներէն մէկուն կողմէ: *Պապիկ եւ թոռնիկ* հատորին մէջ Խրիմեան գայն Երկնի Արքայութեամ կը վերածէ արտի, այսինքն՝ հայու հոգիին գերագոյն յատակին:

Մտոցած ենք, այսօր, այդ ամէնը: Ու մտոցած մեզի շատ անլի մօտիկ ուրիշ ալ բաներ:

Հակառակ անբաւ սուգին, արցունքին ու մախնիրին, մեր երկիրը ողջունեց նորագոյն ժամանակներ ու խանդավառեց իր խորհուրդին անաւարտ հուրքովը արդիական մեր մտածողութեան բոլոր աշխատանքները, որոնք չպակսեցան մեզի ու հանդերձեցին մեր առագաստը հզօր յղացքներու: Զարթօնքի սերունդին հաւատաւոր մարդերը պահ մը սփռեցին անոր խոցուած սիրտը: Վաթսուռ-եօթանասուն տարի առաջ մեր երկիրը հաղորդութեամ մը մամն բաշխուած էր մեր ամէնուն, դրդեղով մեր սգահար հոգին, ըլլալով ոգեղէն ուժի կրակ, բոցեղիմկով ճուրմերը մեր արուեստին, ինչպէս ամուսան, սպառած սիրտը մեր գեղջուկներուն:

Ո՛ւր՝ ձայնը, որ կարենար մեզ կանչել նոր «ազատութեամ քրդի» մը:

ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆ

Թ. ԹՈՐԱՆՆԱՆ

**ՕՇԱԿԱՆԻ
ԵՐԿՐՈՐԴ ԿԵԱՆՔԻ
ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆ**

Սովորութիւն է ըսել.— Ի՞նչ շատ անցան այդ յիսուն տարիները:

Բայց ինչե՛ր կատարուեցան այդ հինգ տասնամեակի ընթացքին:

Այսօրուան պէս կը յիշեմ 1948ի փետրուարեան այն օրը, երբ ես, քսանամեայ երիտասարդ, կը քալէի Հալէպի Պուլվար տը Ֆրանս պողոտայի Թապալս Նաֆախ սրճարանի մայթին վրայ: Հանդիպակաց մայթին վրայ մշմարեցի երկու զանգուածեղ մարդոց, որոնք մերք քալելով եւ մերք կանգ առնելով կը գրուցէին: Երբ ատելի ուշադրութեամբ դիտեցի զուցակիցները, անոնք ատելի մեծցան աչքերուս, ահագնացան: Նկարներով ճանչցած էի զիրենք: Հիմա, աչքերուս դէմն էին:

Վազքով կտրեցի պողոտան, անցայ իրենց կողմը եւ ուզեցի բարեւել զիրենք: Յակոբ Օշականն էր ու Շաւարշ Միսաբեանը:

Նոր վերադարձած էի Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութենէն, ուր ժամանակին պաշտօնավարած էր Յակոբ Օշական եւ ուր զրական մթնոլորտին մէջ կը շարունակէր մնալ *իմ* մը Օշականն, որուն զրական խանդավառութիւն անունը կու տան: Հոն, մեր այդ դպրոցին մէջ, ուշի ուշով կարդացած էի Օշականի մէկ յօդուածաշարքը խորագրեալ այսպէս.— «Մտքուած բաներ— մեր վանքերը», երատարակուած Բ. Նուրիկեանի «Նոր գիր» պարբերագիրքին յաջորդական թիւերուն մէջ:

Օ՛, որքան հարուստ էինք մենք մշակոյթով եւ որպիսի՛ գուրգուրանքով այդ հարստութիւնը մեզի կը փոխանցէր Օշական զրազէտը:

Հիմա հաւասարած էի երկու մեծերուն: Անոնք կանգնած



Մանուան անկողնի մէջ

էին ուղիղ զինկուրաֆ Հրատին գործատեղիին առջեւ եւ ձեռքի լայն շարժումներով կը խօսէին մեր գաղութին մասին: Այնքան լարուած էի, որ չկրցայ կեղծմանաւ ու հասկնալ մանրամասնութիւնները իրենց խօսածներուն: Կ'ուզէի բարեւել, բայց չէք զիտեր ինչ առհաւական ուժ մը կը կղպէր բերանս: Ի վերջոյ, ըսպէներու տատանումէ մը ետք բարեւեցի:

Անոնք պահ մը դադարեցուցին իրենց զրոյցը ու սիրալիր ընդունելէ ետք բարեւս, ըսին.

—Երիտասարդ, ըսելի՞ք մը ունիս արդեօք, մի քաշուիր, ըստ:

Ես, թէ՛

—Ուզեցի բարեւել ձեզ, այդքան,—ու կարմրած, արագօրէն հեռացայ...

Բարեւած էի: Բարեւս ընդունուած էր: Լսած ալ էի իրենց ձայնը: Այդ բառական էր ինծի համար:


Բայց չէի զիտեր, թէ այդ իմ առաջին ու վերջին «տեսակցութիւն»ն էր երկու հսկաներուն հետ:

Արդարեւ, տառացիօրէն մէկ քանի օր ետք, ճշգրիտ՝ 1948ի Փետրուարի 17-18ի լուսնայիբ գիշերը, ժամը 10:30ին, Հալէպի մէջ, իրեն համագիտացի Գրիգոր Երեցեանի բնակարանէն ներս, պիտի դադրէր բարախելէ սիրտը Ս. Մեսրոպի նուիրեալ աշակերտներէն՝ Յակոբ Օշականին:

Յակոբ Օշական երկու տարի առաջ եկած էր Հալէպ, որպէսզի ներկայ գտնուէր իր 40ամեայ Յորելեանին:

Այդ յորելեանը եղած էր շոնդալից:

Բայց ինչո՞ւ եկած էր այս անգամ: Իր առաջին այցելութեան շրջանին ես Կիպրոս կը գտնուէի, միայն մամուլէն տեղեկացայ, թէ որքա՞ն խանդավառ ընդունելութիւն մը վերապահած էին մեծ գրագէտին: Իսկ այս անգամ, ահա հոս էի,



Յուրաքանչեւ Երևանի քաղաքում

բարեւած էի պե՛տեր գրագետը, որ անակնկալօրէն կը շիջէր՝
հաշմելով իմ եւ շատերու բերկրանքը:

Ինչո՞ւ եկած էր: Կ'ըսէին, թէ եկած էր տեսնելու Եփրատը:
Բայց չկրցաւ տեսնել Եփրատը, Բիրակնի աղբիւրներէն սու-
րիական անապատի շրթներուն մատուցուող Եփրատը:

Յակոբ Օշականի փոխարէն Եփրատը տեսաւ Շուարշ
Մխարբեանը՝ իր մեծ գրչեղբոր թաղումէն մէկ շաբաթ ետք: Ու
Շուարշ Մխարբեանը գրեց այդ մասին 27 Փետրուարին:

Իր յաւիտենական հանգիստին անցնելէ առաջ, վերջին
պահուն, Օշականի վերջին խօսքերը կը հնչեն իր ծնած ու
սնած գիւղին բարբառովը.

—Աղջի, կատակ չէ՛... կը մեռնի՛ մ...

Բայց մենք գիտէինք ու ինքն ալ գիտէր, որ այս մէկը ոչ թէ
մահն էր իր, այլ երկրորդ ծնունդի մը առաջին բռպէն:

Յակոբ Օշականի թաղումը կատարուեցաւ Փետրուարի
քսանին: Այդ մահը ալիկոծեց ամբողջ թաղաքը: Աւելի քան
քսան հազար հայեր մինչեւ հայոց Ազգային գերեզմանատունը
հետեւեցան անոր դագաղին: Մինչ բազմութիւնը կ'ալիքուէր,
փողոցներու արաք խանութպանները յարգանքով ոտքի կանգ-
նելով հարց կու տային թափօրին հետեւողներուն.

—Ո՞վ է այս հանգուցեալը, արդեօք հայոց թագաւորն է:

Թէ ինչպէս յաջողեցայ տաշեղի չվերածուիլ այդ բազմու-
թեան մէջ եւ եղայ ունկնդիրը արարողութիւններու, դամբանա-
կաններու, չեմ կրնար բացատրել: Կ'երեւի գրականութեան
նկատմամբ ինձմէ ներս ետեւփող ուժն էր, որ գտաւ այդ
ճամբան:

Կը յիշեմ ելույթները Ջարեհ Սրբազանին (հետագային
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), Խորէն Սրբազանին՝ փո-

խարհնարար Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսի, ու Շահան Պէրալեանի, որոնք խօսեցան Եկեղեցիին մէջ: Իսկ գերեզմանատան մէջ, որ փոքր թուեցաւ ալեկոծեալ քաղմութեան, խօսք առին Շաւարշ Միսաքեանն ու Անդրանիկ Ծառուկեանը:

Այլ չեն հանդիպած նման թաղումի Սփիւռքի մէջ:
Դամբանական դրուատալից բոլոր խօսքերուն մէջէն ուղեղիս պաստառին վրայ անջնջելիօրէն արձանագրուած կը մնայ Շաւարշ Միսաքեանին սա խօսքը.

—Ճառագայթը չի՛ թաղուիր:
Ու այդ օրէն ասոյն անցած են ահա յիսուն տարիներ:
Ինչե՛ր չեն պատահած այդ յիսուն տարիներու ընթացքին:
Եթէ նահանջեր ենք ակամայ, ունեցած ենք նաեւ ոստումներ:
Իսկ եթէ ուզենք նախադասութեան մը զօրութեան ապա-
փնիլ ու խտացեալ ներկայացնել այդ յիսնամեակը, կրնանք
ըսել, տիրացած ենք մեր երկրին մէկ տասներորդին անկախու-
թեան եւ յաղթանակած Ղարաբաղի մէջ:

Ապրէր ու տեսնէր ալեհեր գրագէտը այսօրը:
Ու ահա, երբ որոշեցի յուշի այս ծուէնը յանձնել մեր
մամուլին, մեծ գրագէտին մահուան 50ամեակին առիթով, օրե-
րով ու շաբաթներով եղայ անկարող ձեռք առնել գրիչս, մինչեւ
որ այցի զացի իրեն, գոյգ մը մոծ վառեցի իր շիրիմին վրայ եւ
արտօնութիւն խնդրեցի յաւերժի ճամբորդէն, որ գրեն այս մէկ
քանի էջերը:

Արտօնեց:
Ահա թէ ինչու կը գրեն, վերստին կարդալէ ետք Օշականի
«Խոնարհները»:

Վարպետ, քաջալերուած արտօնութենէդ, վերստին եղայ
քու խոնարհներուդ հետ:

Խոնարհներո՞ւդ, ո՛չ, հայոց աշխարհին հետ: Ե՛ւրիշ է, որ
Մեծօգոյ Հայաստան չէր, բայց այդ գիտին եւ շրջակայ բոլոր
գիւղերուն մէջ ապրող հայութիւնը կը շարունակէր ապրիլ
հայրենի բարքերով, սովորութիւններով, հաւատալիքներով:
Որքա՞ն ուժեղ էին դարերէ եկող այդ բարքերը, որ հեռուներու
մէջ անգամ մեր զանգուածները կը պահէին իրենց անժաման-
ցելի զօրութեանը մէջ:

Մոռնա՞լ, որ Երկիրը հեռու չէր:
Ահա թէ ինչու *«Խոնարհները»* շարքիդ առաջին պատմը-
ւածքը՝ *«Առաջին արցունքը»*, ոչ թէ արցունք կը բերէ մեր
աչքերէն, այլ մեր տեսողութեան առջեւ կը փոռ հայ գիւղը իր
պարզութեամբ ու ձեր պատկերալից լեզուով. *«Ծովը չէր պա-
գած անոր երեսը եւ հողին հետ չէին հաշտուած անոր
նտքերը»*:

Խօսքը պատմուածքի հերոսին՝ Արթինիկի մասին է, որ իր մօրը խելօք տղան է, համեստ, շխօսկան, ժամ գացող, Նարեկ եւ Ս. Գիրք կարդացող ապագայ վարժապետը, իր մօր՝ Վանվար հանըմին հայարտութիւնը, որ գոհն է իր մայրասիրութեան — Արթինիկ չկրցաւ ամուսնանալ:

Հայ գիտը, աչքերը փակ, լրիւ կը տեսնէ Օշական:

Յաջորդ պատմուածքը «Պատախն անէծքը»ն է:

Ութսուննոց Տուրիկ ապլան, տուն մնայ աղջիկ, «քաղցր տխրութեամբ մը կը մայի իր անցեալին», իսկ յետոյ «ամուրիներու գաղտնիքները խորունկ կ'ըլլան ու անոնց արցունքը խոշոր...»:

Երկու ծերացած հովիւներու հանդիպում, աղքատի-հարուստի յաւիտենական պատմութիւն: Աղան է խօսք տուողը. «Տուն կ'անենք քիզի, կնիկ մըն ալ կը ճարենք քիզի համար, մարդ կ'ըլլա...», քայց օր մըն ալ ճամբու կը դնեն Մարկոսը. ի՞նչ պիտի ընէ ծերունին, տարիները սահած էին եւ... «մահը ներս էր մտեր...», մինչ այդ Մարկոս դրացիին կու տայ իր կովը՝ տան *տիրէկը*, որ ծախէ: Ջինք բժիշկի պիտի տանէին:

Մեծօգի մէջ գրուած են այս պատմուածքները, յաջորդաբար 1902ին եւ 1908ին: Ուրեմն շուրջ մէկ դարու կեանք ունին, քայց կը կարդացուին հետաքրքրութեամբ:

Հապա 1910ին գրուած «Գոլօ»ն: Երջանի բնութիւնը իրաւ այն դրախտն է, որ ոսկի աշնան գոյներով կը ներկայանայ մեզի Օշականի գրիչովը:

Յուսահատի պատմութիւն մըն է այս մէկը: Երջանին մէջ զարգացած է շերամաբուծութիւնը: Որդերը կը սնանին տերեւներով: Երբամի որդերը քրջուած տերեւ չեն ուտեր. այդ տարին տեղատարափ անձրեւներ քաջութեան մէջ կը խեղդեն տերեւները ու Գոլոն նայելով երկինքին կ'ըսէ. — «Հէյ կապուտատը, բռններս դա՛ւն պը նայիս»:

Միրտն դանօրէն ժայթքած խօսք, որմէ ետք Գոլօ ինքզինք կը գլորէ ձորն ի վար՝ իր բռնը գրկած...

Աստուած իմ, ինչո՞ւ մեր կեանքը լի է ողբերգութիւններով ու մեր գրականութիւնը նոյնպէս ողբերգութիւններու շարան մըն է կարծէք, անսկիզբ ու անվախճան...

«Մատնուազէ Եւա» պատմուածքը ձեր, վարպետ, նուիրած էք Գրիգոր Զօհրապին, «Տեգսանք»՝ Ռուբէն Զարդարեանին, ու «Պաղտօ»ն՝ Արտաշէս Յարութիւնեանին:

Այս մէկը արդեօք քելադրանք մը չէ՞, թէ որոնց վրայ պէտք է կեդրոնացնենք ընթերցողի մեր ուշադրութիւնը:

Կարդալով ձեր այս պատմուածքները անոնց նիւթերու բովանդակութեան եւ մշակումի ձեւերուն մէջ կը գտնենք ճաշակները անոնց, որոնց նուիրած էք համապատասխան պատմութիւնը: Ծիշդ չէ՞ մեր այս մտածումը, երբ գիտի աղջիկ Եւան իր կուսութիւնը կու տայ աղային տղուն եւ ապա կը քօսի անոր

կողմէ:

«Տոգսան»էն ներս.— «Հրդեհէն ետքը մոխիրի հաճոյարտութիւն մը կ'երկնայ իր ներսը»: Ու Տոգսանը.— Ձուրը ձգուած տաշեղին պէս ինքզինքը թող տուաւ օրերու հոսանքին»:

Իսկ «Պաղտօ» պատմուածքին մէջ.— «Լռյալ լման ներս մտաւ, անկիւններու մէջ անգոյն առարկաներուն ձեւ տալով»:

Պաղտօն իր սիրած աղջկան ուզած ծաղիկները բերաւ. բայց... մահացաւ:

Բոլոր պատմուածքները հոգեբանական խորունկ սուզումներով կը ներկայացուին, մերթ մանրամասն նկարագրութիւններով, շրոնք սակայն ձանձրոյթ չեն պատճառներ ընթերցողին, այլ կու տան դէպքերը վերլուծելու առիթ:

Կը զգա՞ք պատկերներու գիտական ճշգրտութիւնը, երբ հոն չկայ յերիւրածութիւն: Անպայման:

Հոգեբանական խորունկ վերլուծման ուրիշ օրինակ մըն է «Տոպիճը» պատմուածքը, ուր մեզի ներկայացողը իրաւ գիտացի մըն է, անհունօրէն բարի, շրջանին մէջ յայտնի իր քաջագործութիւններով, ապա՝ գերի խմիչքի, անկում՝ մինչեւ ծիծաղելի ըլլալը, որուն կինը կը փախչի իրմէ ու կ'երթայ Պոլիս: Տոպիճին ծերանալը, ապա կնոջը ականկնկալ վերադարձը...

Սպասելի չէր այս մէկը: Բայց հեղինակը կը համոզէ մեզ, որ ակնկալելի էր նման վերադարձ մը տարիներ ետք:

Բնապատկերները երանութեան զեփիտի մը ալիքներուն մէջ կ'առնեն մեզ:

Կնոջ վերադարձէն ետք, եին օրերու օրինակով Տոպիճը, թէ.

—Կնիկ, ըրախի մը լից:

«Հօրքուր-Վարդան»ը, վարպետ, կրկնակիօրէն կը համոզէ մեզ, որ դուր որքան ալ տիրացած էիք ֆրանսական գրականութեան մեծերու գործերուն, նոյնքան եւ արեւելի գիտելիք հայ գիտը իր յետին մանրամասնութիւններուն մէջ: Գիտը, որուն հովիւները (ու ոչ միայն հովիւները) հիւանդութեան մը պարագային կը հաւատային, որ ենթական Ս. Սարգիսէն զարնուած է: Նախապաշարում, հաւատալիքներ, խեղդած էին մեր բարի ժողովուրդը, որ պատրաստ էր Տիրոջ դիմելով աղօթելու պէս ըսել.

—«Լեզուակը քա՛ց, Տիրո՛ւկ, տղան քեզի ըլլայ»:

Ու հօրքուր-Վարդանը կը նուիրուի եկեղեցիին:

Բայց եկեղեցիին նուիրուած այս տղան՝ ժամկոչ Վարդանը, մերժուելէ ետք այրի ապլա Հեղնա հօրքուրէն, կը վերադառնայ իր հովիւի հին արհեստին:

Բնութեան կանչը արեւի ուժեղ էր, քան եկեղեցին:

Փառասուր հեքիաթի մը համը ունի, վարպետ, ձեր այն պատմուածքը, զոր վերնագրած էք «Թիրքմէնին աղջիկը»:

Ի՞նչ սիրուն պատկերներով զարդարած էր զայն: «Անելի անդին՝ զանգակատունին սուր հասակը միջոցին մեջ կը գծուի վարդապետի մը վեղարին պէս»:

Աւանդական կեանքի մը պատկերը, սքանչելի, խորապէս մարդկային, որ կարծէք մնացած ըլլայ եօթը լերան ետին:

«Աղբարիկ» պատմուածքը կը զատորոշուի միաներէն: Մինչ մնացեալ բոլոր պատմուածքներուն հերոսները կու գան Սեօլեօզէն ու Սեօլեօզի շրջակայ գիւղերէն, «Աղբարիկը» Երկրի մարդ է, Երկրէն եկած է: Աղբարիկը իր մշտնջենքուն հանդիպեցաւ ու զանձ մը գտած ըլլալ կարծեց:

Հոս հողի ուժին ներգործութիւնը կը զգացուի առանց թմբուկի:

Բայց հոս ես հայ գիւղն է՝ իր հիմէն եկող եւ շարունակուող բոլոր սովորութիւններով:

Աղբարիկին սերը, միճակութեան տառապանքը, իր սիրած աղջկան ուրիշին երթալը, տէր հօրը Աղբարիկէն պարտքի դրամ կորզելը, իր տուն կառուցելը, յոյսերուն փլուզումը...

Մեռաւ Աղբարիկը ու հակառակը անոր, որ տէր հայրը պարտք էր իրեն, դրամ չառած շքաղեց մեռելը: Մինչ աղբարիկը սնանկացած էր, քոլոզաւորները (երկրէն եկածները) տուին թաղման կարգի դրամը...

Հապա՞ «Երկիրներն ինկած կիներ»... այդ ի՞նչ անսահման միանտութիւն, վարպետ, ու անսահման... բարութիւն:

Հովիւները կը կռուին անգոյ կնոջ մը համար. Գոլուն կ'ըսէ, թէ իրը պիտի ըլլայ այդ կինը, Ալուն կ'ըսէ, թէ իրը, երրորդ մը նոյն վէճին առեն ստացած հարուածէն կը մարի, այն առեն հովիւները միաբերան կ'ըսեն, — Ելիր, ծօ՛, թող քուկդ ըլլայ...

«Համբոյրի մը պատմութիւնը», համբոյրի մը նման անուշ, բայց նդերական վախճանով -հերոսը, մէկ համբոյրի պատճառաւ նշանածէն կը գրկուի, կը բարձրանայ սարերը եւ կը դառնայ հովիւ:

Բազում են հովիւներու ինքնաստեղծ երգերը: Հայ ժողովորդին բազմածին արգանդը երգերու անսպառ պաշարներ ունի. ահա այդ երգերէն մէկը որքան պարզ, նոյնքան ճշմարիտ.

*Այն ելեր ծովէն կու գայ,
Միրուելով հովէն կու գայ,
Ամէն կարմրակ հարսնուկ
Իր եարին քովէն կու գայ:*

Պատկեր մը այս պատմուածքէն՝ «Լեզու՛ն, ջաղացի քարն իսկ կը յոգնէր անոր քով»:

Օջականի պատերները նաեւ ճանաչողական արժէք ունին:

«Համարը» որ անուն է, ժամանակին Պրուսայի կողմերէն նշանած մը կ'ունենայ: Իրեն կը վիճակուի ամուսնանալ: Հիմա դարձած է տատիկ, բայց սերը անմար է: Ի՞նչ է իր ցանկութիւնը,— տեսնել իր հին օրերու նշանածը հեռուն կամ մօտէն, միայն տեսնել, ուրիշ ոչինչ:

Հոգեբանական ուրիշ պահ մըն ալ այս մէկը:
Բայց մեղք չէ՞ր «Մաղաքը»-իդ, վարպետ, որ գրկած ես զինք իր կնոջը մօտենալէն:

Բայց ի՞նչ կ'ըսեմ, դուք գրկուած մը նեկայացուցած էք, այլ ոչ թէ գրկած:

Մաղաքը անաշխատ ու տգեղ գիտացի մըն է՝ սոխի չափ գլուխով, որ քոքուր մըն է —ամուրի, հովիւներու տուածովը ապրող, որ յանկարծ գիտին աղային միջոցաւ կնկայ տէր կը դառնայ— Բարեքը —այդպէս կը կոչուէր ուրիշ գիւղէ մը բերուած այդ աղջիկը, որ «շուտով հասկցաւ, թէ ինչու եւ որո՞ւ համար բերուած էր ինք...»:

Կը հետեւի տխուր պատմութիւնը.
«...Այդ ամայի սենեակին մէջ, պլպլան կրակին առջեւ անոր ծայնը քակուելով կամաց, քակուելով մեղմ, կը դիզուէր մութին վրայ, ոսկի թելի մը պէս, հիւսելու համար հոն ոստայնը բացակայ գորովի»:

Պատեր մը ու վիճակ մը, որ քիչ բառերով շատ բան կը պատմուի:

Երբ սար կը բարձրանայ Մաղաք ու քիչ մը ամչնալով քոքուրներուն կը պատմէ իրեն պատահածը, կը լարուի անոնց կնիկ չտեսած հետաքրքրութիւնը —եւ անոնց սկիզբի անմեղ ուրախութիւնը կամաց-կամաց կը վերածուի տառապանքի...

Հիանդ է Մաղաք, բայց օր մըն ալ քոքուրներու ստիպումին ընդառաջելով կ'իջնէ գիտ, կը զարնէ իր տան դուռը, ներսէն կը լսէ լուցկիի մը ջրթոցը, դուռը կը բացուի... Բայց ան չի տեսներ իր կինը... դրան առջեւ ինկած է ու մեռած. երջանիկ գիւղը, որ ոչ մէկ քոքուրի դագաղ տուած էր, դագաղ կու տայ Մաղազին: Ջինք կը թաղեն շուքով:

Հակասութիւն մը չկայ այստեղ, այլ հոգեբանական նուրբ ապրում մը: Թէքէեանը պիտի ըսէր.—Ո՞վ կարդալ սիրտը զիտէ»:

«Վաթմանը» պատմութեան հերոսը գիւղացի Պալոզ Արքինն է, որ քաղաք գալով կը հարստանայ ու կը դառնայ Յարութիւն էֆէնտի:

Կ'ամուսնանայ: Կինը կը յարաբերի երիտասարդ վարձակալի մը հետ: Տունէն կը վտարուի՝ փոխանակ վտարելու: Կ'աղքատանայ, Վաթման կը դառնայ:

Իսկական խոնարհ մը:
«Խոնարհներ»ը գիրքին 16րդ պատմութեան, որ նախա-վերջինն է գիրքին՝ «Խոնք-Սողմէն»ն է, որ կը տրուին փոքրե-

րու մէջ ժմնած սերերը գիւղին, ուր իրար տեսնելը արգիւտած է, կու գայ ընդունուած տեսակէտի մը հակառակը հաստատել:

Շատեր գրած ու ըսած են, թէ Օշական խրթնարան է: Բոլոր այդպէս ըսողները թող կարդան «*Խոնարհները*», որպէսզի իմանան, թէ այս պատմութիւններուն մէջ պիտի գտնեն ոչ թէ խրթնութիւն, այլ՝ պարզութիւն, դիւրամատչելիութիւն լեզուի եւ գաղափարի:

Պատմութիւններ ասոնք, որոնք մեզի կը վերադարձնեն մեր գիւղը իր ժամով ու պատարագով, տրտէրով ու աղալով, հողի մշակով ու հովիւներով, անոնց հաւատալիքներով ու դարերէն եկող սովորութիւններով:

Հոն, հայ գիւղերու մէջ — «Գիւղի տղաքը, ընդհանրապէս իրենց հօրը կորացող հասակին մօտ երկարած նեցուկներու կը նմանին»:

Պատկեր մը եւ ամբողջ կեանք մը:

Սէրը գիւղերու մէջ գապուած, բայց չպահուող իրողութիւն է. ահա թէ ինչու. — «Ամէն աղջիկ քիչ-քիչ կը վարժուի շտեմարանը այդ գապումին ու երբ տղոց նայուածքին տակ կարմրելու շափ իր կուրծքը կենսատրուի, արդէն մեկուսացումը կատարեալ կ'ըլլայ ու աղջիկը կը մտնէ առագաստ գրեթէ միշտ՝ շրթունքը գոցուած վարդի պէս անարատ»:

Ամբողջ անարատ անցեալ մը կայ այս պատկերին մէջ:

Խենթ-Մողմէն հարս ունի: «Մէկ բարձի ծերանար»:

Կ'ուզէ որ պատմութիւնը շարունակուի: Բայց վարպետը դրած է վերջակէտը: Դուք կարդացէք ու շարունակեցէք պատմութիւնը ճամբաներէն ձեր մտածումներուն:

Վերջնակը այս հատորին, որ վիպակի մը ծաւալը ունի, վերնագրուած է «*Շահպագր*»:

Այստեղ պիտի հանդիպիք մեր բարբառներուն, սովորութիւններուն — տարատունկ ծառերու, որոնք պահած են երկրէն բերուածը ու Պոլսոյ քիթին տակ իրենց համար ստեղծած են սեփական երկիր՝ հնամենի ասանդութիւնները վերածելով հողի:

Հագուստ-կապուստ, եկեղեցի, թաղում, հարսանիք, սէրեր- հին դարերը կը կամրջեն նոր այս բնակավայրերուն. գիւղեր ասոնք, երբեմն թուրք բնակչութեամբ խառն:

Մակայն, բոլոր այս պատմութիւններուն մէջ բացակայ է թուրքը, որ ներկայ է պարագայական յիշեցումներով, առանց գոյն ու ձեւ ունենալու: Կարծէք ըլլանք մեր երկրին մէջ, մեր արտ ու հօտով ու հովիտով, մեր շէն տուններով եւ խոնարհ մարդոցմով:

Կարդալով այս պատմութիւնները ընթերցողը ինքզինք կը զգայ իր երկրին մէջ: Ի վերջոյ այդ գիւղերը հազար թելերով կապուած էին երկրին հետ ու երկիրն ալ հետու չէր արդէն: Ի

վերջոյ այդ գիւղերը սփիւռք չէին, սփռուած չէին ու կը պահանջէին ինչ որ ժողովուրդը ստեղծած ու գումարած էր դարերով:

Իսկ հիմա՞ ո՞ր գտնել այդ գիւղերը, նոյնիսկ մեր ամէնէն հոծ գաղութներուն մէջ, ուր փոխուած է մեր նիստն ու կացը, նոյնիսկ տեսակները մեր կերակուրներուն:

Պիտի գտնենք Օշականի պատմութիւններուն մէջ:

Գիւղերը կորսնցնել էտք, հայաշխարհը կորսնցնել էտք, կորսնցնելու վրայ ենք հայկականութիւնը մեր: Իրաւ որ ճիշդ է ըսուածը. — «Հողը կորսնցնողը դատապարտուած է կորսնցնելու ամէն ինչ՝ թէ՛ բարք, թէ՛ սովորութիւններ, թէ՛ դարերով կերտուած մշակոյթ»:

Յակոբ Օշական, վարպետ սիրելի, այս պատմութիւններովդ կորուստէ փրկած ես մեր գիւղերը:

Լուս իջնէ գերեզմանիդ:

Եղերեգութի՞ւն Շահպազին կեանքը: Ո՞չ, հոգեբանական մանրագին վերլուծում: Շահպազը մեռաւ գերագոյն երջանկութեան պահու մը:

«Շահպազը», որ գրուած է 1924 թուականին, Օշականի մեծ կտաւներուն նախերգն է՝ թէ՛ որպէս լեզու, թէ՛ որպէս խորացում:

Հոս խօսողը մեծ հոգեբանն է արդէն, հոգիներու մեծ սուգակը, անյալէս՝ ինչպէս զինք պիտի ճանչնանք իր գրական վերլուծումներուն մէջ, քիչ մը անողոր գիւղացի, բայց ճշմարտութեան քեռայտոյց:

Շնորհակալութիւն քեզի, վարպետ, որ արտօնեցիր գրել քու մասին նոր կեանքիդ յիսնամեակին առիթով ու զիս տարիք մեր գիւղերը, զիս տարիք մեր խոստումներուն, մեր հողին:

Ու թէւ գիտեմ, թէ երկար է կեանքդ, բայց դարձեալ երկար կեանք կը մաղթեմ քեզի...

Ռոդիարար՝

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Վ. ՇՈՒՇԱՆՅԱՆ

ՅԻՐՈՒՑԱՆ ԷՋԵՐ

Աշնան ոսկեայ առաւօտ մըն էր, հարաւի մէջ, երբ առաջին անգամ բացի ժխտի հռչակաւոր Վատիկանի մատանները: Երիտասարդ, հրաշալիօրէն խանդավառ, հովիւի մը պէս էր, որ ամէն առաւօտ միակ ակնարկով մը կը տիրանայ տիեզերքին: Կը սիրէի ու կ'ատէի միաժամանակ, նո՛յն բուն սաստկութեամբ, այդ ազնուական սրիկան, որ Լաֆֆատիս կը կոչուի: Ձրի արարքներու տեսութիւնը հաճելիօրէն անմարդկային կը թուէր ինձ, ցրտօրէն գեղարուեստական: Ստուգիւ տէր էի արդէն կանխահաս փորձառութեան մը, ինչպէս այժմ կը կրնմ տաժանքով խեղդուած ու յամեցող երիտասարդութիւն մը: Հաստատ քսան տարեկան մը կայի, այլ ուսերուն վրայ կը կրէի անցեալին ողջ բոռը: Բարակ, զարմանալի տեսրակ մը ունէի, միշտ սրտիս վրայ, ուր մեծատառ կը քանդակէի կեանքիս օրէնքը: Ահա՛ կը վերցնեմ սակաւիկ մը անցելոյն ծանր վարագոյրը, ճամբայ տալու համար ընտանի դեւին: Ահա՛ այդ էջը:

ԱՇՈՒՆ

Յանուն քառիմ յաւերժակամ
բանաստեղծութեամ

Յանուն մարդ կորուսեալ,
Միակ գեղեցիկ, միակ անմահ

ՓՈՒՆԹԱ

—Պիտի երաժարիս միանգամընդմիշտ մտքի գիշութեանն, երեւակայութեանն ամուլ, իմքնահաճութեանն:
—Բարի ու քաղցրաբարոյ պիտի ըլլաս սգեղ կիներում, ծերերում, մանուկներում ու տկարներում եես:

—Սրբեմն աչքերդ պիտի չկախես գորաւորներում, լիրբերում ու վայրի գազաններում առջեւ:

—Հեզգնութիւնը թունաւոր գէճ մըն է, պիտի չգործածես գայն: Ձեռ գիտեր ուրախութեամբ ծիծաղիլ, ուրեմն պիտի չխնդաւ քնաւ:

—Միակ իրական հարստութիւնդ մարմինդ է, գմայլելիօրէն բարայտում: Պիտի չաղտոտես, պիտի չաղարտես գայն:

—Ստեղծագործութեան տիեզերական մի գիւն, յամախ դառն, պիտի ընծայ բերես յամառ, անընկճելի յարատեւութիւնդ: Կտրիմ պիտի ըլլաս վտանգիմ առջեւ,—վասնզի այս է օրէնքդ:

—Մահուան դիմաց երկիւղը պիտի չսեւցնէ դէմքդ: Գլուխդ բարձր, հոգիդ յոյժ թեթեւ, պիտի ողջունես վերջիմ անգամ մարդը,—եղբայրդ ու հաւասարդ, պիտի ողջունես երկիրը՝ պսակեալ ու նորաբողոք: Մահը պիտի դիմաւորես, ինչպէս մարդ կ'երթայ յաղթանակի, մեղմաբաւալ երգ մը շրթներուդ վրայ:

—Միակ գանձդ՝ արեանդ խուլ քնարականութիւնն է, պիտի չաղարտես գայն: Խանդավառութիւնը պիտի կրես ուսիդ՝ ալիստատան դրօշակի մը պէս:

—Արտայայտութիւնը սուրբ է, պիտի չկեղծես գայն:

—Պիտի բարձրանաս ստի՛, մերկ սուսերի մը պէս, բոլոր ստրկութիւններում դէմ: Նոյնիսկ գերութեան դէմ, որ ծայրայեղ սերէն կու գայ:

—Լաւ հասկցիր զիս, բարեկամ, իրական գեղեցկութիւնդ ներքին է: Աչքերուդ շէն մշտլն է, որ կը լուսաւորէ երկիրը, որ կ'ողողէ դէմքերը, որ սիրելի են: Անվթար պիտի պահես ներքին կրակդ:

—Գործվը, առանց կամքի, լուկ տկարութիւն է: Ո՛չ մէկ իր ու ո՛չ մէկ էակ պիտի սիրես տկարութեամբ: Առնական պիտի ըլլաս:

—Գոնե՛սիկ պիտի չըլլաս: Պիտի հեռու փախիս գոնեկութեանէն, ինչպէս հնտախտէ,—վասնզի գոնեկութիւնը հիւանդութեան պէս է, տարափոխիկ: Ո՞ն պիտի ունենաս, կեանքիդ մէջ ամենուրեք ո՞ն պիտի ունենաս:

—Պիտի յարգես մարդկային էակը, հետեւաբար մանկիւնը,—ինչպէս ազնիւ գաւակ մը կը մեծարէ իր մայրը, երկիւղածութեամբ: Եթէ ազուոր կիմ մը, քեզի համար, գետին ձգէ իր հագուստները, անշահախնդրօրէն, երաշալիօրէն մերկ,—ծումկերում վրայ պիտի գետեղես բարեկամութեան արու համբոյր մը:

—Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, կիմ մը ծախու առնելը մոյմքան վատ ու ստորին է, որքան խիղճ մը գնելը: Ո՞նրայիմ արարք մըն

է ատիկա: Երբեք պիտի չգնես կիները,— ականջիդ օդ ըրէ ըսածս: Աւելի լաւ է Յովնանի պէս հողին քսել անդամդ, հողին քսել...

— Կեանքը դիրին չէ, կեանքը երգիծամբ չէ: Նոյնիսկ կողերդ պատռած, թիկունքներդ արիւմաքաքախ՝ պիտի բանաճես քանաստեղծութիւնն ու ազատութիւնը:

— Լա՛ւ հասկցիր զիս, տեսասիկ այս է յեղափոխութիւնը: Ու այսպէս յեղափոխական մը պիտի ըլլաս դուն: Պիտի մերժես անօգուտ հնազանդութիւնն ու մեքենականութիւնը: Վասնզի քարախում մարդ մըն էս ու ո՛չ թէ պտուտակ մը:

— Խաւարին մէջ թէ բանտի մը խորը, գարնան դալարիքներուն դիմաց թէ գրգամոյշ արշալոյսներուն դրան մէջ,— երախտագիտութեամբ պիտի յիշես մայրդ, որ լեզ ցաւով յղացաւ, սիրով սնոյց, մայրդ՝ միակ գեղեցիկը: Ահա՛ ան, լո՛վդ ի վեր, ամէն գիշեր ամէն օրուն տաժանելի ճիգէն յետոյ: Հարկ է մայիլ անոր աչքերուն, կարեմալ ընդունիլ անոր անուշ հայեացքը, առանց խղճի խայթի, առանց երկիրդի: Համդիպման քաղցր ժամուն հարկ է, որ ձեռքերդ անաղարտ ըլլան, հոգիդ անապական ու ակնարկդ մաքուր ըլլայ: Լսէ՛ զիս, համբոյրդ ճակտիդ վրայ՝ երբեք պիտի չնուստացնէ գայն:

— Յառաջ անցիր, միշտ յառաջ,— եթէ հարկ ըլլայ տուր կեանքդ ցողաքաքախ ծաղիկի մը պէս: Յայնժամ կեանքդ պիտի յանգի իր վախճանին հպարտ ազնուութեամբ մը:

— Արհամարհամքը բորոտութեան պէս է, տարափոխիկ ու աղտեղի: Պիտի չարհամարհես ընաւ:

— Ահաւասիկ օրինաց տախտակդ, որ տրուեցաւ քեզի ի վերուստ: Եղի՛ր մարդ մը, որ արժանի է իր ճակատագրին, եղի՛ր մարդ մը, որ ա՛յ մէկ աղտեղութիւն կը ձգէ իր ետին: Երգի մը պէս ծնար, մաքուր, անցի՛ր երգի մը պէս:

Փռւմբա

Գիշերը պայծառ էր ու հաճելիօրէն ջերմին: Գիշերը տօնական էր: Ու լոյսերու ողկոյցներուն տակ այդ նախկին մատուռը իրապէս ողողեալ էր: Բեմին խորէն կը նուագէին նուաղուն եղանակ մը: Կռթնած սիւնի մը, քարէ գաւթին մէջ, կը դիտէի զոյգերը, որ կը սահէին: Աղջիկ մը կար, համակ սպիտակ պարեգօտով եւ որ նարնջագոյն գօտի մը ունէր: Դէմքը անաղարտ էր, թարթիչները երկար, բերանը բոսոր, այլ քիչիկ մը ջղային: Ամէ՛ն ինչ մաքուր, ջինջ էր վրան:

կը դիտէի, հոգիս կորուսեալ ու տրտում, այդ աղջիկը, որ քաղցր էր երգի մը պէս ու մենութեան ծարաւը չըմենքս կը չորցնէր: Գարնանային գիշերը կը պագնէր ծառերուն կատարները, երկինքը պայծառ էր: Ու թռչնակ մը մորմոքայի կերպով կը ճչար թաւուտի մը խորէն: Յայնժամ ելայ դուրս, հայցելով հոգևոյս խաղաղութիւնը աստղերէն, որ կը ծորէին վրաս: Ո՛ր գիշեր, կ'ըսէի ինքս ինձ, դուն ես, լոկ ապաւէնս, դո՛ւն ես լոկ զուարթութիւնս: Ողջո՛յն, ո՛վ գիշեր:



Ուսերը մեղմորէն ցնցեց ու մեղմորէն խնդաց ինքն իր վրայ: Հաւանաբար ձայնին մէջ քիչ մը գթութիւն կար ու գուցէ իր տկարութեան վրէժը լուծելու համար ընդունակ էր պառկիլ առաջին հանդիպած պոռնիկին հետ:

—Քանի մը տարի առաջ,— յարեց մեղմորէն,— աւելի՛ արուեւ հպարտ էի: Յաճախ կ'ըսէի թէ,— ու իրաւ էր ըսածս,— աղուոր ու մերկ կնոջ մը ու Պեթհոմիէնի ինններորդ համանըւ ազին միջեւ, դժուար չէր ընտրութիւնը: Մագիլներս սուր էին ու հեզութիւնն ու ծաղրը անողոք էին չըմանցս վրայ: Միակ նախադասութեամբ մը ընդունակ էի ողջ զգացական մեքենայ մը քանդել:

Մեղմորէն, մեղմորէն է, որ կ'ըսէր այս բոլորը:

—Անգամ մը Լատինական թաղի սրճարաններէն մէկուն մէջ՝ խումբով նստած էինք: Միրուն գերման ընկերուհի մը յամառ, անտեղիտալի սաստկութեամբ մը կը շատախօսէր սիրոյ շուրջ: Այդ դիւրին ու գուր շողփաղփանքը այնքան ջղայնացուց զիս, որ ցրտորէն ըսի, անմեղ անդթութեամբ մը նայելով աչքերուն,— է՛հ, պզտիկ աղջիկ, երկար ատենէ ի վեր քունուած չէք երեւի... Այս էր ըսածս ու ուրիշ ոչինչ,— այլ այդ անմիտ աղջիկը, որ կրնար ապտակով մը պատասխանել, սկսաւ լալ, հիւանդ ու ծեր շան մը պէս կաղկանձել, մինչ տղաքը սրտանց կը խնդային: Անտեղիտալի, ժպտուն, ցրտին՝ քաջութիւնը ունեցայ աւելցնելու,— Հոգ մի՛ ընէք, այսինչ փողոց, երկրորդ յարկ, սենեակ թիւ քսան-եօթը, ամէն իրիկուն ժամը եօթէն յետոյ, պատրաստ ձեզի հաճելի ըլլալու... Օ՛,— ըսաւ տղայ մը,— շնորհակալութիւն, իմ հասցէս է:

Մեղմորէն, մեղմորէն է, որ կ'ըսէր այս բոլորը:

—Լալէն դուրս ելաւ գերմանուհին, բայց յաջորդ օրը եկաւ վրաս, հնազանդ ու դիւթիչ: Արագութեամբ քակեց նախադասութեանց կծիկը, որ պատրաստած էր նախօրօք:

Յուզումը կը ցնցէր իր աղուոր մարմինը.— Ինչո՞ւ այդքան գէշ վարուեցաք Հետս երէկ... Ու այդքան գոռակիկ եղաք, յարեցի: Ո՛չ, այդքան քիչ վեհանձն, ըսաւ: Որովհետեւ երիտասարդ եմ ու կեղծիքը չեմ սիրեր: Յետոյ պարտէզ գացինք միասին: Լուսեմամբ թափառեցանք կաղամախներուն տակ: Աղքատ մանուկի մը վարսերը շոյեց, մինչ իր կապոյտ աչքերուն խորը վերջին ճառագայթ մը ոսկեայ նուաղումներ կ'արձակէր,— եթէ քոյր մը ունեցած ըլլայիք,— ըսաւ,— պիտի չկարենայիք այդպէս խօսիլ: Մի՛ թէ, պատասխանեցի վայրագութեամբ, ուսերէն բռնեցի ու բերնին վրայ երկարօրէն Համբուրեցի իր երիտասարդութիւնը: Աչքերուն խորը արցունքի կայլակներ կային, վճիտ կաթիլներ:

Մեղմօրէն, մեղմօրէն է, որ կ'ըսէր այս բոլորը:



Ինքս ինձ կ'ըսէի, թէ աւելորդ է քեզի գրելը: Կարգապահ-հոլթիւնը, կարգը սիրող աղջիկ մըն է, կ'ըսէի: Ֆրանսուհի մը, որ չափի գագացումը ունի: Միրականին տենդաւար բերանը ծիծերուն վրայ՝ ընդունակ է միշտ, որ շրջագոյնս կը ճմլուի, որ երկու տարի առաջ ընտանի առարկայ մը կորստնցուցած է, կայարանի մը մէջ, կրնայ միշտ մօրը շնիկը: Ու չմոռնալ որ առողջապահական քանի մը անձնոց հարկ է գնել, քաղաքը ձգելէ առաջ: Աւելորդ է գրելը, կը կրկնէի, քանի որ աղջիկ մըն է՝ բացարձակապէս անընդունակ զարտուղի արարքներու:

ԼՈՒՍԱՆԿԱՐ ԱՌԱՋԻՆ.— Քաղցրօրէն ու ազատօրէն սիրուն է,— կ'ըսէ մանուկը: Ակնարկը չարածնի ու քնքուշ: Կզակը կլոր ու մեղմ: Վարի շրթունքը գրեթէ առկախ,— խածնե՛լ դեղձի մը պէս: Ձեռքը գօտիին վրայ, նոր ձերբազատեալ դպրոցական աղջկան մը պէս: Թո՛ղ հովը ելլէ վարի դարպասներէն ու վերի գարատափներէն ու լուայ անոր սրունքները: Թո՛ղ հովը ծփայ անոր ծունկերուն շուրջ, իր կապոյտ ալիքներուն մէջ գրկէ պերճ ազդրերը, թո՛ղ հովը նուրբ ու փափուկ շրթունքի մը պէս պագնէ անոր որովայնը:

ԼՈՒՍԱՆԿԱՐ ԵՐԿՐՈՐԴ.— Պատուհանը ցած է: Ժանեկազարդ վարագոյրին հտեւ ծառի մը հասակը: Ձուարթ

Ժպիտ մը՝ բիրերուն խորը կամ շրթանցը վրայ: Չփակը բարակ է ու ճաշակաւոր: Անյագ ձեռքերս կը շօշափեն կարծես կուրծքին երկու մեծ պտուղները: Միծերը ողորկ ու պի՞նդ են արդեօք բազուկներուն պէս: Մարմնին վարի մասը հեշաագրգիռ է: Կը նախանձիս այժմ՝ մտածելով այն առաջին տղուն, որ իրաւունք ունէր բանալու այս շրջագոյնսար: Դալարիքին վրայ մանիշակ երեկոյեան մը թեւերուն մէջ...

ԼՈՒՍԱՆԿԱՐ ԵՐՐՈՐԴ.—Ամէ՛ն ինչ ջինջ ու խանդավառ է վրան: Վարսերը ողողուած են լոյսով: Ջիւտերը՝ հարուստ, սրունքները՝ ջղուտ, մերկ թեւերը՝ օդին մէջ: Օ՛, այդ հեշտասէր ու բարախուն ռունգերը, որ կը մատնեն ալեկոծ գոյախորտութիւն մը: Կը զգամ ուրիշ արուններու ներկայութիւնը իր մարմնին շուրջ, գիշերուան քաղցր ժամերու...



Կը շրջագոյնի բակին մէջ ու հարիւրաւոր տղոց յարուցած աղմուկը հանելիօրէն կունակս կը ծեծէր: Յայտնամ գարունը մեղմօրէն եկաւ վրաս ու աստիճանարար գրաւեց զիս: Խոնարհութեամբ կը քայլէի ու գարունը կ'ելլէր ներքին ակօսներէս շատ անուշ երգի մը պէս, մինչեւ որ ծածուկ ճամբաներէ գալով բոլորովին ռոռոցեց զիս: Ահա՛ թէ ինչպէս եկաւ ան:

Ընկեր մը սեղանին վրայ շահպրակներ ունէր ու ծծմորներ: Յիշեցի հայրենի երկրիս ցորենի ծլարձակ արտերը: Արծաթեայ գիշերներ: Լուսինը՝ սպիտակ քրմուհիի մը որովայնին պէս:
 Մանկութիւնս յախտեմակամ ծովում, երկրիմ ծածուկ ուժերում, Թրակիոյ եիմ աստուածներում դիմաց: Պանը՝ անտառներում խորը: Մերկ հովիւներ՝ կանաչ ու խօլ շրերու մէջ:
 Հնաւանդ Փալլոսը: Թափօրները, որ կը սարսիմ մթին կրքերէ: Հոյակապ իրաններով աղջիկներ, ամբողջովիմ ճերմակ հագած: Միջիմ դարու եկեղեցիներու նակատներում վրայ հետքերը այս հեթանոս պաշտամունքին:
 Տա՛ արիւնն ու անսպառ տեմդը արեւելեան ցեղերու: Հնամենի, յաւերժական գգուամբները: Մարդը, որ կը դառնայ հով, որ տարփամբով կը լգէ կնոջ

ծանր պտուղները, որ կը վերածուի տարերքի ու կը գերէ գայմ:

Բարոյական օրէնքը՝ ցուրտ ու ծարաւ հեղի-
նակութեամբ, իր անողոք տրամաբանութիւնը: Այլ այ-
սօր գարուն է: այսօր օրէնքը գտնուած կը յաղթանակէ:
Գիշերը ցորենները կ'անհիւս, կ'անհիւս...

*Յետոյ, քաղաքին մէջ այդ արձակուրդին: Սենեակս ցած էր, յոյժ մտերիմ: Վարագոյրը ծանր: Երբ լոյսը կը մարէի՝ գիշերը կ'իջնար վրաս սեւ գանգուածի մը պէս: Մանր կ'ըլլար գիշերը ու գիտ կը նետէր սեւ երազներու գիրկը: Այդ խուլ, դառն, սրտակեղեք երգը իրապէս գիշերուան խորէն կ'ելլէր միթէ: Գուցէ այդ վաչկատուն գերմանուհիին ձայնն էր, — սրտածմբիկ: Քարտեաշ գլուխը մարդուն ազդրերուն վրայ, սիրահար բերանը հո՛ղ, բոսոր: Իր երգը ծանր էր ու թեթեւ միաժամանակ: Ո՛ր, գուցէ քունն էր, — անհանգիստ ու պղտոր: Երկարեցի դողահար ձեռքս ու յանկարծ կուրծքե-
րուդ մեծ պտուղները: Կուրծքերուդ, որ կ'ընծայէիր ինձ՝ զով ու գուարթ:*

Յայնժամ արիւնս կ'ելլէր հաճոյքով մը, բոլոր արթուն քնիջներէս ու կը ծեծէր գիտ: Գուցէ իրապէս հող էիր, այդ ծանր վարագոյրին առջեւ, լիովին մերկ ու բաց՝ ինչպէս գիշերը: Գուցէ իրապէս հող էիր, երկար ժամերէ ի վեր, բաց՝ ինչպէս ծովը:



Քաղցր ու թանկագին է գորովը, այլ ժամանակաւոր: Ինչպէս զօրութիւնը բառերուս: Մեզմէ մէկը անտարակոյս աւելի կ'արժէ, քան միւսը, մեզմէ մէկը, հմայաթափ պիտի ըլլայ ուչ կամ կանուխ: Հմայաթափ՝ գիտեմ թէ պիտի ունենամ տխուր քաջութիւնը ոչինչ ցոյց տալու: Այլ այս խաղը անարգ կը թուի ինձ: Կը նախընտրեմ անաղարտ, հպարտ բարեկամութիւն մը՝ այս հեշտութենէն, որ տխուր է:

Սոսկալիօրէն վեհանձն, այլ սոսկալիօրէն արհամարհոտ եմ նաեւ: Ու կ'ուզեմ, որ ճանչնաս գիտ, — բարախուն ու հակասական, ինչպէս կեանքն է: Անգամ մը, Լատինական թաղի թոհուրոհին մէջ, բարեկամուհի մը ունէի, հաճելի ու հեշտասէր, որ կը պառկէր բոլոր ընկերներու հետ, այլ յամառօրէն կը մերժէր գիտ, — վասնզի է՛ն սկիզբը յամարձակած էի ուշադրութիւն չընել իրեն: Ազնուօրէն հպարտ էր այդ աղջիկը ու այս պատճառաւ իսկ գուցէ՝ յարգանք պար-

տական էի իրեն: Մեղմորէն կ'ըսէր ինձ, յիշարութեամբ, այլ առանց գայրոյթի:

—Կը յիշե՞ս սկզբի օրերը,— առանց զիս նուաստացնելու, առանց վիրաւորական բառերու թէեւ, այսուհանդերձ զիս մերժեցիր: Չիս մերժեցիր՝ հազիւ նշմարելի շարժումով մը, բառով մը, որ կիսով կ'ըսէիր, ակնարկով մը: Կը յիշե՞ս այդ օրերը: Այժմ կը պառկիմ բոլոր ընկերներուդ հետ, ես եւս առանց աղմուկի, առանց ցուցամոլութեան: Արժանապատուութիւնդ ամէն օր կը վիրաւորուի ու կը ցանկաս զիս, վասնզի ուրիշինն եմ,— այլ չես սիրեր: Ինչո՞ւ կ'ուզես, որ հրաժարիմ այս արդար վրիժառութենէն: Կը պառկիմ ուրիշին հետ, բայց քեզ է, որ կը սիրեմ: Տրամաբանական ըլլանք,— ընկերներդ զիս չեն շահագրգռեր,— ողջ ներքին կեանքս, բարեկամութիւնս, որ բարախուն է, կու տամ քեզի, մարմինս՝ զոր արհամարհեցիր, այդ տղոց: Չե՞ս կարծեր, որ ճիշդ ու արդար է Հաշիւս...

Գէշ ժամանակներ էին յետ-պատերազմեան գուհիկ անառակութեան: Այդ օրը մինակ էինք Հաշուեսեղանին առջեւ: Ինձ կը կարդար, իր երաժշտական ձայնովը խօլ գիրք մը, որ ցայժմ գարմանայի գորութիւն մը ունի վրաս: Լոթրէամոնի Մալտօրօրի երգերը: Անգուսպ, յեղակարծօրէն վաւաշոտ՝ ձեռքս խրեցի պարեգօտին տակ, զգալու համար մերկ ու լի մարմինն անուշ զովութիւնը: Առանց բարկութեան նայեցաւ աչքերուս, ժպտեցաւ:

—Հաւը չիսօսած պիտի արհամարհես ինքզինքդ,— ըսաւ: Ձեռքս ջղայնութեամբ քաշեցի ու արտասանեցի քանի մը բառեր, որ ցայժմ ամօթապարտ կը ձգեն զիս: Հարկ է սակայն քաջութիւնը ունենալ գրի առնելու զանոնք:

—Աղէ՛կ,— ըսի ծոյլ հեղնութիւնով մը,— աղէ՛կ: Անմիջապէս կը հրաժարիմ չնաշխարհիկ գեղեցկութենէդ,— այլ խօսքը մեր մէջ, տասը սանթիմետր՝ աւելի կամ պակաս, մեծ տարբերութիւն մը չ'ըներ Հարիւրաւոր մեթրեր ընդունելէ յետոյ...

Արտասանեցի այս գարշելի բառերը ու քաջութիւնը ունեցայ զուարճալի գտնելու զանոնք: Երկարօրէն գիտեց զիս, այլ ես գետին չկախեցի Հայեացքս: Յետոյ մէկ-երկու ժամ եւս մնացինք հող խորին լուութեամբ մը: Յետոյ ինձ հետ ոտքի ելաւ, ստուերիս պէս ու ստուերիս պէս եկաւ հետս: Դանդաղօրէն հագուստները ձգեց գետին, առանց բառ մը արտասանելու, առանց բառ մը արտասանելու սրունքները բացաւ: Պաղ ակնարկով մը կը գիտէի իր շուրջ մերկութիւնը ու հոգւոյս խորը շատ թանկագին բան մը կը փլէր:

—Տասը սանթիմետր աւելի կամ պակաս,— յարեց մեղմ

անգթութեամբ մը,—արդարեւ մեծ կարեւորութիւն մը չունի...

Յայնժամ ծոնցայ երկիւղածօրէն ու Համբուրնի ծունկերը: Այդքան միայն ու ուրիշ ոչինչ: Սիրտս ուժգնօրէն կը բարախէր:

—Հիմա կ'աղաչեմ գնա՛,— ըսի խեղդուկ,— գնա՛...

—Օ՛,— յարեց,— ոչինչ, գեղեցիկ դերը թո՛ղ քեզի մնայ, միայն թէ այլեւս ո՛չ մէկ կնոջ հետ գռեհիկ եղիր...

—Գուցէ կը սիրէի քեզ,— ըսի նայելով պատին,— ու գուցէ գուն գիտէիր, կը գգայիր ատիկա...

—Այսուհանդերձ զիս վիրաւորեցիր,— յարեց շատ մեղմօրէն:— Կը կարծէի, թէ սէրը հովի պէս է, մեծ հովերու, որ լեռները կ'աւելնէ, որ մեզ կը լուան: Իսկ դուն աղտոտեցիր անցեալս իսկ, զոր չեմ ուզեր կրել այլեւս...

—Իսկ ես անցեալս կը կրեմ առանց դառնութեան, ինչպէս ամուլ կիները իրենց բեղնաւորութեան բռնակալ ծարաւը...

—Օ՛,— ըսաւ,— թո՛ղ սէրը բոց մը ըլլայ, որ ամէ՛ն ինչ կը սրբէ, թո՛ղ հովը ըլլայ, որ կը գրկէ ծառերը: Ինչո՞ւ, աւելցուց, Հակառակ ծայրայեղ զգայնութեանդ, կըցար ստորնացնել զիս...

—Այժմ գնա՛,— ըսի ցաւով,— խնդրեմ, գնա՛...

—Գիշեր բարի, ո՛վ արու,— ըսաւ շատ մեղմօրէն, շատ մեղմօրէն,—գիշեր բարի, ո՛վ մէկը, որ մանուկ ըլլալ չի գիտեր:

Մէկը, որ մանուկ ըլլալ չի գիտեր:



Գուցէ գաւառական քաղաքի մը մէջ էր, ցած ու թաւուտներու խորը կորսուած տնակ մը: Կը Հանդիպէինք քաղաքը ու գիշերը գրկած կը տանէր մեզ, թեւանցուկ: Թմբիներու ծառուղի մը կար ու մրտենիներ կային: Երկարօրէն կը խօսէի քեզի ու դուն խորին հաճոյքով մը մտիկ կ'ընէիր զիս: Յայնժամ գիշերը կ'իջնէր ու ամէ՛ն անգամ կ'ըսէի, թէ դեռ անսպառ նիւթեր կան: Վաղը վերստին եկուր, կ'ըսէի:

—Նախ բանաստեղծութիւն,— կ'ըսէի գերագրգիւ,— անոր մթին ծարաւը հիւանդութեան պէս պիտի փոխանցեմ արեանդ, մեղքի մը պէս: Աստիճանաբար պիտի բաժնեա կրքերս ու նախընտրութիւններս: Նո՛յն կրակէն պիտի վաղրեմ քեզի վայրագ սաստկութեամբ մը, ըսելու Համար անասելի խորհուրդը մայր երկրին: Վասնզի միշտ մարմինս մաս կազմած է որոտընդոստ տարերքին: Մերկ, որովայնի

վրայ, պիտի պառկինք ու մտիկ պիտի ընենք հողին ծածուկ ձայները, սրտակեղեք երգերը, որ կ'ելլեն տիեզերքի ակօսներէն:

Յետոյ քունը եկաւ վրաս ու գրաւեց զիս, ինչպէս գիշերը կը տիրանայ իրերուն: Ու երբ առաւօտը ծագեցաւ՝ երկիրը կը դողար հրճուանքէն: Առաջին ցանկութիւնը հանդարտօրէն ելաւ այգուն դողալով թիկունքներուս շուրջ: Լոյսը հացի պէս անուշ էր:

—Սիրական,— կ'ըսէի,— մի՛ մոռնար զիս: Յիշէ՛ զիս գարնան հետ, առաւօտեան հետ: Երբ կը շրջագայիս, բաբախուն երկրին արեւցութեամբ, արծաթեայ գիշերուան մէջ, գրկէ՛ երիտասարդ ծառ մը ու համբուրէ՛ մատղաշ շաքիչները: Երբ հովը կը սողոսկի վրադ, երբ կ'ելլէ ծունկերէդ վեր ու կը պլլուի մերկ իրանիդ, երբ կը պագնէ կուրծքերուդ պտուղները,— յիշէ՛ զիս: Պառկած դալարիքին խորը, մօրէ՛ մերկ, որովայնի վրայ,— երբ երկրին ջերմութիւնը կը թափանցէ ազդրերէդ ներս, յիշէ՛ զիս, սիրական:

Մարդկային էակը մնայուն ու անյարիւր տուեալ մը չէ անտարակոյս: Եթէ նոյնիսկ անոր արտաքին կեցուածքը մնայ նոյնը, զայն կազմող տարրերը անընդհատ կը փոխուին, կ'աղօտանան կամ կը զօրանան: Բոլոր իրողութիւնները եզակի են: Բոլոր իրողութիւնները եզակի են: Յիշէ՛ հտկար Ալէն Փոյի չարագուշակ Ազուարը, թառած Պալլասի արձանին վերեւ, գահաճառական գիշերուան մէջ: Բոլոր վախերն ու բոլոր խղճի խայթերը, բոլոր մեռեալ ցանկութիւններն ու բոլոր նոր յոյսերը հող էին, մութին մէջ ու չարաչուք ազուարը կը կանչէր,— բնաւ երբեք, այլեւս բնաւ երբեք: Օ՛, այդ վեհափառ ու արքայական ազուարը թառած Պալլասի արձանին վերեւ: Բնաւ երբեք պիտի չվերադառնայ արեանս անհանդարտ երիտասարդութիւնը: Այժմ բաժինս խելակորոյս գործովն է յուզումի այս ախտագին ծարաւը, այս հիւանդ ջերմութիւնը: Մերմութիւնը կը բախէ դուռս:

(Շար. 3 եւ վերջը յաջորդով) ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՎԱՐԱՆԴ

ՉԱՀԵԼ ԼԵԳԵՆԴ

Ես մի հեռավոր, նուրբ լեգենդ գիտեմ,
Որը... չի եղել, դեռ չի կատարուել.
Դա ինձ համար մի կորուստեալ եղեմ,
Դա մի գտնուած քող է նրբաթել:

Դրա նախշը մի աղջիկ է փերի,
Աչերը՝ ածուխ, շրթները՝ ալ նուռ.
Նա ներշնչանքն է իմ նոր երգերի,
Որի ծոցերից ժայթքում է հիւր հուր:

Ես մի հեռավոր, նուրբ աղջիկ գիտեմ,
Որը եկել է, երազս այրել.
Նա ինձ համար մի գտնուած եղեմ,
Նա հապա՛ր տարուայ լեգենդ է ջահել...

.....

Աչերն են ածուխ, շրթները՝ ալ նուռ,
Երազս է այրել...
Քունս չի տանում.
Քունս
չի՛ տանում...

14/1/98



ԻՐԻԿՆԱՊԱՀ

Նարինջ արեւ էր: Նարինջ երեկոյ:
 Նարնջագոյն էր շապիկդ բուրեան:
 Քո տերեւագոյն հայեացքի ներքոյ
 Տուայտում էր լուռ հատորը՝ «Դուրեան»:

Դէմի պատշգամբում թրքուհին թաքուն
 Շէկ վարան էր տունէլ արեւի շողին:
 Կրծքիդ մէջ շարժուեց տենչանք մի անքուն,
 Շէկ շողը շաղուեց՝ փեղկերի քողին:

Մէջքից գրկեցի ուսերդ բուրեան,
 Ուռնացան յանկարծ կուրծքերդ յուրթի:
 Չեղբիդ դողդղաց հատորը՝ «Դուրեան»,
 «Թրքուհուն» շաղուեց շողի մի կաթիլ...

14-15/3/98



ՄԱԴՈՒՌՆԱԿԱՆ

Սէրս սուր, սո՛ւր լինի քո սրտին,
 ծիծերիդ ծիծառներն ծղրտան.
 Վերլիշումը վերատր քո վշտին
 Բերի բոց, բայց եւ՛ բոյժ-բալասան:

Ժամանի ժամանակը ժպիրի՛
 Հարապատ, հեռաւոր հանդիպման.
 Դերասան դու, իսկ ես՛ դէտ-դպիր,
 Արարենք արարներ սպ սրեան...

...Սէրս սուր, սո՛ւր լինի քո սրտին,
 Բերի բոց, բայց եւ՛ բոյժ-բալասան.
 Վերապրես վայելքներ վառ վարդի,
 Ծիծերիդ ծիծառներն ծկլթան...

17/3/98

&

ԳԱՐՈՒՆՆ ԱՅՍ ՏԱՐԻ

Գարունն այս տարի գարնանը եկաւ,
բայց... ուշացումով,
Զի այս գարունին ես սպասել եմ
տարինե՛ր առաջ.
Այն ժամանակ երբ
Երասիս ծառը չէր ծածկուել ձիւնով
Ու արձակում էր բողբոջներ կարմիր,
Տերեւներ կանաչ:

Գարունն այս տարի
Ամբանը եկաւ՝
Արեւ ու ձաճանչ.
Հասակ՝ պլացիկ, մորթ՝ պղնձագոյն,
Վարսեր՝ ցորենիասկ.
Չեղաւ պտուղը քաղել
Հասնելուց, բնկնելուց առաջ,
Դրա համար էլ
Թուաց երապում
Երազ մի անհաս:

Գարունն այս տարի աշնանը եկաւ՝
Պտուղն էր հասուն,
Սակայն մշուշը
Պատեց-քողարկեց ժամանակից շուտ.
Դրա համար էլ
Շաւիղը կորաւ շաղերում բազում,
դրա համար էլ
մնաց մի սօսափ,
մնաց մի բուրմունք,
մնաց մի շշուկ...

Գարունն այս տարի
Զմբանը եկաւ,
Զի վգացինք՝ տաք.
Տաք մի, որ վաղուց
չուէլ էր... Հիւսիս
Ուղով անձանաչ...

Գարունն այս տարի գարնանը եկա,
բայց անծանանակ,
Չի այս գարունին ես սպասել եմ
Տարին՝ի առաջ...

1/5/98

&

ՆՌԱՆ ՊԷՍ

Ի՞նչ անեմ երեկոն առանց քեզ,
Առանց քեզ ստուերներն ինչ անեմ,
Ինչ անեմ կարօտներն իմ հրկէզ,
Յազեցման գաւաթներս ո՞ր քանեմ:

Ի՞նչ անեմ բոսորը արեւի,
Ինչ անեմ կապոյտը սարսռուն,
Ինչ անեմ շշուկը տերեւի,
Ինչ անեմ լոյսերը մարմրուն...

Ի՞նչ անեմ անդորրը այս ձգուած,
Ի՞նչ անեմ պահերը այս ունայն,
Ի՞նչ անեմ հոգու հետ իմ չքուած,
Ի՞նչ անեմ թախիծս անսահման...

Առանց քեզ երեկոն ինչ անեմ,
Ո՞նց լեցնեմ սին պարկերն օրերի.
Մտում է նոսն պէս ինձ քանեմ,
Նոր ներկեմ հին պատկերն օրերի...

9/9/97



Միրոյ ցաւից խնած գինու կաթիլը թելին՝ կրակ է.
Միրոյ ցաւից անձնասպանի արեան գին է — դանակ է.
Միրոյ ցաւից անյագ լացի արտասուք է, մէկ է դա,
Իսկ թէ հասաւ գրչածայրին՝ ա՛յ թանաք է, քառեա՛կ է...

27/9/97

ԴՈՒ ԵՍ...

Քառսում՝ մղձաւանջում
Մի բուռ ներդաշնակութիւն՝ դու ես,
Խաւարում՝ մեծ մթնում,
Մի բուռ լոյսի գոյն՝ դու ես.
Դու ես անքնութեան բոյն՝ գիշերներում այս դժգոյն,
Ու տածանքում այս շիկաուն մի բուռ քաղցր քուն՝ դո՛ւ ես...

12/11/97
Թեհրան

ՎԱՐԱՆԳ

ԿԱՐՄԻՐ ԹԵԼԸ

ՀԵՂԻՆԱԿ
ՀԱՆՐԻ ՏԱՆՔԵՐ
ՊԱՏՇԱՃԵՑՈՒՄ
ՓՕԼ ՊԷՆԹԵՆ

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

*(Յետմիջօրէ, քանի մը օր ետք:
Ամալի նստած է իր գաւկին գրասենեակի
մէջ):*

ՏՈՒՑԻ.— Մայր, երթամք: Եթէ հիւանդ մը ներկայանա՛ր...
ԱՄԱԼԻ.— Ժամ մըն է, որ հոս եմք: Այդ միջոցին տեսա՞ր յաճա-
խորդ մը:
ՏՈՒՑԻ.— Հիւանդներու բնութիւնը կը սկսի տասը վայրկեա-
նէն:
ԱՄԱԼԻ.— Ուրեմն մարդիկ միայն բնութեան ժամերո՞ւմ կը
հիւանդանան: Երթամք: Ոչ ոք եկաւ: Ոչ մէկ ստիպո-
ղութիւն:

(Քաթի ներս կը մտնէ):

ՔԱԹԻ.— Ահաւասիկ արկիւնը:
ԱՄԱԼԻ.— Օդ կը պակսի հոս: Հեղձուցիչ է: Բաց պատուհանը,
Տոլֆի՛:
ՏՈՒՑԻ.— Մա՛յր...
ԱՄԱԼԻ.— Բա՛ց պատուհանը:

(Տոլֆի կը հնազանդի):

ՄԱՐԹԱ *(կը մտնէ դուրսի դուռնէն)*.— Բարեւ, Քաթի:
ՔԱԹԻ.— Տիկին:

(Քաթի նշան մը կ'ընէ՝ իմացնելու համար Մարթային այն՝ որուն կը սպասէ գրասենեակին մէջ):

ՄԱՐԹԱ (կը հասկնայ, կը յանձնէ ծրարը եւ պայուսակը Քաթիին)։— Այո, կը տեսնեմ: Ենթահակալութիւն, Քաթի: (կը հանէ գլխարկը եւ կ'երթայ դէպի գրասենեակը, բայց հոն հասնելու վայրկեանին՝ կը դառնայ եւ կը նշմարէ Քաթիին անշարժ, որ կը նայի իրեն, ձեռքերը բռնաւորուած ծրարներով): Գնա՛ դէպի խոհանոցը: (Քաթի դուրս կ'ելլէ Մարթա կը մտնէ գրասենեակ): Բարեւ, մայր, ի՞նչ կայ:

ՏՈՒՑԻ—Միշտ Տոբոբ Ետեմփիլը:

ԱՄԱԼԻ—Տալփի:

ՄԱՐԹԱ—Նորէն ի՞նչ ըսաւ Ետեմփիլը:

ԱՄԱԼԻ—Երբ ատիկա ինծի յայտնեցիմ, չուզեցի հաւատալ: Բայց երբ ինք կը հաստատէ մոյմը, կասկած չի մնար այլեւս: Կը թուէր, թէ ատիկա երբեք չէր կրնար պատահիլ:

ՄԱՐԹԱ—Բայց ի՞նչը:

ԱՄԱԼԻ—Այդ տարի, հիւանդանոցիմ մէջ երբեք հրեայ մը մնալուն պաշտօնով մերթիմ բժիշկ պիտի չնշանակուի եւ, ըստ Ետեմփիլի, Սիկմընտի յանցանքով:

ՄԱՐԹԱ—Կա՞պը այդ որոշումիմ:

ԱՄԱԼԻ—Փոխադարձ վրիժառութիւն:

ՄԱՐԹԱ—Ինչո՞ւ:

ԱՄԱԼԻ—Էլիզապէթ վոն Րիթթըր... Վիեմնայի բժիշկներէն ոչ ոք կրցաւ բուժել զիմք... եւ ահաւասիկ որ Սիկմընտ կը յաւակնի, թէ ինք պիտի կարենայ: Հասկնալի է, որ միւսները գայրացած են: Միմըր՝ առաջինը, բնականաբար:

ՄԱՐԹԱ—Ի՞նչ կ'ուզեն ընել իրեն:

ԱՄԱԼԻ—Պիտի չուզէի ինք վախցնել, Մարթա, բայց խնդիրը շատ, շատ լուրջ է:

ՏՈՒՑԻ—Մայր, դուն ամէն ինչ կը չափազանցես:

ԱՄԱԼԻ—Իսկապէ՞ս: Սիկմընտ խօսք տուած է մեզի, այո՞ կամ ոչ: Ես այլեւս մտնալ ջղագարութիւններով պիտի չտարուիմ: (Մարթային): Ըսա՞ւ արդեօք:

ՄԱՐԹԱ—Իրատեմք ունի կարծիք փոխելու:

ԱՄԱԼԻ (ուղիղ Մարթային կողմը կ'ուղղուի)։— Դուն կը պաշտպանես զիմք, եւ ատիկա հասկնալի է: Բայց իրեն օգնած չես ըլլար, երբ մոյմը կ'ընես, երբ յանցաւոր է: Այո, գիտեմ: Ես ժագոպիմ հետ մոյմը ըրի: Եւ ծածուկ պահեցի բոլոր վախերս՝ իրեն ջաշութիւն ձերշնչելու համար...: Դէ լաւ, պարտաւոր էի աւելի կարծր ըլլալ:

- Ո՛չ ինձի համար, որովհետև կը սիրէի զինք:
- ՄԱԴԹԱ.—Մայր, ոչինչ կը պահանջես ինձի համար: Խնդրոյ առարկան ես չեմ:
- ԱՄԱԼԻ (*կարծես ակնարկը իրեն ուղղուած կ'ըլլար*)—Ո՛չ, ի հարկէ, բայց գաւա՞կդ:
- ՏՈՒՖԻ.—Օհ, երկուէդ միշտ դուք ձեզի խնդիրներ կը յարուցաւէք:
- ԱՄԱԼԻ.—Դուք լո՛ւ, Տոյֆի: Պրտորը ինքն իսկ կ'ըսէ, որ...
- ՄԱԴԹԱ (*վիրաւորուած*)—Այո, գիտեմ... կ'ըսէ, որ դարմանումը վտանգաւոր է:
- ԱՄԱԼԻ.—Եւ Պրտորը իր բարեկամն է: Կրնա՞ք այլեւս երեւակայել, թէ ինչ կ'ըսեն տրիշները:
- ՄԱԴԹԱ.—Ժողովք կը կարծէ, որ Աիկմընտ շատ հեռուները կ'երթայ եւ բոլորովին միմակ:
- ԱՄԱԼԻ.—Ատիկա սարսափելի է:
- ՏՈՒՖԻ.—Քաջութիւն է մանուսնդ:
- ՄԱԴԹԱ (*կը խուսափի, բայց Ամալի ազատ չի ձգեր զինք*)—Ես ոչինչ կրնամ ըսել իրեն: Կը վախճում խանգարել զինք՝ իր կատարած փնտրութիւն մէջ: Երբեմն կը զգամ մոյմիսկ, որ ես գոյութիւն չունիմ իրեն համար: Ո՛չ ալ գաւակը գոյութիւն ունի:
- ՏՈՒՖԻ (*բողոքելով*)—Բայց... Ատիկա միշտ չէ, Մարթա:
- ՄԱԴԹԱ.—Ես կը զգամ ատիկա: Խորապէս: Ապա կը վախճում: Առանձին եմ: Իրմէ անջատուած: Մայր, բնականօ՞ն է կնոջ մը համար միշտ վախի մէջ ապրիլ: Ըսէք:
- ԱՄԱԼԻ (*Մարթան կ'առնէ բազուկներուն մէջ*)—Ո՛չ, աղջիկա: Կը հասկնամ: Եւ եթէ այնքան դժուար է քեզի համար, եկուք ապրիլ տունը, միմչեւ որ գաւակը աշխարհ գայ:
- ՏՈՒՖԻ.—Մայր:
- ԱՄԱԼԻ.—Ի՞նչ:
- ՏՈՒՖԻ.—Հօրս կողմէ խարուած ըլլալու պատրուակով՝ դուք զինք կը լրտեսես միմչեւ անգամ իր մտերիմ կեանքին մէջ: Հանգիստ ձգեմք զիրենք: Ձգէ որ ապրին:
- ԱՄԱԼԻ.—Կը լտե՞ս, թէ ոչ:
- ՏՈՒՖԻ.—Ձգէ, որ ապրին:

(*Ամալի կ'ապտակէ Տոյֆին*):

ԱՄԱԼԻ.—Ապրի՛լ, ապրի՛լ. դուք գիտե՞ս ինչ է ապրիլը: Կը կարծես, թէ ինչ կրնայ պատահիլ կեանքի մը մէջ... Այն գիշերը, երբ հարկ եղաւ հեռանալ Ֆրէյպերկի մեր տունէն, այդ վայրկեանէն սկսեալ ես էի, կից եւ

մայրը: Կը բռնէի Սիկմընտի ձեռքէն եւ դուն... հոս
(Ամալի ձեռքը կը դնէ որովայնին վրայ): Սակայն
 այնքան ծերացած չէի: Կանգնած էիմէ կայարանի
 քարափին: Մութի եւ մշուշի մէջ: Հայրիկը ինք կը
 կրէր երկու պզտիկ պայուսակ, ամբողջ ունեցուած-
 քը: Աչքերը չէր հեռացներ երկաթուղիէն: Ան սեւեռա-
 ռիւր կը դիտէր շոգեկառքը: Բայց այդպէս կ'ընէր պար-
 զապէս ինծի չնայելու համար: Մեր պզտիկ գործա-
 տեղին սնանկացած էր: Հարկ էր ամէն ինչ ձգել: Կը
 վախճայի: Յրէյպերկի թշուառութիւնը անլի պիտի
 մախրնորէի Վիեննայի անորոշութենէն, բայց կ'ըսէի
 իրաւով. «Պէտք չէ լալ: Ժագոպը առանց ատոր ալ շատ
 տաղտուկներ ունի»: Բայց չէի կրնար զսպել ինք-
 զինքս: Յանկարծ յանեցաւ շոգեկառքին սուրբը:
 Ապա երեսու լոյսը, իր հնչիւնը, որ կը հասներ: Այն
 ատեն փափաքը ունեցայ անոր տակ նետուելու: Ձեր
 երկուսիմ հետ: Սեղմեցի Սիկմընտիմ ձեռքը՝ անլի
 լաւ բռնելու համար զինք, եւ առաջացայ: Ապա զգացի
 իր պզտիկ ձեռքը բոլորովին պաղ՝ իմ ասիւս մէջ:
 Կարծես թէ կը կասկածէր: Շատ ուշ էր: Ձէի կրցած: Կը
 տեսնես, առանց ատոր մեռած պիտի ըլլայիր, նոյ-
 նիսկ աշխարհ գալէդ առաջ...: Հոչակը, ատիկա թե-
 րեւ շատ պիտի ըլլար պահանջել Սիկմընտի համար:
 Բայց անհետանալէ առաջ, եւ իրաւունք ունիմ զինք
 ապահովութեամ մէջ տեսնելու: Եւ գիտնալ, որ դուն,
 Մարթա եւ իմ թոռնիկս այսպիսի պահեր երբեք պիտի
 չունենայիք:

*(Ջանգաղը կը հնչէ: Յանկարծօրէն կը բացուի
 դուռը եւ Պրէօլը ներս կը մտնէ):*

Պրէօլը.— Սիկմընտը հո՞ս է:

(Մարթա կը բանայ գրասենեակին դուռը):

ՄԱՐԹԱ.— Ժողով...

Պրէօլը.— Ներողութիւն կը խնդրեմ բեզմէ, Մարթա: *(Ամալիին
 եւ Տոլֆիին դառնալով)*: Ո՞ր է Սիկմընտը:

ՄԱՐԹԱ.— Մէկ վայրկեանէն միւսը հոս կ'ըլլայ: Ի՞նչ կայ:

Պրէօլը.— Պէտք է, որ ասիկա կարգամ ձեզի: *(Իր ներքին գրպա-
 նէն կը հանէ նամակ մը)*: Շատ կը կասկածէր, որ
 ասիկա պիտի պատահէր, բայց ոչ այսքան արագ:
 Մտիկ ըրէք: Միմեքքիմ կողմէ է: *(Կը գտնէ իր*

փնտռած հատուածը: «...Դարմանումի եղանակը, գործեր պաշտօնակիցը կը կիրարկէ Օրիորդ վոն Րիթթերի համար, կրնայ խստօրէն դատապարտուի Ակադեմիային կողմէ՝ իբրև հակառակ արարք մը Օրէնքի տրամադրութիւններուն...»: Ան էիբը խոթած է գործի մը մէջ, որ կը պատկանի Միւնխիմ Եւ հիմա Միւնխիմ բռնած է իմ օտիւնը եւ կ'ըսէ ինծի. «Հրեայ, ուշադրութիւն, հսկէ՛ք: Երեսներու վրայ»:

- ԱՄԱԼԻ.— Ճիշդ ու միշտ այն՝ որ ըսաւ ինծի Շոնֆիլտը:
- ՏՈԼՏԻ.— Միշտ այդ Շոնֆիլտը:
- ԱՄԱԼԻ.— Կը տեսնե՞ս: Ես պետք չունի իմ գիմքս պաշտպանելու:
- ՖՐԷՅԵՍ (մտած է գրասենեակ՝ փայլուն տրամադրութեամբ մը խօսելով).— Երբ մարդ իմ գիմք կը պաշտպանէ՝ կը նշանակէ, որ ամբաստանուած է: Բարեւ, ժողով:

(Պրէզորտ անոր կ'երկարէ նամակը: Ֆրէյես կը կարդայ):

- ՊՐԷՅԵՍ.— Առ, կարդա՛: Չեմ ուզեր, որ Օրէնքի տրամադրութիւնները խախտած ըլլալու յանցանքով ամբաստանուի մեզմէ մէկը:
- ՖՐԷՅԵՍ.— Ժողով, ինչի հետ խօսելու հանդէմ աւելի բան մը պիտի չուզէի, բայց հիւանդի մը կը սպասեմ...
- ՊՐԷՅԵՍ (ընդմիջելով).— Դիտե՛ք ի՞նչ կ'ըսեմ. կ'ըսեմ. «Այդ Եւֆիմ Ֆրէյեսը կախարդութիւններ կը կատարէ՝ խնամելու համար կի՞ն մը, գործ մեծն Մայնրեթ չկրցաւ բուժել»:
- ՖՐԷՅԵՍ.— «Կախարդանք»...
- ՊՐԷՅԵՍ.— Այո: Այդպէս կ'ըսեմ:
- ԱՄԱԼԻ.— Եւ գէշ չէր ըլլար, եթէ մտիկ ընէիր, Սիկմընտ:
- ՖՐԷՅԵՍ.— Մայր, ինչ սխալ կը կայանայ անոր մէջ, որ ծնած ես Հապապուրկներու մախապաշարումներով, մինչ կ'ապրիս հրեաներու ապրած բոլոր սարսափներով համակուած:
- ԱՄԱԼԻ.— Սիկմընտ, աշխարհը անոնց կը պատկանի: Մեր ըրածը ուրիշ բան չէ, եթէ ոչ հոն աշխատիլ:
- ՖՐԷՅԵՍ.— Ժամանակը եկած չէ՞ մարդկային մտքին մէջ փնտռելու ատելութեան բիւրեղային պատճառները, փոխանակ պատերազմ տակէն պահուելով իրենց, յուսալով, որ չենք բարկոծուիր:
- ԱՄԱԼԻ.— Այդպէս է: Այժմ պիտի սկսի ատելութեան դարմանումը հետապնդելու գործը: Նոյնիսկ Աստուած չյաջողեցաւ հոդ: Բայց ատիկա չի վատեցնիր իմ գաւազը: (Ֆրէյես կը դառնայ Մարթային կողմը): Տունդ լայնօրէն բաց է դիմացդ, Մարթա: Եկուր, Տոլֆի:

(Ամալի դուրս կ'ելլէ):

ՏՈՒՆԻ (կիսածայն, համբուրելով եղբայրը)—Ես քեզի կը հա-
տատմ, Սիկմընա...

(Դուրս կ'ելլէ):

ՖՐԷՕՅՏ—Ի՞նչ ըսել կ'ուզէ իմ «տունս լայնօրէն բաց է դիմացդ»
ըսելով:

ՄԱՐԹԱ—Յզի կիմերուն համար միշտ կ'ըսեն՝ «Պէտք է ուտել
երկու հոգիի համար»: Դէ լաւ, հիմա պէտք է ես
վախճամ երկու հոգիի համար:

ՖՐԷՕՅՏ—Մարթա...

(Բայց Մարթա արդէն մեկնած է: Ֆրէօյստ կը փոր-
ձէ Հետեւիլ անոր, սակայն Պրէօրը կը կեցնէ զինք):

ՊՐԷՕՐ—Զիս մտիկ ըրէ. եթէ ըսնմ հիպնոզը կախարդամբ է,
ապա ուրեմն ի՞նչ պիտի ըսնմ, երբ դուն փորձուիս
պարոնուի վոն Րիթթըրը խեղճացնել: «Մարդուս
հոգին հեռուոր երկիր մըն է, ուր ո՛չ կարելի է հասնիլ
եւ ոչ ալ հետագօտել զայն»: Ասիկա ճիշդ էր Հերֆիւ-
լէսի ժամանակ: Ու ճիշդ է հիմա: Պէտք չէ հոգիին
դաշին: Ասիկա կայրի բժշկութիւնն է:

ՖՐԷՕՅՏ (յամառ)—Վոն Րիթթըրի համար ուրիշ ընկիւն չէ
մնացած ինծի:

ՊՐԷՕՐ—Դէ լաւ, սսիկա առաջին անգամը չէ, որ ոչինչ կրնամք
ընել:

ՖՐԷՕՅՏ—Այո՛: Բու հիւանդդ բուժուեցաւ: Ճիշդ է, որ կարն
ժամանակի մը համար, բայց բուժուեցաւ:

ՊՐԷՕՐ—Ոչ ինչ: Ամէն պարագայի, մախընտրելի է անդամա-
լոյծ մը, քան կատաղի խեղճ մը: Կրնամ ապահովցնել
քեզ:

ՖՐԷՕՅՏ—Եթէ այդպէս շարունակես, պիտի ելլես ըսես ինծի, որ
մախընտրելի է հիւանդ ըլլալ, քան առողջ:

ՊՐԷՕՐ—Դուն երբեք տեսած չես վախով, խղճախայթով, մտա-
յիմ չարչարանով ահաբեկուած կիմ մը: Այլապէս,
այն աստիճան անգիտակից պիտի չըլլայիր... Եւ հի-
մա, իմ հիւանդս, կը յաջողէի հիպնոթիզէ ընել: Միւնչ-
դեռ դուն կ'ընես այնպէս, որ զինք գործողութեան
պիտի ենթարկես առանց քմրեցուցիչի: Ի՞նչ պիտի
պատահի, երբ յանկարծ ան ինքզինք դէմ-յանդիման

պիտի գտնէ անոր, գոր այնքան կը ճգնէր պահել: Երկվայրկեանի մը մէջ պիտի խախտէր անոր մտքին հաւասարակշռութիւնը: Ուրե՞մն: Ի՞նչ պիտի ընես այն ատեն: Դուն դարձեա՞լ պիտի կարես: Պիտի յայտարարես, որ գործողութիւնը աւարտա՞ծ է: Սիկմընտ, ատիկա անոնի վիրաբուժութիւն մըն է: Առանց ճշդրակի: Առանց քմբեցուցիչի: Առանց մախրմթացի: Առանց փորձառութեան...: Անծանօթ աշխարհ մը:

ՅՐԷՕՅՏ—Առաջին տարուան դասագիրքին մէջ գրուած է. «Հիւանդը, որ ամէն կողմ զգացուած ցաւերուն դեմ կը քողոքէ, ոչ մէկ ցաւ ունի»: Դուն, ժողով, դուն ամէն բանի մասին կը կարծես իրաւունք ունենալ. «Այս մի ընէ՛ք, պիտի մեղցնէ՛ք հրեաները»...: Ամէն ինչ կ'ամփոփուի. «Ա՛յ ընէ՛ք այդ»ով: Ժողով, ինչու համար ամէն ինչէ կը վախճաս:

ՊՐԷՕՐԸ—Ես այլևս երիտասարդական անեքեք փաշտփումներ չունիմ: Տէր Աստուած, մայէ ինծի: Ես խորհրդանշանն եմ վիճմանայի բժիշկին, որ յաջողած է: Բայց ես սկսայ իրբեւ հրեայ ու ազգատ: Լեզուս կրծած եմ, երբ տեսած եմ ուրիշները, որ եիւանդանոցին մէջ առջեւէս կ'անցնէին: Երգում ըրի չտկարանալ. ունէի ամուր գլուխ մը: Նաեւ ճկունութիւն: Եւ, ըստ երեսօթիմ, մաեւ հմայք: Բժիշկը, որուն կը դիմէին կիները, աւելի այսինչը եղած ըլլալուն համար էր եւ ոչ թէ գիտցածին: Լուրջ բժիշկի մը համար ոչ շատ ընդունելի համարում մը: Բայց հրեայ մը պարտաւոր է անցնիլ գտած դուռնէն: Ես կուլ տուի իմ հպարտութիւնս, աշխատեցայ ծանրօրէն: Հիմա յարգանք կը վայելեմ, ապահովութիւն, հանգստաւէտ կեանք: Կը սիրեմ, որ մարդիկ հրաւիրեն զիս վիճմանայի լաւագոյն տուները: Շահած եմ այդ վարկը: Եւ անհաւաստի, որ դուն կը հասնիս՝ պոռալով—«Արթնցնենք զիրենք: Պայթեցնենք աշխարհը»: Դէ լաւ, ոչ իմ աշխարհս, կարելի է: Մի դպար անոր:

ՅՐԷՕՅՏ—Դուն կը վախճաս, այնպէս չէ՞: Դուն կը վախճաս գայթակղութենէն: Եւ եթէ իմանամ, որ այդ առջիկը սիրահարա՞ծ էր քեզի: Ո՞ւր էր ճիւղը:

ՊՐԷՕՐԸ (չատ ցած եղանակով մը)—Եւ... եթէ գիտնային մաեւ, որ Պրէօրը սիրահարած է իր եիւանդին: Կը կուսեն՞ս հետեւանքը: Լաւ, ատիկա ճիւղն էր: Քաջալերել իր սէրը, վախճալ եւ ազատել զիս: Այսօր ես հարցումը կը դնեմ. ինչպէ՞ս ատիկա պատահեցաւ ինծի: Որովհե-

տեղ պէտք ունէր ինծի: Որովհետեւ ինծի կը հաւատացնէր իմ կախարդական ուժիս...: Ես յամախ հարց տուած եմ եւ ինծի, թէ ի՞նչ պիտի ըսէր առաջին մարդը, որուն պատմած պիտի ըլլայի ասիկա:

ՖՐԷՅՏ — Միայն այդ: Անձնատէր վախ մը պէտք չէ խափամէ այդքան կարեւոր գիտի մը ճամբան:

ՊՐԷՕԸՐ — Կը ցաւիմ, Սիկմընտ:

ՖՐԷՅՏ — Ինչ որ պիտի ընեմ՝ մտքիմ մէջ գործողութիւն ընելու պէտք քան մըն է, որ պէտք պիտի ունենայի քեզի:

ՊՐԷՕԸՐ — Ոչ, կը ցաւիմ: Ես պիտի չվտանգէի ո՛չ դիրքս, ոչ ալ ապահովութիւնս:

ՖՐԷՅՏ (ազնուօրէն) — Մտիկ ըրէ՛ք զինք: Քաղաքակրթութիւնները կը ծնին ու կը մեռնին: Թանգարանները լեցուն են անոնց անբրակներով: Եւ մարդ կը հաւատայ ապահովութեան: Բայց ատիկա ցնորք մըն է, ցնորք մը:

(Չանգը: Ֆրէյտս կ'երթայ բանալու դուռը: Էլիզապէթն է՝ իր անթացուպերով, նաեւ առարկայով մը, որ կը յորդի իր պայուսակէն: Ֆրէյտս ներս կ'առնէ զայն):

ՖՐԷՅՏ — Բարեւ, Էլիզապէթ:

ԷԼԻԶԱՊԷԹ — Բարեւ:

ՊՐԷՕԸՐ — Օրիորդ...

(Նրբ Էլիզապէթ կը մտնէ՝ Պրէյտր եւ Ֆրէյտս նայուածքներ կը փոխանակեն: Ֆրէյտս կ'երկարէ ձեռքը: Պրէյտր, ամօթահար, վարանելով ձեռքը կ'առնէ: Ֆրէյտս կը հետեւի Էլիզապէթին՝ դէպի սենեակ):

ԷԼԻԶԱՊԷԹ — Հրաշալի օդ մըն է:

ՖՐԷՅՏ — Էլիզապէթ, կը հարցնեմ, որ եթէ (Էլիզապէթ կը նստի եւ Ֆրէյտս անոր թուղթի մէջ փաթաթուած առարկայ մը ցոյց տալով)՝ ի՞նչ է այդ:

ԷԼԻԶԱՊԷԹ — Բացէ՛ք ու կը տեսնէք:

ՖՐԷՅՏ (կը տեսնէ առարկան) — Ա՛հ, ուրիշ ժամիւս մը:

ԷԼԻԶԱՊԷԹ — Ոչ: Ժամիւսը: Բնատիպը: Սիրեցի՞ք:

ՖՐԷՅՏ — Տարօրինակ: Ատոր համար պէտք է պրպտած ըլլաս վիեննայի հնավանդութիւնները:

ԷԼԻԶԱՊԷԹ — Վիեննայէն չէ: Յայտնաբերուած է Լոնտոնի մէջ:

ՖՐԷՅՏ — Եւ ատոր համար այդքան տաղտուկներու ենթարկուած ես:

ԷԼԻԶԱՊԷԹ — Գործի լծեցի Քարթներսերս քաղաքի բոլոր մաս-

Ուզեցանք: Եւ երէկ, ժամիւր արդէն մօտս էր: Պիտի պահէ՞ք, չէ՞:

ՖրէՕՅՏ — Ի՞նչ կ'ըսես, էլիզապէթ:

Էլիզապէթ (աշխուժութեամբ) — Անցեալ օր զիս կիւղ կոչեցիք:

ՖրէՕՅՏ — Լիւղի... Այս օրէնքը կը յուզէ զիս... առանձին ուժգնութեամբ մը: (Յոյց կու տայ ժանիւր): Այլ զիս կը դնէ մեղացուցիչ կացութեան մը մէջ... Դժուար օր մը ունեցայ: Ատոր համար պիտի մեղանայի՞ր ինձմէ, եթէ միտը յետագէի յաջորդ օրուան:

Էլիզապէթ (պատրանաթափ կ'ըլլայ, բայց ճիգ կ'ընէ պահել իր գգացումը) — Բայց ոչ: Եթէ յոգնած է՞ք... կամ եթէ չէ՞ք ուզեր զիս կրկին տեսնել:

ՖրէՕՅՏ — Էլիզապէթ...:

Էլիզապէթ — Կը մոռնա՞ք, որ բժիշկները իրենք եւս ունին իրենց մեղութիւնները... Բայց, վաղը...:

ՖրէՕՅՏ — Վաղը... այո: Շնորհակալ եմ:

(Ոտքի ելլելու համար՝ էլիզապէթ կ'առնէ անթացուպերը: Բայց հակառակ ի գործ դրած ճիգին, տառաջիտէն չի կրնար շարժիլ: Կը բռնուի դողէ մը, լարուածութենէ ու վախէ):

Էլիզապէթ — Տո՛ւր, չեմ կրնար շարժիլ:

ՖրէՕՅՏ — Դարձեալ փորձէ:

Էլիզապէթ — Ձեմ կրնար:

ՖրէՕՅՏ (վար կը դնէ ժանիւրը ու կը ծոխ՝ մատով քննելու համար էլիզապէթի սրունքները) — Այս տեղը զգայալ է:

Էլիզապէթ — Այո:

ՖրէՕՅՏ — Եւ դուք չե՞ս յաջողիք շարժել սրունքներդ:

Էլիզապէթ — Ձեմ կրնար: Ձեմ կրնար: (Յուսահատօրէն կը շարժէ գլուխը): Ահաւասիկ: Հիմա կը սկսի շարժակամ թիկնաթռոյն գործը:

ՖրէՕՅՏ (ոտքի կ'եղէ, կը հեռանայ անկէ) — Լիւղի... վստահութիւն ունի՞ս վրաս: Պէտք է որ գիտնամ:

Էլիզապէթ (կը բարձրացնէ գլուխը, զարմացկոտ) — Վստահութիւն ձե՞ր վրայ:

ՖրէՕՅՏ — Վրաս վստահութիւն ունենալու պարագայիդ միայն կրնամ օգնել քեզի:

Էլիզապէթ — Ինչո՞ւ:

ՖրէՕՅՏ — Ձեմ կրնար բացատրել: Ձեմ կրնար խոստանալ, որ ատիկա պիտի յաջողի, ոչ ալ պնդել, որ անվտանգ է:

ամիկա: Բայց եթէ դուռ կարենաս օր մը ֆալել, այդ միակ յայտն է, որ կը մնայ քեզի:

Էլիզաւթի՞ն՝ Ի՞նչ է այդ մէկը:

ՅՐԷՕՅՏ — Նոր դարմանում մը:

Էլիզաւթի՞ն — Յաւ պիտի պատճառէ՞ ինծի:

ՅՐԷՕՅՏ — Ո՛չ այն, որ «ցաւ» կը կոչես այս վայրկեանիս:

Էլիզաւթի՞ն (*կը մտածէ, ապա*) — ...Սա վստահութիւն ունիմ վրադ, Սիկմընտ: Ի՞նչ որ ալ ընես:

ՅՐԷՕՅՏ — Ինչու ես, որ պիտի ընես:

Էլիզաւթի՞ն — Ի՞նչ:

ՅՐԷՕՅՏ — Պէտք է... յիշես, Լիէզլի...

Էլիզաւթի՞ն — Յիշե՞մ: Ի՞նչը:

ՅՐԷՕՅՏ — Պէտք է որ ինքզինքդ ազատագրես յիշատակներէդ... անոնցմէ, որոնք կը գտնուին էութեանդ խորքը:

Էլիզաւթի՞ն — Ո՞ր յիշատակներէս:

ՅՐԷՕՅՏ — Ամէնքէն: Միայն անգամ ամէնէն ցաւալիներէն... բոլոր գաղտնիքներէդ:

Էլիզաւթի՞ն — Գարշելի՞ յիշատակներէն: Ի՞նչ բանէ:

ՅՐԷՕՅՏ — Չեմ գիտեր: Չեմ կրնար ըսել քեզի, Լիէզլի: Բայց դու, դու ինքդ գիտես:

Էլիզաւթի՞ն (*կծկուած*) — Սա ոչինչ գիտեմ: Սա յիշատակներ չունիմ:

ՅՐԷՕՅՏ — Կը հաւատա՞ս, որ քեզի օգնելու համար միջոց մը կը փնտռեմ: Կը հաւատա՞ս ատոր (*էլիզաւթի՞ն գլխով «այո» կ'ընէ*) ուրեմն ըրէ այն՝ որ կը պահանջեմ քեզմէ, արձակէ մտածումներդ համդարտօրէն, թող պարպուիմ անոնք՝ ինչպէս կծիկի թել մը:

Էլիզաւթի՞ն — Պարպուի՞մ:

ՅՐԷՕՅՏ — Այո: (*էլիզաւթի՞ն, մոլորուն, շփոթաւար, ապա... յանկարծ կը դարձնէ գլուխը*): Էլիզաւթի՞ն: (*էլիզաւթի՞ն կը նայի ձրէօյտին, դարձացած, անակնկալի եկած, տարտամօրէն ամօթաւար*): Հոն, ամիջապէս... Երբ գլուխդ դարձուցիր... ի՞նչ բանի մասին կը մտածէիր:

Էլիզաւթի՞ն — Ո՛չ մէկ բանի:

ՅՐԷՕՅՏ — Ո՞րն էր այն մտածումը, որ պարտադրեց քեզի այս հակազդեցութիւնը:

Էլիզաւթի՞ն — Սա չհակազդեցի:

ՅՐԷՕՅՏ (*Հուժկու Հակազդեցութիւն մը գինք վերստին նոյն ճամբուն մէջ կը գնէ*) — Լաւ: Փորձէ վերյիշել բան մը:

Էլիզաւթի՞ն — Ի՞նչ:

ՅՐԷՕՅՏ — Որեւէ՞ բան:

Էլիզաւթի՞ն — Բայց ատիկա ծիծաղելի է:

ՖՐԵՕՅՏ.—Ոչ, Լիեզի, ծիծաղելի չէ:
ԷԼԻՋԱՊԵՏ.—Կ'ուզես որ յիշեմ որեւէ բան: Ատիկա որեւէ իմաստ
չունի:

(Էլիզապէթ կը դպչի աջ սրունքին):

ՖՐԵՕՅՏ (անմիջապէս կը նկատէ Էլիզապէթի արարքը).—Լի-
եզի, ի՞նչ բանի մասին կը մտածէիր ճիշդ հիմա, երբ
դպար արումքիդ:
ԷԼԻՋԱՊԵՏ.—Ոչ մէկ բանի:
ՖՐԵՕՅՏ.—Առաջ յստակ ցաւի մը: Ո՞չ ճշգրիտ պատկերի մը
մասին:
ԷԼԻՋԱՊԵՏ.—Ո՛չ:

(Էլիզապէթ սակայն կը քաշէ ձեռքը):

ՖՐԵՕՅՏ (խթանելու համար Էլիզապէթի մտածումն ու խօս-
քը).—Էլիզապէթ, առաջին օրը, երբ Ֆրեստերիքը մօտս
բերաւ քեզ... հարցուցի քեզի...
ԷԼԻՋԱՊԵՏ (խաղին մէջ բռնուած).—Ամէն ինչ բացատրեցի:
Ֆրեստերիք կը խօսէր «բոքի ցաւերու» մասին: Այն
ատեն ըսի. «Առաջին սուր ցաւը յայտնուեցաւ տարի
մը առաջ»: Ասոնք ճիշդ ու ճիշդ իմ բառերս են: Եւ
ատիկա ճիշդ է: Կը կարծէ՞ք, որ սա՛նտ խօսեցայ ձեզի:
ՖՐԵՕՅՏ.—Ոչ: Խնդիրը պարզապէս կը վերաբերի հետաքրքրա-
կան եակասութեան մը:
ԷԼԻՋԱՊԵՏ (չփոքարւալով).—Բայց անգամ մը բացատրեցի արդէն
քեզի: Իմաստ չունի կրկնութիւնը:
ՖՐԵՕՅՏ.—Ուրեմն, ըսէ ինծի, կա՞յ կապ մը երեք տարի առաջ
զգացած այդ բոքի ցաւին եւ տարի մը առաջ զգացած
աւելի ուժգին ցաւին միջեւ:
ԷԼԻՋԱՊԵՏ.—Թեքե՛ք ցաւը կը ծանրանայ: Բաւական է:
ՖՐԵՕՅՏ.—Աւելի քանական: Կը թուի ինծի, որ մեղմանայ ամիկա:
Կամ մոյմիսկ չճանայ:
ԷԼԻՋԱՊԵՏ.—Նոյնը չէ իմ պարագայիս:
ՖՐԵՕՅՏ.—Ճիշդ է:
ԷԼԻՋԱՊԵՏ (յանկարծ).—Ես գիտեմ, թէ ինչու կ'ընէ՞ք ստիկա:
Վրէժ առնելու համար:
ՖՐԵՕՅՏ.—Վրէժ առնելու համար:
ԷԼԻՋԱՊԵՏ.—Ի՞նչ չյաջողեցա՞ք դիւ երկարորէ՞ք ընել: Ելեկտրո-
րական ձեռք մեքենան լաւագոյնս չաշխատեցաւ: Բայց
ատոր համար չէն չպահեցի ձեզի հետ: Նոյնիսկ մուկը
բերի ձեզի: Ինչո՞ւ ուրեմն դուք կ'ուզէ՞ք, որ իմ ցա-
ւերս ծանրանան:
ՖՐԵՕՅՏ.—Բայց ոչ, Էլիզապէթ, այդ չէ, որ կ'ուզեմ:

(Էլիզապէթ կը դառնայ ետ: Ֆրէճօյտ ոտքի կ'ելլէ, կ'երթայ անոր հետև, կը ծայէ մատները, կը տանի քունքերուն՝ բոլորակի շարժումով մը: Նոյն ատեն ան կը բերէ գինք դիմացը, որպէսզի յատակ տեսնէ):

Էլիզապէթ.— Ինչո՞ւ այդպէս կ'ընես:

ՖրէճօՅՏ.— Օգնելու համար քեզի, որ կեդրոնամաս, Լիէզլ: Օգնելու համար, որ մտածումներդ փակուին:

Էլիզապէթ.— Բայց անոնք չեն փակուիր: Եւ նոյնիսկ եթէ փակուին, ոչ մէկ նշանակութիւն ունին:

ՖրէճօՅՏ.— Ես է, որ պիտի դատեմ:

Էլիզապէթ.— Այո: Բոլոր պարագաներում, ասիկա ոչ մէկ կապ ունի ձեր հետապնդած մպատակին հետ:

ՖրէճօՅՏ *(դարանակալ կը սպասէ, աննկատ կերպով)*.— Թե՛րեւս... Այնուամենայնիւ, ըսէ ինձի, ի՞նչ բանի մասին մտածեցիր:

Էլիզապէթ *(ինքն իրմէ դուրս)*.— Բայց ոչինչի... *(կը նստի)*: Ոչինչ, որ կապ ունենար մեր խօսակցութեան հետ: *(Երկար լռութիւն)*: Գիշերը... Գիշերը, ան կը պահանջէր իր դեղը...: «Լիէզլ»... Երբ այդպէս կը կանչէր, պէտք չէր սպասցնել զինք: Այն ատեն կ'ելլէի եւ կը վազէի բռակի, մինչեւ իր անկողնը: Գիշերը... սառնայի պէս ցուրտ: Կ'ատէի'... սալայատակին հետ այդ հպումը... Եւ գիշերը, օ՛հ...

ՖրէճօՅՏ.— Այո՞:

Էլիզապէթ.— Այս էր առաջին ցաւը:

ՖրէճօՅՏ.— Առաջին ցա՞ւը:

Էլիզապէթ.— Այո...

ՖրէճօՅՏ.— Ուրեմն, առաջին ցաւը կապ մը ունէր հորդ հետ:

Էլիզապէթ.— Երբեք... Սալայատակին հետ: Իմ բոլոր ուժովս կ'ատէի այդ գետինը:

ՖրէճօՅՏ.— Եւ այդ եղած է իմ առաջին ցաւը: *(Էլիզապէթ շարժում մը կ'ուրուագծէ)*: Եւ ա՞ջ սրունքիդ վրայ:

Էլիզապէթ *(կը դպչի աջ սրունքին)*.— Այո, միշտ հոս, աջ սրունքիս վրայ: Օ՛հ, կարծես նորէն կը յաջողիմ շարժել գայմ:

ՖրէճօՅՏ.— Շարունակէ: Կը խօսէիր հորդ մասին: Շարունակէ:

Էլիզապէթ.— Որքան կը սիրէի զինք...: Տեսնել զինք հոն...: Միշտ երկարած...: Եւ մտածել, որ պիտի մեռնէր...

ՖրէճօՅՏ.— Եւ այդ ամբողջ տարւոյն ընթացքին դուն իրմե՞ով գրադեցար:

Էլիզապէթ.— Հիւանդապահուելի մը պէս ծառայեցի իրեն...: Լոգցուցի զինք...: Կերակրեցի:

ՖրէճօՅՏ.— Այդ ամբողջ ժամանակին հարց տուի՞ր դուն քեզի, թէ

«Ինչու համար ատիկա իմ պարտականութիւնս պիտի ըլլայ: Ինչու համար մօրս պարտականութիւնը պիտի չըլլայ»:

ԷԼԻԶԱՊԵԹ.—Օ՛հ: Մայրս երբեք պիտի չկարենար նայնը ընել: ՅՐԷՕՅՏ.—Հիւսիսն էր:

ԷԼԻԶԱՊԵԹ.—Ո՛չ: Բայց չէր կրնար ինծի պէս վարուիլ: Հիւսուողութիւնը կը խորշեցնէր զինք: Եւ յետոյ, հայրս կ'ուզէր, որ ես ըլլայի իրեն սպասարկողը: Մերք կ'ըսէր. «Լիւէզլ, դուն երեշտակի ձեռքեր ունիս: Այնքան բեքիւ...»:

ՅՐԷՕՅՏ.—Եւ դո՛ւն: Ատիկա հանճո՞յք կը պատմաւոր քերի: ԷԼԻԶԱՊԵԹ.—Անշուշտ: Հայրս էր:

ՅՐԷՕՅՏ.—Հետեւաբար իրեն ընծայած ծառայութիւնդ քեզ երբեք... (կը փնտռէ բառը) չճանճարցուց:

ԷԼԻԶԱՊԵԹ.—Ընդհակառակը: Կը սիրէի այդ ծառայութիւնը: Այնքան՝ որ կը սիրէր իմ յանճարութիւնս: Ամէն առտու կը փաթէի իր սրունքերը: Կը հանգչեցնէի զանոնք ծունկերուս: Մեղմօրէն: Նախ մէկը...: Կը փաթաթէի կապը՝ առանց շատ սեղմելու, այդպէս պահելու համար, սրունքը՝ ինչպէս կ'ըսէր ըմբիշը, բայց առանց որ խանգարուի արեան շրջագալութիւնը: Ապա կ'անցընէի ապահով ասեղը: Յետոյ՝ կը հանգչեցնէի սրունքը, մեղմօրէն, առանց ցաւ պատճառելու իրեն: Կը ժպտէր ինծի: Ապա կարգը կու գար միւս սրունքին...: Կը տեղաւորէի ծունկերուս... յետոյ կը կապէի, առանց շատ սեղմելու...

(Հիզապէ՛թ իր սրունքին վրայ ցոյց կու տայ ճիշդ տեղը):

ՅՐԷՕՅՏ (կը շարունակէ հիզապէ՛թի տեղը).—Առանց շատ սեղմելու... օրը օրին... (Հիզապէ՛թ գլխով «այո» կ'ըսէ) Լիւէզլ, այդ ամբողջ ժամանակին երբեք չըսիր. «Պիտի ուզէի կանգ առնել: Միակ օր մը...»:

ԷԼԻԶԱՊԵԹ.—Ատիպաւած եմք սրտի ցաւ ունեցողներուն սրունքները փաթթել:

ՅՐԷՕՅՏ.—Բայց դուն ստիպուած չէիր սիրելու այդ գործը: ԷԼԻԶԱՊԵԹ.—Կը սիրէի ընել:

ՅՐԷՕՅՏ.—Անկեղծօրէ՛ն: ԷԼԻԶԱՊԵԹ.—Այո:

ՅՐԷՕՅՏ.—Այսքան գեղեցիկ աղջիկ մը: Նաեւ այնքան կենսախայտ: Դուն քեզի երբեք չըսիր. «Ես երիտասարդ եմ, կ'ուզեմ ապրիլ իմ կեանքը: Ո՛չ իբր»:

ԷԼԻԶԱՊԵԹ.—Երբե՛ք:

ՖՐԵՕՅՏ (կը շարունակէ) — Ձփափափեցար երբեք, որ ըսեմ.
«Կուգեմ դարպասեմ գիւ. տամիմ քարեկամներու
մօտ պարելու, սօմերու տամիմ»: Երբեք չըսի՞ր դու
Քեզի ստոմբ:

ԷԼԻՋԱՊԵՏ — Ո՛չ:

ՖՐԵՕՅՏ — Նոյմիսկ չմտածեցի՞ր այդ մասին: Նոյմիսկ չմտածե-
ցի՞ր. «Պիտի ուզէի ազատ ըլլալ»:

ԷԼԻՋԱՊԵՏ — Ո՛չ:

ՖՐԵՕՅՏ — «Հօրս մահէմ առաջ, պիտի չգիտնամ, քէ ինչ կը
նշանակէ ազատ ըլլալ... Պիտի ուզէի, որ մեռած
ըլլայ»:

ԷԼԻՋԱՊԵՏ (այդ յանկարծակի յայտնութենէն շանթահար՝ կը
լռէ, ապա՝ սարսափով կը հակազդէ) — Մեռած: Օ՛հ:
Ո՛չ: Օ՛հ: Ո՛չ...

(Վերջ Յրջ արարի)

ՓԱՆՈՍ ԵՆՐԱՆԵԱՆ

_____ ԴՈՒՆ _____

Դու՛ն կը ծայնես ինձմէ՛ն ներս,
սաղմոսն ինչպէ՛ս միածայն՝
վանականի շուրթերուն:

Դու՛ն կը մնաս ինձմէ՛ն ներս,
ինչպէ՛ս ծփանքը խունկին՝
կիրակմուտքի աղօթքին:

Դու՛ն կը դողաս ինձմէ՛ն ներս,
ինչպէ՛ս պատրոյզը մոմին՝
քինախնդիր քամիներու ափերուն...

_____ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՆ _____

Չեր անբնակ տան վերել,
ակօս-ակօս կղմինտրէ կտուրին՝
հարսի նման աղաւնիներ կը թառին:

Վանատան մը աղաւնաթեւ սանդղակին,
մենակեացի ոտնահետքերը նաշխած՝
կարծես հանգչող հրեշտակներ ըլլային:

Անոնց նինջին մէջ անափ,
եթէ յանկարծ արթննար այիք մը լուրթ քղանցքէդ,
կը փշրուէր ապակիի շուքն անգամ...



ԿԱԿԱՉԻ ՄԸ ՕՐԱԳՐԷՆ

I

Քամիներու

թէ՛ լարերուն վրայ ծաղկած՝
ես կակայն եմ յիշողութեան:

Եփրատ գետի ոլոր-մուր ափերուն,
աւազներէն, աստղերէն ա՛լ աւելի
շօշափելի գոյնը կարմիր ալիքի:

Ու համրացայ՝ հեզելէն
հոգեվարքի այբենարանն հայ մանուկներու:

Ու խլացայ՝ ունկնդրելէն Տէ՛ր ողորմեան,
տիեզերքի տարածքները ճանկրտող՝
անոնց անթեւ թռիչքէն:

Դ-ողս մնաց ամայքին մէջ,
իրար փնտռող տառապահար ափերուն...

II

Լուսադէմին տեսայ վանքը,
ուր Աստուծոյ ոտնածայնը
կ'արձագանգէր տակաւին...

Անոր մօտէն՝
կածանն՝ զգոյշ խունկի նման՝
օղակ-օղակ կը բարձրանար
իրիկնաթայր սարերն ի վեր:

Բոցակարմիր ամպերէն վեր,
հո՛ն՝ ուր հայեացքը հայդուկի
հազար շանթեր էր արձակեր՝

Տեսայ տղեկ մը կարիվէր,
որուն աղաւ աչքերուն մէջ,
արեւն այնքան հուր չէր տեսեր,
խաչն՝ այնքան փուշ, խաչեալը՝ վերք...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Պ. ՄԱՊԵԱՆ

**«ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ»Ի
ՈՒԻՍԱԿԱՆԸ**

- Գ -

*Ազգային ու քաղաքական իր վերիվայրումներուն պէս՝
«Ես իմ անուշ Հայաստանի»ն բախտաւոր չեղաւ նաեւ տպագրական բախտով:*

Մամուլին տակ յաճախ աղճատուեցաւ անոր առարկայական պատկերը:

Մեզի ծանօթ աղճատումները երեք տեսակ են:

Ոչ բժախնդիր մօտեցումը, որ ամէն պարագայի անմեղ չի կրնար նկատուիլ,

միտումնաւոր վերաբերումը,

եւ երկուութեան առկայութիւնը:

Հայաստանը իր «անուշ»ութենէն պարպող մարտնչող լիմարութեան բուռն շրջանին հակադրաբար, նշանաւոր բանաստեղծութիւնը արժանացաւ ջերմ ընդունելութեան մը եւ քսանական թուականներու կէսերուն արտասահմանի բոլոր թերթերը, անշուշտ մեզի մատչելի բոլոր թերթերը, մեկնաբանութեամբ թէ լուռ համարումով ներկայացուցին զայն իրենց ընթերցողներուն, ի շարս որոնց նաեւ 1927 տարեշրջանի Փարիզի «Երօշակ»ը իր Չէրչ համարի էջերուն, որուն առընթեր, Ս. Երկիրեան ստորագրող յօդուածագիր մը, հաստատելէ ետք, թէ «Այսօր Հայաստանում ամէնից աւելի ժողովրդակա-նութիւն վայելողը Եղիշէ Չարենցի ծանօթ բանաստեղծու-թիւնն է», իր յօդուածին մէջ կ'արտագրէ ամբողջութիւնը, որուն առաջին, հինգերորդ, վեցերորդ եւ ութերորդ տողերը կը տառապին խնամքի անըմբռնելի պակասէ մը:

*Ես իմ անուշ Հայաստանի արեւահար քարն եմ սիրում,
Սիրում եմ մեր երկինքը մութ, ջրերը ջիւղ, լինը լուսէ,
Արեւն ամրան ու ձմեռուայ վիշապաճայն քունը վսեմ,
Ու Հնամաշ քաղաքների հագարամեայ քարն եմ սիրում:*

*Սարսափելի է՝
 այս արևափայլ Բարերով քարկոծուած,
 մութով մթագնած,
 բուռով քուն մտած
 ու հնամաշով Հմայթափ դարձած այս պատկերը:
 Արդարեւ, բանաստեղծութեան մը չորս տողին մէջ, երբ
 հինգ բառ սխալ կը գրուի, դիւրին չէ այլեւս լրջութեամբ
 մօտենալ ո՛չ անոր խորհուրդին եւ ոչ ալ զայն արտագրողին
 լրջութեան, երբ սխալ գրուած նոյնիսկ մէկ բառը երբեմն
 տարիներով կը տանջէ մեզ, ինչպէս եղաւ նոյնինքն «Ըս իմ
 անուշ»ի առաջին տողի «քառ»ին առիթով:
 Բարերախոտարար, մեր բանասէրներուն ու քննադատնե-
 րուն ուշադրութիւնը չէ գրաւած «Իրօշակ»ի մէջ աղճատուած
 «Ըս իմ անուշ»ը, այլապէս «Բա՞ռ, թէ բար»ի օրինակով բաւա-
 կան մեծ թիւով առեղծուածներու առջեւ պիտի զգայինք մենք
 մեզ, շարունակ Հարցնելով ու միշտ անպատասխան մնալով՝
 «Արեւահա՞մ, թէ արեւահար»,
 «Բա՞ռ, թէ քար»,
 «Մո՞ւզ, թէ մութ»,
 «Բո՞ւք, թէ քուն»,
 «Հնամաշ»ի, թէ հնամաշ»:*



«Իրօշակ»էն ուղիղ կէս դար ետք, 1977ին, «Սովետական
 գրականութիւն» ամսագիրին մէջ Հայրենի անուանի քննա-
 դատ Հրանտ Թամրազեան ստորագրեց գեղեցիկ յօդուած մը,
 «Զարեմցի շեղումներից մէկը», ուր երկու-երեք էջի վրայ ան
 վերուծած է նաեւ «Ըս իմ անուշ Հայաստանի»ն:
 Աւելի ուշ, սպրդած վրէպին ակնարկող նշմարի մը մէջ
 դիտել տրուեցաւ, որ նշանաւոր բանաստեղծութեան պարա-
 գային թոյլ տրուած են սխալ ուղղագրուած ու տեղափոխուած
 բառեր, որոնք ուղիղ գծով կը խանգարէին անոր ըմբռնչուն-
 մը:
 «Սովետական գրականութիւն» ամսագրի տուեալ թիւին
 հրատարակութենէն հինգ տարի ետք, նոր պատմութիւն ու
 գեղեցիկ լուր.-
 Հինգ տարի ետք, Հրանտ Թամրազեան «Ողիշէ Զարեմց»
 անուն իր մենագրութեան մէջ մուծեց «Ըս իմ անուշ»ի մասին
 իր վերլուծումը եւ վերականգնեց «Սովետական գրականու-
 քիւն» ամսագիրին էջերուն անոր կործանած մասերը:

*
* *

1973ին «Երեւանի համալսարանի հրատարակչութիւնը» սկսաւ լոյս ընծայել «Զարեմցեան ընթերցումներ» անուն հատորներու շարք մը, ուր ընդհանրապէս հայ գրականութեան եւ մասնաւորապէս Չարենցի գրականութեան մօտիկ մտաւորականները մեծ բանաստեղծին մէկ կամ միւս կողմը ուսումնասիրելով ներկայացան ընթերցողին:

Շարքին հինգերորդ հատորը լոյս տեսաւ 1988ին, 332 էջ, իսկ վեցերորդը պատրաստութեան մէջ է եւ հաւանաբար շուտով հրատարակ կ'ելլէ:

«Զարեմցեան ընթերցումներ»ուն մէջ մէջբերուած բոլոր բանաստեղծութիւնները անթերի չեն մնացած եւ անթերի չէ պահուած նոյնիսկ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը ու, բոլորովին անբռնելի բան, խոցուած է նոյնիսկ ամէնէն տեսանելի պատկերը, Մայիս Ավդալբեկեանի զեկուցումին մէջ:

Իմ կարօտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկայ,
Նարեկացու, Գուչակի պէս լուսաբակ Յակատ չկայ,
Աշխարհ անցիր, Արագածի մեամ Յերմակ գագաթ չկայ,
Որպէս ամհաս փառքի Յամրայ,
ես իմ Մասիս սարն եմ սիրում...

Անհեթեթ է մտածել, որ Մայիս Ավդալբեկեան անծանօթ էր մէջբերուած քառեակի երրորդ տողի հարազատ «աշխարհազրոյթեան» Արարատին, եւ անգիտութեան հետեւանքով անոր տեղը Արագածը խոյսցուցած է երկինք:

Խմբագիր, կազմող ու սրբագրիչներն ալ կարելի չէ նոյն անգիտութեամբ մեղադրել:

Բազմիցս անոնք մօտեցած են «Ես իմ անուշ»ի իրականութեան ու խորհուրդին եւ յետին մանրամասնութեամբ գիտեն բանաստեղծութեան ամբողջութիւնը:

Ուրեմն ի՞նչ...
1979ին, երեւի դեռ նման բաներ կրնային պատահիլ աշխարհի այդ մասին մէջ:

*
* *

«Իրօջակ»ի, «Սովետական գրականութիւն» ամսագիրի թէ «Զարեմցեան ընթերցումներ»ուն էջերուն թոյլ տրուած

սխալները անուշադրութեան եւ ոչ-բժականդիր վերաբերումներու հետեւանք կրնայ նկատել ընթերցողը ու ըսել, որ բոլոր թերթերուն ու հրատարակութիւններուն մէջ նման անճաշ բաներ կը պատահին:

Ճիշդ է, բոլոր հրատարակութիւններուն մէջ կը սպրդին վրէպներ, բայց հարցը այն է, որ ոմանք բոլորին շարքին չեն պատկանիր, բոլորէն պէտք է անջատել «աղօթք դարձած» ներք ու առաւելագոյն խնամքով մը հաւատարիմ մնալ անոնց հեղինակներուն տառին ու ոգիին:

Այս վերջիններուն պարագային կարելի չէ որեւէ մեղմացուցիչ դէպք յանցանած գտնել, իսկ մեղքը կը դառնայ մահացու, երբ անիկա գործուած է կամ կը գործուի գիտակցաբար, քաղաքական ու կուսակցական ենթահողերու վրայ, ինչպէս կը թուի ըլլալ պարագան հետեւեալ փաստին, բանաստեղծ Վաղարշակ Նորենցի փորձառութեամբ ու գրիչով.

«1962 թուականին մի տան օր, ես սարակակամ աշխատանքի բերումով, եղայ Նրեւամի ութամեայ դպրոցներից մեկում: Դրեթէ քոլոր դասարաններում ես լսեցի լեզուի եւ գրականութեան դասերը: Ութերորդ դասարաններից մեկում ես ակամատես եղայ այսպիսի պատկերի: Աշակերտները անգիր սովորել էին Ս. Չարեանի հանրայայտ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը (նրանց դասն էր) եւ արտասանում էին շատ յաջող՝ գոհացնելով իրենց դասատուին եւ ուրախացնելով ման եիւրիս... Սակայն քոլոր արտասանողները անխտիր բանաստեղծութեան վերջին՝

«Ինչպէս անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում» տողի փոխարէն, կրկնում էին մախորդ տան վերջին տողը՝

«էլի ես որք ու արնավառ իմ Հայաստան-հարն եմ սիրում»:

«Իսկաներից յետոյ ես մրբանկատօրէն ուսուցչին «գլխի գցեցի», թէ աշակերտները... աղաւաղում էին բանաստեղծի գրական գոհարը եւ սասցի ա՛ր տողը:

«—Ոչ, աշակերտները չեն աղաւաղում, մրանք միշդ են արտասանում, այդպէս է տպուած դասագրքում:

«Ստուգեցին դասագիրքը: Սա... ընկայ «անյարմար» դրութեան մէջ: Դասագրքում բանաստեղծութիւնը տպուած էր այնպէս, ինչպէս արտասանում էին աշակերտները:

«—Մի՞թէ դուք, ինքներդ, չգիտէք այդ բանաստեղծութեան եզրափակիչ եռյակապ տողն այնպէս, ինչպէս մա կայ Չարեանի քոլոր ժողովածուներում,— հարցրի ես:

«—Ի՞նչ էք ասում, ինչպէ՞ս չգիտեմ, այդ քոլորը գիտեմ, բայց թէ... որ այդպէս է տպուած դասագրքում՝ ես ի՞նչ անեմ:

«Իպրոցը Երեւանի լաւ դպրոցներից էր. ուսուցչուհին՝ շատ համակրելի եւ գրասէր... նրա ամբողջ քերութիւնը արտայայտուեց այդ մի մախադասութեան մէջ»

«Որ այդպէս է տպուած դասագրքում՝ եւ ի՞նչ անեմ»:
«Այդ կաշկանդումը, դասագրքի մայմիսկ քացարձակ սխալին կառչած մնալը շատ տխուր երեւոյթ է եւ մայմպէս գալիս է յայտնի տխուր օրերից»:

«Ես չեմ կարող համոզուել, որ այդ դպրոցը, այդ ուսուցչուհին եւ այդ տխուր փաստը քացատիկ էին»:

«Զէ՞ որ այդ դասագիրքը տպագրուած էր ամբողջ 10 հազար տպաքանակով եւ ուղարկուած բոլոր դպրոցներին: Ոչ մի դպրոց, ոչ մի ուսուցիչ կա՛մ չէր Ոկատել եւ ուշադրութիւն դարձրել այդ արտառոց սխալին եւ տեղեկացրել յուսատրութեան միմիստութեանը, որ «պաշտօնապէս» ուղղէր սխալը, կամ եթէ Ոկատել էի՞մ՝ չէիմ համարել... վրիպում, չէ՞ որ «այդպէս է տպուած դասագրքում», իսկ դասագիրքը... թայմուդի մեման անսխալական է»:

«Ես այդ փաստով չեմ ուզում ստուեր մեռել մեր հազարաւոր ուսուցիչների վրայ, որոնք հոյակապ գործ են կատարում՝ մեր հայրենիքի համար դաստիարակելով հիանալի սերունդ, մատաղ սերնդին սովորեցնելով մեր հիաստանչ լեզուն, ուսուցանելով մեր հարուստ գրականութեան գանձերը»:

«Այս փաստով ես ուզեցի շեշտել, թէ մտավախութիւնը դեռ, որոշ դէպքերում, որքան խորն է մանկավարժների մէջ եւ դասագրքերով կաշկանդուելը մինչեւ ո՛ր կարող է հասցնել, մանաւանդ եթէ այդ դասագիրքը՝ ինքն էլ գուրկ է շատ արժանիքներից» (*«Սովետական գրականութիւն», 1964, թիւ 2, էջ 132*):

Խնդիրը հոս չվերջացաւ:
Թոյլ տրուած յապաւումը լուռ կամ բարձրադասակ վերականգնելու համարձակութենէն զուրկ ուսուցիչ-ուսուցչուհիներու շարքին գտնուեցան նաեւ «Ինչպէս անհաս փառքի մամբայ»ին բնաջնջումը անկարելոր համարող անձեր, մէկը՝ մանկավարժական գիտութիւններու թեկնածու Ա. Տէր-Գրիգորեան, որ «Սովետական մանկավարժ» ամսագրի էջերուն, ի միջի այլոց, անդրադարձաւ Վաղարշակ Նորենցի բողոքին, գրելով:

«Մեր յարգելի բանաստեղծ Վաղարշակ Նորենցը արդէն երկրորդ անգամ գրում է դասագրքերից մէկում պատահաբար տեղ գտած տպագրական մի սխալի մասին, որը երբեք այդ ուշադրութեանը չ'արժեր» (1962, թիւ 4):

Սորհրդային աշխարհի տարածքին երկար տարիներու վրայ տիրապետած գրական թէ՛ մանկավարժական բարբերուն քիչ թէ՛ շատ ծանօթ մարդիկ գժուար պիտի ըմբռնեն, որ տուեալ դասագիրքէն ինչորոյ առարկայ տողին արտաքսումը

պատահարար տեղի ունեցած էր: Եթէ պատահականութեան հետեւանք եղած ըլլար անիկա, ուսուցիչներէն մէկը կամ միւսը կը կուահէր «պատահարը» եւ սրբազրութեան համար կը գիմէր առ որ անկ է: Երբ 10 հազար դասագիրքերու հարիւրաւոր ուսուցիչներէն ունէ՛ մէկը ձայն բարձրացուցած չէ, կը նշանակէ, թէ անոնց «ձայնայարերը» քաշուած են եւ ոչ թէ կուահելու իրենց ընդունակութիւնները բժացած:

Վաղարշակ Նորենց անտարբեր չմնաց նշանաւոր բանաստեղծութենէն չքացուած տողին հանդէպ ցոյց տուած Ա. Տէր-Պրիգորեանի անտարբերութեան գիմաց:

Վեց ամիս ետք, նոյն «Սովետական գրականութիւն» ամսագիրի էջերուն, «Ամյացոյ պաշտպանութեամ փորձ» խորագիրին տակ, տարբեր խնդիրներու կարգին, բանաստեղծը անդրադարձաւ նաեւ մանկավարժական գիտութիւններու թեկնածու Ա. Տէր-Պրիգորեանի կշիռքին մէջ ուշադրութենէ դուրս համարուած «պատահար»ին:

«Յարգելի յօդուածագիրը չի նշում, թէ ի՞նչ բնօրինակ «տպագրական սխալի» մասին է եղել խօսքը եւ ի՞նչ առնչութեամբ «յարգելի բանաստեղծը» անդրադարձել է դրան: Իսկապէս որպիսի՞ բծախնդրութիւն եւ թեթեամտութիւն՝ երկու անգամ գրել մի դասագրքում «պատահարար տեղ գտած տպագրական մի սխալի մասին» կա՛մ «յարգելի բանաստեղծը» քաւական լուրջ չի եղել, կա՛մ յարգելի յօդուածագիրը: Տեսնե՛մք:

«Խօսքը Եղիշէ Զարեմցի, ամէն մի հայ մարդու յայտնի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութեամ աղաւաղման եւ այդ աղաւաղուած «տարբերակի» ուսուցման մասին է: Յօդուածագիրն, ըստ երեւոյթիմ, չի պատկերացում, թէ ինչ դեր ունի մի ամբողջ տողը բանաստեղծութեամ մէջ, այն էլ այնպիսի բանականութեամբ բանաստեղծութեամ, որպիսին է չարեմցեան գոհարը, եւ այն էլ այնպիսի տող, որպիսին է «Ինչպէս անհաս փառքի ճամբայ, ես իմ Մասիս սարն եմ սիրում»: տող, որով մեծ բանաստեղծն աւարտել է իր գրական երաշխիքը: Այդ ամբողջ տողը բանաստեղծութիւնից դուրս գցելը, ըստ յօդուածագրի, այնպիսի սխալ է, «Որը երբեք այդ ուշադրութեամբ չ'արժեք»: Բանաստեղծութեամ որպիսի՞ նուրբ ըմբռնում: Դժբախտարար այդ ըմբռնումով էլ մեր մանկավարժներից ոմանք մօտեմում են գրականութեամբ: Ըստ երեւոյթիմ, այդպիսի ըմբռնման հետեւանք է այն, որ այդ «ուշադրութեամ չարժող» այլանդակութեամ վրայ մանկավարժներից... ոչ ոք ուշադրութիւն չի դարձրել եւ այդպէս էլ սովորեցրել են մեր հագարաւոր երեխաներին մի ամբողջ ուսումնական տարուայ ընթացքում: Այդ «անուշադրութեամ», անտարբերութեամ, մտավախութեամ, տպագրական տառիմ ստրկօրէմ կառչած մնալու մասին է եղել

մեր խօսքը: Դժբախտութիւնը տպագրական սխալը չէ, այլ այն սխալը չնկատելն է, «ուշադրութեամ չարժանացնելը» եւ այդ սխալով սովորեցնելը: Ահա, թէ ինչի մասին է եղել մեր խօսքը» (1984, թիւ 8, էջ 137-138):

Վաղարշակ Նորենց հոս կանգ չառաւ:

Ջարենցեան խնդրոյ առարկայ տողին արտաքինում բուն պատճառը իմանալու համար, շարունակեց իր հետազոտութիւնը եւ առ այդ «Դրական թերթ»ի էջերուն րաց մամակ մը յոյս ընծայեց, ուղղուած՝ «Հայրենի գրականութիւն» դասագիրքի կազմողներուն՝ Թ. Ջուհարեանին եւ Վ. Եսայեանին:

«Այսպիսի վրիպակ կամ սպրդում չի կարող լինել դասագրքում եւ մնալ չուղղուած, ուրեմն այդ կատարուած է ինչ-որ մկատառումով: Թոյլ տուէ՛ք, ընկեր խմբագիր, մեր թերթի միջոցով հարց տալ Թ. Ջուհարեանին եւ Վ. Եսայեանին, թէ ի՞նչ մկատառումով է կատարուում այդ աղտաղումը»:

«Դրական թերթ»ի յաջորդ համարին մէջ, դասագիրքը կազմողները, Թ. Ջուհարեան եւ Վ. Եսայեան, յայտարարեցին, որ եղածը ակամայ կատարուած սխալ մըն է, վրիպակ մը:

Մենք չենք գիտեր, թէ Վաղարշակ Նորենց ինչպէս դիմաւորեց դասագիրքը կազմողներուն վրիպակային չքմեղանքը, բայց մեզի կը թուի, թէ գոհացուցիչ բնոյթ մը չունի անիկա: Թ. Ջուհարեան եւ Վ. Եսայեան բանաստեղծ Նորենցի յուզած հարցերէն ե՞տք միայն նկատեցին ակամայ կատարուած սխալը:

«Դրական թերթ»ին մէջ յոյս ընծայած րաց մամակէն վեց ամիս առաջ Նորենց հանրային սեփականութիւնը դարձուցած էր «վրիպակին» պարագան, Օգոստոսին:

Կազմողները ինչո՞ւ արդեօք այդքան երկար լռեցին այդքան կարեւոր խնդրի մը լուծման համար, երբ սպասելի էր դասագիրքին հրատարակ գալէն առաջ, առնուազն Նորենցի կատարած դիտողութեան վաղորդային ըսել այն, որ ըսած են վեց ամիս ետք, «Դրական թերթ»ի րաց մամակին առիթով, թէ՛ եղածը ակամայ սխալ մըն է:

Ակամայ գործուած այդ սխալին առիթով մարդ ակամայ կասկածներ կ'ունենայ, թէ հարցին մէջ կայ միտումնաւոր վերաբերում մը:

Վախ մը, թէ «Մասիս սար»ին սէրերով խմորուած ու կազմաւորուած սերունդները կրնան խանգարել րարիդրացիական յարաբերութիւնները:

Ինչպէ՛ս,— պիտի ըսէր հանգուցեալ Նայիրի Ջարեան: Եթէ Մասիս սարը անխախտ մնար բանաստեղծութեան մէջ, ուսանողներուն աչքերը սեւեռարիք պիտի մնային հարեւան պետութեան տերիտորիային:

Կ'ըլլա՞ր:
 Կը մնայ տակաւին ուսուցիչներու պարագան:
 Միայն Հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչները
 չէին, որ սխալներուն դէմ լուռ կը մնային, չէին ծառանար,
 այլ բոլոր մարզերու գործօնները: Ստեղծուած էր տեսնելու ու
 լռելու թագաւորութիւն մը կամ ձայն հանողները իսկոյն
 եւեթ ոչնչացնելու այնպիսի սակաւապետութիւն մը, որ իր
 նախընթացը չէ ունեցած գուցէ պատմութեան ողջ ընթացքին:
 Մեր Հայրենիքին մէջ մարդիկ իրազեկ դարձան նոյնիսկ
 լռողներուն դիմաց լռող մարդոց ցաւագին լռութիւններուն՝
 խնայելու համար պաշտօններու, հացի:
 Պարզենք նման պարագայ մը, «Գրական թերթ»էն, Նայի-
 րի Զարեանի առիթով, Անահիտ Մահինեանի գրիչով:
 «Նայիրի Զարեանը մի օր վրդովուած խօսում էր հրատա-
 րակչութեանը իր գրքի պաշտօնական խմբագրի մասին, պատ-
 մելով, թէ ինչ անհեթեթ պահանջներ է ներկայացրել իրեն՝
 անուանի քանաստեղծիմ ու ամենակոփուած կոմունիստիմ՝ այս
 տողը ջնջել, այն հատուածը հանել...: Նոր հեղինակը խնդրում
 է հիմնաւորել իր պահանջը, քացատրել, թէ ինչո՞ւ ջնջել այս
 տողը կամ այն հատուածը հանել, աղջիկը չի կարողանում, եւ
 սկսում է լաց լինել. «Սթէ չամէք, ինձ աշխատանքից կը հանեն»,
 ասում է նա, եւ խեղճ հեղինակը, խեղճ Նայիրի Զարեան, որ
 ամենեւին էլ խեղճ չէր, ընդհակառակը, հօգօր անհատականու-
 թիւն էր, ստիպուած տեղի է տալիս, գիշումների գնում» («Գրա-
 կան թերթ», 1987, թիւ 25):

*
* *

Ձկարծուի, որ ուսուցիչներու, հրատարակիչներու մօտ
 աշխատողներու կամ գրականութեան մերձ գործօններու
 յատուկ էր այս երեւոյթը, ստեղծուած էր այնպիսի համակարգ
 մը, որ բոլոր մարզերու բոլոր ներկայացուցիչները կը վախ-
 նային իրենց շուքէն, իրենց կարծիքներէն, պաշտօնի կորուս-
 տէն: Վարը՝ քիչ մը աւելի վեր բարձրացածին ենթակայ, աւելի
 վերը՝ աստիճան մը բարձր կանգնածին, վերջինը վերադասին:
 Իւրաքանչիւրին վրայ նշանակուած էր վերադաս մը եւ ամէն
 ինչ կախում ունէր այս վերջինէն: Բացառուած էր ինքնուրոյն
 մտածումը, սեփական նախաձեռնութեամբ քայլ առնելը, սխա-
 լին սխալ ըսելու, ճիշդը ընդգծելու կամ վերահաստատելու
 որեւէ փորձ: Ստիպած էին մարդուն դառնալ զգուշաւոր,
 վերապահ, թուլամորթ, միշտ ուրիշ մը կախեալ, համարեա՛
 ստրուկ, գրասենեկային գոյակ, ըլնողը:

Անուանի արձակագիր Արշալիր Դարբնի առակագրած է ինքնուրոյնութենէ, նախածեռնութենէ ու իրականութեան բաց աչքով նայելու մարդկայնութենէն ինքզինք կամովին զրկած այս տիպարը, նոյն անունով, Բիւրոկրատը, որ օր մը կ'իյնայ Հորի մը մէջ ու մարդիկ, «դէս ու դէն» ինկած կը գտնեն զինք, կը նետեն փրկարար պարանը իրեն, բայց պարանին ամուր կառչելու ազատարարներուն փրկարար յորդորին ընդառաջելու փոխարէն, կը ճշայ վարէն.

—Այդ բանը չամէ՛ք:
 Կայ որոշումը մեր վերադասի՝
 Անձս այս եորից համելու մասին:
 Պարանից առաջ, Աստուած կը սիրէք,
 Դուք վերադասի վնիդը բերէք:
 Բայց չմոռանա՛ք համարակալի
 Ու պատշաճ կնքել:
 Առանց այդ Բորի իրաւումք չունեմ
 Այս եորը լքել...

*Շարունակութիւնը հետաքրքրական չէ, սարսափելի է սակայն մտայնութիւնը:
 Որով ամբողջ կէս դար տառապեցաւ մեր միտքը ի Հայաստան, այնքան՝ որ ըսաւ, լռեց, գործեց իր մտածումին, խիղճին ու գիտցածին ճիշդ հակառակը, «Իմ չպէս անհաս փառքի քամբայ, ես իմ Մասիս սարն եմ սիրում»ին տեղ տարիներ շարունակ կրկնելով բանաստեղծին ոչ գազաժային տողը...*

(Շար. 4)

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ԱՆ-
ԿԱՏԱՐ
ՎԵՐ-
ՇԱՆՈՒՄՆԵՐ



**ԱՐՉԱԿԱԳԻՐ
Մ. ՊՉԱՔՆԵԱՆԻ
ՄԵՐՉ-ԳՐԱԿԱՆ
ԷՋԵՐԸ**

*«Ան-կատար վեր-ծա-
նումներ»* անուն հատորը եօթ-
ներորդ հրատարակութիւնն է
սփիւտահայ արձակագիր Մով-
սէս Պչաֆնեանի: «Հալէպի Բա-
րէն Սփիւտ Ճեմարանի 50-ամ-
եակին եւ Միմաս Թէօլեօլեանի
յիշատակին» նուիրուած վե-

րոնշեալ գործը, որ ի մի կը խմբէ 65 *գրանկարներ* (բառը կը
պատկանի նոյնիման Մ. Պչաֆնեանի) եւ ընդարձակ գրոյց մը,
ընթերցողին կը ներկայանայ *«Լուսցի փռուած տանիքի
վրայ»*, *«Փակագիծը քաց ձգեցէ՛ք, խնդրե՛մ»*, *«Փակագիծը
քաց ձգեցէ՛ք, խնդրե՛մ»*, *«Ջերօ ամբողջ»* եւ դարձեալ *«Ջերօ
ամբողջ»* խորագրեալ բաժիններով:

Նրեւութապէս հինգ միատրոներու մէջ ամփոփուած այս
գրանկարները խորփին մէջ սերտօրէն կ'օղակուին իրարու հետ՝
թէ՛ իրենց շօշափած նիւթերով, թէ՛ իրենց ոճով եւ թէ՛, մա՛նա-
ւանդ՝ հարցերուն մօտեմալու եւ զանոնք ինքնակերպ հեղինակին
եղանակով: Հոսկէ՛ հատորին ենթախորագիրներուն կրկնու-
թիւնը, որ լռելիայն կը յուշէ ընթերցողին նոյնաման շարքերուն
օրգանակամ եւ ոգեկամ կապը:

Օրինակ, եթէ 1987ին հրատարակուած *«Լուսցի փռուած
տանիքի վրայ»* հատորի խորագիրին որդեգրումը՝ իրրեւ
ընդհանուր անուն խնդրոյ առարկայ գիրքին բացումը կատա-
րող առաջին շարքին, կը ձգտի շեշտել, թէ 1987ին հրատարակ-
ուած վերոնշեալ գործին շարունակութիւնն է այս հատորին
առաջին բաժինը, յաջորդաբար երկու անգամ օգտագործուած
«Փակագիծը քաց ձգեցէ՛ք, խնդրե՛մ» եւ *«Ջերօ ամբողջ»*
ենթախորագիրները կը միտին ընթերցողին ուշադրութեան յանձ-
նել, որ անոնք ո՛չ միայն անբաժանելի են իրարմէ, այլեւ մէկու-
թիւն մը կը կազմեն, ճիշդ այնպէս՝ ինչպէս միեւնոյն մետաղա-
դրամին երկու երեսները:

Աւելի՛ն.

Յած ձայնով կատարուած այս յիշեցումը կը ստանայ աւելի շեշտ հնչեղութիւն, երբ «Ան-կատար վեր-ժանումներ»-ու 335րդ էջի «Յետ-գրութիւն» հեղինակային նոթի երկրորդ կէտով Մ. Պլախան կը յայտնէ. «Տրպէս մտորումներ, հայ-հացքներ, վկայութիւններ եւ որպէս հարցադրումներու տրուած պատասխաններու ուրումնկարներ՝ «Անկատար վերժանումներ»ը կը նկատուի շարունակութիւնը 1987ին լայս տեսած «Լուսցէ փռուած տանիքի վրայ» հատորին»:

Այլ խօսքով՝ թէ՛ «Լուսցէ փռուած տանիքի վրայ», թէ՛ «Փակագիծը բաց ձգեցէք, խնդրե՛մ» եւ թէ՛ «Ջերօ ամբողջ» անուն շարքերը կարելի չէ դիտել իրրեւ մամուլի մէջ ցրուած էջերու սովորական մէկտեղում, այլ՝ իրր հեղինակային աշխարհահայեացքի մը ամբողջացում, որ կ'ամբողջանայ իրարմով եւ իք անթերի ամբողջութիւնը կը նուաճէ, երբ «Ան-կատար վեր-ժանումներ»ը կը կամրջէ գայն մախապատրաստած եւ անոր եզամակներուն եմքահողը համդիսացած «Լուսցէ փռուած տանիքի վրայ» անուն հատորին:

Վերջապէս, ինչ միւս ալ շօշափեմ կամ ինչ երեսոյթի դիմաց ալ կանգ առնեն, թէ՛ «Լուսցէ փռուած տանիքի վրայ» եւ թէ՛ «Ան-կատար վեր-ժանումներ»-ու գրութիւնները անանձնական թուղթեր չեն: Ընդհակառակն, անոնք, բոլորն ալ, միեւնոյն հեղինակին ջիղերուն ու բանականութեան անդրադարձներն են, բաց ձգուած փակագիծին իրարմէ անբաժան իրերայաջորդ բառերը, որոնք ամբողջացած մախադասութիւն մը կազմելով համդերձ՝ գայն չեն փակեր, այլ կը դնեն կախման կէտ, որովհետեւ վերջակէտ չի կրնար մանչնալ Մ. Պլախան անուն հայ մարդուն ամէնօրեայ տագնապներուն, հարցադրումներուն, պատասխաններուն, մտորումներուն եւ նոր հարցումներուն անհուն տիեզերքը, — *Յո՛յնիմքն կեանքը*:

* * *

Առօրեայի մանրամասնութիւններուն, ընկերութիւնը խոս-ված ընկերային, բարոյական, կենցաղային, քաղաքական եւ այլաբնոյթ հարցերուն ու երեսոյթներուն դիմաց կանգ առնող եւ տագնապող ժամանակակից հայ մարդը կը յայտնուի առաջին իսկ ուրումնկարներէն: Կենսագաշտի մը հորիզոնները տակաւ առ տակաւ կը սկսին բացուիլ, խօսքին գուգահեռ բանալով ման հեղինակին խորհրդածութիւններուն ոլորտները, որոնք շօշափելի դէպքէ մը եւ ժամանակէ մը թռիչք առնելով համդերձ՝ չեն բանտարկուիր իրենց ծնունդ տուած ժամանակին «լրագրական

իրապաշտութեան» միաեորիզոն ու սահմանափակ ժամանակին մէջ: Ընդհակառակն, գրութեան կայծ տուած դէպքը կարծէք կը դառնայ դրդապատման, որպէսզի հատորին առաջին գրութեամբ սեփական ստորագրութեան կարեւորութիւնն ու արժէքը ընդգծած գրողը ո՛չ միայն ջակէ իր խորհրդածութիւններուն կծիկը, այլև ներկան հարստացնել անցեալի անջնի դրուագներով, իր յիշողութեան մէջ միշտ կենդանի ու պայծառ մնացող պատկերներով եւ, մա՛նաւանդ՝ անոնցմէ ըխած ու ապրուած կենսափորձը իմաստաւորող եզրայանգումներով:

Ջուզահեռաբար կատարուած ժամանակներու այս հաշտեցումը, որ մերք ներքին երկնայն հակամտութեամբ, երբեմն քարճրածայն խորհրդածութեամբ եւ յանախ կտրուկ եզրակացութիւններով կը կշռութաւորէ գրութիւնը, կը ստանայ իւրապատուկ շեշտ ու երանգ, երբ անակնկալօրէն կը յայտնուի նաեւ արձակագիր Մ. Պլաճմեհանի էութեան մէջ թափնուած մանուկը: Հեղինակին էութենէն անրաժանելի, անոր ծանրութեան կեդրոններէն մէկը հանդիսացող, աշխարհն ու երեւոյթները ապշահար աչքերով դիտող հարցասէր, հետաքրքիր եւ քարի մանուկը ամենայնուայնոք գիծերով ու գոյներով իր տրամաբանութիւնը— հետեւաբար՝ նա՛ն ներկայութիւնը— կը հաստատագրէ մա՛նաւանդ երկրորդ շարքին՝ *«Մանուկ մը երկնագոյն գրամեքենային առջեւ»* մէջ, ուր հասուն ու թակասագրապաշտ մարդուն դիմաց իր իսկ կողմէ գետնորած մանուկը կը դառնայ աւելի ըմբոստ, առաւել տեսապաշտ, ա՛յ աւելի մտահոգ, բայց միեւնոյն ատեն նոյնքան վեռակամ ու ինքնավստահ, որ կ'որոշէ *«վերանուանել կորսուած ժամանակը»*, մասնակցիլ աշխարհի եւ Հայաստանի «եամերգ»ին, արձանագրել իր երկնագոյն գիրը, *«ամէն ինչ վերսկսիլ ծայրէն»*, որովհետեւ իր անձնական ու ժողովուրդին դառնադառն կենսափորձով ինք նաեւ հասկցած է վաղուց՝ *«...թէ գոյզն է կեանքի միակ ուղին, այլապէս, շուտով կը կազմայուծուի մարդկութիւնը»*:

«Պատասխանատուութիւն» եւ *«գիտակցութիւն»*, ահա գոյզ ըմբացող երկու քառ եւս:

Ձկան ձրի բառեր: Անվճար թուացող խօսք մը կը նայ քանդել ամբողջ կեանք մը»:

Ահա թէ ինչու «ինը ամիսներու ամուլ ժամանակաշրջանէ մը ետք», թոթովախօս սկսնակի մը երկչտութեամբ գրամեքենային առջեւ նստած մանուկը —իմա՞՝ հեղինակը—, որ կը ճգնի իր գիրին տալ «իր ամբողջ մշտնակութիւնը», մասնակիէն ընդհանուրին անցնելով՝ կը պատասխանէ հարցաշեշտ.

«Երբ ինը ամիսներու ամուլ ժամանակաշրջանէ մը ետք, գրամեքենային դիմաց նստող մանուկը սկսնակի մը թոթովանքը ունի, հասկա եօթը դար սեփական նակատա-

գիրը որոշելու իրաւունքը՝ զրկուած ժողովուրդը, հապա այդ ժողովուրդին զաւակնե՞րը, որոնց հեռախօսը, վերջին հօքամասուն տարիներուն, միայն «լսափող» ունեցաւ»:

Բայց մտնուլը տեղի չի տար: Գիտակից տեսլանքներն է ան, որ գիտէ, թէ իմք, իրենք պէտք է գոյն տան ժամանակին եւ այդ գոյնը պարտի ըլլալ միայն երկնագոյն, որպէսզի իւրաքանչիւր վերադարձ դառնայ մեր ուղեւորութիւն, որպէսզի անհատաբար եւ հաւաքաբար չդառնանք «անհուն գերոններ», զգաստամանք, գիտակցիմք, ձգտիմք «կատարելի» եւ մեր *տաւախագոյնը մտազագոյն* համարելով՝ շարունակ տամք Հայաստանին եւ դառնանք «Աւրոդ»:

Ըսիմք արդէն, թէ ի՞նչ իրողութենէ ալ յուզուիմ լարերը Մովսէս Պլախինի մերձ-գրական այս թուղթերուն, կամայ թէ ակամայ, այս կամ այն ձեւով, անոնք, գրեթէ բոլորն ալ, կ'ուղղուին դէպի այն հասցէն, գոր կարելի է ամփոփել միակ բառով մը.— ԼԱՅԱՍՏԱՆ:

Առանցքային կշիռ ունեցող այս իրողութիւնը իր շուրջ կը համախմբէ մանր գրութեանց ժամանակէն ու վայրէն թուղթիմ եկող բոլոր մանրամասնութիւն-արքանեակները, մա՛նաւանդ երբ անոնք մեզի կու գան իրրեւ «Հայաստանեան անդրադարձներ»: Փաստօրէն, հայաստանեան տպագրութիւններու ենթահողիմ վրայ կառուցուած այս թուղթերը, որոնք իրրեւ ժամանակ կ'ընդգրկեն Օգոստոս 1990-Յուլիս 1992 ժամանակահատուածը եւ ուր կ'արտայայտուին ու կերպարանք կը ստանան հայրենի ծանօթ դէմքեր, կանգ կ'առնէ մեր ժամանակներու գրեթէ բոլոր բնագաւառներուն դիմաց: Հեղինակ այժը կ'արձանագրէ իւ տեսանկի դրուագներն ու պատկերները, իւ անոնց անտեսանելի խորքը, էութիւնը, որ կ'արձագանգէ գրողիմ հայտ յուզաշխարհիմ ու բանականութեան մէջ, որպէսզի օղակ առ օղակ, այսինքն՝ գրութիւն առ գրութիւն միահիւստուող համայնապատկերը դառնայ ամբողջական վկայութիւն, իսկ գիրքը՝ ի՛ր վկայարանը:

Այս առումով՝ գրական աշխարհը յուզող տագնապներէն մինչեւ Հայաստանի խորհրդարանի քուիսներ, Հայաստանի Հանրապետութեան Հռչակագրի յաջորդած տօնական ցնծութենէն մինչեւ երկրաշարժի սրտանմուխ հետքեր, Հայաստանի բնութեան ու կենսութրտի ապակամուրէն մինչեւ «շուկայական» մտահոգիչ ուստումներ, մինչեւ քաղաքական, ընկերային, տնտեսական, հոգեբանական խոր ցնցումներ եւ սեւ ու մերմակ նորայայտ այլեւայլ երեւոյթներ երկարող, հարցերուն էութիւնը լոյսին բերել փորձող Մ. Պլախինի մտորումները, թախիծները, յուսարեկումները, երազները, ցնծութիւնները, բայց մա՛նա-


ւանդ հայու վնասշեշտ հաւատքը պատկերող էջերը կը բացուին հայ ընթերցողին, կը հաստատեն հեղինակ-ընթերցող հաղորդակցութեան սրտագրաւ պահեր, որպէսզի «կատարեալին ձգտում»ը դառնայ համագգային շարժում, «հատուածապաշտ հաշուարկներ»ը վերջ գտնեն միամգամընդմիշտ, «Ոնրկայի արգանդին մէջ» կազմաւորուող «սպագայի պատմութիւնը» ըլլայ երկնագոյն ու առողջ, իսկ դէպի «Ամբողջ» ուղեւորուող հայութեան երթէն անմասն չմնայ ո՛չ մէկ հայ՝ *«կատարելով մեր պարտաւորութիւնները, ջնջելով մեր ընկրկումները, վնասելով մեզի տրուած հպարտութեան գոհունակութիւնը, առանց որում կարելի չէ ապրիլ, կոչուիլ մարդ»*։

Օրուան անմիջական անդրադարձներուն ծնունդը հանդիսացած Մ. Պչաֆնեանի գրապատկերները, որոնք հատորի մը գոյգ կողմերուն միջեւ ամփոփուելէ առաջ օրին լոյս տեսած են «Յատաբ»ի էջերուն, կը շրջանցեն օրաթերթային պարագայական տումսեր դառնալու տխուր մակատագիրը եւ կը դառնան մերձ-գրական բարախում էջեր։

էջեր՝ որոնք եթէ մոյսիակ ոչինչ կ'աւելցնեն արձակագիրին գեղարուեստական վաստակին վրայ, այնուամենայնիւ, առնուազն կը վկայեն իրենց հեղինակին գրողական հմտութեան հաշուէյն ու յաւելեալ լոյս կը սփռեն անոր հայկական տակունդիմազիծին եւ էութեան վրայ։

Եւ արդէն հո՛ս պէտք է փնտոնել երկրորդ արժէքը Մովսէս Պչաֆնեան գրագէտին վկայարանը հանդիսացող *«Ան-կատար վեր-ծանուումներ»*ուն։

Ս. Կ.



Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Քեզ ինչպէս կ'ըզեմ...

(Ներքինի՝ Փանոս Ճերանեան)

Գրական շրջանակներու մօտ ծանօթ անուն է «Բազին» ամսագրի մնայուն աշխատակիցներէն՝ բանաստեղծ Փանոս Ճերանեան, որ վերջին քսանամեակին լոյս ընծայեց «Քամիներ» (1979) եւ «Ընդմիջուած լռութիւն» (1991) խորագիրներով երկու քերթողագիրքեր: Համեստ, այլ ծրայան հեղինակն է Ճերանեան, որ կ'ապրի եւ կը ստեղծագործէ բանաստեղծական մթնոլորտի մէջ, միշտ փակ պահելով իր ներաշխարհին լուսամուտները՝ արտաքին աշխարհի խոսվայոյ պաշտպաններուն...

Այս գարնան սկիզբը, Ճերանեան լոյս ընծայեց «Քեզ ինչպէս կ'ըզեմ» խորագիրով իր երրորդ քերթողագիրքը, որ կը բաղկանայ 88 փոքրաթիւ էջերէ եւ հետեւեալ ենթախորագիրները կրող հիմնական չորս բաժիններէ. «Բառեր աւերջագիծ լուսանկարի համար», «Երկճայն արձագանգ», «Ի յոր» եւ «Լուսաստուերներ»:

Ըստ էութեան, մենախօսութիւն մըն է «Քեզ ինչպէս կ'ըզեմ» քերթողագիրքը, ուր բանաստեղծը կը մենախօսէ բնութեան բազմերանգ իրերուն եւ ժամանակի անցաւոր թէ անանց երեւոյթներուն հետ: Ան կը մենախօսէ պարզ եւ սրտքաց անկեղծութեամբ: Բառերը կը բխին իր սրտէն՝ յուսմանախառն եւ յորդաբուխ պեղումով: Քաջուն, այլ խրոնովայոյ հոգեվիճակ մը բացայայտելու ձգտումով, ան չի դիմեր բոնապօսիկ ճիգերու, որովհետեւ եղբայրացած կը պզայ ինչքինք բնութեան տարրերուն եւ գոյներուն հետ, որոնց մշտանորոգ հմայքին ան կը ձայնակցի բնապաշտ բանաստեղծի հոգեխառնութեամբ:

Այս ինքնախօսութիւնը ի յայտ կու գայ «Քեզ ինչպէս կ'ըզեմ»ի առաջին իսկ բանաստեղծութեամբ, ուր Փանոս Ճերանեան կ'ըսէ.

*Քեզ կը փնտռեմ
այնչո՞ք սրտի ինքնախօսութեամբ,*

**Ինչպէս խոհերու սիրատենչ քամին՝
ծայ-ծայ քղանցքի կառչած ընկէին:**

Մենախօսութիւնը բանաստեղծին մօտ լարատեւ որոնում մըն է՝ ի խնդիր կորուսեալ երապի մը: Եւ, մա՛նսամա՛ն, արտայայտչական հնարաւոր այն միջոցը, որով ան իր դառնութիւնը կը թափէ ճակատագրի երեսին կամ իր խանդաղատանքը կ'արտայայտէ հեռաւոր արեւելեան մակընթացող ուրախութեան ալեծփուն արձագանգներուն:

Այս յղացքով, ծառերը, տերեւները, թռչունները, թիթեւները, քամիները եւ մինչեւ իսկ անծանօթ ոտնաձայները խորհրդանշական երեւոյթներ են, որոնց հետ կը մենախօսէ Փանոս Ճերանեան, գաղտնի սէր մը, անթեղուած լուշ մը, չարտաբերուած բառ մը, անասարտ ապրում մը եւ չյօրինուած եղանակ մը դիմաստուերային համապատասխան խորհրդաւորութեամբ ի յայտ բերելու ցանկութեամբ:

Ճերանեան ճամբայ կ'ելլէ իր կորուսեալ երջանկութիւնը վերագտնելու տենչով: Իր փնտռածը պարպապէս այն երապն է, որ մերթ կը յայտնուի մեղեդիացած երգի մը քաղցրութեամբ եւ մերթ կը տեսլանայ անցեալի մշուշներէն լառնող «*Լուսամփոփի մտերմութեամբ՝ ձիւնէ աղջկան*» մը հոգեգրաւ կերպարանքով, որուն «*անըջագիծ լուսանկար*»ին ան կը կառչի սիրահար բանաստեղծի ալեկոծ սրտով: Յայտնապէս բանաստեղծը ուրախ է այն գիտակցութեամբ, որ իր երապ-աղջկան յիշատակը «*հապար անգամ սեւագրուած՝ սիրոյ առաջին նախադասութեամբ*» ոգեկոչելու իր հոգեմաշ տքնութեան մէջ՝ ա՛լ գտած է վերջապէս իր փնտռած վաղնջայուշ սէրը, ի՛նչ փոյթ, թէ այդ սէրը ներկայանայ լուսահանդերձ կերպարովը քերթուածի մը ոգեմատոյց իմացումին: Յայտնապէս ուրախ է նաեւ այն համոզումով, որ այսուհետեւ իր ճակատագիրը պիտի չըլլայ ենթակայ սիրոյ ձիւնաթոյր ծաղիկին՝ ապրիմ-մեռնիմի «*տե՛րեւներուն խորհրդաւոր համրանքին*»:

Ճերանեան իր մենախօսութեամբ կը մտալլկուի յաճախ քամիներու բօթաբեր յաճախանքով, որոնց աներիչ ներկայութիւնը կը յայտնուի տեղ-տեղ հատորի էջերուն: Նախապէս, քանամեակ մը առաջ, «*Քամիներ*» (1979) խորագրով երախայրիք իր գործին մէջ հեղինակը լայնօրէն անդրադարձած է այս իրողութեան: Եւ այժմ, հակառակ ժամանակի թաւալքին, երբեւիցէ չի կրնար ջնջել իր մտասեւեռումէն քամիներու համապիւռ անդոհանքը...

**Տնակիս տխուր տախտակամածէն
Մինչեւ միգամած ծպխտն աստղերուն,**

*Ես բաց կ'արձակեմ խոհերըս ամէն
Եւ ականջ կու տամ խօյ քամիներուն:*

Այս անդրադարձումով, բանաստեղծը կը հետեւի հետք
ան հետք քամիներու տենդագայար կանչերուն, որոնց ի լուր
ծիլ ու ծաղիկ, ծառ ու տերեւ, թռչուն եւ թիթեռ եւ աշխարհի
տարրերն համակ կը պարուրուին աշնանային թախծու-
թեամբ...

Վկայելով թէ ծառերը գլխաւոր կոներն են տիեզերա-
կան այս անկեղի ողբերգութեան՝ Փանոս ձերանեան կ'ըսէ.

*Ծառ մը պիտի ուրուագծէ,
որուն ճիւղերը պիտի կարկառին
իր առօրեայ հեքերուն ներանձնական կշռոյթով՝
դէռ չհասած քամիներու սպասումը կշռելու...*

Ապա, կը դրուատէ ծառերու ներպօր կենսունակութիւնը
եւ գոյատեւման պօրեղ կամքը այն համոզումով, որ հակա-
ռակ քամիներու հանդէպ բնապղական իրենց երկիւղին՝
ծառերը պիտի աճի՛ն դարձեալ երկնուղէջ պացքով, «խոր-
հուրդն ի վեր ճշմարտարան աստղերուն...» եւ, մա՛նաւանդ՝

*Ժամանակի անթուակիր խորքերէն՝
թաւալող տերեւի շշուկով
գերհրական քերթուածներ շշնջալու ունկերուդ...*

Ըստ ձերանեանի, աւապախառն քամիներու դիմաց
անապատական ծա՛ռն անգամ կը պահէ իր ինքնուրոյն
դիմագիծը, գոյատեւելով իբրեւ խորհրդանիշը՝ կենցաղա-
կան տուեալ ըմբռնումի եւ գաղափարական տուեալ յանձ-
նառութեան:

Այս յղացքով, ծառը, դուրս գալով իր առարկայական
էութենէն՝ կը դառնայ մարդկային ստորագելիներով օժտը-
ւած ապրող եւ պայքարող էակ մը:

Ահա թէ ինչու ձերանեան հարց կու տայ ծառին, թէ ո՞վ
արդեօք ունկնդրեց անոր դառնախոհ վրոյցը՝ անապատի
ամայքներուն մէջ եւ ո՞ր սուրբը արդեօք, երկնային օրհնու-
թեան շնորհիւ, դալար պահեց անոր չոր տերեւն անգամ:

Ձգացական յատկանիշներ վերագրելով անապատա-
կան ծառին՝ բանաստեղծը կը հաստատէ, թէ երապող եւ
տառապող սիրահարն է ծառը, որուն ոստերուն մէջ ա՛լ չի
հարսնեղգեր հիմա գարնանային երբեմնի խանդաղատան-
քը:

Հինաւորց տենչանքներու եւ խոհական ապրումնե-

րու համադրութիւն է այդ ծառը, տրուած ըլլալով որ անոր
 ոստերուն վրայ

*Հայարամեայ բոցեր կ'աճին,
 Հրդեհաձայն խոհերով...*

Աւելի'ն. այդ մենաւոր ծառը մեղեդիացած կարօտն է
 նաեւ բոլոր կորուսեալ առիթներու, վաղամեռ վայելքներու
 եւ մինչեւ իսկ «առեւանգուած այգաբացին»:

Եթէ ծառը խորհրդանիշն է մարդկային կեանքի, տե-
 րեւները գործօն տարրերն են, որ յարատեւ շարժման մէջ կը
 պահեն անոր գոյութեանապաշտ ձգտումները:

*Սիրելիս,
 ծառերու բարձրացող տառապանքէն
 տերեւներ՝
 յարտաբերուած ճիչերով՝
 կը գայարտին
 տիեզերքի ամենամութ թռպէները
 արթնցնելու
 սաղարթին մէջ աչքերուդ:*

Ճերանեան կը սիրէ խորհրդանշական իմաստ տալ
 տերեւներուն, որոնց օգտագործումով կը ձգտի պատկե-
 րացնել քողարկուած մտածում մը, ինչպէս այլախոհ տերե-
 վի մը պարագան, որ չի կրնար ուրանալ իր անցեալը, որուն
 հեռախոյս ստուերին կը կառչի կարօտախանձ վղջումով...

Ընձեռելով տերեւներուն յատուկ արժանիք մը՝ քանաս-
 տեղծը կը հաստատէ, թէ անոնք, հակառակ իրենց կենսա-
 դալար ոգեւորութեան՝ ունին թաքուն տառապանք մը, որ
 կը գիտակցուի «աշնան կսկիծը մասամբ քողարկելու» ան-
 գիտակից ձգտումով:

Հակոտնեայ երեւոյթներու միջեւ բաղդատական եզ-
 րեր գտնելու մտածումով ճերանեան կը դիմէ տերեւնե-
 րուն: Այսպէս, զարնան կենսապիր խնդրութեան եւ աշնանա-
 յին մեռելայնութեան միջեւ հակադրութիւնը շեշտելու դի-
 տաւորութեամբ կ'ըսէ.

*Թե՛ վարդեր կը բողբոջին
 աշնան տերեւներու նիւջէն առաւել խոր՝
 ննջեցելոց եւ սպրոդաց հողին վրայ...*

Իսկ այլ տեղ, ցայգաթռչունի մը ճշգրիտ պատկերացու-
 մը տալու առաջադրութեամբ՝ ան կ'օգտագործէ տերեւը իբ-

րեւ արժեչափ: Օրինակ.

**Փշաթուփերու ստուերին անձած,
այդ տերեւաչափ ցայգաթռչունը
յղի է կարծես լուսարացներով:**

Բանաստեղծը այն աստձան կը սիրէ տերեւը, որ մինչեւ իսկ բաժանման խոհերով տուայտող իր առանձնութիւնը առաւել եղերական հանգամանքով ներկայացնելու ցանկութեամբ՝ կը նոյնացնէ ան ինքզինք չոր տերեւի շրշիւնին հետ:

Աւելի՛ն. Փանոս ճերանեանի ուշադրութենէն չեն վրիպիր ապրիմ-մեռնիմի տերեւներն անգամ: Այս աղընչութեամբ ան հարց կու տայ, թէ սիրահարներու բախտը տնօրինող այդ կախարդ ծաղիկին տերեւներուն մէջ ո՞րն է արդեօք այն վերջին տերեւը, որ պիտի ըլլայ անտաւոր յայտնութիւնը ճակատագրի օրհնաբեր խոստումին...

Ինչպէս վերոյիշեալ տերեւի պարագային, բանաստեղծ ճերանեան կը սիրէ հաղորդակից դառնալ նաեւ տուեալ երեւոյթի վախճանակէտը կանխող վերջին հանգրուանին, իր մտորումներուն թելադրական խորք տալու ձգտումով: Ահա թէ ինչու ան պահ մը կը տագնապի **«պարողի մը վերջին քայլը յօրինելու»** բաղձանքով կամ խոր շահագրգռութեամբ կ'ուզէ իմանալ **«վերջին խօսքերը անհետ կորածին»:**

Ծառերու եւ սաղարթաշունչ տերեւներու հետ յարակցաբար, բանաստեղծի մտասէտումին մաս կը կապեն նաեւ թռչունները, որոնք կու գան երամ առ երամ՝ **«երկինքներու լուսակարկաչ լոգանքին»:** Թէեւ թռչունները չեն կրնար փոխադրել մինչեւ հետաւոր սահմանները իր մանկայուշ անցեալին, սակայն անոնք իր աչքերուն լանդիման **«կը բանան լուսամուտներն երազներու աշխարհին...»:**

Բանաստեղծ ճերանեան յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ արիւրուն, որոնց մէջ դրոշմուած գիծերուն ան կը վերագրէ խորհրդանշական եւ բախտորոշ իմաստ: Աւելի՛ն. ան կը շեշտէ, թէ իր արիւրը այնքան զգայուն են եւ դիւրազգած, որ մինչեւ իսկ ան կը ներզգայ իր **«արիւրը փակագծող դողը թռչունի»:**

Եթէ ան դողողը մատներով կը շօշափէ ապրիմ-մեռնիմ ծաղիկին ձիւնաթոյր թերթերը, իր ճակատագրին թաքուն խորհուրդները իմանալու ցանկութեամբ, սակայն առանց դողի եւ առանց դոյզն երկմտութեան՝ ան կը բանայ իր արիւրը բախտագուշակ կնոջ մը արիւրուն, որ **«կը կարդայ անձայն»** իր սիրած էակի **«քնքշապատ դէմքին սաղմոսը անտիպ...»:**

Յայտնապէս բանաստեղծը կը սիրէ անձնատուր ըլլալ
ափերու խորհրդալոյս տեսքին: Այս դիտատրութեամբ ան
կը ցանկայ, որ վարդերը բացուին զարնան լոյսին՝ «*ճիւ-
նասպիտակ ափերու նման*» լայնարաց:

Ըստ իրեն, իմացական մտքի եւ խոհական ապրումնե-
րու գանձարանն են ափերը, ուր ան խնամքով կ'ուզէ պահել
իր սիրոյ թանկարժէք մատեանը:

Այս առընչութեամբ, քամին պահ մը մոռացութեան
լանձնելով իր աւերիչ հանգամանքը՝ կը ձեռնարկէ բարե-
նպաստ առաքելութեան, երբ կը խլէ բանաստեղծին ափե-
րէն փունջ մը քերթուածներ, որոնց շերտութեամբ կը բոցա-
վառէ այն փոքրիկ աղջկան մատղաշ այտերը:

Մնդրադառնելով այս ուրախատիթ երեւոյթին՝ ձերան-
եան կ'ըսէ.

*Ափերուս մէջ՝
երկու ափեր
զիս կը տանին
մայրամտող ցողուններէն ալ անդին՝
այտերուդ վրայ մարմնող
կրակի մենախօսութիւնն ունկնդրելու...*

Այս յղացքով, Փանոս ձերանեան ո'չ միայն կը մենա-
խօսէ բնութեան այլապէս երեւոյթներուն հետ, այլ սիրա-
հար սրտի լուռ երկիւղածութեամբ նաեւ ան մտիկ կ'ընէ այդ
փոքրիկ աղջկան վարդակէպ այտերէն բոցավառող «*կրա-
կի մենախօսութիւնը*», որուն հիմնական առանցքը կը կապ-
մեն գաղտնի սերը եւ սիրոյ չարտաբերուած տառապանքը:

Ըստ ձերանեանի, շնորհագեղ յատկութիւն մը ունին
ափերը, որոնց քնքուշ խանդաղատանքին լանձնելով իր
կարօտակէպ սիրտը՝ կ'ըսէ.

*Հիմա հեռու ես արդէն,
եւ գուցէ այքերդ սառած են՝ ու մոռցած,
ովկիսանոսին ազօսները պեղելէն
մշուշէ դէմքս ափերուդ մէջ փայփայել...*

ձերանեանի բնութագրած ափերու կողքին, խորհրդ-
դատր իմաստ մը կը պարզեն նաեւ ոտնաձայները, որոնք
կը լսոաջացնեն բացայայտ զգայնութիւն մը իր մէջ: Բա-
նաստեղծը ականջալուր կը մնայ անոնց համատրոփ կշռոյ-
թին, որ հոգեգրաւ դաշնութեամբ մը կը լսուի տրոփ առ
տրոփ,

*Ինչպէս,
մայրերու ծայրածաւալ ժապաւէններու վրայ,
ճայնագրուած ոտնաձայնը հեռացող կնկայ.*

Այս յղացքով, ո՛չ միայն անմիջական շրջապատի, այլև բազմամղոն հեռաորութեամբ ոտնաձայներու հետ իսկ ձերանեան կը պահէ վզացական սերտ առընչութիւն.

*Մինչ համրոյրի մը աղանաթեւ գգուանքով՝
Ես կը լսեմ ոտնաձայնը լուսնակին...*

Արդարեւ, իր վզացական վեղումներուն ջերմաստիճանն է ոտնաձայնը, առանց որուն տեսակարար ջերմութեան եւ քաղցրահունչ վայելքին՝ կ'անշքանայ սիրոյ կեանքը իր շնորհապարզ գեղեցկութենէն եւ, մա՛նաւանդ՝ «ճանապարհներն անդիմաստուեր կ'ընթանան»:

Ճերանեանի կեանքին մխիթարական երեւոյթն է ոտնաձայնը, որ վզացապէս պինջ կը պօրացնէ քամիներու անդոհանքին դիմաց: Այս իրողութեամբ, պայն անվթար կը պահէ իր վզացողութեան մէջ, անցեալէն ժառանգուած նուիրական ըմբռնումի պէս...

«Քեզ ինչպէս կոչեմ» քերթողագիրքի այլ բաժիններուն մէջ, բանաստեղծ Փանոս ձերանեան կ'անդրադառնայ նաեւ Եղեռնի մահաշուք տարիներուն, երբ հայ ժողովուրդի պատկները բռնեցին զաղթի ճամբան, թողլով իրենց ետին հայրենական հող ու երդիք: Այս տխուր իրադրութեամբ, ամայացան հայոց երբեմնի շէն օճախները: Արդարեւ, պատկերացնելով «ժառերու տակ տապալած» հայրենի աւերակ տան այս ողբալի գոյավիճակը՝ բանաստեղծը կ'ըսէ.

*Մեր մանկութեան բախժասուեւո յոյզերով,
տուներու սպիտակ կտուրներուն հեղեղուած աստղեր,
կորուսեալ հայրենիքի մասին,
չլուցող միտքեր կը լուսարանէին:*

*Ոնանց համար,
աստղերն այդ
հայրենաւանդ սօսիներու շուքերուն պոհուած
հարապատի արեան ցայտքեր էին՝
երկինքի անկարծիւնն ի սպառ մրոտած...*

Իր հիմնական գիծերուն մէջ, բանաստեղծ Փանոս ձերանեանի «Քեզ ինչպէս կոչեմ»ը խորհրդանշական պատկերներով հարուստ գործ մըն է, ուր խրաքանչիւր տող կը

յայտնաբերէ պատկերաւոր խօսքի իրայատուկ արտայայտութիւն մը: Ճերանեան կը գրէ ապատ չափի բանաստեղծութիւններ, որոնք հակառակ կարճ շունչով գրուած Ըլլալնուն՝ կ'արտայայտեն ամբողջական մտածում մը, խորքի եւ ձեւի համաչափ գեղեցկութեամբ:

Դասական տաղաչափական արուեստի հետեւողութեամբ, Փանոս Ճերանեան գրած է նաեւ «Ջնջուող քնանկար», «Քամիներ», «Անխորագիր» եւ «Ժամանողները» խորագրով հնչեակները, որոնք կը փոխանցեն զգացական վարակիչ շերտութիւն մը:

<Եղինակի լեզուն մաքուր է եւ անսթեւեթ: Ոճը հեզասահ է ու վճիտ: Ունի վառ երեւակայութիւն:

«Ջեզ ինչպէս կոչեմ» գործին մէջ, Ճերանեան կը դրսեւորէ ռոմանթիք խառնուածք մը, քաղելով իր ոգեշնչումները այն հոգեկան բնաշխարհէն, որուն տարերքին մաս կը կազմեն «տագնապահար տերեւներն» ու «յիշատակի քամիները», «հորիզոնի շառագոյն բացատներն» ու «նոճեփայլ երեկները», «լուսնակի ոտնաձայնը» եւ «այնկոծ քարափը» եւ, վերջապէս, «ամայքներու ճիւղասպիտակ թովչանք»ներն ու «վարդերու իրիկնաթեք փունջերը»:

Ճերանեան յաճախ կ'օգտագործէ ժխտական բայեր, իր մտածումները ինքնատիպ դարձնելու առաջադրութեամբ: Օրինակ.

Մենք հեռացանք, մեր կիսամայն բառերուն շարտասանուած լռութեամբ.


*Եւ դեզերի՛մ, դեզերի՛մ,
Ժամերուն հետ երբեք չժամադրուած
սլաքին նման:*

«Ջեզ ինչպէս կոչեմ» քերթողագիրքին լուսագոյն իրագործումները կը նկատուին «Բառեր՝ անըջագիծ լուսանկարի համար», «Ջեզ սպասելով», «Ամայքներ՝ Սեպտեմբերի համար» եւ «Ծառ անապատական» քերթուածները, որոնք կը յատկանշուին քնարաշունչ պարզութեամբ եւ յուզական ապրումներով:

Սոյն գործը, իր նիւթերուն ալլապանութեամբ, լեզուական անթերի յատկութեամբ եւ զգացումի պատկերաւոր արտայայտութեամբ՝ կ'աւելցնէ գրական նոր արժանիք մը՝ իր նախորդ գործերուն վրայ:

Ապրիլ 1998 ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԳԻՐՔԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Ամցնող տարում լուսին հետ, Ամանորի ամիջական ճախորեակին, Ամբիլիասի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն լոյսին եկաւ *ՀԱՄԿ Հայագիտական Տարեգիրքի* հերթական նոր թիւը, նոյն ու հարուստ բովանդակութեամբ, այլիս պատկառելի ծաւալով մը, ի հետեւում՝ հայ ընտրանի մտաւորականութեան մը գնահատելի մէկտեղումն ու գործակցութեան:

Համանուն ամսագրին մասն, *ՀԱՄԿ Հայագիտական Տարեգիրքը* եւս պաշտօնական հրատարակութիւնն է Կիլիկիոյ կաթողիկոսութեան, այն միակ տարբերութեամբ՝ որ մինչ առաջինը կը ցոյացնէ Ս. Աթոռին ազգային-եկեղեցական գործունէութեան պատկերն ու դիմագիծը, երկրորդը կը մնայ մասնագիտական ամպիւն մը, բացառաբար տեղ տալով հայագիտական բնոյթի լուրջ յօդուածներու եւ ուսումնասիրութեանց, ձգտելով դառնալ *«հաւաքարան հայ գիտական մտաւորականութեան»*, ինչպէս բնորոշած էր Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոս, սոյն Տարեգիրքին հիմնադիրն ու անդրանիկ խմբագիրը, Յիշդ յիսնամեակ մը առաջ, անոր Ա. թիւին լոյս ընծայման առիթով:

Արդարեւ, 1948ին էր, որ Յովսէփեանց Կաթողիկոսի անձնական ճախածնութեամբ հրատարակ կը հանուէր Տարեգիրքին առջինն թիւը, 236 էջերէ բաղկացեալ, ուր կային 21 յօդուածներ, 16 աշխատակիցներով: Ինչ մեղձ սակայն, որ հանդէսին հետագայ գնացքը պիտի յատկանշուէր տարապայման անկանոնութեամբ: Եթէ Բ. թիւը լոյսին պիտի գար 1950ին, ապա Գ. թիւը՝ միայն 1957ին, ակամայ վերջակէտ մը զնկողով

այս բաղձալի ձեռնարկին: Երկա՛ր բացակայութեմէ մը հտֆ սակայն, երբ շատերու յիշողութեմէն իսկ ջնջուած էր Տարեգիրքը, Դարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի (Սարգիսեան) Օսթրաւոնուքեամբ 1980ին վերստին կը հրատարակուէր անիկա, Նոր Շրջանի նորագրեալ կազմով եւ Արտաշէս Տէր-Խաչատուրեանի գործադիր խմբագրութեամբ: Այս Նոր Շրջանէն լոյսին բերուած էր ցարդ չորս հատոր, վերջինը՝ 1994ին:

ՀԱՍԿ Հայագիտական Տարեգիրքի այժմու միացեալ քիւր (Է.-Ը. տարի, 1995/96) կը բաղկանայ 680 էջերէ, ուր իրենց աշխատակցութիւնը բերած են շուրջ 40 գրիչներ, 50 յօդուածներով: Համդէսին խմբագրութիւնը, Օսթրաւոնուքեայ քիւն մամն, յանձնուած է կրկին Դպրեվանքի աշխարհական շրջանաւարտներէն երիտասարդ լրջախոհ մտաւորականի մը՝ Իշխան Զիֆթեանի: Իր «յառաջարան» խօսքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս Օսթրաւոնուքեայ յանձնառու կ'ըլլայ «հետեւողական հերքականութեամբ» ապահովել Տարեգիրքին անխափան հրատարակութիւնը, ապա մասնաւորաբար դիտել կու տայ, թէ *«մեր կրթական ու մտաւորական շրջանակներէն մերս հայագիտութեան նկատմամբ ընդհանուր անտարբերութիւն մը կը մշտնապէս: Ամերածեղտ է որ մեմէ յատուկ կարեւորութիւն ընծայենք հայագիտական ուսմանց ու հրատարակութեանց եւ չձգենք որ մեր հոգեմտաւոր հարըստութիւնները միայն ուրիշները պեղեն»:*

«Պեղում»ի շնորհակալ այս աշխատանքն է ահա, գոր կը կատարեն Տարեգիրքին աշխատակիցները, Հայ Եկեղեցւոյ պատմութեան, Հայաստան Աշխարհի անցեալին, սփիւռքեան երեսոյթներու, գրականագիտական հարցերու, մատենագիտական հետախնդրութեանց, արխիւային մամակներու կամ փաստաթուղթերու, գրախօսութիւններու եւ ակնարկներու ընդմէջէն:

Սկսելով Հայ Եկեղեցւոյ պատմութեան առընչուող նիւթերէն, Տարեգիրքը առաջին հերթին աստուածաբաններու տրամադրութեան կը յանձնէ Ամբիլիասի մատենադարանէն ձեռք ձգուած մեքենագիր (ու ենթադրաբար՝ անտիպ) երկասիրութիւն մը՝ *«Աստուածաբանութիւն»* խորագրեալ, անցեալ դարու երեսնի հոգեւորականներէն Գաբրիէլ Արք. Այվազովսիի (Այվազեան) գրիչէն: Այվազովսի, որ Միսիսարեան Օսթրաւոնուքեայէն միարան մը եղած է ու հետագային դարձած Հայ Եկեղեցւոյ գիրկը, գրաբար լեզուով շարադրուած իր սոյն երկասիրութեամբ (որմէ հրամցուած է հատուած մը միայն) մաշակ մը կու տայ իր ժամանակաշրջանի աստուածաբանական մտածողութեան:

Յիսուսեան միաբանութենէն Հ. Սահակ Վրդ. Քէշիշեան (Պէլյորոֆ), հատուած մը տրամադրած է Տարեգիրքին՝ Ս. Ներսէս Լարրոնացիի «Մեկնութիւն Պատարագի» գործին փրանսերէն թարգմանութենէն, հանդիպակաց էջերու վրայ կողմակողքի զուգակցելով ժԲ. դարուն գրի առնուած սոյն երկին գրարար քննարկէն ու փրանսերէն թարգմանութենէն կարգ մը մտայններ: Այս առընչութեամբ, խմբագրական ծանօթութիւն մը դիտել կու տայ, թէ Լարրոնացիի վախճանման 800ամեակին առիթով (1198-1998) Հայր Սահակ ի մօտայ լոյսին պիտի ընրէ թարգմանական վերանշեալ իր աշխատանքին ամբողջութիւնը, առանձին գիրքով:

Գերմանարմակ աստուածաբան եւ բանասէր Խաչիկ Բաֆֆի Կագեր իր հայեացքը կը սեւեռէ անցեալ դարու վերջերէն սկսեալ, շուրջ 20 տարիներ տեւող այն հետաքրքրութեան վրայ, զոր գերման բողոքական շրջանակներ ցուցաբերած են Հայց. Եկեղեցւոյ բարեկարգական շարժումին նկատմամբ, մասամբ գործակցելով մոյմիսկ Ս. Էջմիածնայ Մայր Աթոռին հետ: Գերմանացիէ շեշտած են օրին, որ «բարեկարգութիւնը Հայց. Եկեղեցւոյ մէջ յառաջ պէտք է գայ ներսէն եւ ոչ թէ միսիոնարական արտաքին միջամտութիւններով»: Խ.Բ. Կագերի ուսումնասիրական այս ակնարկը Տարեգիրքին մէջ տեղ գտած է իր գերմաներէն քննարկով, որուն կցուած է հայերէն պատշաճ ամփոփում մը:

Հարաւային Ամերիկայէն Վարդան Մատթէոսեան, որ «մնայուն քննիչ»ն է այլեւս մեր հայագիտական պարբերականներուն, լուսարձակի տակ կ'առնէ «Հայց. Եկեղեցիի ծագումն ու զարգացումը Պուէնոս Այրէսի մէջ (1912-1938)»: Ըստ իրեն, արժանաւոր համայնքը ծնունդ կ'առնէ 1909ի Ատանայի ջարդերէն անմիջապէս յետոյ, անդրամիկ հայ հոգեւորականը (Պաղտատար Բենյ. Պարասաթեան) այդ ամիսը կը հասնի 1912ին, առաջին հայկական աղօթատեղիները կը բացուին 20ական թուականներուն, մինչ Պուէնոս Այրէսի Ս. Գր. Լուսաւորիչ մայր տաճարը կը կառուցուի ու կ'օծուի լոկ 1938ին: Մատթէոսեան միջանկեալ կ'անդրադառնայ այդ տարիներուն հայ բողոքական կուսակցութեանց միջեւ ծագած ջլատիչ պայքարին ու թեմական-եկեղեցական վարչութեանց տիրապետելու անոնց փորձերուն:

Պատմագրական կամ զուտ գրականագիտական յօդուածներու կարգին՝ ուշադրութիւն կը գրաւէ նախ Գլոս Մութաֆեանի փրանսերէն ծաւալուն պատմական ակնարկը՝ «La Genese du Royaume Armenien de Cilicie» («Կիլիկիոյ հայոց թագաւորութեան ծագումը»), որ կը փորձէ ժԲ. դարու պատմու-

Ուրփեամբ տեղ գտած էր 1997ին Պէյրուք հրատարակուած իր Ուխտավերջին գրքին՝ «Մարտ»ի մէջ եւս, «էական ախորհար» խորագիրով):

Յակոբ Մանուկեան (Պէյրուքէն), որուն անունին ըզգմիցս հանդիպած ենք «Բագին» ամսագրի երբեմնի թիւերուն մէջ, ՔՈՍական վերլուծման ենթարկած է Սղեմի գահ մեր գրագետներէն ու գեղապաշտ սերունդի արժանատր Աերկայացուցիչներէն Տիգրան Զէօկիւրեանի «Վամբը» վիպակը (1913 թ.), հետաքրքրական, այլեւ սրտախօսիկ մերձեցումով մը թափանցելով հեղինակին ներամձական ապրումներուն խորքը ու պարզելով «զգացական տարերքը» տուեալ վիպակին: Աւելորդ չէ յիշեցնել թերեւս, որ «Վամբը», օրին, գնահատուած էր գրական տարբեր շրջանակներու կողմէ: Յ. Օշական, դեռ 1914ին, այս վիպակին առիթով գրած է.

«[Զէօկիւրեանի] աշխերը կը պահեն Ուրբ գերգայտութիւն մը, եւ որ իրերուն վրայ մայած ստեն գիտէ հոն տեսնել պահուրտած, բանկագին պատկերներ, անոնցմէ՝ որոնք կը փախչին ռամիկ մայուածներու հաստորթեմէն» (տե՛ս «Մեհեան» հանդէսը, թիւ 2, էջ 30):

Լիբանանահայ ծանօթ մանկավարժ ու գրադատ Գրիգոր Շահինեանի ստորագրութիւնը կրող էջերը (345-353) վերցրուած են անոր «Յաղագս Շահան Շահնուրի» խորագրեալ անտիպ մէկ հատորէն: Այստեղ, լուսարձակի տակ կ'առնուին «երապարակագրականէն գեղարուեստականը գացող ըմբածիրի մը վրայ» դեգերող Շահնուրի կարգ մը լրագրական գրութիւնները: Իր կարգին, գրականագետ Սուրէն Դանիէլեան (Սրեւանէն) Քննարկումի կ'ենթարկէ պոլսահայ հանրամանչ արձակագիր Ռոպէր Հատտէնեանի «Առաստաղը» վէպը (1983 թ.), գայն դասելով «20րդ դարի վերջին Քառորդում ստեղծուած հայ լուսագոյն վէպերի շարքը» (Ս. Դանիէլեանի այս գրութիւնն ալ, անմշան յապատումներով, նախապէս տեղ գտած էր մոյն հեղինակին Պոլիս տպուած (1996) «Ռոպէր Հատտէնեան-ճերաշխարհի գեղարուեստական ՔՈՍութիւն» մեմագրական հատորին մէջ):

Սագօ Օզմայեանի (Պէյրուք) օգտաշատ աշխատանքին շնորհիւ՝ կարեւորութիւնը կը տրուի ունեմայու ամբողջական մատենագիտութիւնը ՀԱՍԿ Հայագիտական Տարեգիրքին, 1948-1994: Օզմայեան, որ անցելին կազմած ու հրատարակած է ստուար մէկ հատորը Սիմոն Սիմոնեանի «Սփիւռք» շարաբաթերքի (1958-1975) մատենագիտութեան, 30 էջերու երկայնքին կու տայ Տարեգիրքին ցարդ լոյս տեսած 7 հատորներուն (1948, 1950, 1957, 1980, 1982, 1984, 1994) լրիւ մա-

տեմագիտութիւնը՝ հոմ երեցած յօդուածագիրներում անուն-
ներով, անոնց ստորագրած յօդուածներում խորագիրներով
և բովանդակութեանց հպանցիկ ծանօթացումով: Այս «մատե-
նագիտութիւն»-ն ի յայտ կու գայ, որ Տարեգիրքին 7 հատոր-
ները միասնաբար կը հաշուեն շուրջ 2800 էջ, մօտ 100 աշ-
խատակիցներով:

ՀԱՍԿԻ անրկայ թիւին մէջ առանձին գլուխ մը կը կազմէ
«Նամակամի»-ի բաժինը: Հոս, առաջին հերթին, իրանահայ
բանիքում բանահաւաք Լեւոն Գ. Միմասեանն է կրկին, որ Նոր
Ջուղայի Ամենափրկիչ վանքի հարուստ արխիւէն յայտն կը
բերէ թիւով ութ մամակներ, գրուած՝ «Ազգարար»-ի հիմնա-
դիր Յարութիւն Ա. Գեղյ. Շմառնեանի կողմէ (1787-1803 թ.):
Նամակները, որոմբ մեծաւ մասամբ ուղղուած են Նոր Ջուղա-
յի օրուան առաջնորդներուն, մասնաւոր շահեկանութիւն մը
չեն անրկայացներ թէև, քանի կ'արծարծեն առտնին հարցեր:
Բնականաբար, անոնք գրուած են գրարարախառն լեզուով և
կը կրեն այդ շրջանին տարածուն եղող ռամկօրէնի տիրական
ագոյցութիւնը: Շմառնեան Էնյ. (1750-1824) Մատրասի հա-
յոց հոգեւոր հովիւ կը մշակակուի 1786ին, երբ տարի յետոյ
սպարան կը հիմնէ այնտեղ, յոյս կ'ընծայէ հայ առաջին թեր-
թը (1794) ու կը հրատարակէ 20 անուն գիրք:

Էմիլ Յակոբեան, շարունակելով Տարեգիրքին մատրոզ
թիւով սկսած իր աշխատանքը, յայտն կու տայ Ատրպատա-
կանի հայոց թեմի երբեմնի առաջնորդ Ներսէս Արք. Մելիք-
Թանգեանի արխիւէն փունջ մը հետագրեր ու մամակներ, անոր
կողմէ գրուած կամ իրեն յղուած (1919-1928 թ.): Ասոնց մէջ
հետաքրքրական են յատկապէս Նիկոլ Աղբալեանի գոյգ մա-
մակները Սրբազանին, ուղարկուած Երուսաղէմէն (1924) և
Ադեմաանդրիայէն (1926):

Իր կարգին, Պետրոս Յ. Յովհաննիսեան ալ կը հրամցնէ
փունջ մը մամակներ թորգոմ Արք. Գուշակեանէն՝ հայագէտ
փրոֆ. Ն. Ադոնցին ուղղուած (1930-33 թ.): Ծանօթ է, որ
Գուշակեան Երուսաղէմի պատրիարքութիւնը վարեց 1931-1939,
յաջորդելով Արմաշի իր մեծանուն ուսուցչին՝ Եղիշէ Արք.
Դուրեանին: Նամակներուն հրատարակիչը դիտել կու տայ,
թէ «Հրատարակուող մամակները ոչ միայն փաստական
հարուստ միջոց են պարունակում ժամանակի հասարա-
կական-ազգային կեանքի զանազան իրադարձութիւննե-
րի մասին, այլև երկու մեծերի անկեղծ քարեկամու-
թեան ու մտերմութեան խօսուն վաւերագրեր են»: Այս
առթիւ, հետաքրքրական է իմանալ, օրինակ, որ Գուշակեանի
պատրիարք ընտրութեան մէջ կարեւոր դեր ունեցած է Բար-

գեղ Աթոռակից Կաթողիկոս Կիլիկեւրեան, մինչ հակաթոր- գումեան կեցուածքով աչքի գարկած են Պոլսոյ «Ազգարար»ը (Մանուկ Ասլանեանի) եւ Գահիրէի «Յուսարեք»ը:

Ամիսան հաճոյքով կը կարդացուին մաւր փրամսահայ հրգիծագիր Նշան Պէշիկթաշլեանի գրած 6 մամուլները հալէ- պահայ իր մէկ բարեկամին՝ Յ. Համեանին: Ատոնց մէջ ի յայտ կու գայ Պէշիկթաշլեանի կեանքին տուեալ շրջանի (60ական թ.) տարօրէն անձուկ վիճակը, պարզ մտերմութիւնը անեմա- պարզ մարդոց հետ, ու ապա՝ այս վերջիններուն հիւրընկա- լութիւնն ու սրտբացութիւնը գրողին համդէպ, որ Հալէպ մնա- ցած է շուրջ 3 ամիս, 1961ին:

Հայագիտական համդէպները, հիմէն ի վեր, հետամուտ եղած են առանձին բաժին մը վերապահել գրադատականե- թու կամ գրախօսական ակնարկներու: Նոյնն է պարագան ՀԱՍԿ Տարեգիրքին, որուն ներկայ թիւին մէջ այդօրինակ յօդուածներ ստորագրած են Մարտիրոս Միմասեան, Բաֆֆի Բէպապեան, Արա Սանթեան, Վարդան Մատթոսեան, Արրա- համ Ալիքեան, Միհրան Միմասեան եւ Լեւոն Գ. Խաչերեան:

Այս շարքին մէջ ուշադրութեան արժանի է մասնաւորա- բար հալէպարմակ Միհրան Միմասեանի «Հայերէն մտրա- յայտ հմատիպ գիրքեր եւ մատենագիտական լրացում- ներ» 50 էջոց աշխատասիրութիւնը, որ թիրախ ունի Երե- ւան տպուած երկու արժէքաւոր գիրքեր — «Հայ գիրքը 1801- 1850 թուականներին» (հեղ.՝ Հայկ Դուրեան, 1967) եւ «Հայ գիրքը 1612-1800 թուականներին-Հայ հմատիպ գրքի մա- տենագիտութիւն» (հեղ.՝ Նիմեյ Ոսկանեան, Բնարիկ Կոր- կոտեան եւ Անթառամ Սաւաթեան, 1988): Միմասեան ճշդում- ներ, յաւելումներ եւ սրբագրութիւններ կ'ընէ այս երկու հա- տորներուն մէջ յիշատակուած կարգ մը հրատարակութեանց վրայ, բայց ինչ որ աւելի՛ կարեւոր է՝ կը յայտնաբերէ ու համառօտ կը ներկայացնէ ատոնց մէջ տեղ չգտած ու ցարդ հայ մատենագէտներուն բոլորովին անծանօթ 43 հմատիպ հա- յերէն տպագրեալ գործեր: Միմասեանի սոյն աշխատանքը ու- շադրութիւն կը գրաւէ մամուլն առնելով, որ Հալէպի մամուլ «անջրդի» վայրի մը մէջ մատած, ուր հայկական ո՛չ մէկ մա- տենագրարան կամ արխիւային պահեստ գոյութիւն ունի, կըրցած է ան յայտնաբերումներ կատարել եւ ներդրում մը բերել տը- րու կայուածին:

Իր կարգին, Արրահամ Ալիքեանի գրութիւնը մէջտեղ կը ընրէ այն բազմաթիւ սխալները, որոնք տեղ գտած են Գ. Վա- րուժանի «Երկերի լիակատար ժողովածու»ի 3 հատորնե- րուն մէջ (տպ.՝ Երեւան, 1986-87): Ալիքեան, որ խորահմուտ

է արեւմտահայ դասական մեր բանաստեղծութեան խորքին ու ոգիին, կը կատարէ շափազանց դիպուկ ու կարկամեցնող ճշդումներ:

Իսկ Գալիֆորնիա արտագաղթած հայրենի բանասեր եւ հայագէտ փրոֆ. Լ. Գ. Նաչերեանի յօդուածը կ՛օտ պատասխան մըն է «Քաղաքացի» 1989ի թիւին մէջ լոյս տեսած ռմն Անդրամիկ Տէր-Ներսէսեանի (հաւանարար ծածկանուն մը) «սեւազրէֆեան» գրախօսականին՝ իր «Դաւիթ քէկ» աշխատասիրութեան մասին (տպ.՝ Էոս Աննելըս, 1988): ՀԱՄԻ խմբագրութիւնը ամբողջովին տեղ տուած է փրոֆ. Նաչերեանի այս «Քաղաքացիական»ին, յիշեցնելէ ետք, թէ «Քաղաքացի» մերծած է զայն տպել ինչ-ինչ պատճառներով:

Տարեգիրքին էջերը իրենց լրումին կը հասնին «մահագրութիւն» բաժնով, ուր կու գան դամբանակերտի 1995/96ի հայագիտութեան կարգ մը կորուստները՝ Էմմանուէլ Պիւզեան, Աւետիս Սաննեան, Բիւզանդ Եղիայեան, Փառլո Գումեօ, Գէորգ Բամպուֆեան, Հ. Սահակ վրդ. Ճեմնեմեան եւ Նորայր Արք. Պողարեան:



Արագ «շրջապտոյտ» մը կատարած եղանկ Տարեգիրքին շարքերուրը, հպանցիկ ակնարկ մը մետերով հոն լոյս տեսած շահեկան յօդուածներուն մէկ մասին վրայ միայն, պարզապէս կարելի պատկերացում մը փոխօնցելու համար հատորին ընդհանուր բովանդակութեան ու այնտեղ արծարծուած միւրերորդներին ու տարողութեան մասին: Այս առթիւ, շեշտեմք ամմիջապէս, թէ գիտական ու ակադեմիական հիմքը, բժախնդիր ու կատարելապէս անթերի խմբագրութիւն հետ՝ գլխաւոր յատկանիշներն են սոյն Տարեգիրքին: Աւելցուցէ՛ք ասոնց վրայ՝ անվրէպ տպագրութիւնն ու գեղակազմ կափարիչը, ստացած կ'ըլլա՞ք արդէն յանկուցիչ ու փառաւոր երատարակութիւն մը, որուն առընչութեամբ հարկ կը սեպեմք արձանագրել միաժամանակ հետեւեալ դիտողութիւնները.—

1) Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնական այս երատարակութեան մէջ գլխաւոր բացականերն են... Կիլիկիան միարանները: Անուշաւան Մ. վրդ. Դանիէլեանի («Լէրդ դարու գոյգ ճեռագիրներ») եւ Գրիգոր վրդ. Զիֆթեանի («գրչագիր հմայիլ մը») կարն ակնարկները, գումարուած՝ վարդան Արք. Տեմիրեանի մէկ մահախօսականին վրայ, ընդամէմը կը կազմեն սոսկ 15 էջ, ինչ որ բնականաբար աննշան (ու

արեամարեհի) մէկ տակում է ծաւալում հատորին ու չ'արդարացնենք Միարանութեան մկատմամբ մեր լուրջ ակնկալիքները:

2) Ճէյմս Ռասըլի (էջ 33-48), Ռէյմոն Յ. Գեորգեանի (էջ 171-184) եւ Նելիտա Պուլգուրեանի (էջ 197-204) օտարալեզու յօդուածներում հարկ էր կցել հայերէն ամփոփում մը, որ սովորութեան կարգ անցած է արդէն հայագիտական մեր պարբերականներում համար, եւ գոր կիրարկած է ՀԱՄԿ մասնակիօրէն՝ Խաչիկ Բաֆֆի Կազէրի եւ Դոստ Մութաֆեանի յօդուածներում պարագային:

3) Կարգ մը յօդուածագիրներու գրութեանց մէջ սպրդած են որոշ վրէպներ, գորս կ'ուզէինք ուղղել ստորեւ.

ա) Հայկ Անէմեանի «Նշանաւոր իրանահայեր» յօդուածին մէջ (տե՛ս էջ 186) պարսկահայոց անդրամիկ թերթը կը համարուի «Աստղ Արեւիկեան» շաբաթաթերթը, ինչ որ սխալ է անշուշտ, քանի իրանահայ առաջին թերթը կոչուած է «Շաւիղ», լոյս տեսած Թեհրան՝ 1894ին, Յովհ. Խան Մասեհեանի մատնածեղծութեամբ: «Աստղ Արեւիկեան»ը հրատարակուած է աւելի ուշ, 1896ին:

բ) Միեւնոյն յօդուածին մէջ, վիպասան Բաֆֆիի մահուան թուականն նշուած է 1889 (տե՛ս էջ 193): Ճշդել՝ 1888:

գ) Նորայր Արք. Պողոսեանի վախճանման առթիւ գրի առած իր մահախօսականին մէջ, Վարդան Արք. Տէմիրեան տեղ մը կ'ակնարկէ «1921ին, Այնթապի հայոց դիւցազնական ութամսեայ ինքնապաշտպանութեան» (տե՛ս էջ 673): Յայտնի իրողութիւն է, որ այնքապահայոց ինքնապաշտպանութիւնը տեսած է *աւելի քան տասը ամիս*, նշգրտօրէն՝ 1920 Ապրիլ 1էն մինչեւ 1921 Փետրուար 8:

դ) Դարձեալ նոյն մահախօսականին մէջ, տեղ մը, մտքերու քացայայտ շփոթ մը յառաջացած է, երբ կ'ըսուի, թէ «Տ. Նորայր սրբազան 1951ին ծայրագոյն վարդապետ ձեռնադրուեցաւ եւ 1973ին արժութեան պատուին եւ տիտղոսին արժանացաւ [...]» (տե՛ս էջ 677): 1951ը Նորայր վարդապետի *Եպիսկոպոսական ձեռնադրութեան* թուականն է, ինչպէս արդէն նշուած է միեւնոյն էջին վրայ, քանի մը պարբերութիւն առաջ. թէն կը տարուինք մտածել՝ թէ Պողոսեան կրնայ *միաժամանակ* ստացած ըլլալ ծայրագոյն վարդապետութեան եւ Եպիսկոպոսութեան աստիճանները, քայց հարկ էր այս կէտը լուսարանել ըստ պատշաճի:

ե) Ն. Պէշկեպաշեանի մամականին տողատակի ծանօթագրութեանց մէջ (թիւ 3, էջ 480) Գրիգոր Պայթարեանի համար կ'ըսուի՝ «Յ. Հանեանի յանախորդներէն, գաւակը Սուրէն Պայթարեանի»: Ուղղել՝ «գաւակը Արրահամ Պայթարեան»:

նի», թէն այս մանրամասնութիւնը բոլորովին աւելորդ է, քանի անձը սոսկական անհատ մըն է ու ո՛չ մէկ համգամամբ կը վայելէ...

զ) Փափաքնի պիտի ըլլար, որ խմբագրութիւնը յստակացընէր Յակոբ Նայեան Պատրիարքին ծննդեան թուականը, որ հակասական պատկեր մը կը ներկայացնէ Տարեգիրքին մէկ էջէն միւսը: Արդարեւ, մինչ Բ. Նղիայեան կ'ըսէ, թէ ան «պիտի վախճանէր 1764ին, 63 տարեկանին» (ինչ որ կը նշանակէ, թէ ծնած էր 1701ին, տե՛ս էջ 244), Շուշանիկ Նազարեան անոր ծննդեան թուական կը նշէ 1706ը (տե՛ս էջ 255): Մեր կարգին, հաստատած եղանք, թէ այս բոլորէն դուրս, Հայկ. Սով. Համ-րագիտարանն ալ Նայեանի ծննդեան համար ցոյց կու տայ 1702 թուականը (տե՛ս Հ.Ս.Հ., 6րդ հատոր, էջ 69):

Այս նշումները, ի հարկէ, ո՛չ մէկ ձեռով կ'աղաւաղեն փայլուն դիմագիծը Տարեգիրքին, որ կիլիկիոյ Կաթողիկոսութեան հնչում ու գործնական մասնակցութիւնն է, որ կ'ապահովէ Սփիւռքի հայագիտական շարժումին, պատուարեր տեղ մը գրաւելով «Բագմավէպ»ի, «Հանդէս Ամսօրեայ»ի եւ «Հայկազեան Հայագիտական հանդէս»ի ի վեր:

Լիայոյս եմք, որ հայագիր ոսումնասիրութեանց պատկանելի այս բեմը առանց ընդմիջումներու կը շարունակէ իր երթը, որպէսզի ՀԱՍԿ ո՛չ միայն անուղղակիօրէն հակակշռէ վերջին տասնամեակին թափ առած օտարալեզու հայագիտական հրատարակութիւնները, այլեւ առիթ ընծայէ, որ հա՛յ հայագետները եւս գիտական մօտեցումով ու մեթոտիք աշխատանքով լոյսին բերեն ստուերի տակ անշքացած ու փոշիներու մէջ թաթխուած մեր մշակոյթին քաղմադարեան գանձերը:

Հալէպ

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՄԱՌԹԼԻՔ ԱՍՏԵՆԱԿԱՐ 32

«ՀԱՄԱՐՈՅՐԸ»
(Դեղինակ՝ Վարդան Զօրենց)

ՀԱՄԱՐՈՅՐԸ

Վարդան Զօրենցի «Համարոյրը» խորագրեալ գրքոյկը, որ 32րդ հրատարակութիւնն է «Միփարեան մտնեցալար»ի, իր 56 էջերուն մէջ կ'ամփոփէ Աւետարանէն ներշնչուած եօթը կարճ արձակ գրութիւններ:— «Համարոյրը», «Ապտակը», «Զաղկումը», «Գետրոսի ուրացումը», «Դատապարտութիւն», «Մէկը միայն-յիսուն երկու շաբաթներու մէջէն» եւ «Սուտը որպէս փաստ»:

Երբեակ յօրեկաններու՝ Գրիստոնէութեան 2000ամեակին, Հայաստանի մէջ Գրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակին եւ Միփարեան միարանութեան հիմնադրութեան 300ամեակին ձօնուած Վարդան Զօրենցի (Վարդան Եպս. Աշգարեան) նորագոյն հրատարակութիւնը, որ տասներորդ անուն գրքոյկն է հեղինակին նոյնարձայն արձակ երկերուն, այս անգամ մասն կը ներշնչուի Գրիստոնէական հոգեմտաւոր ճշմարտութիւններէ, երբ Աւագ Շարքուն ուսանելի դասերուն ու պատգամներուն միջոցաւ կը փորձէ քափանցել Կեանքի, Գերագոյն ճշմարտութեան եւ Յանձնարարութեան խորհուրդներու անշրպտեմ ներս:

«Համարոյրը» հատորիկը կը բացուի նոյնանուն գրութեամբ, որ Յուդայի մեղապարտ համբոյրին ընդմէջէն կ'արժարձէ մեղքին ահաւորութիւնը եւ կը հրահանգէ ասոյ բոլոր տեսակի մեղքերը, որովհետեւ ա՛ն, որ մեղքը կ'ատէ, «կը սիրէ Աստուած իր ամբողջ հոգիով, սրտով, մտքով, կամբով», այլ խօսքով՝ Աստուծոյ սիրով կ'ապահովէ երջանկութիւն, ուրախութիւն, անդորրութիւն ու խաղաղութիւն, եւ կ'արժամանայ *յաւիտեանական երանութեան*:

Պարզ, կտրուկ, դիմառնական ոճով Վարդան Զօրենց ո՛չ միայն կ'ընդգծէ մարդկային կեանքը իմաստաւորող քրիստոնէական յանրժական արժէքները, այլեւ կը դառնայ պատգամախօսը Միրոյ վարդապետութեան՝ վեր առնելով մարդ էակին իսկական կոչումն ու կեանքի ճշմարիտ ուղին յուսաւորող արժէքները:

Մարդկութեան մեղքերուն համար մարմնացած ճշմարտութեան՝ Գրիստոսի մարդակերտ ուղեւորութիւնը կը շարունակուի յաջորդ գրութիւններով: Մեղապարտ համբոյրին կը յաջորդէ աշխարհի Փրկիչին ապականուիլը անզգայ զինուորներէն, Փիզիքական ցաւէն աւելի՝ նախատիմին հոգեկան անդրադարձը, ապա՝ հրապարակաւ ձողկումը, խարագանումը, արիւնաթաթախ վերքերը, սարսափն ու ուրացումը, Գրիստոսի վնասկամութիւնը եւ, մա՛նաւանդ՝ մարդկութեան մեղքերը Բաւելու եւ Ղէպի Աստուած հաստատ կամուրջ նետելու ուխտը, որպէսզի վերջ գտնէ մարդկային մեղքերուն «ամէնէն լպիրշը»՝ անամօթութիւնը եւ գիտակից մարդը վերադառնայ իր ճշմարիտ էութեան ու կոչումին:

Աստուածորդիին Աւագ Շարքուան կենսափորձին ընդմէջէն մերթ պատգամի ուժգնութեամբ, երբեմն խրատական Բաղր շնչոտով, իսկ այլ պահերու անամոնական երանութեամբ հնչող հրաւերները կը զարգանան ու աւելի ամրոջական իմաստ ու տարողութիւն կը ստանան *«Պետրոսի ուրացումը», «Դատապարտումը»,* բայց մա՛նաւանդ՝ *«Մէկը միայն-յիսուն երկու շաբաթներու մէջէն...»* եւ *«Սուտը որպէս փաստ»* անուն գրութիւններու երկայնքին: Վարդան Զօրենց կը պարզէ եւ կը խորհրդանշէ, կ'ընդգծէ ու կը պատգամէ *«Պաշին ահաւոր դասը-Աստուած որքան սիրեց մարդիկ, մարդիկ՝ որքան ատեցին Աստուած»:*

Այսպէս, Խաչէն ու Խաչեցեալէն ան կ'անցնի Գրիստոսի շարունակուող շարձարանքի թիրախ «խորհրդական մարմնոյն»՝ Եկեղեցիին», կը թուէ մարդուն ճեւղով կատարուող ճոր անարգանքներն ու սուտերը, մէկ յայտարարի տակ կը բերէ «Կայափայլէն միջնի արդի Անթապաշտները, Պիղատոսէն միջնի այժմու փառամոլները», եզրակացնելու համար, թէ ինչպէս երէկ, այսօր եւ վաղը մանաւանդ պարտուին Գերագոյն ճշմարտութեան բոլոր թշուառները, *«որովհետեւ իրենց գործը մեռածի մը հետ չէ, փտածի մը հետ չէ, փոշիացածի մը հետ չէ-այլ Յարուցեալի մը»:*

Վարդան Զօրենցի *«Համբոյրը»* հատորիկը կը փակուի այս հաւատքով եւ այն համոզումով, որ մէկ է ճշմարտութիւնը, անկասելի է Գրիստոսի յաղթանակը, որովհետեւ Գրիստոսի Խաչով յանրժացած ճշմարտութիւնը «դարերու դիմաց՝ դարերը մաշող յաղթութիւն է հզօր...»:



**«ՊԱՐՏՈՒԱԾ
ԱՆՈՅԵԱՆԻ
ՄԸ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»**
(Գեղիմակ՝ Երուանո
Տեմիրճեան)

**ՊԱՐՏՈՒԱԾ
ԱՆՈՅԵԱՆԻ ՄԸ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի
Երջանային Վարչութեան
Նախագահութեամբ վերջերս
լոյս տեսաւ Երուանո Տեմիր-
ճեանի «Պարտուած ախոյ-
եանի մը պատմութիւնը»

անուն իմքնակենսագրական հատորիկը՝ քաղաքական միութեանկանի մը գործն ու յիշատակը ըստ արժանւոյն յարգելու եւ «Արեւելք-ժարդաշխարհ»-ի 1960ական տարիներու թիւերում մէջ թաղուած վերոնշեալ «ամտիպ»ը մոռացութեան վտանգէն փրկելու յստակ առաջադրանքով: Այս իսկ նպատակով, Սեդա Գրիգորեանի խմբագրութեամբ իրականացած այս գրքոյկը ընթերցողին կը ներկայանայ իրերայաջորդ երկու մասով. առաջին րաժիմը ի մի կը խմբէ Երուանո Տեմիրճեան անուն քաղաքական միութեանկանին, ազգային ու կրթական գործիչին, դաշնակցական մտաւորականին եւ հայուն անժամանակ կարուստին առիթով օրին արտասանուած խօսքեր եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Վարչութեան «Ինչո՞ւ այս գիրքը» քաղաքագիրը, իսկ երկրորդ մասը՝ հանգուցեալ հեղինակին «Պարտուած ախոյեանի մը պատմութիւնը»:

«Համազգային»ի «Վահէ Սէքեան» տպարանէն 1998ին լոյս տեսած այս հատորիկը, որ կը բաղկանայ 64 էջերէ, կը բացուի Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի «Անճնական վկայութիւն մը Երուանոյին մասին» վկայութեամբ, ուր երեք էջերու մէջ, 17 տարիներու վրայ տարածուած ամէնօրեայ, ուղղակի եւ կենդանի յարաբերութիւններու լոյսին տակ՝ Արամ Ա. Վեհափառ կը կարկառէ կերպարը լուսարձակներէ, պատիւներէ ու համգամանքներէ հեռու մնացած «քաղաքակրթական եւ քաղաքատարածք տաղանդներով, ապրումներով ու տազնապներով, փորձառութեամբ ու գործունեութեամբ» հարուստ այս *անճնա-*


ւորութեան՝ իրրեւ մարդ, հայ դպրոցին հետ նոյնացած կրթական մարզի պատասխանատու անձ:

Այլ յաջորդէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային վարչութեամբ «Ինչո՞ւ այս գիրքը» քացատրողականը, որ կ'անդրադառնայ հատորիկին յոյս ընծայման դրդապատմաններուն, կը մշտնադարձաբար սփիւռահայ կեանքին մասին վկայութիւն մը հանդիսանայու արժանիքը, վեր կ'առնէ «նոյն յափշտակութեամբ ու հանոյժով» կարդացուելու անոր քարմութիւնն ու խորունկ հայկականութիւնը, հզորակցանելու համար, որ մերկայացուած պարտութիւնը պարզապէս պատրուակ մըն է, «որ պէտքի անոր գրիչը յաղթանակներո՞ւն հրգը հիւսէ եւ Հ.Մ.Ը.Մ.ական ոգին փոխանցէ երէկուան դայիկին ու այսօրուան երէցին, այլեւ՝ մեր օրերու մարզիկին ու ապագայ պատասխանատուին»:

Ապա, իրերայաջորդ 8 էջերով, ընթերցողին կը մատուցւին 2 Մարտ 1996ին, Երուանդ Տէմիրճեանի քաղման առիթով Կարօ Թիւթումեանի եւ Սարգիս Կիրակոսեանի արտասանած դամբանականները, որոնք, իրենց կարգին, վաղածամ կորուստին դառնադառն իրականութեան դիմաց, թանկ կը գնահատեն միմէն շունչ վերջին անմացորդ նուիրումով իր ժողովուրդին ծառայած Երուանդ Տէմիրճեան մարզիկը, միութեանակամը, կրթական եւ հանրային պատասխանատուն, խմբագիրն ու մտաւորականը:

Երուանդ Տէմիրճեանի վաստակին ու կերպարին մայր գիծերը վեր առնող առաջին մասէն ետք, 16րդ էջով կը սկսին հեղինակին մարզական յուշերը իրարու գօղող այն ինը քաժիմները, որոնք ընթերցողին կը հրամցուին «Առաջին ախոյեանութիւնս», «Փորձեր», «...Ու փորձեր», «Դէպի Եգիպտոս», «Բանակին մէջ», «Յաղթանակ՝ բանակի մէջ», «Կատակ մը», «Մարզիկները» եւ «Դաշտի մեղքեր» ենթախորագիրներով:

Օրագրային անմիջականութեամբ ու լրագրական պարզութեամբ, Երուանդ Տէմիրճեան կը սկսի լակել իր մարզական յուշերուն կծիկը՝ գրուելու համար իր մարզասէր համակիրներուն եւ ընթերցողներուն հետ: Եւ հեքիաթասացի մը պէս «Հ.Մ.Ը.Մ.ի եղմիկը» կը պատմէ ո՛չ միայն իր հետաքրքրական փորձառութիւնները, յաղթանակները եւ համով-հոտով ապրումները, այլեւ «միտամանակ վկայութիւն մը կը բերէ դարակէսի սփիւռքահայ կեանքէն, միջավայրէն, մտայնութենէն եւ, մանաւանդ՝ Հ.Մ.Ը.Մ.ական նուիրումի ոգիէն, որուն ջահակիրներէն մէկը եղաւ ան, մինչեւ իր վաղածամ մահը», ինչպէս կը հաստատէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջ. վարչութեան խօսքը:



**«ԱՆԱՀԻՏ»Ի
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ**
(Կապուեց՝ Մադրանիկ
Ջէթունեան)

Արամ Ա. Վեհափառի հովանաւորութեամբ, 1988ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն լոյս տեսաւ Անդրանիկ Ջէթունեանի կազմած «Անահիտ» մատենագիտութիւն» հատորը՝ իրրիւ «Հայ մամուլի մատենագիտութեան մատենաշար»ի անդրանիկ հրատարակութիւն:

«Անահիտ»ի առաջին թիւի լոյս ընծայման 100ամեակին ձօնուած այս աշխատութիւնը, որ կը բաղկանայ 351 էջեր հաշուող իրերայաջորդ եօթը գլուխներէ, կը բացուի Անդրանիկ Ջէթունեանի ստորագրութիւնը կրող «Ներածութիւն» խորագրեալ մուտնով (էջ 5-17), որ առաջին հերթին վեր կ'առնէ հայ պարբերական մամուլի պատմութեան մէջ «բացառիկ նշանակութիւն ու տեղ» ունեցող «Անահիտ» ամսագիրի կշիռն ու արժէքը՝ իրրիւ անցեալ դարավերջի ազգային ինքնապաշտպանութեան, ազատագրական շարժումի եւ քաղաքական-գաղափարաբանական գարթօնի շիկացած մթնոլորտի մէկ հարագատ ծնունդը, որուն շնորհիւ՝ «ամ վերածուեցաւ բոլոր այդ ազգային, քաղական, գիտական, գրական, մշակութային մեծ ու փոքր իրադարձութիւններու պատմագիրը, որոնք անցան աշխարհի չորս ծագերում մէջ սփռուած հայ ազգի գլխով, իր բողոքի ձայնը բարձրացուց համիտեան եւ երիտօրէրական կոտորածներում դէմ՝ այդ բողոքներում ձայնակից դարձնելով նաեւ Ներսիսի գիտնականներու, գրողներու, արուեստագէտներու ազդեցիկ խօսքը»:

Ապա, «Անահիտ»ի քաղաքակրթական, մշակութային, գրական եւ ազգային-հասարակական դերակատարութիւնը ընդգծելով, Ա. Ջէթունեան դիտել կու տայ, որ հայ միջնադարեան գիտնականներում աւանդները զարգացնող հայ բժիշկները:

րու, բուսարաններու, փիփագէտներու եւ բնագէտներու կարկառուն ներկայացուցիչներուն յօդուածները հիւրընկալելով՝ «ԱՄՍԻՍ» ո՛չ միայն հայ ընթերցողներուն ուշադրութեամբ յանձնեց օտար գիտնականներու յաջողութիւնները, այլեւ հայ գիտնականներու միջազգային տարողութեամբ նուաճումները դարձուց սեփականութիւնը օտար շրջանակներում՝ եւրոպական օտարալեզու պարբերաբերքերու մէջ Արշակ Զօպանեանի միգրում շնորհիւ այս ուղղութեամբ հրատարակուած յօդուածներուն մամբով:

Այս ծիրէն ներս խաղացած «ԱՄՍԻՍ»ի դերին վրայ ծանրանալով՝ Ա. Զէյթունեան համգամաժողով կ'արժեւորէ «ԱՄՍԻՍ»ի եւ անոր հիմնադիրին մշակութային մեծ գործը, որուն շնորհիւ Կոմիտասի փառքը, հայ միջնադարեան տաղերու գեղագիտական որակը, հայ արուեստագէտներու նուաճումները՝ երաժշտութեան, գեղանկարչութեան, թատերական արուեստի կայունացումներէն ներս, ինչպէս նաեւ հայ բանաստեղծներու գրական յաջողութիւնները դարձան սեփականութիւնը Կ. հայ, Կ. ֆրանսացի ժողովուրդին:

Այնուհետեւ, «Ներածութիւն»ը կ'անդրադառնայ «ԱՄՍԻՍ»ի գրական դերակատարութեան, երբ կ'աւելցնէ, որ ամսագիրին առաջնութիւններէն մին եղաւ երիտասարդ, միջին ու աւագ սերունդի կարկառուն ներկայացուցիչները իր շուրջ համախմբելու, անոնց ստեղծագործութիւնները լոյս ընծայելու եւ վերլուծելու ետեւտղական միգրը, երկրորդը՝ հայ ընթերցողներուն մտանորիզունը ընդլայնելու նպատակով թարգմանաբար հրատարակած իր հարուստ էջերը, ինչպէս նաեւ՝ հայ արուեստի նմոյշներու զուգընթաց երոպական ու ասիական գեղանկարչութեան եւ քանդակագործութեան գլուխ-գործոցները ներկայացնելու շնորհակալ գործը:

Գրական-մշակութային կայունացում մեր հանրային կեանքին վրայ կամուրջ մը նետելով՝ Ա. Զէյթունեան կ'աւելցնէ, որ այս ծիրէն ներս նաեւ «ԱՄՍԻՍ» ունեցաւ ուշագրաւ դերակատարութիւն, երբ «աշխատեցաւ կրթել ազգային ոգին, բարձրացնել գիտակցութիւնն ու բարոյականը, սէր արթնցնել գեղեցիկի եւ լոյսի նկատմամբ, դասեր քաղել եեռու եւ մօտիկ անցեալի սխալ քայլերէն»:

Սգրակացնելով՝ Ա. Զէյթունեան խոր ակնածամբով կ'անդրադառնայ Ա. Զօպանեան մտաւորականին եւ անոր բազմակողմանի վաստակին՝ իբր խմբագիր, երապարակագիր, բանաստեղծ, արձակագիր, արուեստարան, թարգմանիչ, հրատարակիչ եւ ազգային-մշակութային գործիչ:

Ներածութեան երկրորդ բաժինով՝ «ԱՄՍԻՍ»ի ունեցած երկու շրջանները («Հին շրջան»՝ 1898-1911 եւ «Նոր շրջան»՝

1929-1949) մանրամասնորեն ցուցակագրել է ետք, Ա. Զէյթուն-
 հան ընթերցողին ուշադրութեան կը յանձնէ մատենագիտու-
 թիւնը կազմելու նպատակով իր որդեգրած 17 սկզբունքները՝
 մատենագիտութեան ընթերցումը դիրացնելու եւ օգտագործը-
 ւած բանալիները ծանօթացնելու առաջադրանքով:

Հատորին 19րդ էջով կը սկսի «Անահիտ»ի հարուստ մա-
 տենագիտութիւնը, որ վերջ կը գտնէ 267րդ էջին վրայ: Երկու
 մասէ կազմուած այս բաժինը՝ «Հին շրջան» եւ «Նոր շրջան»,
 համառօտ բնութագրումով ընթերցողին կը ներկայացնէ «Անա-
 հիտ»ի իրերայաջորդ համարներուն բովանդակութիւնը, ամ-
 հրածեշտ պարագային կատարելով խմբագրական Յշոյումներ:

268րդ էջով եւ հատորին երկրորդ մասով կը սկսի «Յամ-
 կեր» բաժինը՝ կազմուած հինգ ենթաբաժանումէ, որ յաջորդա-
 րար կը հրամցնէ անձնանուններու, տեղանուններու, միւթե-
 րու, պատկերներու եւ ընդհանուր խորագիրներու ցանկերը,
 իրենց թուականներով եւ էջերով:

Ա. Զէյթունեանի կազմած «Անահիտ»ի մատենագի-
 տութիւնը» հատորը կը հանդիսանայ վաւերական եւ մնայուն
 աղբիւր մը՝ հայ ուսանողին, դասախօսին, գրականագետին,
 խմբագիրին եւ գրասէր ընթերցողին համար:



**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԼՈՒՐԵՐ**

**ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՅԵԱՆ
ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ
ՕԹԱՎԱՅԻ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**



Գամատայի մայրաքաղաք Օքսֆորդի մեջ, Յունիս 30-ին, տեղի ունեցած է մշակութային և ազգայնականության մշակման և միջ-պետական համագործակցության մոտիքում մշակութի մախարարներում ակադեմիկոս համագումար մը, որուն մասնակցած է մանուկ Հայաստանի Հանրապետության մշակութի մախարար Ռոլանդ Շատոյանը:

Նունեսֆոյի հովանաւորութեամբ և Գամատայի ժառանգութեամբ մախարարութեամբ մախարարներու կայացած այս համագումարին մասնակցած են 20 երկիրներու մշակութի մախարարներ և նոյն մարզի բարձրաստիճան պաշտօնատարներ, որոնք համագումարի զեկուցական ժողովներուն զուգահեռ՝ մանուկցած են երկկողմանի հանդիպումներ:

Այս ժիրէն ներս, մախարար Շատոյանը քաղաքի և հանդիպումներ ունեցած է այլ երկիրներու իր պաշտօնակիցներուն հետ: Ան երկկողմանի հանդիպումներ ունեցած է Լեհաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Յունաստանի և Գամատայի մշակութի մախարարներուն հետ, որոնց հետ ճամբարկած է մշակութային գործակցութեամբ ակադեմիկոս քարտեզներու, փոխադարձ մշակութային շարքեր կազմակերպելու և քարտեզներ մանակամ գործեր երատարակելու աշխատանքը համակարգելու միջոցով:

Գամատայի ժառանգութեամբ մախարար Շիլա Բոփսի հետ կայացած հանդիպումի ընթացքին, ան հայրենի մախարարին առաջարկած է ստորագրել մախարարական համագործակցութիւնը՝ լատենտական միացեալ արտադրութիւններ իրականացը-

Յնու Ոսկանկով: Յաջորդ օրն իսկ, երկու մախարարները ստորագրած են մախանկան համաձայնագիրը եւ որոշած՝ կազմակերպել փոխադարձ զեղարուեստական ցուցահանդէսներ ու երախրել անհատ նրաժիշտներ, երաժշտական խումբեր, բատերախումբեր, եայլն: Հայկական կողմը առաջարկած է կազմակերպել Ատոմ Էկոյեան շարժապատկերի ժապատկերներու փառատօն մը, Երեսանի մէջ:

**ՈՒՇԱԳՐԱԲ
ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ՝
«ԱՐԱՄԻ ՏԵՏՐԱԿ»
ԸԱԹԱՆԵՐԵՆ ՎԵՊԸ**



«Բագին»ի երիտասարդ աշխատակիցներէն՝ արժանի մահայ բանասէր ու բարգձմանիչ Վար-

դան Մատթեոսեան, «Յարաջ»ի 10 Փետրուար 1998ի համարին մէջ, ստորագրած է «Թէ ինչպէ՞ս Դ. Վարուժանի որդին հասաւ... Սպանիա» խորագրեալ յօդուած մը, որ կը ներկայացնէ Բարայբրէնով (եին սպաներէն) ստեղծագործող գրագիտուի Մարիա Աննիս Անկլատան (ծն. 1930) եւ անոր մորազոյն գործը՝ Հայկական Յեղասպանութեան բնման շօշափող «Արամի տետրակ» (Quadern d'Aram) անուն վեպը:

1997ի վերջերը յոյս տեսած եւ 128 էջեր հաշուող «Արամի տետրակ»ի ծննդոցիմ մասին խօսելով, դասական յեզուներու մասնագէտ վիպագրուիին ըսած է, թէ հայկական աշխարհին մօտեցած է... հայաշխարհին անծանօթ բարգձմանութիւններու ընթերցումով: «Հայ մշակոյթով հետաքրքրուեցալ բանաստեղծութեան միջոցով» - հաստատումը կատարել է ստէ, Մարիա Աննիս Անկլատան աւելցուցած է: «Մեր տունը 20ական թուականներու բախարէն հանդէսներ կային, որոնց մէջ ուշադրութիւնս գրաւեցին Ալֆոնս Մասերասի թարգմանութեամբ կարգ մը սքանչելի կտորներ, ինչպէս Դանիէլ Վարուժանի բանաստեղծութիւնները»:

Բարայանցի վիպագիրը Դանիէլ Վարուժան եերասին ողբերգութեան մեկնելով՝ կառուցած է բաներորդ դարու առաջին յեղասպանութեան դժոխսի մ ծալերը Բարայանցի ընթերցողին ներկայացնող իր վեպը:

«Արամի տետրակ»ի գլխաւոր կերպարը 15ամեայ հայ պատանի մըն է՝ Արամ, որ իր տետրակին մէջ կը պատմէ իր տարագրութիւնը՝ մօրը հետ, տեղահանութիւնն ու թուրք շարդարներու կատարած կոտորած-

ները, ապա՝ փախուսող եւ փրկու-
թիւնը, որ վերջ կը գտնէ Գաթա-
լանիոյ ծովափին, ուր եւ կը ծա-
նօթանայ յոյն սուգորդներու ըն-
տանիքի մը շտաւտիդը հանդի-
սացող պատանիի մը:

Փաստագրական տուեալնե-
րու, վկայութիւններու եւ Դանի-
էլ Վարուժանի քանաստեղծու-
թիւններէն կատարուած մէջբե-
րումներու հիւսուածքով՝ Մա-
րիա Անճելս Անկլատա միաճու-
լած է իրականն ու վիպականը,
դիմելով Դանիէլ Վարուժանը պա-
տանի Արամին հայրը դարձնե-
լու գրական ենթաբնի:

Այսպէսով, Դանիէլ Վարու-
ժանի տիպարին ընդմէջէն ան
բացուած է քանաստեղծ Գ. Վա-
րուժանի քերթողութեան ոլորտ-
ներում, որոնք Բաբայանցի ըն-
թերցողներուն հրամայուած են
նահատակ քանաստեղծին գոր-
ծերէն քաղուած հատուածներու
թարգմանութեամբ:

Մենք յաջողութիւն արձա-
նագրած եւ արդէն երկրորդ հրա-
տարակութեան արժանացած
Մարիա Անճելս Անկլատայի
«Արամի տետրակ» գործը բարձր
գնահատած յօդուածի մը մէջ,
«Հորա Նովա» շարաքաթերքը
գրած է. *«Իր այս երկով՝ Մարիա
Անճելս Անկլատա յաջողած է
մեզ ընտելացնել մեզի բոլորո-
վին անյայտ իրականութեան
մը Ան կը ներկայացնէ Ի. դա-
րու առաջին ցեղասպանու-
թիւնը՝ տարբեր տեսակէտնե-
րու, տարբեր վկայութիւններու
ընդմէջէն, որոնցմէ իւրաքան-
չիւրը համապարփակ պատում
մը կը կազմէ ու կը լրացնէ: Շատ
հարուստ լեզուով կը նկարագ-
րէ միջերկրականեան միջնորո-
տը — ուր իր կերպարները կը
շարժին — եւ սոսկալի դէպքերը,
որոնց զոհերն են իրենք:*

*«Միտոյ, կատաղութեան,
անկարողութեան, սովի, ցուր-
տի, մահուան եւ, ամէն բանէ
վեր, յոյզերու պատմութիւն մը:
Գրաւիչ եւ յուզիչ պատմութիւն
մը, որ ընթերցողը կը կապէ մին-
չեւ վերջաւորութիւնը հատորին
եւ ցոյց կու տայ ամբողջ ազգի
մը տարագրութեան ահաւոր
իրականութիւնը»:*

Անցեալ Նոյեմբեր 28ին,
գրագիտութիւն ծննդավայրին՝
Ֆիկիրէսի մէջ տեղի ունեցած է
հատորի ներկայացման հանդի-
սութիւնը: *«Արամի տետրակ»*ը
գրասէր հանրութեան ներկայա-
ցուցած է ներկայիս Պարսիոյն
քննադարձանքի մասնաւոր հիւլեմա-
գէտ Մարիա Օհանէսեան, որուն
գործակցութեամբ Բաբայանցի
գրագիտութիւն ձեռնարկած է
Դանիէլ Վարուժանի քանաստեղ-
ծութիւններէն Բաբայանցի հատոր
մը կազմելու աշխատանքին:

Կը հաղորդուի, որ Մարիա
Անճելս Անկլատայի *«Արամի
տետրակ»* հատորին սպաներէն
թարգմանութիւնը արդէն մամու-
լի տակ է:

**ՓԱՒՍՏՈՍ ԲԻԷԱՆԴԻ
«ՊԱՏՍՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ»Ը՝ ԻՏԱԼԵՐԷՆ**

Վերջերս, Միլանոյի Հայ Տան
մէջ գրասէր հասարակութեան ներ-
կայացուած է շուրջ տարի մը առաջ
հրատարակուած Փաւստոս Բիւ-
զանդի *«Պատմութիւն Հայոց»*ի
իտալերէն թարգմանութիւնը,
թարգմանիչներ Մարիօ Պալսի եւ

Լորիս Տիմա Նոյեմբերի եւ հատորի խմբագիր Փրոֆ. Կապրիելյա Ուլուհոնեանի ներկայութեամբ:

Առաջին հերթին խօսք առած է Պոլոմիոյ համալսարանի հայագիտական ամսագրի վարիչ Փրոֆ. Կ. Ուլուհոնեան, որ ներկայութեամբ ծանօթացուցած է հատորի ծննդն ու թարգմանական աշխատանքին իրերայաջորդ համգրրւանները: Ան յայտնած է, թէ իբր դասանիւթ կարդացուած Փաստոս Բիւզանդի գրաքար հատուածին գեղեցկութեան հմայուած՝ իտալացի երկու համալսարանականները առաջարկած են իտալերէնի թարգմանել ամբողջ գիրքը եւ անցած՝ գործի, որ իրենցմէ պահանջած է տարիներու տէճաջան, ծրագրուած եւ ակադեմիական լուրջ աշխատանք:

«Անցեալ Յուլիոսին Հրատարկուած այս գործը կը հանդիսանայ նաեւ մեր ամսագրին առաջին աշխատանքը: Թիւնը, որուն, կը յուսանք, պիտի յաջորդեն ուրիշներ» յայտարարելէ ետք, Փրոֆ. Կ. Ուլուհոնեան դիտել տուած է, որ թարգմանիչները հիմնուած են Միտիքարեան հայրերու, Մախանուքեան 1832ին հրատարակուած «Փաստոս Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց»ի 1933ի չորրորդ վերահրատարակութեան վրայ եւ օգտուած՝ գրաքարէն այլ լեզուներու փոխադրուած նախկին թարգմանութիւններէն, որոնք գրեթէ սպառած են:

Բիչ լեզուներու փոխադրուած Փ. Բիւզանդացիի «Պատմութիւն Հայոց»ը առաջին անգամ թարգմանուած է ֆրանսերէնի՝ 1867ին, գերմաներէնի՝ 1872ին, իսկ մեր դարում, 1947ին, Մալխաս-

եանի կողմէ թարգմանուած արդի արեւելահայերէնի եւ 1953ին՝ ռուսերէնի, Գեորգեանի կողմէ: Իտալերէն հրատարակութեան տասնամեակ մը առաջ, 1989ին, Միացեալ Նահանգներու մէջ լոյս տեսած է ծանօթագրութիւններով հարուստ Փրոֆ. Նիմա Կարսոյեանի անգլերէն թարգմանութիւնը, որ մեծապէս նպաստած է իտալացի թարգմանիչներու գործին, ինչպէս դիտել տուած է Փրոֆ. Կ. Ուլուհոնեան:

Ապա, փոխմ ի փոխ խօսք առած են երկու թարգմանիչները՝ Մարիո Պաիս եւ Լորիս Տիմա Նոյեմբերի: Անոնք պատմած են իրենց դիմագրուած դժուարութիւնները, ռեալիս, արտայայտչական ու բառային նոյնութիւնը պահպանելու նպատակով որդեգրած սկզբունքները եւ զանոնք բացատրած՝ քննարկ մտնջներով: Եզրակացնելով՝ իտալացի թարգմանիչները շնորհակալութիւն յայտնած են իրենց աշխատանքին բաղդատական ընթերցումը կատարած եւ իր ցուցմունքներով ու նշումներով գործի միտնջման մասնակցած Փրոֆ. Կ. Ուլուհոնեանի:

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»Ի ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

1932ին լոյս աշխարհ եկած Հայաստանի Գրողներու Միութեան պաշտօնաթերթ «Գրական թերթ»ը, որ վերջին շրջանին զադրած էր հրատարակուելէ, 15 Մայիսին դարձեալ ներկայացած է իր ընթերցողներուն՝ այս անգամ իբրեւ երկշաբաթաթերթ:

1990ական բուսականներում 100.000 տպաքանակը շրջանցած «Գրական թերթ»ի 1998ի առաջին համարը (2571րդ թիւը իր 66ամեայ կեանքի ընթացքին), այսպէսով, յոյս տեսած է մտք կերպարանով: Սուրի խաչատրու-հանի խմբագրապետութեամբ վերահրատարակուած «Գրական թերթ»ի առաջին համարը, որ բաղկացած է միջակ չափի (A3) 16 էջերէ, ընթերցողին ներկայացած է հոնի եւ այլազան բովանդակութեամբ: Վերոյիշեալ համարի էջերում տեղ գրուած են ծանօթ ու վաստակաւոր շարք մը մտաւորականներ ու գրողներ: Հրատարակուած միւթերէն կ'արժէ նշել Պիոն Յակոբեանի հետ կատարուած հարցազրոյցը, Արամ Գրիգորեանի «Չարեանցը եւ Բլոկը», Սերգէյ Սարիմանի «Մինչեւ Է'րբ եւ մինչեւ ո'ւր», Մազդա Ջանվուադեանի «Նարեկացին՝ տասը դար անց», «Աւ. Իսահակեանի անձնանօթ էջերից» խորագրի-հայ յօդուածները, ինչպէս նաեւ՝ խաչիկ Մանուկեանի չափածոյ ստեղծումը:

Յեցաւ բացման համդիտութիւնը գանատաւայ լուսանկարիչ Հրայր Բազէ Սաչերեանի:

Հայաստանի մէջ Գրիտոն-ճեպարեան պետական կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած այս ցուցահանդէսին բացման հանդիտութեան ներկայ էին Արամ Ա. Վաթոյիկոս, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ Մ. Վրդ. Սաչերեան, Լիբանանի մօտ Գանատայի դեսպան Տանիէլ Մարշան, քաղաքական, ազգային ու մշակութային մարմիններու ներկայացուցիչներ եւ արուեստասէր հասարակութիւն մը:

Յուցահանդէսին բացումը կատարեց Արամ Ա. Վեհափառ, որ առաջին հերթին նշեց այս ցուցահանդէսին իւրայատուկ նկարագիրը՝ Հայաստան աշխարհն ու հայ ժողովուրդի ռզին, մաշտառումները, տագնապներն ու տենչերը բարախում պատկերներու վերածելու հանգամանքը, ապա՝ բարձր գնահատեց երիտասարդ արուեստագէտին ցուցա-

**ՀՐԱՅՐ ԲԱԶԷԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ
ՑՈՒՑԱՅԱՆՂԵՍԸ**

Բարձր հովանաւորութեամբը Արամ Ա. Վեհափառին, Հինգշաբթի, 26 Մարտ 1998ի երեկոյեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ տեղի ու-



բերած յանձնառութիւնն ու մտի-
րումը՝ հայկական եւ ազգային
մեր արժէքները իր գգայում
ուսպնեակով աշխարհին ներկա-
յացնելու առաջադրանքով:

Պաշտօնական բաժինէն ետք,
ներկաները փոխադրուեցան ար-
ւեստագէտին աշխարհը եւ կանգ
ստին անոր յուսանկարներուն
դիմաց, որոնք կը ներկայացնէին
Արեւմտահայաստանի, Արցա-
խի, Կիլիկիոյ եւ Պարսկաստանի
մէջ գոյութիւն ունեցող հայկա-
կան կոթողներ, քննադատներ
քի կենցաղային պահեր՝ իրենց
ինքնուրոյն մթնոլորտով, արտա-
յայտչականութեամբ եւ լոյսի ու
շուքի բանաստեղծական խոր-
հուրդով:

Անգլիերէնով ստեղծագոր-
ծող ամերիկահայ բանաստեղծ եւ
գրող Փիթըր Պալաքեանի «Ճա-
կատագրի սեւ շուկը» անուն վե-
պը վերջերս արժանացած է այս
տարուան «Փեն» գրական մրցա-
նակին: Յուշագրական բնույթի իր
այս վեպով, ամերիկահայ գրա-
գէտը յուսարձակը կեդրոնացու-
ցած է 1915ի Հայկական Յեղաս-
պանութեան պատմական նշմար-
տութիւնը ուրանալու նպատա-
կով Քուրթիոյ որդեգրած երե-
ւումի քաղաքականութեան եւ
Մեծ Նդեռնէն հողապրած հայոր-
դիներուն ճակատագրին վրայ:

«Ճակատագրի սեւ շուկը»
վեպին երոստեւիմ Մեծ Նդեռնէն
հողապրած կենդանի գոեերը Յեր-
կայացնող հեղինակին մեծ մայրն
է, որուն ողբերգական կեանքի
իրերայաջորդ հանգրուաննե-
րուն շաղախով Փիթըր Պալաք-
եան կերտած է գեղարուեստա-
կան շէնքը վերայրած հայորդի-
ներու սրտամտիկ ու ոգեշնչող
հաւաքական կենսագրավեպին:

Ամերիկեան համայնարան-
ներու մէջ գրականութիւն աւան-
դող Փիթըր Պալաքեանի գրչին կը
պատկանին չորս ճերթողագիր-
ներ, հայ եւ միջազգային գրա-
կանութեան մտիրուած քաղմա-
քի ուսումնասիրութիւններ եւ
Սիամամբոյի փունջ մը ճերթ-
ածներուն անգլիերէն քննադի-
րները:

**ՓԻԹԸՐ ՊԱԼԱՔԵԱՆ
Կ՛ԱՐԺԱՆԱՆԱՅ «ՓԵՆ»
ՄՐՅԱՆԱԿԻՆ**



ԳԱԼՈՒՍ ԽԱՆԵՆՑԻ ՄԱՐԸ



Աի, Սփիւռքի եւ Հայաստանի հայ մամուլին: Եղած է հիմնադիրների «Նոր էջ» գրական խմբակցության եւ ամերիկացի համալսարանի 1961-1966 տարիներում, իրեն վստահուած է Իրանահայ Գրողներու Միութեան փոխ նախագահի պաշտօնը:

Մշակութային ու խմբագրական գտնազան պաշտօններ վարած Գալուստ Խանենց 1974ին արժանացած է Թէէէնի Մշակութային Միութեան «Հայկաշէն Ուզունեան» գրական մրցանակին:

Գալուստ Խանենցի գրչին կը պատկանին «Ամբողջ սրտով», «Հրաշալի գորութիւն», «Բարեւ ինչ, մարդ» եւ այլ ֆերթոգրքեր:

4-5 Յունիս 1998ի յուսցող գիշերը, Թեհրանի իր բնակարանին մէջ մահացած է իրանահայ բանաստեղծ Գալուստ Խանենց (աւագանի անունով՝ Գալուստ Խանեան), յետ կարճատեւ եիւանդութեան:

Բանաստեղծ, քարգմանիչ եւ մշակութային գործիչ Գալուստ Խանենց ծնած է 24 Յունուար 1910ին, Թեհրան: Նախնական կրթութիւնը ստացած է ֆրանսական Սեն Լորի դպրոցը, իսկ համալսարանական ուսումը՝ Թեհրանի համալսարանի արտասովորութեան բաժանմունքին մէջ, ուրկէ շրջանաւարտ ըլլալէ ետք մետուած է կեանքի ասպարէզ: Երկար տարիներ գրած է մանուկացիութեամբ:

1927ին իր առաջին բանաստեղծութիւնը ստորագրած Գալուստ Խանենց տասնամեակներ շարունակ աշխատակցած է Իրանի,

ՍԵՐՈ ԽԱՆԶԱՂԵԱՆԻ ՄԱՐԸ

26 Յունիս 1998ին, Երեւանի մէջ իր մահկանացուն կնքած է հայրենի գրողներու երէց սերունդի մերկայացուցիչներէն՝ արձակագիր, պատմավիպագիր եւ մշակութային գործիչ Սերո Խանզաղեան:

Աւելի քան 50 տարի հայ գրականութեան ծառայած Սերո Խանզաղեան ծնած է 8 Դեկտեմբեր 1915ին, Գորիսի Սնանաղ գիւղը: Գորիսի մանկավարժական ուսուցչանոցը աւարտելէ ետք, 1934-1941 տարիներուն իրրեւ ուսուցիչ պաշտօնավարած է Սնանաղ եւ Տաթեւ գիւղերուն մէջ, 1941-1945 ժամանակաշրջանին



ծառայած է խորհրդային բանակին մէջ եւ մասնակցած Երկրորդ աշխարհամարտին: Թագմանակատն վերադարձէն ետք, Սերո Խանգաղեան ամբողջութեամբ նուիրուած է գրականութեան եւ լծուած ստեղծագործական, մշակութային եւ գրական-հասարակական աշխատանքներու:

1933ին, Գորիսի «Կարմիր Ջանգեղուր» բերքին մէջ «Ջոր տափ» խորագրեալ իր առաջին պատմուածքը ստորագրած Սերո Խանգաղեան 1950ին կը հրատարակէ «Մեր գնդի մարդիկ» անուն վէպը, որուն կը յաջորդեն պատմուածքներու, վիպակներու, վէպերու, պատմավէպերու, տեղեկագրական նոթերու եւ արձակ այլ գրութիւններու աւելի քան 50 գիրքեր, որոնց գլխաւորներն են «Միտքար սպարապետ», «Քարանձառի բնակիչներ», «Մատեան եղբայրութեան», «Քաջարան», «Անճրեից յետոյ», «Նօսէֆ, Հայաստանի լեռներ», «Արաֆ-սը պղտորում է», «Հայրե-

նապատում», «Թագուհին հայոց», «Անդրանիկ», «Շուշի», որոնցմէ շատեր բարգմանուած են եւ առանձին հատորներով լոյս տեսած են ռուսերէն, ուրախներէն, պարսկերէն, անգլերէն, գերմաներէն, վրացերէն, արաբերէն, պուլկարերէն, էստոներէն, լեհերէն եւ այլ լեզուներով:

Իր գրական վաստակին, քերում գործունէութեան եւ գրական ու հասարակական կեանքին մէջ ունեցած աշխոյժ մասնակցութեան համար Սերո Խանգաղեան պարգևատրուած է բազմաթիւ շքանշաններով: Իր կեանքի վերջին տարիներուն, ան ամբողջութեամբ կլանուեցաւ Արցախեան պահանջատիրութեամբ եւ ազատամարտով, որ իր գրչին տակ ստացաւ գրական պատկեր՝ «Շուշի» վէպով, Գարեգին Նժդեհի կերպարով եւ տակուին անտիպ ու չաւարտած բազմաթիւ գործերով:

ԳԵՈՐԳ ԷՄԻՆԻ ՄԱՅՐ

Յուլիսին, Երեւանի մէջ, յետ կարճատեւ երկամիտքեան մահացած է բանաստեղծ, երապարակագիր, բարգմանիչ եւ մշակութային գործիչ Գեորգ Էմին: Աւագանի անունով Կարլեն Սուրադեան, էմին ծնած է 30 Սեպտեմբեր 1919ին, Աշտարակ: 1940ին կ'աւարտէ Երեւանի Կ. Մարքսի անուն պոլիտեխնիկական հիմնարկի հեղրուսինիկական մասնաճիւղը: 1942-1944 կը ծառայէ խորհրդային բանակին մէջ: 1949-1950 կ'ուսանի Մոսկրայի գրական երկմարկի կից հայ



ամճակագրի՝ իրրիւ աւագ գիտաշխատող:

Գ. Էմին հրատարակած է 30է աւելի գեղարուեստական հատորներ, որոնց նշանաւորներն են «Նախաշաւիղ», «Նորէ», «Ժօսիր, Հայաստան», «Նրկու մամբայ», «Սասունցիների պարը», «Ախ, այս Մասիսը», «Այս տարիքում», «Բամանորդ դար», «Դար, հող, սէր», «Մատ չեղա՞ւ, Աստուած» ֆերթագիրքերն ու «Սօքր երգ Հայաստանի մասին» արձակ հատորը: Ան նաեւ բարգւաճած է շուրջ 12 հատոր, իսկ իր բնօրոշ քանաստեղծութիւնները թարգմանուած են տասնէ աւելի լեզուներու:

1967ին, Գ. Էմինի քեմագիրով, «Հայ Փիլմ» կը նկարահանէ «Սօքր երգ Հայաստանի մասին» ժապաւնը, որ կ'արժանանայ խորհրդային մէկէ աւելի մրցանակներու:

Իր գրական վաստակին եւ մշակութային ու հասարակական բեղուն գործունէութեան համար Գեորգ Էմին պարգեւատրուած է բազմաթիւ շքանշաններով:

գրողներու սփիտոյին մէջ, իսկ 1945-1956 կը հետեւի ՍՍՀՄ գրողներու միութեան արքմքեր գրական բարձրագոյն դասընթացներուն:

1951-1954 կ'աշխատակցի «Լիտերատուրնայա գագետա» թերթին՝ իրրիւ Հայաստանի սեփական թղթակից: 1968-1972 կը պաշտօնավարէ «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի մէջ՝ իրրիւ պատասխանատու խմբագիր: 1973էն ի վեր մաս կը կազմէ ՀՍՍՀ ԳԱ արուեստի եմմարկի

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ

ՅԱԿՈՐ ՕՇԱԿԱՆ

ՎԻՊԱԿԱՆ ԵՐԿԵՐ

1.-- «Խոնարհները», «Խորհուրդներու մեհեանը»,
«Երբ պատանի են»

•

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐ

2.-- «Աստուած կ'իջնէ», «Երբ մեռնիլ գիտենք»

•

ՏՊԱՌՐԱՊԱՇՏԷՉԵՐ

3.-- «Մոռցուած բաներ»

•

ԱՐՉԱԿ ԵՐԿԵՐ

4.-- «Մերմնացան»

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

5.-- «Յեղափոխութեան լոյսէ գօտին»

•

6.-- «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը»

Խմբագիր՝ ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ



ԼԻՌԱՆԱՆ

Հատվածառ 10.000 Լ.Ռ.
Տարեկան բաժնեգին 40.000 Լ.Ռ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بأكيين
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قرانجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամ
ԱՆՐԳԻՄ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցե՝
Centre Culturel SHAGHZOYAN
Bordj Hammoud — Liban